Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2785

9(47.925)
17-54

(47928)
Թ-54

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՇԱՐՈՒԴՐԵՑ

Հ. ՀԱՄԱՋԱՍՊ ԹԵՐՃԻՄԱՆԵԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆ

2012

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ
ՏՈՒԲԲ ՂԱԶԱՐՈՍ ՎԱՆՔԸ
1871

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԱԲՈՎՅԱՆԻ
Ա. Абовяна
36814-66
2004

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Յայտնի ու ամենէն ծանուցեալ ճշմարտութիւն մըն է, թէ գործք մը ամենուն միօրինակ հաճոյ ընելը՝ եթէ անկարելի ալ չըսենք, բայց ամենադժուար բան է։ Ա՛ս դժուարութիւնս տարակոյս չկայ որ անհամեմատ կ՛աւելնայ գրքի մը համար, մանաւանդ այնպիսի գրքի մը որ յատուկ ազգայինն ըլլալով, ինչպէս է ազգային պատմութիւն մը, բոլոր ազգը իրաւունք ունի քննելու, և առաւել որ դասատետր ալ ըլլալով ինքը պիտի ըլլայ բոլոր ազգին տղոցը ազգայնութեան հոգին տպաւորողը. և չէ թէ միայն ընդհանուր ազգին՝ հապա իւրաքանչիւր գործոց ու ինչ և իցէ կերպով ա-

50777-Ա.Ա.

նուանի եղող անհատին ալ արժանաւոր դաղափարը տուող ու յարգը ճանչցող։ Ա՛ս պատճառաւ որչափ ջանք և փոյթ ըլլայ տանկ դրքի մը կատարելութեանը համար դեռ քիչ է։ Եւ մենք որ այս պզտիկ բայց կարևոր գործքիս ձեռք զարկինք, չդիտեմ թէ կրցանք արդեօք այն պահանջուած կատարելութիւնը տալ այս փոքրիկ դասատետրիս։ Ջանացինք իրաւ աւելցնել ըստ տեղւոյն յարմար ու հարկաւոր խորհրդածութիւններ, առանց որոնց անօգուտ ու նիւթական ուսմունք մը կ՚ըլլար պատմութիւնը ազգայոց։ Ջանացինք նմանապէս յայտնել ու առելի ընել՝ չարաց, որ ամեն ազգի մէջ չեն պակսիր, վնասակար պակասութիւններն ու ախտերը առանց անիրաւելու և ընդհանուր ազգին տալու այն մասնաւորաց պակասութիւնները։ Ջանացինք վերջապէս փոխանակ ընդունայն պարծանքներու՝ յայտնել այն ամենայն ազգային կատարելութիւնները ու դեղեցիկ յատկութիւնները որ ազգի մը ճշմարիտ պարծանք են և որոնցմով սիրելի ու յարգոյ կ՚ըլլայ պատմութիւնը ազգայնոց ու օտարաց։ Եւ որովհետև մեր վախճանն էր ազգայոց և ժողովրդեան առ հասարակ դիւրընթեռնելի ընել ազգային պատմութիւնը, աւելորդ սեպեցինք ծանրաբեռնել զանի երկրորդա-

կան պարագաներով ու այնպիսի մասնաւոր ու առանձնական դէպքերով, որ ազգային պատմութեան հետ անմիջապէս վերաբերութիւն մը չունին։

Բախտաւոր կը համարինք զմեզ՝ թէ որ կրցանք քիչ շատ դիտած վախճաններնուս հասնելով օգտակար ընել զասիկայ եթէ ազգայոց և եթէ վարժապետաց, որոնց՝ ի դիւրութիւն ընծայելով կը յուսանք որ թեւրութեանցն ալ ներողամիտ կ՚ըլլան։

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԴԱՍ Ա.

Հայկեւ սկսեալ Իւնջուան Աստաւ:

Հ. Ո՞վ էր Հայոց ազգը ըսկիզբ առաջ եկած է.
Պ. Նոյ Նահապետին Յաբեթի որդիէն:

Հ. Ո՞վ էր մեր ազգին Նահապետը.
Պ. Հայկ, որ էր Թորգոմայ որդին. Թորգոմն ալ Գամերայ, Գամերն ալ Յաբեթայ:

Հ. Ի՞նչպէս մեր ազգին Նահապետ եղաւ Հայկ.
Պ. Իր ազգատոհմին վրայ տէր և դլուխ ըլլալով, և զանոնք իր անուամբը Հայք անուանելով. որոնց մէ մենք ալ ինքած ենք:

Հ. Ե՞րբ սկսաւ մեր ազգին տէրութիւնը.
Պ. Անմիջապէս յարհեղղէն քիչ մը ետքը:

Հ. Ի՞նչ կերպով սկսաւ Հայկ իր տէրութիւնը.

Պ. Երբոր Բաբելոն գացող և աշտարակը չինել ուզող մարդկանց լեզուն խառնուեցաւ, և ազգերը պիտի ցրուէին, Բէլ ուզից ամենուն վրայ բանուածքեամբ իշխել ու Աստուծոյ պէս պաշտուիլ. Հայկ ալ առ բանիս չհնազանդեցաւ, ու Հայաստան գարձաւ իր երկիր կարիճներովը, որ էին իրեն որդիքը, թոռունքը, և անոնց ընկերացած հաւատացեալ մարդիկներ (2346):

Հ. Բէլ երբոր առ բանս լսեց ի՞նչ ըրաւ.

Պ. Հպարտութեամբ պատգամ խաւրեց Հայկայ որ գայ հնազանդի իրեն, թէ չէ անով տէրով զինքը թերէ կ'անցընէ:

Հ. Հայկ առ բաներս լսելով հնազանդեցա՞ր Բէլայ.

Պ. Չէ. հապա իրեն կարիճ տղաքներովը, ծառաներովը և ուրիշ հաւատացեալ մարդիկներով Բէլայ անհամար բազմութեանը դէմ ելաւ, որոնք եկեր էին իր վրայ:

Հ. Ի՞նչպէս պատերազմեցան Հային ու Բէլը.

Պ. Նախ Հայկ յաղթեց Բէլայ զօրքերուն. վերջը երբոր Բէլ ետ կը քաշուէր քիչ զօրքով, Հայկ մէկէն վրան վազեց զարիւս նետուը, ու հոն սպանուած փուեց ամբարտաւան հսկան, Աստուծոյ և մարդկութեան թշնամին:

Հ. Հայկ Բէլայ մարմինն ի՞նչ ըրաւ.

Պ. Չմսեալ տալով տարաւ Հայաստանի Հարք ըսուած երկիրը, ու բլրի մը վրայ թաղեց, ուզելով որ ամենքն ալ տեսնեն և խոնարհ ամբարտաւան մարդուն վիճակը, և իրեն ալ աշխարհիկ բան բաներ բարկը:

Հ. Հայկ Բէլը սպանելէն ետքը ի՞նչ ըրաւ. ու ո՞րչափ տարեցաւ.

Պ. Ուզելով խնայել իր արգարասէր և անաչառ հարհակալ ոգին՝ թշնամին հալածելէն ետքը դարձաւ Հայաստան եկաւ. քաղաքներ չինեց ու բարեկարգութիւններ ըրաւ ու 400 տարիէ չափ տարիներէն ետքը խաղաղութեամբ մեռաւ (2265):

Հ. Ի՞նչ բնութիւն և ինչ ձիրքեր ունէր Հայկ.

Պ. Մարմնով կարիճ մարդ էր, մեծահասակ և գեղեցիկ, գառուզ մազերով, կարմիր երեսով. վառվռուն աչքերով. ձեռքով ալ շատ ճարպիկ ու արագաշարժ. իսկ մտօք՝ բարեմիտ, հնարագէտ. աշխարհաշէն և անվախ սրտով:

Հ. Հայկայ տունն ի՞նչ մասնաւոր բան պատահեցաւ Հայաստանի մէջ.

Պ. Նոյ 950 տարուան վախճանեցաւ, ու թաղուեցաւ, ինչպէս կ'ըսուի, Նպատ լերան վրայ. նոյն պէս Նոյեմզարա՝ Նոյայ կինն ալ թաղուեցաւ Մանդանդ գաւառը:

Հ. Հայկայ տեղը ո՞վ անցաւ.

Պ. Արմենակ Հայկայ քաջ և հայրենասէր անդրանիկ որդին:

Հ. Արմենակ ի՞նչ գործ ըրաւ իր հայրենասիրութեանը վայել.

Պ. Իր Խոռ և Մանաւազ եղբայրները Հարք գաւառը թողուց ու ինքը արեւելեան կողմերը գնաց, հոն տեղւանքն ալ շինցուց:

Հ. Արմենակայ մեկալ եղբարքը ի՞նչ եղան.

Պ. Երկու եղբարքն ալ անանկ բազմացան, որ հազարաւոր տարի ցեղերնին դիմացաւ, իրենց ա-

Հռունով Խորխոռունիք ու Մանուսպէնանք ըսուելով։ Նոյնպէս Բազ Արմենակայ որդւոյն կնկն ալ իր անունովը Բզնունիք ըսուեցաւ։

Հ. Արմենակայ մվ յաջորդեց։
Պ. Արամայիս էր որդին, որ Արմաւիր քաղաքը շինեց Երասխ գետին քով (1975)։

Հ. Ո՞վ էր Շարա։
Պ. Շարա Արամայիսի որդւոյ մէկն է, որ շատ կերուխում կը սիրէր, հայրն ալ զինքը բարեբեր երկիրը մը խաւրեց որ իր անունովը Շիրակ կոչուեցաւ։

Հ. Արամայիսին աեղը ով անցաւ։
Պ. Ամասիա իրեն որդին, որ իր անունովը՝ Մասիս անուանեց Արարատ լեռը։

Հ. Ամասիայի որդւոց վրայ ինչ գիտէիք կայ։
Պ. Ամասիա իրէք տղայ ունէր Փառոս, Յորակ և Գեղամ. առջի երկուքին համար մէյմէկ քաղաք շինեց որ անոնց անունովը Փառասպատ և Յորակերտ ըսուեցան. իսկ երրորդը Գեղամ իր աեղը յաջորդեց։

Հ. Գեղամայ վրայ ինչ կը պատմուի։
Պ. Քանի մը տարի իշխելէն եաքը՝ յանձնեց աէրութիւնը իր Հարմա ազուն, ու ինքը Սևան Ծովին հարաքներէը բնակելով ան աեղը իր անունովը կոչեց Գեղարքունիք ու Ծովիս ալ Գեղամայ Ծով։

Հ. Սիսակ Գեղամայ որդւոյն վրայ ինչ գիտէիք կայ։
Պ. Սիսակ իր քաղցր նայուածքին և խօսուածքին համար Ազու ըսուեցաւ. ասոր բնական անունն անուանը Սիսական ըսուեցաւ կամ Սիւնիք։

Հ. Ո՞վ էր Հարմա և իր վրայ ինչ մանաւանդ գործ մը կը պատմուի։
Պ. Գեղամայ որդին էր. ասոր աաենը սկսան Թշնամիք Հայաստանի վրայ վազել ու սիրել, ոտնիք որ Հայկայ և իրեն որդւոցը քաղուածքան գործքերը լսելով առաջ վախցեր ու Թուլցեր էին. բայց աաեն անցնելով մոռցուեր էր աս իրաւացի վախը ինչուան որ Արամ նորէն վախ ձգեց անոնց սիրտը։

ԴԱՍ Բ.

Արամէն Ինչուան Պարոյր։

Հ. Ո՞վ էր Արամ։
Պ. Հարմայի որդին և յաջորդը։

Հ. Արամին առջի Թշնամին ով եղաւ։
Պ. Նիւքար Մարայ իշխանը, որուն դէմ երթալով Արամ յիսուն հազար զօրքով, յաղթեց ու գլխէրը բանեց աշտարակի մը ծայրը գամեց (1828)։

Հ. Հայոց երկրորդ Թշնամին ով էր։
Պ. Բարշամ Բաբելացւոց իշխանը որ նոյնպէս յաղթուելով սպանուեցաւ Արամին։

Հ. Հասա երրորդ Թշնամին ով էր։
Պ. Պայասխա Կապադովկիոյ իշխանը որ յաղթուելով փախաւ Միջերկրական ծովուն կղզիներէն մէկը։

Հ. Աբամ Պայաւխեն երկիրները ինչ ըրաւ.

Պ. Իսլօրին ալ տիրելով Մշակ անուանով մեկը իշխան դրաւ հոն, ու պատուիրեց որ ամենքն ալ հայերէն խօսին. որով ան տեղին անունն ալ Փոքը Հայք ըսուեցաւ, Մշակայ բնակած տեղն ալ՝ Մաժակ, որ է Պայսերի քաղաքը:

Հ. Աբամայ վրայ ուրիշ ինչ գիտնալու բան կայ.

Պ. Նէնոս Աստուածանցւոց Թագաւորէն մարգարտազարդ պսակ մը ընդունեցաւ, և անոր երկրորդը կոչուեցաւ:

Հ. Ինչպէս պատահեցաւ Նէնոս ան Թագը խաբեց.

Պ. Վասն զի Աբամայ քաջութիւններէն ակնածելով ուզեց անոր բարեկամութիւնը ստանալ:

Հ. Աբամ ո՞րչափ տարի իշխեց ու ի՞րը մեռաւ.

Պ. Յիսունըհինգ տարի իշխեց ու մեռնելով ի՛րեն յաջորդ Թողուց Աբայ որդին:

Հ. Աբայ ինչո՞ւ համար պատերազմի ելաւ Շամիրամայ դէմ.

Պ. Աբայ շատ գեղեցիկ ըլլալով Շամիրամ Ասորեստանցւոց ախտաւոր Թագուհին ուզեց հետը կարգուիլ. բայց Աբայ չհաւնեցաւ ու պատերազմի ելաւ:

Հ. Պատերազմին վերջը ինչպէս եղաւ.

Պ. Աբայ քաջութեամբ կռուեցաւ, բայց պատերազմին տաքցած տեղն զարնուեցաւ ու մեռաւ. Թէպէտ և Շամիրամ ապստրկէր էր իր զօրացն որ զինքը չսպաննեն, սակը բաներն (1769):

Հ. Շամիրամ ինչ ըրաւ Հայաստանի մէջ.

Պ. Հաստնելով մեր աշխարհքին դրկեցը և օդին գիտեցկութեանը, ամուր քաղաք մը և բերդ մը շինել տուաւ Շամիրամակերտ անունով որ Վան ալ կ'ըսուի. և ինչ ան հնոյ կեցած են ան տեղ նուան չինած պատերը:

Հ. Աբայի մասին յաջորդեց.

Պ. Շամիրամ Հայոց վրայ իշխան դրաւ Աբայի Կարդոս որդին:

Հ. Շամիրամ ու Կարդոս ինչպէս մեռան.

Պ. Շամիրամ ու Կարդոս Նէնուասայ վրայ պատերազմի ելան՝ որ Շամիրամին որդին էր, ու իրմէ ապստամբած. բայց յաղթուելով երկուքն ալ մեռան:

Հ. Կարդոսին մասին յաջորդեց.

Պ. Այնուհետեւ իր որդին, որ Թէպէտ և գերի ընկած էր Նէնուասայ ձեռքը, բայց սիրելի ըլլալով անոր, ազատեցաւ գերութենէն, ու եկաւ տիրեց իր հայրենեացը. երկար տարի իշխեց շատ խելքով ու մեռաւ:

Հ. Ո՞վ էր Պարեա.

Պ. Հայկայ մեկուրդեց ցեղերէն կըտրիճ մըն էր որ Այնուշանին տեղը նահապետ եղաւ, որովհետեւ Այնուշան որդի չունէր (1662):

Հ. Պարեային վրայ ինչ գիտենք կայ, ու իրեն մասին յաջորդեց.

Պ. Ասիկայ շատ քաջութիւններ ըրած ունի. իրեն յաջորդեց Արբակ:

Հ. Արբակին մասին յաջորդեց.

Պ. Զաւան. Զաւանին յաջորդեց Փառնակ. Փառնակին՝ Սուր:

Հ. Սուբ Նահապետին վայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Սուբ որ իրեն քաջութեանցը համար սա անունը ժառանգեց, շատ յաղթութիւններ ըրաւ ընդդէմ Թշնամեաց: Սորա առենը Քանանացիք Իսրայելացիներէն հալածուելով ոմանք Հայաստան եկան, որոնցմէ ձեւացաւ Քանանեցեանց կամ Գրնեծունեաց նախարարութիւնը:

Հ. Սուրբայ ո՞վ յաջորդեց.

Պ. Եաւէ եաւ յաջորդեցին Հաւանակ և Վաշտակ, որոնց վրայ պատմութիւն չունինք:

Հ. Հայկակ Ա. Նահապետը ի՞նչ քաջութեան գործք ըրած ունի.

Պ. Ամինդէս Ասորւոց Թագաւորին յաղթեց. բայց անոր Բելոքոս յաջորդէն յաղթուեցաւ ու մեռաւ (1369):

Հ. Որո՞նք յաջորդեցին Հայկակէն եաւ.

Պ. Երկու հարիւր տարուան չափ միջոցի մէջ իշխեցին Հայոց վրայ տասնը: Ամբակ Ա., Աշտակ, Շաւարշ Ա., Նորայր, Վասակ, Կաւ, Գուռակ, Հրանտ, Ընձակ, Գղակ և Հօրոյ որոնց վրայ գիտելիք մը չկայ:

Հ. Զարմայրի վրայ ի՞նչ կը պատմուի.

Պ. Տրդատայ օգնութեան գնաց ու շատ քաջութիւններ ըրաւ. բայց Աբկիւսէի հետ պատերազմով մեռաւ (1182):

Հ. Զարմայրէն ինչուան Հակայորդի ծրջափ Նահապետներ նստան.

Պ. Գրեթէ չորս հարիւր տարուան միջոցի մէջ տասնի չափ Նահապետներ նստան, որոնց վրայ տեղեկութիւն մը չունինք. և են տասնք. Շաւարշ Բ, Պերճ Ա., Սրբուն, Պերճ Բ, Բագուկ, Հոյ, Յուսակ, Ամբակ Բ, Փառնաւազ Ա., Փառնակ Բ, ու Հակայորդի:

ԴԱՍ Գ.

Պարոյրեան հինգտան Հայկազանց թագաւորութեան կործանիլը. և կոստակապաց իշխանութիւնը:

36814-66

Հ. Ո՞վ էր Պարոյր.

Պ. Հակայորդւոյն որդին էր, որ Հայոց առաջին Թագաւորն եղաւ:

Հ. Ի՞նչ պատճառաւ Թագաւոր պսակուեցաւ.

Պ. Սարդանապաղ Ասորւոց Թագաւորին դէմ օգնութիւն գնաց Վարբակէս իշխանին ու միաբան յաղթեցին անոր. ու ինքը Վարբակեանն Թագաւորեցաւ (746):

Հ. Պարոյրին առենը ուրիշ ի՞նչ գիտնալու արժանի բան եղաւ.

Պ. Պրամէլիք և Սանտասր Ասորեստանցւոց Թագաւորին տղաքը Հայաստան փախան, որոնք վերջին մեծ ամբոխ նախարարութիւններ եղան, այսինքն Աբծրունիք և Սանտասրք կամ Սանունիք:

Հ. Պարոյրէն հաւ որո՞նք Թագաւորեցին.

Պ. Հարիւր տարուան չափ միջոցի մէջ հինգ Թագաւորներ եղան, որոնց վրայ յիշատակութիւն մը չունինք. տասնք են Հրաչեայ, Փառնաւազ Բ, Պաճոյճ, Կառնակ, Փառան:

ՄԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм ССР
Ա. ԻՄ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

Հ. Հայկակ ինչ վայ ինչ գիտելիք կայ.
Պ. Նաբուզոդոնոսորին հետ Երուսաղէմի վայ գնաց, ու հոնկէ Հայաստան բերաւ Շամբատ ա-նուանով իշխան մը. ուսկից սերեցաւ Բագրատուե-նեաց ցեղը Բագարատ երևելի իշխանին անունէն առնելով (605):

Հ. Ո՞վ յաջորդեց Հայկակին.
Պ. Իր որդին Երուանդ առաջին որ չորս տարի միայն թագաւորելով մեռաւ, անոր համար Սա-կաւաւակեաց ըսուեցաւ (565):

Հ. Ո՞վ է Տիգրան Ա.
Պ. Երուանդայ ազան ու Հայկազանց ամենէն երևելի թագաւորը:

Հ. Ինչո՞ւ համար Աժդահակ Մարաց թագաւո-րը Տիգրանայ հետ թշնամացաւ.
Պ. Վասն զի Տիգրան բարեկամութիւն ըրաւ Կիւրոսի հետ՝ որ իր թշնամին էր:

Հ. Աժդահակ ինչ վարպետութիւն բանեցուց Տիգրանը մեռցընելու.
Պ. Տիգրանին Տիգրանուհի քոյրը իրեն կին ա-ռաւ, ու անոր ձեռքովը ուզեց սպանել զՏիգրան:

Հ. Աժդահակայ չարութեան խորհուրդը ա-ռաջ գնաց.
Պ. Չէ. վասն զի Տիգրանուհին Աժդահակայ խորհուրդը ծածուկ լսացուց իր եղբօրը:

Հ. Ասով Տիգրանուհին ինչպես մը եղաւ.
Պ. Չէ. որովհետև Տիգրան պատերազմը ուշա-ցուց որ քոյրը առնէ գնէլով փախչի Աժդահա-կին քովէն:

Հ. Պատերազմը ինչպէս եղաւ.
Պ. Երբոր Կիւրոս իր զօրքովը եկաւ հասաւ, Տիգրան անոր հետ մեկտեղ Աժդահակայ դէմ ե-լաւ. պատերազմին էն ատ միջոցը Տիգրան քա-ջութեամբ սպանեց զԱժդահակ, որով պատե-րազմը լմնցաւ:

Հ. Տիգրան պատերազմէն դառնալէն ետքը ինչ ըրաւ.
Պ. Աժդահակին կինն, ընտանիքը և ուրիշ գե-րիները Հայաստանի մէջ բնակեցուց, ուսկից սե-րեցան Վիշապազունք կամ Մուրացան ըսուած ցեղը: Իսկ Տիգրանուհի քոյրը Տիգրանակերտի կողմերը բնակեցուց, ուսկից որ սերեցաւ Ոստան կամ Ոստանիկ ըսուած ազգատ ցեղը:

Հ. Տիգրան ինչպէս թագաւորութիւն ըրաւ.
Պ. Շատ խելքով, շատ շինութիւններ ու բարե-կարգութիւններ ըրաւ. և քաւոտասունհինգ տա-րի թագաւորելէն ետև մեռաւ. իրեն տեղը յաջոր-դեց Վահագն իր որդին:

Հ. Վահագնի վայ ինչ բան կը պատմուի.
Պ. Խիստ քաջ ըլլալուն համար՝ վրան շատ ա-ռասպելներ զուցցին. և Վրացիք վինքը կը պաշ-տեին: Անոր ցեղը Վահունիք ըսուեցաւ (520):

Հ. Վահագնի ովք յաջորդեց.
Պ. Որդւոց որդի յաջորդեցին Առաւան, Նէր-սէհ, Զարեհ, Արտամ, Բագդամ, Վանև Վահէ (351):

Հ. Ինչո՞ւ համար Աղէքսանդր Վահէին վայ եկաւ.
Պ. Վասն զի Դարեհ Պարսից թագաւորին օգ-նութիւն խաւրեր էր Վահէ:

Հ. Ի՞նչպէս մեռաւ Վահէ.

Պ. Ակէքսանդրի դէմ պատերազմելով շատ քաջութիւններ ընելէն եաքը՝ պատերազմին մէջ ինկաւ մեռաւ, ու ասով Հայկազանց Թագաւորութիւնը վերջացաւ 1800 տարի դիմանալէն եաքը (328):

Հ. Վահէէն վերջը Հայաստանի մէ՞ կ՚իշխէր.

Պ. Մակեդոնացւոց կամ Աւորւոց Թագաւորները մէկ իշխան մը կը խաբէին որ Հայաստանը կառավարէ. ան իշխանները Կուսակալք կ՚ըսուին:

Հ. Ո՞վ եղաւ առջի կուսակալը.

Պ. Միհրան, որն որ Ակէքսանդրէն խրկուեցաւ ուսումնատիրութիւնները եաքը եան դնալուեցաւ (319):

Հ. Միհրանայ տեղ մէ՞ եղաւ կուսակալ.

Պ. Նէոպտղեմէոս, որ Հայոց վրայ դէշ աչքով կը նայէր, ան պատճառաւ շատ նեղութիւններ տուաւ Հայոց:

Հ. Ո՞վ ազատեց զերկնք ան նեղութենէն.

Պ. Ադուարդ մեր քաջ նախարարը, որ Նէոպտղեմէոսը փախուց Հայաստանէն:

Հ. Ադուարդ մինա՞կ իշխեց Հայոց վրայ.

Պ. Չէ. Վասն զի Եումենէս մակեդոնացի իշխանին միջնորդութեամբը նորէն եկաւ Նէոպտղեմէոս ու երբեք Ադուարդին երկրորդը կը կենար (317):

Հ. Ադուարդ ո՞րչափ տաեն իշխեց.

Պ. Ութիը շատ քաջութիւններ ընելէն եաքը հաստատուեցաւ իր իշխանութեանը մէջ, ու երեսուն և երեք տարի իշխելէն եաքը մեռաւ:

Հ. Ադուարդին տեղը մէ՞ խաբուեցաւ կուսակալ.

Պ. Հրանտ. ասոր ալ յաջորդեց Արտաւազդ անունով իշխան մը, որ ապստամբելով Սելեւկիացւոց[1] Անտիոքոս Գ. Թագաւորէն՝ ինքնագլուխ իշխեց:

Հ. Յաջողեցա՞ Արտաւազդին ապստամբութիւնը.

Պ. Վախնալով Անտիոքոսէն շատ ընծաներով խոստացաւ հարկը տալ, ու անով նորէն կուսակալ եղաւ:

Հ. Արտաւազդին տեղը մէ՞ դրուեցաւ կուսակալ.

Պ. Արտաշէս և Զահրատ հայ իշխանները:

Հ. Զահրատ և Արտաշէս ինչուան վերջը հաւատարիմ մնացի՞ն Սելեւկիացւոց.

Պ. Չէ. Հապա Հռովմայեցւոց օգնութեամբը ապստամբեցան ու երկուքն ալ Թագաւորեցին: Զահրատ Փոքր Հայոց վրայ, Արտաշէս ալ մեծ Հայոց վրայ. ուր որ Անդիբաղ Կապադովկացի մեծ զօրապետին խրատովը Արտաշատ քաղաքը շինեց:

Հ. Անտիոքոս Եպիփան երբոր լսեց ան բանս ի՞նչ ըրաւ.

Պ. Արտաշիսին վրայ պատերազմի ելլելով բռնութեամբ հնազանդեցուց:

Հ. Արտաշիսէն և Զահրատէն վերջը որո՞նք իշխեցին Հայոց.

Պ. Աստղմէ վերջը քանի մը Թագաւորներ ալ Նոսան Հայաստան ինչուան Արշակունիներ տուին, բայց պատմութիւնին չհոմէ ըլլալով որոշ բան մը չգիտցուիր վրանին: Միայն թէ անոնց վերջին Թագաւորն եղաւ Մորիթեւլիկէս Զահրատին տղան (159):

[1] Աւորիք՝ Սելեւկիացիք ալ ըսուեցան իրենց առաջին Թագաւորին Սելեւկոսին անուամբը:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ա. ՐՇԱԿՈՒՆԵԱՑ

ԴԱՍ Դ.

Վաղարշակեան սկսեալ ի Տրդատայ Մ.:

Հ. Ո՞վ էին Արշակունիք.
Պ. Պարթև ըսուած ազգէն էին, որմէ Արշակ անուամբ կարճ մը թագաւոր եղաւ իր ազգին. իր Թոռը Արշակ ալ շատ զօրաւոր ըլլալով թագաւորութիւնը մեծցուց, Հայաստանին ալ տիրեց. և իր Վաղարշակ եղբայրը հոն թագաւոր դրաւ (149):

Հ. Վաղարշակ թագաւոր ըլլալէն ետքը ինչ պատերազմ ըրաւ.
Պ. Մօրփիւղիկեան հետ պատերազմ ընելով զինքը սպաննեց ու անով բոլոր Հայոց տիրեց:

Հ. Վաղարշակ ուր դրաւ իր աթոռը.
Պ. Մծբին քաղաքը, որ Ասորւոց երկրին և Հայաստանին մէջ տեղւանքին է:

Հ. Վաղարշակ Հայերը սիրեց.
Պ. Տեսնելով անոնց քաջութիւնը և տիրասի-

րութիւնն ան ատոնցմէ սիրեց զՀայկը, որ և տեւէ եղաւ գիտնալ ու իմանալ այնպիսի պատուական ազգին պատմութիւնը:

Հ. Ուրիշ Վաղարշակ գոնէ ուրիշ պատմութիւններ.
Պ. Հայաստանի մէջ չգտնելով, Մարիբաս Կատինա անուամբ մէկը խաւրեց Նինուէ, որ երթայ հոն գրատան մէջէն գտնէ Հայոց պատմութիւնը, ինչպէս որ գտաւ ալ:

Հ. Վաղարշակ ուրիշ ինչ բարեկարգութիւններ ըրաւ.
Պ. Կախարդաց և արբունեաց մէջ շատ կարգեր դնելէն ետքը, որոշեց ալ որ թագաւորին հետ միայն անդրանիկ որդին միայ, մեկալները ուրիշ տեղ կենան:

Հ. Վաղարշակայ մահ չորցուցեց.
Պ. Արշակ Ա. իւր որդին, որ շատ բարեկարգութիւններ ու քաջութիւններ ըրաւ (127):

Հ. Գլխաւոր քաջութիւնը ո՞րն է.
Պ. Պանատպինները նուաճելէց ու երեն չարչարութեան նշան կոթող մը անկէց Ծովուն եզերքը ու նիզակը զարնելով ծակեց քարը:

Հ. Արշակայ Ալն ո՞վ չարչարեց.
Պ. Իր որդին Արտաշէս Ա. որ Յունաստանի և բոլոր Փոքր Ասիոյ տիրեց:

Հ. Ի՞նչ բան ըրաւ Պարսկաստանի մէջ.
Պ. Իր անուանովը ատակ կոտնեց. ու Պարսից թագաւորն որ ինչուան ան ատեն պատուով առաջին էր՝ երեն երկրորդն ըրաւ:

Հ. Արտաշէսի զօրաց բազմութեանը վրայ ինչ կը պատմուի.

Պ. Կ'ըսեն թէ երբոր ամենքը միասին նետ նետէին՝ արեւը կը խաւխաւէր ու թէ որ մէյմէկ քար նետէին՝ բլուր մը կը ձեւանար:

Հ. Արտաշէս ինչպէս մեռաւ.

Պ. Չօրացը մէջ խռովութիւն նկատելով զինքը սպաննեցին (87):

Հ. Արտաշէսին ով յաջորդեց.

Պ. Տիգրան իր որդին որ արգէն երկու տարիէ վեր հօրը հետ կը թագաւորէր:

Հ. Տիգրան ինչ առջի գործքը ընել եղաւ.

Պ. Յոյները նուաճեց, որոնք Արտաշէսի մահը լսելով ապստամբեր էին:

Հ. Տիգրան զի՞նք գրաւ իրեն վոխանորդ Պոնտոսի մէջ, ու Յոյները նուաճող.

Պ. Իր Միհրդատ անունով քեռայրը, որ քաջ ու խելացի մարդ էր:

Հ. Տիգրան ի՞նչ կրօնական գործողութիւններ ըրաւ.

Պ. Այլ և այլ տեղեր մեհեաններ չինելով Յունաստանէն բերած աստուածներու արձաններըը հաստատեց ու անոնց քուրմեր հաստատեց:

Հ. Աստրուց երկիրը ինչ բան ըրաւ Տիգրան.

Պ. Աստրուց երկրին տիրոջ և անունց Սելևնէ թագուհին բռնեց սպաննեց. վասն զի Սելևկիացիքը յորդորեր էր Տիգրանէն ապստամբելու:

Հ. Հրէայք երբոր լսեցին Սելևնէ թագուհւոյն սպաննուիլը՝ ինչ ըրին.

Պ. Շատ ընծաներ տուին Տիգրանայ որ իրենց Ալէքսանդրա թագուհիին ձեռս մը չհասցնէ:

Հ. Ինչ պատճառաւ Հռովմայեցիք Միհրդատայ հետ թշնամացան.

Պ. Վասն զի Միհրդատ Կապադովկիոյ իշխելով իր Արիստաթէ տղան անունց թագաւոր դրաւ. Կապադովկիացիքը ալ Հռովմայեցւոց դիմեցին:

Հ. Հռովմայեցիք ալ ինչ ըրին.

Պ. Մէկէն Սիլլա քաջ զօրապետը խաւրեցին որ եկաւ Արիստաթէը և իրեն Գորգիաս զօրապետը վռնտեց, և Արիոբարզան Կապադովկացին թագաւորեցուց:

Հ. Միհրդատ ան տեղն ինչ ըրաւ.

Պ. Տիգրանէն օգնութիւն առնելով նորէն վռնտեց Հռովմայեցիները և Արիստաթէը թագաւորեցուց:

Հ. Հռովմայեցիք նորէն զօրք խաւրեցին Միհրդատայ վրայ.

Պ. Սյլ և այլ զօրավարներ խաւրեցին որոնց շատ անգամ յաղթեց Միհրդատ, և Սիկիղիա զօրավարին սպաննեց բերնէն վառ հալած ոսկի լեցընելով:

Հ. Հռովմայեցիք ովե՞ խաւրեցին զօրավար.

Պ. Լուկուլլոսը որ շատ հեղ կռուելով երբեմն յաղթուեցաւ երբեմն ալ յաղթեց Միհրդատայ:

Հ. Ինչո՞ւ համար Տիգրան Միհրդատայ վրայ բարկացաւ.

Պ. Վասն զի անգամ մը չարաչար յաղթուելով Լուկուլլոսէն փախաւ Տիգրանայ քով և Լուկուլ-

լաս շատ տեղերու տիրեց։ բայց վերջէն նորէն հաշտուեցաւ Տիգրան։

Հ։ Տիգրան ինչ պատերազմի մէջ յաղթուեցաւ Լուկուլլոսէն։

Պ։ Լուկուլլոս Հայաստան մտաւ Տիգրանակերտը պաշարեց։ Տիգրան Հռոմայեցւոց քիչուորութիւնը տեսնելով անհոգ կեցեր էր։ բայց Լուկուլլոս յանկարծ վրայ վազելով Տիգրանին զօրքերը հալածեց ու Տիգրանակերտը առաւ։

Հ։ Լուկուլլոս կրցաւ իր յաղթութեանը վրայ ուրախանալ։

Պ։ Չէ։ վասն զի լսեց որ Տիգրան՝ իր ուրիշ տեղ թողուցած զօրացը վրայ հասնելով լաւ մը ջարդ տուեր էր։ ու քիչ մը առեղն իր վրան ալ հասնելով Միհրդատին հետ, վերջապէս Հայաստանէն հալածեց։

Հ։ Հռովմայեցիք Լուկուլլոսին տեղը զի՞նչ խաբեցին։

Պ։ Պոմպէոսը, ու Լուկուլլոսը հո կանչեցին։

Հ։ Միհրդատ ինչու՞ ինքզինքը սպաննեց։

Պ։ Իր Փառնակէս որդին և Կատոր նախարարը կաշառք առած Հռովմայեցւոց կողմը անցան։ ինքն ալ բերդի մը մէջ անօթնական պաշարուելով ինքզինքը սպաննեց Պոմպէոսին ձեռքը չկենալու համար (39)։

Հ։ Տիգրան երբոր լսեց Միհրդատայ մեռնիլը ի՞նչ ըրաւ։

Պ։ Տեսնելով որ իր Տիրան որդին ալ ապստամբ եր է իրմէ ու ինքն ալ ծերացած, հաշտութիւն ըրաւ Պոմպէոսի հետ, ուսասով պատերազմը լմնցաւ։

Հ։ Տիգրան Պոմպէոսի երթալէն եաքը Հռովմայեցւոցմէ վրէժը առաւ։

Պ։ Միջագետաց նորէն տիրեց, ու Փաբիանոս Հռովմայեցւոց զօրապետը Եգիպտոս փախուց։

Հ։ Տիգրան ինչու՞ Արշէզ Պարսից Թագաւորին տուաւ նորէն նախագահութեան պատիւը։

Պ։ Վասն զի տեսաւ որ Հռովմայեցիք նորէն Ասորւոց ու Միջագետաց տիրելով իր վրայ կու գային օրմէց չէր կրնար դէմ դնել ծերութեանը պատճառաւ, ուստի Արշէզի տուաւ նախագահութիւնը՝ որ իրեն օգնէ։

Հ։ Հռովմայեցիք Փաբիանոսին տեղը զի՞նչ խաբեցին։

Պ։ Կրասոսը որ յաղթուելով սպաննուեցաւ Հայերէն ու Պարթեւներէն։

Հ։ Ո՞վ եղաւ Հայոց զօրավար Տիգրանայ ծերութեան առեն։

Պ։ Բարզափրան քաջ նախարարը որ Հայոց և Պարսից բանակին ընդհանուր սպարապետն էր։

Հ։ Բարզափրան ի՞նչ գործ ողութիւններ ըրաւ Ասորւոց երկրին մէջ։

Պ։ Բոլոր Ասորւոց երկրին տիրեց, և Երուսաղէմն ալ առաւ խաբեութեամբ։ Թէպէտ և վերջը նորէն առին Հռովմայեցիք Հայոց ձեռքէն։

Հ։ Ա՛ս յաղթութիւններէն եաքը Տիգրան ո՞ր չափ տարեկաց։

Պ։ Խիստ քիչ ուղղութիւնը հինգ տարուան մեռաւ յիսունչորս տարի թագաւորելէն եաքը (35)։

ԴԱՍ Ե.

Արտաւազդ Ա. Արշամ և Աբգար։

Հ. Ո՞վ յաջորդեց Տիգրանայ.
Պ. Արտաւազդ Ա. Տիգրանայ որդին։

Հ. Արտաւազդ ինչ ձամբայ բռնեց.
Պ. Ինքզինքը կերուխումի տուաւ, որով Անտոնինոս Հռովմայեցւոց զօրապետը բոլոր Ասորւոց երկրին և ուրիշ տեղերու տիրեց։

Հ. Անտոնինոս ինչ պատճառաւ Արտաւազդայ հետ հաշտուցաւ.
Պ. Վասն զի Արտաւազդ ընդդէմ իրեն խոստմանը ծածուկ Պարսից օգներ էր, միսխանակ զի Անտոնինոսին օգնելու խօսք տուեր էր։

Հ. Անտոնինոս ինչ կերպով Արտաւազդը բռնեց.
Պ. Ահելի խաբխըբելով քան թէ քաջութեամբ բռնեց զինքը ու ոսկիէ շղթայի զարկած Եգիպտոս տարաւ (30)։

Հ. Արտաւազդին բռնուելէն եաքը Հայաստանի վիճակը ինչ եղաւ.
Պ. Անտոնինոս տիրեց Հայաստանի ու տարին Հայքը իր Աղէքսանդր տղուն տուաւ, և վերինը Մարաց։

Հ. Արտաւազդը ով սպաննեց.

Պ. Կղէոպատրա թագուհին, որ գլուխը կարել տուաւ։

Հ. Ո՞րչափ տաեն Հռովմայեցիք Հայաստանի տիրեցին.
Պ. Խիստ քիչ. վասն զի Արշամ Տիգրանին էղբօրորդին՝ Պարսից օգնութեամբը Հռովմայեցիներըը վռնտեց ու ինչուան Կեսարիա տիրեց (28)։

Հ. Ինչո՞ւ համար Արշամ սկսաւ Հռովմայեցւոց հարկ տալ.
Պ. Օգոստոսէն խնդրեց Արտաւազդայ երկու աղաքը որ Հռովմ գերի էին. երբոր անիկայ չկրցաւ, ան տաեն Արշամ յանձն առաւ հարկ տալ, միայն թէ անոնք աղատին. ինչպէս որ ազատեցան։

Հ. Ի՞նչ պատճառաւ Հայոց թագաւորութիւնը երկու բաժնուեցաւ, այսինքն Վերին և Սորին.
Պ. Վասն զի Վերին Հայաստանի Հայերը որ Պարսից տակն էին, ձանձրացած անոնց տուած բռնութիւններէն, Օգոստոս կայսեր դիմեցին. ան ալ Արտաւազդայ տղան Տիգրանը թագաւոր դրաւ անոնց որ Փոքր Տիգրան ըսուեցաւ։ Ա՛ս Վերին Հայոց թագաւորութիւնը յիսունիրինը տարի քշեցին եաքը, Երուանդ Սորին Հայոց թագաւորութեան հետ միացուց։

Հ. Արշամ որչափ տաեն թագաւոր եղաւ.
Պ. Քսանըվեց տարի խաղաղութեամբ թագաւորեց։

Հ. Աբգար Արշամայ որդին իր հօրը յաջորդելով ինչ անուն հանեց.
Պ. Իր խելացկութեանը և հեզաբարոյութեանը համար ամենքն ալ սկսան Աւագ այր ըսել իրեն, որ վերջէն աղաւաղելով Աբգար ըսուեցաւ։

Հ. Ինչո՞ւ համար Հերովդէս Աբգարու հետ Թշնամացաւ.

Պ. Վասն զի Հերովդէս կ՚ուզէր որ իր պատկերն ալ Օգոստոսի պատկերին հետ մէկտեղ մեհեանները մէջը կախուի. Աբգար ասոնց չհանձնեցաւ, ու պատերազմ բացուելով մէջերնին՝ Հերովդէս չարաչար յաղթուեցաւ:

Հ. Ինչո՞ւ համար Աբգար Հռոմ գնաց.

Պ. Վասն զի Հերովդեսի կողմը եղողները ոխ պահելով Աբգարու վրայ ամբաստանութիւնները ըրին Օգոստոս կայսեր. ան ալ Հռոմ գնաց ու ինքզինքը արդարացուց:

Հ. Ինչո՞ւ համար Թագաւորական աթոռը Մըծբինէն Եգեսիա փոխադրուեցաւ.

Պ. Վասն զի Աբգար կ՚ուզէր Հռովմայեցւոցմէ ապստամբիլ. ուստի աթոռը Եգեսիա փոխեց ու սկսաւ ամրացնել զանիկայ:

Հ. Ի՞նչ բանէն զգուշացաւ Աբգար ապըստամբելու Հռովմայեցւոցմէ.

Պ. Տիբերիոս կայսեր ուրախակցութեան համար խրկուած Հայ դեսպաններըը անարգուեցան Հռովմայեցւոցմէ փուճ պատճառի մը համար:

Հ. Ի՞նչ արդեօք եղաւ որ Աբգար չկրցաւ ապըստամբիլ.

Պ. Աբտաշէր Պարսից Թագաւորը մեռնելով նոյն օրերը, Պարսկաստան գնաց Աբգար, ու անոր որդւոյը մէջ ինկած խռովութիւնը խաղաղցուց, Քրիստոսի 21 Թուին:

Հ. Ի՞նչ ձախորդութիւն հանդիպեցաւ Աբգարու Պարսկաստան.

Պ. Սասանիկ բորոտեցաւ որ բժիշկները չկրցան առողջացնել. վերջը Թադէոս առաքեալը բժշկեց:

Հ. Ի՞նչ կերպով Աբգար Քրիստոսի ծանօթացաւ.

Պ. Իմանալով որ իր ապստամբութեան խորհուրդը Տիբերիոս կայսեր ականջը հասեր է, դեսպաններ խրկեց Հռովմայեցւոց պաղեստին կեցող զօրապետին, որ զինքը արդարացընէն. դեսպանները աւանդելով հոն Քրիստոսի ըրած հրաշագործութիւնները՝ նա Քրիստոսի ըրած հրաշագործութիւնները՝ նա Քրիստոսի ըրած հրաշագործութիւնները՝ նա

ԴԱՍ Զ.

Ա.ևաևէ, Սահատրուկ և Երուանդ։

Հ. Աբգարու մեռնելէն ետև ինչո՞ւ խռովու-
թիւն ինկաւ Հայաստանի մէջ.

Պ. Վասն զի Անտնէ Աբգարու որդին Եգեսիոյ
մէջ թագաւորից ուղորէն կռապաշտութիւն սկը-
սաւ. իսկ Սահատրուկ Աբգարու քեռորդին Շա-
ւարշանի մէջ թագաւորից ու կ'ուզէր բոլոր հայ-
աստանի տիրել։

Հ. Անտնէ ինչպէս մեռաւ.

Պ. Երբոր իր թագաւորական պալատը նորո-
գել կուտար, սիւն մը կտնալով վրան սպաննեց
զինքը, չորս տարի թագաւորելէն ետքը (38)։

Հ. Անտնէի մեռնելէն ետև ո՞վ թագաւոր եղաւ
Հայաստանի.

Պ. Սահատրուկ՝ որ Եգեսացւոց երդում տուաւ՝
թողուլ որ ազատ պահեն գԲրիատաս։ Թէպէտ
վերջէն սակաւ իր երդմանը ու շատ մարդ նահատա-
կեց, ինչպէս նաև իր Սանդուխտ աղջիկը։

Հ. Սահատրուկ քաղաքական չինուածքներուն մէջ
ինչ եղեւելի գործք ըրաւ.

Պ. Մծբնի՝ որ երկրաշարժէ մը աւերուեր էր,
պահնչելի կերպով նորոգեց, ու քաղքին մէջ տեղը
իր արձանը կանգնեց ձեռքը գրամ մը տուած. ի-
մացնել ուզելով որ բոլոր ունեցածը ծախեր է։

Հ. Սահատրուկ ինչ կերպով մեռաւ.

Պ. Ոմն տաճն գիտուածովնեաւ մը զարնուե-
լով մեռաւ, երեսունըչորս տարի թագաւորելէն
ետքը։

Հ. Սահատրուկին ո՞վ յաջորդեց.

Պ. Երուանդ Բ. որ Թէպէտ և Արշակունի էր,
բայց թագաւորական ցեղէ չէր։

Հ. Երուանդ ինչպէս թագաւոր եղաւ.

Պ. Իրեն ըրած քաջութիւններովը և քաղցր
բարոյութեամբը ամենուն սիրտը իրեն քաշեց, ո-
րով Սահատրկոյ մեռնելէն ետև զինքը թագաւոր
դրին նախարարները։

Հ. Երուանդ իր թագաւորութիւնը ապահով
ըլլալու համար ինչ բան ըրաւ.

Պ. Բոլոր Սահատրկոյ ցեղը թրէ անցնել ը-
ուաւ, որոնցմէ միայն Արտաշէս անունով ոտն
Պարսկաստան փախաւ Սմբատ Բագրատունիին
ձեռքովը։

Հ. Ինչո՞ւ համար Երուանդ Մխիթարեաքը Հռով-
մայեցւոց տուաւ ու ինքը Վէրին Հայքը առաւ.

Պ. Վասն զի լսեց Արտաշէսի Պարսկաստան
փախչիլը և ուզեց իր թագաւորութիւնը ան կեր-
պով զօրացնել. ան պատճառաւ սէթոռն ալ Ար-
մաւիր փոխադրեց։

Հ. Երուանդայ ըրած շինուածներուն մէջ
որն է եղեւելին.

Պ. Երուանդաշատ քաղաքը իրեն գեղեցկու-
թեանը համար, ուր որ վերջէն սէթոռն ալ փո-
խադրեց, ու Բագարանը՝ իրեն մահճանիերուն հա-
մար։

Հ. Ի՞նչ կերպով Արտաշէս իր Թագաւորութեանը առաւ.

Պ. Դարեհ Պարսից Թագաւորին օգնութեամբը, որուն միջնորդ եղան Սմբատ և Պարսից նախարարները (88):

Հ. Երբոր Երուանդ լսեց Արտաշեսի գալը իր վրայ ինչ ըրաւ.

Պ. Որովհետև Ուռէացւոց վրայ պատերազմի գացած էր, մեկէն հաշտութիւն ըրաւ ու առատ վարձքով շատ զօրք ժողված սկսաւ Արտաշեսի վրայ երթալ:

Հ. Երբոր Հայերը լսեցին Արտաշեսի գալը՝ ինչ կերպով ընդունեցան զինքը.

Պ. Շատ ուրախութեամբ. որով շատ նախարարները ամբողջ իրենց գնդովը Արտաշեսի կողմը անցան, որոնցմէ մեկին էր Արբատ որ խիստ քաջ մարդ էր:

Հ. Ո՞ր կողմը յաղթեց.

Պ. Արտաշեսի կողմը, որով ստիպուեցաւ Երուանդ փախչիլ Երուանդաշատ:

Հ. Երուանդ ինչպէս մեռաւ.

Պ. Նորէն պատերազմը սաստկանալով Երուանդաշատը առնուեցաւ, ու հոն իր պալատին մէջ Երուանդն ալ սպանուեցաւ Արտաշեսի զօրքերէն (89):

ԴԱՍ Ե.

Արտաշէս երկրորդին հնչուռան Տրդատ:

Հ. Արտաշէս Բ. Թագաւորելով իր առջի գործքը ինչ եղաւ.

Պ. Իրեն բարեբարները մեծ պարգեւներով պատուեց. Սմբատը ընդհանուր սպարապետ ըրաւ, Արբամը երեն երկրորդ:

Հ. Ուրիշ որո՞ւ բարիք ըրաւ Արտաշէս.

Պ. Գիսակ նախարարին Նեբրեխ անունով որդւոյն որն որ մեծ նախարարութիւն ըրաւ Գիմաքսեան կամ Կամսարական անուանելով. որովհետև որ Գիսակ դէմքին կէսը կորնցուցեր էր պատերազմի մէջ Արտաշէսը ազատելու համար:

Հ. Արտաշէս որո՞նց հետ պատերազմ ըրաւ.

Պ. Անանց հետ որոնց յաղթեց և Թագաւորին ապան պատերազմի մէջ բռնեց:

Հ. Ի՞նչպէս լմնցաւ պատերազմը.

Պ. Անանց Թագաւորին Սաթինիկ աղջիկը Արտաշեսի ազաչելով իր եղբայրը ազատեց ու պատերազմը լմնցուց, և ինքն ալ Արտաշեսի Թագուհի եղաւ:

Հ. Արտաշէս քաղաքական բանեբուս մէջ ինչ բարեկարգութիւններ ըրաւ.

Պ. Անոնցմէ բանի կարգ կանոն դրաւ և ծաղկեցուց Հայաստանը. որով իրեններուն սիրելի և •

տարաց նախանձելի եղաւ Թէ ինքը և Թէ իր աշխարհքը։

Հ. Ի՞նչ մանաւանդ նախարարութիւն հաստատեց Արտաշէս.

Պ. Ազանաց կողմանէ Սաթինիայ համար եկած հարանածուները մանաւանդ ցեղ որոշեց Աւաւելեան անուանելով։

Հ. Արտաշէս եւեւէ եղաւ Հռովմայեցիներէն ապատամբելու.

Պ. Շատ ջանք ըրաւ սա բանիս. Տրայիանոսի տուրք տալը դադրեցուց, և Հռովմայեցւոց զօրաց քանի մը անգամ յաղթեց։

Հ. Արտաշէս ի՞նչ կրցաւ իր խորհուրդը առաջ տանիլ.

Պ. Չէ. վասն զի երբոր լսեց Տրայիանոսի անթիւ բազմութեամբը գալը, վախնալով՝ շատ ընծաներ առած դիմացը ելաւ ու անոր բարկութիւնը խլեցուց։

Հ. Ո՞ւր մեռաւ Արտաշէս.

Պ. Մարանդ գաւառը՝ Մարաց կողմերէն դառնալու առեն քաւասուներմէկ տարի Թագաւորելէն ետքը. այնպէս սպացին զինքը Հայերն՝ որ շատը իրենք ղրկեցին ապատնեցին գերեզմանին վրայ (129)։

Հ. Արտաւազդ ի՞նչ կերպով իր հօրը տեղը յաջորդելով ինչ գործողութիւն ըրաւ.

Պ. Չքօսասէր և անկարգ կեանք ունեցաւ. բոլոր իր եղբայրները քովէն վռնտեց, միայն Տիրանը քովը պահեց, իրեն յաջորդեցնելու համար։

Հ. Արտաւազդ ինչպէս մեռաւ.

Պ. Որսի երած առեն վէմ մը մէջ ինկաւ ու կորսուեցաւ, երկու տարի Թագաւորելէն ետքը։

Տիրան Ա. իր եղբօրը յաջորդելով ինչ ձամբայ բռնեց.

Պ. Եղբօրը անկարգ և անհոգ ձամբան. ան պատճառաւ տասուերկը տարի Թագաւորելէն ետև կառավարութիւնը Երախնաւու անունով իշխանին յանձնեց ու ինքը Եկեղեաց գաւառը քաշուեցաւ։

Հ. Սորը առեն Հռովմայեցիք ինչպէս էին Հայոց հետ.

Պ. Երբոր Անտոնիոս Պիոս կայսր եղաւ, Տիրան ինդակցութեան դեսպան իրկեց իրեն հարկին ալ մէկտեղ. Անտոնիոս սիրով ընդունեցաւ, և Թագ ու ծիրանի խաւրեց Տիրանայ՝ և ստակ մը կոխել տուաւ ձեռքը Տիրանայ ուղին վրայ դրած։

Հ. Տիրան ինչպէս մեռաւ.

Պ. Քանուերկու տարի Թագաւորելէն ետքը օր մը ձամբայ ընելու առեն՝ ձեան հիւս մը վրան փլաւ ու խղդեց զինքը (151)։

Հ. Տիրանին ո՛վ յաջորդեց.

Պ. Տիգրան Գ. իր ազգի եղբայրը, որ Պէրոզ Պարսից Թագաւորին հետ միացած յաղթեց Հռովմայեցւոց և Անթրիանոս զօրավարին ալ սպաննեց։

Հ. Տիգրան ատ յաղթութենէն ետքը ինչ ձախորդութեան հանդիպեցաւ.

Պ. Աւրելիոս կայսրը լսելով ատ եղածները՝ Վերոս Ղուկիոս իր կայսերակիցը խաւրեց որ եկաւ

իր Թշնամիներուն յաղթեց, ու Տիգրանին վրան խոշտալով պերսեթենե ազատեց, որ կինկանե մը խա-
բեբելով բռնուեր էր Միջագետքի կողմերը գա-
ցած առենը:

Հ. Տիգրան Գին ով յաջորդեց.

Պ. Վաղարշ իր որդին. ասոր առենը Հայաս-
տանի վրայ եկան Հիւսիսային ազգերը, ինքն ալ
քաջութեամբ պատերազմելով վռնտեց. բայց ինքն
ալ զարնուելով մեռաւ, քսան տարի Թագաւորե-
լեն ետքը:

Հ. Խոսրով Ա. Թագաւորելեն ետև իր առջի
գործողութիւնը ո՞րն եղաւ.

Պ. Հիւսիսային ազգայ վրայ պատերազմի ե-
լաւ, իր հօրը մահուան վրէժը առնելու համար ու
յաղթեց (214):

Հ. Անտոնիոս Կարակալլա Խոսրովու ինչ բան
ըրաւ.

Պ. Կարակալլա երբոր Միջագետքի կողմերը ե-
կեր էր, Խոսրով դիմացը գնայ պատուհելու հա-
մար զինքը. բայց Կարակալլա զինքը չթողուց որ
դառնայ, ինչուան որ Հայերը կատաղած սկսան Կա-
րակալլային վրայ վազել:

Հ. Ինչո՞ւ համար Արտաշիր Պարսից Թագաւո-
րը եռևէ եղաւ Խոսրովը սպաննելու.

Պ. Արտաշիր Պարսից Արտաւան Թագաւորը
սպաննեց որ Արշակունի էր ազգէ ու ինքը Թա-
գաւոր եղաւ. ասոր բանից համար Խոսրով անոր
դէմ ելաւ, և շատ անգամ յաղթելով ինչուան
Ինդկատան փախուց զինքը և չէր Թողուր որ
հանգիստ Թագաւորէ:

Հ. Արտաշիր երբոր պատերազմով չկրցաւ Խոս-
րովու յաղթել ինչ ըրաւ.

Պ. Մեծամեծ բաներ խոստացաւ ան մարդուն
որ Հայաստան երթալով Խոսրովը սպաննէ:

Հ. Ո՞վ յանձն առաւ ասոր բանս.

Պ. Անակ Պահլաւունին, որ Հայաստան եկաւ,
ձևացընելով որ Արտաշրի բռնութիւններէն փա-
խեր է: Ճամբան գալու առենը որդի մը ունեցաւ,
այն իակ է մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը:

Հ. Անակ ինչպէս կատարեց իր չարութեան
խորհուրդը.

Պ. Օր մը ոնսի առնն նետով զարկաւ սպան-
նեց Խոսրովը, ու երբոր Թագաւորին քովի մար-
դիկները զինքը կ'ուզէին սպաննել, փախչելու ա-
տեն գետը ինկաւ ու խեղդուեցաւ (259):

ԴԱՍ Ը.

Տրդատ և Խոսրով Բ:

Հ. Մեծին Խոսրովու մեռնելէն ետև Հայոց վի-
ճակը ինչպէս եղաւ.

Պ. Եկաւ Արտաշիր ու բոլոր Հայոց տիրեց և
Խոսրովու ցեղը ջնջել առաւ, որմնդիմ Տրդատա-
նուհուով մնաց մը և անոր Խոսրովիդուխտ քոյրը ա-
պատեցան Արտաւազդ Մանդակունիին և Օտա Ա-
մատունիին ձեռքովը:

Հ. Տրդատը ո՞ւր փախուց Արտաւազդ Ման-
դակունին.

Պ. Նախ կեսարիա ու վերջը Հռոմ, ուր շատ քաջութիւններ ընելով մեծ պատուոյ հասաւ։

Հ. Աբատաշիր ծրչափ տարեն տիրեց Հայոց վրայ և ինչ գործողութիւն ըրաւ.

Պ. Աբատաշեսի տնկած սահմանապահի քարեբարեն վրայի արձանագրութիւնները աւերել տալով իր անունը գրել տուաւ պարսկերէն. քանեւվեց տարի իշխեց Հայոց և Պարսից վրայ ու մեռաւ։

Հ. Աբատաշէին ով յաջորդեց.

Պ. Իր Շապուհ որդին, որուն տարեկան Տրդատ Հռոմայեցի զբօսով եկաւ ու տուաւ իր հայրենական ժառանգութիւնը։

Հ. Տրդատ ինչ արդիւնք ըրաւ որ Հռոմայեցիք իրեն օգնութիւն տուին.

Պ. Դիոկղետիանոսի կողմանէ Գողեացւոց Հռչէ հսկայ ու քաջ Թագաւորին հետ մենամարտութիւն ընելով, յաղթեց անոր ու Հռոմայեցիքը մեծ նախատինքէ մը ազատեց։

Հ. Երբոր Տրդատ Կեսարիա հասաւ՝ Հայերը ինչպէս ընդունեցան զինքը.

Պ. Ամեն նախարարները դիմացը ելլելով զինքը նորէն Թագաւոր դրին, ու բոլոր Հայաստան մեծ խնճոյք եղաւ (286)։

Հ. Տրդատ Հայաստանի տիրելէն առաջ ուրիշ ինչ գործողութիւն ըրաւ.

Պ. Եկեղեցւոյ գաւառը դնաց Աթանհաւոյ շնորհակալութիւն ընելու համար, և հոն խմնալով որ Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնեայ ու Աթանհաւոյ որդին է, շատ չարչարեցին եաև զինքը խոր վիրապի մը մէջ ձգել տուաւ։

Հ. Ինչպէս Տրդատ Շապուհը վանեց Հայաստանէն.

Պ. Իրեք անգամ Շապուհ պատերազմի ելաւ, բայց իրեք անգամ ալ յաղթուելով Հայաստանը ձգեց ու ինչուան Աթոպատականի աշխարհը փախաւ։ Ուրիշ շատ յաղթութիւններ և քաջութիւններ ընելով Տրդատ բոլոր մօտակայ ազգերուն սիրտը վախ ձգեց։

Հ. Տրդատ քրիստոնեանները հալածելուն համար ինչ պատիժ կրեց.

Պ. Որովհետև Հռոմէն եկած Հռիփսիմեան կուսանքները նահատակեց, ինքն ալ Աստուծմէ պատժուելով որսի տարեն խոզի կերպարանք փոխուեցաւ ու վայրենացաւ. իշխաններէն շատն ալ նոյն պատիժները ունեցան։

Հ. Ո՞վ բժշկեց զՏրդատ.

Պ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, որ տասնըչորս տարի վիրապը կենալէն ետքն ալ դեռ ողջ էր Աստուծոյ հրաշքովը. վիրապէն ելլելով բժշկեց զՏրդատը և բոլոր նախարարները, և զՔրիստոս քարոզելով զամենքը մկրտեց. ինքն ալ Կեսարիա իջնելով արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ։

Հ. Տրդատ քրիստոնեայ ըլլալէն եաև ինչ մասնաւոր գործողութիւն ըրաւ.

Պ. Լսելով որ Կոստանդիանոս ալ քրիստոնեայ եղեր է, սրբոյն Գրիգորի հետ մէկտեղ Հռոմ գընաց, ուր որ սուրբ Սեղբեստրոս պապը հրաման տուաւ որ Լուսաւորչայ աճիւնն ալ պատրիարքական աճուռ տեղափ (319)։

Հ. Տրդատ Հռոմէն դառնալէն եաև ինչպէս դաւ Հայաստանը.

Պ. Շապուհ Հիւսխոյին ազգայ հետ միացած Հայաստանի վրայ վազելը էր, Տրդատ շուտով մը պատերազմի պատրաստուելով զամենքը վռնտեց, և Հիւսխոյին ազգայ Գնդեհոն անունով քաջ զօրավարը մեկ զօրնուածքով ձիովը մեկտեղ երկու ձգեց: Այ պատերազմներով Տրդատ բոլոր Հայոց քաղաքները ազատեց Պարսից ձեռքէն՝ ո-րոնց որ քանուելեամբ տիրեր էին.

Հ. Ի՞նչպէս մեռաւ Տրդատ.

Պ. Տեսնելով նախարարաց անկարգութիւնները, Թոզուց Թագաւորութիւնը ու Լուսաւորչայ ձգնարանը քաշուելով հոն կը բնակէր. նախարարները կրկին անգամ զինքը կանչելէն հաքը Թոյն տուին իրեն. ու սասնկով մեռուցին յիսունըվեց տարի Թագաւորելէն հաքը (341):

Հ. Տրդատայ մեռնելէն հաև ինչ խռովութիւն ներ եղան Հայաստանի մէջ.

Պ. Աղօսիք ապստամբեցան ու Սահատուկ անունով մեկը իրենց վրայ Թագաւոր դրին. նոյնպէս նաև Բակուր Ալձնեաց էշխանը. իսկ Բզնունիք, Մամիկոնէք և Որդունիք իրարու դէմ ելլելով մեկզմեկ չարչարեցին:

Հ. Տրդատայ մվ յաջորդեց.

Պ. Նախարարները տեսնելով աս անկարգութիւնները սուրբ Վրթանես կաթուղիկոսին հետ միացած Տրդատայ որդին Խոսրով Բ. Թագաւոր դրին Կոստանդ կայսեր հաճութեամբը. որն որ Թագ ու Ծիրանի խաբեց:

Հ. Խոսրով Բ. Թագաւորելէն հաև ինչ գործողութիւններ ըրաւ.

Պ. Իրեն մեղկութեամբն ու անհոգութեամբը

ամենևին յիշատակի արժանի գործողութիւն մը չըրաւ. Դուին (պրս. Բ-ր.) քաղաքը շինեց ու ի-թոռը հոն փոխադրեց:

Հ. Խոսրովու աաեն ինչ եղևելի ղօրավար կար Հայաստան.

Պ. Վահան Ամատունին, որ մեծ յաղթութիւն մը ըրաւ Շապհոյ և Հիւսխոյին ազգայ դէմ, ո-րոնք առաջ Խոսրովու յաղթելով ինչուան Վաղարշապատ հասեր էին:

Հ. Խոսրով ծրչափ աաեն Թագաւորեց.

Պ. Ինը տարի. երեն յաջորդեց իր որդին Տիրան Բ. (353):

ԴԱՍ Թ.

Տիրան և Արշակ.

Հ. Տիրան ինչ կերպով Թագաւորեց.

Պ. Սուրբ Վրթանեսին հետ Սահմոլ գնաց ու հոն Կոստանդ կայսրը Թագաւորեցուց զինքը:

Հ. Շապուհ երբոր լսեց Տիրանայ Սահմոլ երթալը ինչ ըրաւ.

Պ. Անթիւ զօրք տալով իր Ներսեհ եղբօրը ձեռքը Հայաստան խաբեց որ երթայ Թագաւորէ Հայոց վրայ. բայց Արշաւիր Կամսարական, որուն որ յանձնուած եր Հայաստանը, նախարարները միացնելով յաղթեց ու վռնտեց զՆերսեհը:

Հ. Տիրան երբոր Հայաստան գարձաւ ինչպէս սկսաւ կառավարել իր աերութիւնը.

Պ. Բոլորովին անհարգութեամբ ու թուլութեամբ. ան պատճառաւ Տապուհին հետ հաշտուելիւն խօսեցաւ ու սկսաւ տուրք տալ անոր ալ, ինչպէս Յունաց կու տար:

Հ. Տիրան ինչո՞ւ համար տուրք Յուսիկ հայրապետը սպաննեց.

Պ. Վասն զի երբոր Յուլիանոս ուրացող կայսրը Պարսից վրայ կ'երթար, իր պիղծ պատկերը խաբեց Տիրանայ որ եկեղեցւոյ մէջը կախէ. երբոր տուրք Յուսիկ դէմ դրաւ ան բանիս և պատկերը ոտքին տակը առնելով կոտրեց, թագաւորը բարկութենէն այնչափ ծեծել տուաւ տուրք հայրապետը՝ որ մեռաւ:

Հ. Ինչո՞ւ համար Տապուհ Տիրանին աչքերը փորել տուաւ.

Պ. Վասն զի Տիրան իր երդմանը դէմ Յուլիանոսին օգներ էր Պարսից վրայ երթալու առեն. Տապուհ ալ ասոր բանիս վրէժը առնելու համար խաբէութեամբ իրեն կանչեց Տիրանը ու աչքերը վրան տալով Կուաշ աւանը խաբեց (362):

Հ. Տիրան ինչպէս մեռաւ.

Պ. Անգամ մը Տիրան իր Արշակ տղուն յանդիմանութեան թուղթ մը գրեց. Արշակ ալ բարկանալով սպաննել տուաւ զհայրը:

Հ. Արշակ իր հօրը տեղը յաջորդելով ինչպէս կառավարութիւն ունեցաւ.

Պ. Հօրը պէս անհարգ և քան զայն ալ գէշ. որով ազգին մէջի եղած ամէն տեսակ խեղճութեանց և անհարգութեանց պատճառ և յառաջացուցիչ եղաւ:

Հ. Արշակայ առեն ինչ երևելի մարդ կար Հայաստանու մէջ.

Պ. Մեծն Ներսէս մեր տուրբ հայրապետը որ Լուսաւորչայ թոռանը թոռն էր, որն որ շատ մեծամեծ բարիքներ ըրաւ թէ ազգին և թէ թագաւորութեան:

Հ. Ինչո՞ւ համար Վաղինախանոս Արշակայ վրայ պատերազմ բացաւ.

Պ. Վասն զի Արշակ Վաղինախանոսի խաւարած դեսպաններըը, որոնք եկեր էին համոզել զԱրշակը որ Պարսից ծառայութենէն ետ կենայ՝ արհամարհեց. ան առեն Վաղինախանոս ալ մեծ պատրաստութեամբ իր թիկունս զօրաւոր խաբեց որ երթայ առ արհամարհանայ վրէժը լուծանէ:

Հ. Ո՞վ ինչեցուց Վաղինախանոսի բարկութիւնը.

Պ. Մեծն Ներսէս որ Սատմոլ գնաց ու իրեն պանչելի և քաղցր խօսուածքովը թագաւորը համոզեց, ու ամէն բան կարգի դրաւ.

Հ. Արշակայ ըրած անիրաւ սպանութիւնը ո՞րն է.

Պ. Իր Տրդատ եղբօրը Գնել որդւոյն սպանութիւնը, ունեցած հարստութեանն ու հինգանը վրայ նախանձելով. որով Գնելայ Փառանձեմ կինը իրեն երկրորդ կին առաւ. ան ալ զՈւլխմպիադա Արշակին կինը թունաւորեց:

Հ. Արշակ ինչպէս չէնցուց Արշակաւան քաղաքը.

Պ. Ա՛ս քաղաքը իր անուանովը չինել սկսաւ և հրամայեց որ ամէն անգամ և չարագործ մարդիկ հոն փախչելով ազատին. որով քիչ առեն մէջ բոլոր քաղաքը լեցուեցաւ:

Հ. Ա՛ս անիրաւ հրամանին հետեւանքէն ի՞նչ եղաւ.

Պ. Նախարարները բարկացած Շապուհը իրենց օգնութիւն կանչեցին, ու անոր օգնութեամբը Արշակաւանը կործանեցին. բնակիչները ջարդեցին բայց՝ի սղոցմէ, և Արշակն ալ փախուցին որ գնաց Վրաց ապաւինեցաւ:

Հ. Արշակ Վրացւոցմէ օգնութիւն գտա՞ւ.

Պ. Շատ մը զօրք ժողված նախարարներուն հետ սկսաւ պատերազմիլ. և երկու տարիի չափ երկու կողմէն ալ մեծամեծ ջարդեր եղան. ան միջոցին Վաղէս կայսրն ալ Արշակայ դէմ զօրք խաւրեց իմանալով որ Շապուհին օգնելը է Ցունաց դէմ:

Հ. Արշակ երբոր ամեն կողմանէ թշնամիներէ պաշարուեցաւ, ի՞նչ հնարք մտածեց.

Պ. Ուրիշ անգամներուն պէս նորէն սուրբ Ներսեսի ապաւինեցաւ. ան ալ շատ զժուարութեամբ նախարարները Հաշտարուց Թագաւորին հետ, և վերջը Արշակին որդին Պապը պատանդ առած՝ Սամոսատ Վաղէս կայսեր գնաց. բայց Վաղէս ա՛ր բնաւ չուզեց մեկէն քշել տուաւ սուրբ Ներսէսը և գալինքն ալ չկրնցուներ:

Հ. Երբոր լսեց Արշակ սուրբ Ներսեսի աքսորուելը ի՞նչ ըրաւ.

Պ. Սկսաւ արձակ համարձակ իր անկարգութիւնները ընել. շատ մարդ անիրաւութեամբ ըսպանանէց, որով նորէն խռովութիւններ սկսան:

Հ. Արշակ ի՞նչպէս բռնուեցաւ.

Պ. Շապուհ ան ունենալով Արշակայ վրայ՝ նորէն շատ զօրք խաւրեց որոնց հետ միացան նաև նախարարներն, ու Արշակը ան ասիճան նեղը խոթեցին որ Պարսից անձնատուր եղաւ:

Հ. Շապուհ ի՞նչ ըրաւ զԱրշակը.

Պ. Լա՛ւ մը յանդիմանելէն ետքը Անյուշ բ-սուած բերդը խաւրեց:

Հ. Շապուհ ի՞նչ կերպով եւեւէ եղաւ Հայերը արեւ տպաշա ընելու.

Պ. Մերուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան ուրացող նախարարներուն Թագ խոտոտացաւ և շատ զօրք տուաւ ձեռքերնին որ երթան Հայերը արեւապաշտ ընեն. անոնք ալ ամեն չարիք հասուցին Հայոց (378):

Հ. Արշակ ի՞նչպէս մեռաւ.

Պ. Լսելով բոլոր ան եղած չարիքները՝ յուսահատելով ինքզինքը սպաննեց, քսան տարիի չափ Թագաւորելէն ետքը:

ԴԱՍ Ժ.

Պապ և Վարազդատ:

Հ. Ի՞նչ կերպով Հայերը ան Թշուառութիւնները տարան:

Պ. Սրբոյն Ներսեսի տղաքոցը՝ Մեծն Թէոդոս Արշակին որդին Պապը Թագաւոր դրաւ Հայոց վրայ, և Ցունաց զօրքով Հայաստան խաւրեց, որոնք եկան Պարսիկները վռնտեցին (381):

Հ. Ա՛ս պատերազմին տանը սուրբ Ներսէս ի՞նչպէս օգնեց Հայոց քահանային.

Պ. Երբոր երկու կողմէն ալ տհեղ պատրաստութեամբ կը պատերազմէին՝ սուրբ Ներսէս Նըպատ լեռան վրայ եղաւ ու բաղխատարած սկսաւ

աղօթել, որով քամի մը եկաւ որ Պարսից նաւերը իրենց վայր կը դաշնէր. և արեւուն դէմը ամպ մը գալով արեւը ծածկեց որ Հայերը չկռնեն:

Հ. Ո՞վ լմնցուց պատերազմը.

Պ. Սմբատ Բագրատունին, որ Մերուժան Հայ ուրացող իշխանին եաւէն վազելով բռնեց գինքը ու տպզուցած շամիուրի երկաթը պատկառելի գլուխը դնելով ըսաւ. «Այով կը պատկեմ զքեզ, Մերուժան, որ կ՚ուզէիր Թագաւոր ըլլալ Հայոց». ու այնպէսով ապանեց գինքը, որով և պատերազմը լմնցաւ:

Հ. Պապ երբոր Թագաւորեց ինչ գործողութիւն ըրաւ.

Պ. Յունաց գօրքը առատ պարգևով եաւ Ճամբեց, և ինքը ու նախարարներն ալ մկիտեղ խօսք առին սրբոյն Ներսեսի որ անկէ եաքը Հաւատարմութեամբ ծառայեն Աստուծոյ:

Հ. Ինչու համար Պապ սուրբ Ներսեսի Թոյն տուաւ.

Պ. Վասն զի սկսաւ իրեն ըրած չարութիւններն և անկարգութիւնները յանդիմանել. Պապ չկրնալով յայտնի մեռցնել՝ Թոյն տուաւ անոր (383):

Հ. Ինչու համար Թէոդոս կայսր Պապը սպանել տուաւ.

Պ. Վասն զի Պապ՝ կայսերէն ապստամբելով, Տերեւտիանոս կայսեր զօրավարը՝ վռնտեց Հայաստանեն. բայց վերջը յաղթուելով բռնուեցաւ. Թէոդոս կայսրն ալ դլուխը կարել տուաւ իրեք տարի Թագաւորելէն եաքը:

Հ. Պապին տեղը ո՞վ յաջորդեց.

Պ. Թէոդոս Վարազդատ Արշակունի կարիճը Թագաւորեցուց, որ իրեն քաջութիւններով եւ թևևլի եղած էր Յունաց մէջ:

Հ. Վարազդատայ գլխաւոր քաջութիւնները որո՞նք են.

Պ. Թագաւոր չեղած՝ անգամ մը հինգ Լանդբարատացի դէմ ելլալով մէկմէկու եաւէ հինգն ալ սպանեց. բերդի մը վրայ վազելով տանըեօթը հոգի եաւէ եաւ նետով սպանեց ու ինքը չվնասուեցաւ. գարձեալ քանիւերիու հանդուն գետի մը վրայէն մէկ շնչով ցատկեց:

Հ. Ինչու համար Վարազդատ կայսերէն ապըստամբեցաւ.

Պ. Տեսնելով որ Յունաց զօրավարները կ՚ուզէն իր վրայ իշխել՝ չկրնալով սա բանիս, Շապուհ հին օգնութեամբը ուզեց ապստամբել:

Հ. Աւաջ գնաց Վարազդատայ ապստամբութեան խորհուրդը.

Պ. Չէ. վասն զի լսելով որ կայսրը խմացեր է սա բանս, Կոստանդնուպոլիս գնաց որ գինքը արդարացնէ. կայսրը բարկութենէն առանց տեսնալու մէկէն քշել տուաւ գինքը հեռու կղզի մը:

Հ. Վարազդատայ աքսորութենէն եաքը ինչ փոփոխութիւն եղաւ Հայոց Թագաւորութեան մէջ.

Պ. Թէոդոս՝ Պապայ երկու որդիքը այսինքն Արշակն ու Վաղարշակը Թագաւոր դրաւ Հայոց վրայ, որպէս զի թէ որ մէկը ապստամբի՝ մէկալը հաւատարիմ մնայ:

Հ. Սա երկու Թագաւորներէն որո՞ր դրին իրենց աթոռները.

Պ. Արշակ Թուին դրաւ իր աթոռը. խակ Վաղարշակ Երիզա դրաւ, որն որ և ոչ տարի մը Թագաւորելով մեռաւ (838)։

Հ. Վաղարշակին մեռնելէն ետև՝ ուրիշ ինչ նոր փոփոխութիւն եղաւ.

Պ. Յոյնք և Պարսիկք որոշեցին նոյն միջոցին որ Հայաստանին Արևելեան կողը Պարսից իշխանութեան տակը ըլլայ՝ Աբեմաեանը Յունաց. ատ պատճառաւ Արշակ չուզելով Պարսից ծառայել՝ Յունաց մասը գնաց ու աթոռը Երիզա փոխեց։

ԴԱՍ ԺԱ.

Խոսրով Գ. Վռամշապուհ և Աբուսահակ Գ.։

Հ. Երբոր Արշակ իրեն նախարարներովը մեկուեղ Յունաց մասը գնաց, Պարսիկք ընդ դրին Թագաւոր իրենց մասին մէջ.

Պ. Խոսրով անունով մեկը Արշակունեաց ցեղէն։

Հ. Ինչու՞ համար Արշակայ և Խոսրովու մէջ պատերազմ բացուեցաւ.

Պ. Վասն զի քանի մը նախարարներ Արշակայ կողմէն Խոսրովին մասը անցնելու առիթներն, յաջողակեցան Արշակայ գանձերը և Խոսրովին տալ։ Արշակ ազաչանքով ուզեց իր գանձերը, բայց երբոր Խոսրով մեկ չըրաւ, պատերազմ բացուեցաւ մէջերնին։

Հ. Ո՞ր կողմը յաղթեց.

Պ. Երկու կողմանէ ալ սաստիկ չարդ ըլլալէն

հաքը՝ Խոսրով յաղթեց։ Արշակ քիչ մը առեն ալ տպրեալէն հաքը մեռաւ։

Հ. Արշակայ տեղը ընդ Թագաւոր դրին Յոյնները.

Պ. Թագաւորի տեղ յոյն կոմս մը դրին ու Գազաւան քաջ հայ իշխանն ալ սպարապետ։

Հ. Յունաց բաժինն Հայերը աս քանա երբոր տեսան ինչ ըրին.

Պ. Նախարարները ապստեցին Խոսրովու որ զիրենք ալ իր մասին մէջը ընդունի և իրենց տալի կալուածները տայ. Խոսրով յանձն առաւ և առավ զօրացած կայսեր խօսք առաւ, որ բոլոր հարկը կը վճարէ Թէ որ ինքը իշխէ Յունաց բաժինն ալ կայսրն ալ հաւանեցաւ։

Հ. Ինչու՞ համար Շապուհ Խոսրովին վայ խաւրեց իր Աբուսահը որդին.

Պ. Նախարարներէն ամանք Թշնամութիւն ունենալով Խոսրովին հետ, գայլն սուտ ամբաստանութիւն ըրին Շապուհին Թէ Խոսրով ի՛ուզէ սպրատամբել. ան ալ շատ զօրքով իր Աբուսահը որդին խաւրեց։

Հ. Աբուսահը ինչ կերպով բռնեց Խոսրովը.

Պ. Խոսրով տեսնելով որ ամեն կողմանէ անօգնական մնաց՝ Աբուսահի քով գնաց. ան ալ շղթայի զարկած Անյուշ բերդը խաւրեց զինքը ու Խոսրովին Վռամշապուհ եղբայրը Թագաւորեցուց (392)։

Հ. Վռամշապուհ ինչպէս Թագաւորութիւն ըրաւ.

Պ. Խաղաղութեամբ ու խելացի կերպով, և իրեն հաւատարիմ հպատակութեամբը Պարսից Վռամկրման Թագաւորին ալ շատ սիրելի եղաւ։

Հ. Վռամ Կրմանի ինչ փոխարէն ըրաւ Վռամշապուհին հաւատարմութեանը.

Պ. Իր Խոսրով եղբայրը Անյուշ բերդէն հանեց ու պատուով կը պահէր:

Հ. Վռամշապուհի առենը ինչ ուսումնական յառաջադիմութիւն ըրաւ ազգերնիս.

Պ. Սուրբ Սահակ և սուրբ Մեսրոպ տեսնելով ազգին խաղաղութիւնը և Վռամշապուհին ուսումնասիրութիւնը, եւեւէ եղան հայերէն գիրերը գըտնալու, ու գպրոցներ բանալով ազգին ուսումնական կենդանութիւն տուին (406):

Հ. Վռամշապուհ ո՞րչափ առեն թագաւորեց.

Պ. Վեցնըմեկ տարի՝ ամենայն բարեկարգութիւն և ուղղութիւն ընելով:

Հ. Վռամշապուհին տեղը ո՞վ թագաւորեց.

Պ. Նորէն Խոսրով թագաւորեց երկրորդ անգամ, որովհետև Վռամշապուհին Արտաշէս որդին դեռ պզտիկ էր:

Հ. Խոսրով Գ. երկրորդ անգամ ո՞րչափ առեն թագաւորեց.

Պ. Մէկ տարի միայն ու մեռաւ (414):

Հ. Խոսրով Գ.ին եղբը ինչ պատճառաւ Հայաստան տանէնուվրայ եղաւ.

Պ. Վասն զի Ցազկերտ ուզելով որ Հայերը կրակապաշտ ընէ, իր որդին Շապուհը Հայոց թագաւոր դրաւ:

Հ. Ի՞նչ կերպով Ցազկերտի աս խորհուրդը առաջ չգնաց.

Պ. Գանի մը տարիէն Ցազկերտ հիւանդացաւ.

ան պատճառաւ Շապուհ ալ Պարսկաստան դնաց որ թագաւորութիւնը առնէ. բայց Ցազկերտ մեռաւ ու ինքն ալ սպաննուեցաւ:

Հ. Շապուհին երեթալէն եւս նախարարները ինչ ըրին.

Պ. Շապուհին Թողուցած զօրացը վրայ վազեցին ու աղէկ չարդ մը տալով փախուցին. բայց Վռամ Պարսից թագաւորէն վախնալով ամենքն ալ ցրուեցան ու իրենց բերդերը քաշուեցան:

Հ. Վռամ Խոսրովին տեղը ով՞ թագաւոր դրաւ Հայոց վրայ.

Պ. Ազգերնիս լաւ մը չարչարելէն ետքը, թագաւոր դրաւ Վռամշապուհին Արտաշէս որդին տասներուերը տարուան, ու անունն ալ փոխելով Արտաշիր դրաւ:

Հ. Արտաշէս կամ Արտաշիր ինչպիսի կառավարութիւն ունեցաւ.

Պ. Անկարգ ու մոլի ըլլալով ամենուն ատելի եղաւ:

Հ. Ի՞նչպէս վերջացաւ Արշակունեաց թագաւորութիւնը.

Պ. Նախարարները ձանձրացած Արտաշէսի անկարգութիւններէն, Վռամին աղաչեցին որ թագաւորութիւնին վերցնի ու իրենց վայ պարսիկ մարզպան մը դնէ. Վռամ ալ կատարեց խնդիրքնին:

Հ. Ձեղմէ մէկը որ թագաւորութեան վերցուելուն դէմ կենայ.

Պ. Սուրբ Սահակ հայրապետը շատ չանցնած աթոռներուն չար միտքը փոխել, նաև Վռամայ

առջեն ալ պաշտպանեց Արտաշէսը. բայց Վռամ մարդկ չընդունելով բանտ գնել տուաւ զինքը ու Արտաշէսն ալ աքսորեց (428):

Հ. Արտաշէս ո՞րչափ տարի թագաւորեց.
Պ. Վեց տարի. աքսորուելէն վերջն ալ քանի մը տարի ապրեցաւ ու մեռաւ:

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿԸ

ԴԱՍ ԺԲ.

Վ. Հիմնիրշապուհ և Վ. արդիանաց պատերազմը:

Հ. Ալշակունեաց թագաւորութիւնը վերնալէն ետև Հայաստանի մէջ ի՛նչ եղաւ.
Պ. Պարսից թագաւորը իր կողմէն իշխան մը կը խրկէր որ Հայաստանի հարկը ժողվէ, և հոն նստելով աչք ունենայ Հայոց հաւատարմութեանը վրայ. ասոր իշխանը Մարզպան կ'ըսուէր:

Հ. Ո՞վ եղաւ առաջին Մարզպանը.
Պ. Վ. Հիմնիրշապուհ անունով պարսիկ մը:

Հ. Ի՞նչ աչքով կը նայէր ասիկայ Հայոց վրայ.
Պ. Բնութեամբ լաւ մարդ ըլլալով խիստ ազնիկ նայեցաւ ազգը, տասնըչորս տարի:

Հ. Վ. Հիմնիրշապուհին տեղը ո՞վ դրուեցաւ մարզպան.
Պ. Վասակ Սիւնեաց իշխանը, որ իր ազգին ամենայն չարիք հասուց (442):

Հ. Ի՞նչ պատճառաւ Յազկերտ պարսիկ մարզպանի տեղ Վասակը դրաւ.

Պ. Որպէս զի անով Հայոց սիրտը վաստըկի և վերջը ուզածը ընէ:

Հ. Ուրիշ ինչ հնարք բանեցուց Յազկերտ Հայերը կրակատաշտ ընելու.

Պ. Հրաման հանեց որ Հայերը իրեն զօրք տան, որպէս զի տով ազգին մեծերը և պատերազմական զօրութիւնը հեռացընէ որ չկարենան իրեն դէմ դնել:

Հ. Հայերը Յազկերտին հրամանը կատարեցի՞ն.

Պ. Միեւնոյն ժամանակ բազմաթիւ գունդ մը խաւրեցին. որոնց հետ մեկտեղ գային խել մը նախարարներ ու քահանաներ:

Հ. Ի՞նչ ըրաւ Յազկերտ այս զօրքերը.

Պ. Հոնաց վրայ պատերազմի ատրաւ, ուր որ վեց եօթը տարի պատերազմով յոգնեցընելէն ետև, սկսաւ զամենքն ալ կրակատաշտութեան սոխել:

Հ. Նախարարներէն ով յայտնի Թագաւորին հրամանին դէմ դնելով նահատակուեցաւ.

Պ. Գարեգին քաջ նախարարը որ Թագաւորին ըսածներուն դէմ դնելով խաղք ըրաւ զինքը ու նահատակուեցաւ:

Հ. Ուրիշ որո՞նք նահատակուեցան.

Պ. Ատոմ Գնունի և Մանաճիհր Ռշտունի իրենց զօրքերովը. որոնք տեսնելով Յազկերտին անօրէն հրամանը՝ փախեր էին. բայց Յազկերտ եւ տեսնէն զօրք ղրկեց ու զամենքն ալ Թրէ անցընել տուաւ:

Հ. Ան միջոցին որ նախարարներէն ոմանք Պարսկաստան էին՝ Հայաստան ինչ վիճակի մէջ էր.

Պ. Յազկերտ՝ Դենշապուհ անուն քրիստոնեայ մը խաւրեց՝ որ Հայերը շատ նեղէց, ու բաց ասկէ Թուղթ մ'ալ գրել տուաւ Հայոց՝ ստիպելով որ կամ պատասխանը տան և կամ Պարսից կրօնքը ընդունին. Յովսէփ կաթուղիկոս ազգին միաբան հաստատուն ոգիով Թղթին պատասխանը գրեց:

Հ. Յազկերտ երբոր առաւ Թղթին պատասխանը ինչ ըրաւ.

Պ. Սաստիկ բարկացաւ ու հրաման գրեց որ բոլոր ազգին մեծամեծ նախարարները Պարսկաստան գան:

Հ. Նախարարները հնազանդեցա՞ն.

Պ. Ձարեհինին հասնելով երան գային՝ որոնց գլխաւորներն էին Վասակ և Վարդան:

Հ. Երբոր նախարարները Պարսկաստան հասան՝ Յազկերտ հետերնին ինչպէս վարուեցաւ.

Պ. Մէկէն բանտ գնել տուաւ ու սկսաւ սոխել որ կամ հաւատքնին ուրանան ու իրենց առջի պատուոյն հասնին, և կամ մեռնին:

Հ. Նախարարները ասերկուքէնմը յանձն առին.

Պ. Տեսնելով որ եթէ իրենք մեռնին՝ Հայաստան ոտքի տակ կ'երթայ, դուռանց յանձն առին ու աբեւռ երկրպագութիւն ըրին, և շատ մոգերով Հայաստան դարձան:

Հ. Հայերը երբոր իմացան մոգերուն գալը ինչ ըրին.

Պ. Սուրբ Ղևոնդ և ուրիշ աստուածընտիր քահանաներ Ժողովրդեան հետ միացած վրանին վազեցին ու լաւ մը կարդ տալով լեռնպատառ փախուցին մոգպետը իրեն մոգերովը:

Հ. Ի՞նչ կերպով հանդարտեցաւ ժողովուրդը։

Պ. Սուրբ Վարդան Յովսէփ կաթողիկոսին ոտքը լիզելով իրեն մեղայը խնդրեց. իսկ Վասակ սուտ Թէմամբ համոզեց քահանաները որ առ ժամն դէմ չդնեն մոգերուն՝ որպէս զի Յազկերտ առջև յանցաւոր չերեւնան, ու վերջը կամաց կամաց վրնտեն։

Հ. Վասակայ ասոր խորհուրդը ինչ հետեւանք ունեցաւ։

Պ. Նախարարները տեսնելով որ կամաց կամաց կրակապաշտութիւնը կը հաստատուի Հայաստանի մէջ ու Վասակ Պարսից հետ միացած չարչքներ կը հասցնէ Հայոց, վռան վռեցին փախուցին Պարսիկները ու զինքն ալ բռնեցին. բայց աւետարանին վրայ երդում ընելուն համար՝ ներեցին ազատ թողուցին։

Հ. Հայերը երբոր ասոնց նեղութիւններուն մէջ ուրիշներէ օգնութիւն չուզեցին։

Պ. Յունաց Թէոդոս փոքր կայսրէն օգնութիւն խնդրեցին. բայց երբոր անիկայ մեռաւ, իր յաջորդը Մարկիանոս չօգնեց։

Հ. Երբոր Հայերը յոյսերնին կորեցին Յոյներէն, ինչ ըրին։

Պ. Հարիւր հազարի չափ մարդիկ Ներսէսեան քաղաքը ժողովուելով երեք գունդ բաժնեցին բոլոր զօրքը։

Հ. Այս գունդերուն զօրավար որո՞նք գրուեցան։

Պ. Պարսից դէմ կենալու գնդին զօրավար գրուեցաւ Ներշապուհ Արծրունի. երկրորդին Վարդան որ Աղուանից օգնութեան գնաց. ու երրորդ գունդը տուին Վասակայ՝ Հայաստանը պահելու համար։

Հ. Վարդան Աղուանից երկիրը ինչ քաջութիւն ըրաւ։

Պ. Պարսից զօրքերը փախուց՝ մոգերը ջարդեց ու համարձակ քրիստոնէութիւնը պաշտել սուաւ։

Հ. Այն միջոցին որ Վարդան Աղուանից կողմերը էր, Վասակ ինչ կ՚ընէր Հայաստան։

Պ. Հաւատքը ուրացած ներքին սկսաւ եկեղեցիները աւերել ու կրակապաշտութիւն խոթել Հայաստանի մէջ։

Հ. Յազկերտ տեսնելով Հայոց պատերազմութիւնները ինչ ըրաւ։

Պ. Մինչդեռ Հ անունով պարսիկ հազարապետը խաբեց որ երթայ պատերազմը վճռելնէ, որուն կողմը անցաւ համարձակ Վասակ ու ինքը վռան առած պատերազմին հոգը ամեն չարիք կ՚ընէր։

Հ. Հայերը վերջի պատերազմին ինչպէս պատրաստուեցան։

Պ. Վարդանայ հրամանաւը վաթսուն հազար հոգի ժողովուեցան, և պատերազմի պատրաստուեցան Աւարայր գեղին քովերը։

Հ. Ի՞նչպէս վճռաւ ասոր վերջի պատերազմը։

Պ. Մեծն Վարդան և իրեն ընկերները շատ քաջութիւններ ընելէն ետքը՝ Վարդան քաջութեամբ զարնուելով մեռաւ, և երկու հարիւր եպիսկոպոսներ ալ իր ընկերներէն մեռան նոյն օրը. բայց ասոնցմէ նոյն օրերը բոլոր հաւատքի և հայրենեաց վասյ մեռնողներուն թիւը եղաւ հազար երիսունը-վեց հոգի (436)։

Հ. Վասակ ուրիշ ինչ չարիք հասուց Հայոց։

Պ. Չեռքը ինկածը կամ կ'սպաննէր և կամ հաւատքը ուրացընել կու տար։ Նոյնպէս բանեց ան պատուաւոր քահանաները որոնք սուրբ Վէտրոն անուանովը Վէտրեանք ըսուեցան ու շղթայակապ կը պահէր, որ վերջը Պարսկաստան տարուելով հոն նահատակուեցան։

Հ. Վասակ իրեն չարութեան պատիժը ինչպէս գտաւ։

Պ. Յանկարծ գոռնուելով Յաղկերտի առջև որ աս ամեն չարիքն եաքը չկրցաւ Հայերը արեւապաշտ ընել, բանտը գրուեցաւ ուր որ օրգնուելով մեռաւ ու կորսուեցաւ։

ԴԱՍ ԺԴ.

Աւետարմիզդ և Աւտրշնասպ և վահանայ ըրած պատերազմները։

Հ. Վասակին տեղը ով գրաւեցաւ մարզպան։

Պ. Աւետարմիզդ, որ խել մը քահանաներ բռնեց ու շղթայի զարկաւ։

Հ. Աւետարմիզդայ առնելը քրիստոնէութիւնը ինչ վիճակի մէջ էր։

Պ. Աւ. տրտաքս հրաման տուաւ որ ամենքը իրենց հաւատքը պաշտեն, Թէպէտ և կրակատուներն ալ պակաս չէին։ Այս ընելով սկսաւ նախապարներուը ատելել որ Յազկերտին երթան առանց վախի՝ երդուընալով որ իրենց վտանգ մը չըլլար։

Հ. Նախարարները երբոր Պարսկաստան հասան՝ Յազկերտ ինչ կերպով ընդունեցաւ զիրենք։

Պ. Մէկէն բանտ դնել տուաւ ու սկսաւ զիրենք սպսպել որ հաւատքնին ուրանան։ բայց և ոչ մեկը Թուլցաւ հաւատքէն։

Հ. Նախարարները որչափ տաեն բանտը կեցան։

Պ. Երկար տաեն բանտը կենալէն և շատ տանջանքներ քաշելէն եաև՝ Եղռնհազարաշ անուանով իշխանին աղաչանքովը ազատեցան բանտէն ու Պարսկաստան կը կենային։

Հ. Դեռ որչափ տաեն ալ Պարսկաստան կեցան նախարարները։

Պ. Ութը տարի ալ կենալէն եաև երբոր Աթրոյշնասպ մարզպան կու գար Հայաստան, իրենք ալ մեկտեղ եկան (464)։

Հ. Ո՞վ էր մեծն Վահան։

Պ. Մեծին Վարդանայ Հմայեակ եղբօրը մեծ որդին էր։

Հ. Ինչու համար Վահան հաւատքը ուրացաւ։

Պ. Վահան զի իրեն անհիւ կատարելութիւնները ամենուն սիրելի էր։ ուստի Պարսկաստան գտնուող ուրացեալ նախարարները վրան նախանձելով զինքը ամբաստանեցին Պերոզին։ Վահան ալ անոր աչքին չկինալու համար հաւատքը ուրացաւ։

Հ. Վահան ինչպէս նորէն քրիստոնէութեան հաւատքը գտաւ։

Պ. Լսելով որ Վախթանկ Վրաց Թագաւորը Պարսկիներէն ապստամբեր է, իրեն հետ եղած Հայերն ալ յորդորեց որ իրենք ալ ապստամբին ու նորէն քրիստոնէութեան համար պատերազմին։

Հ. Վահանայ ըրած առաջարկութիւնը յանձն առին.

Պ. Շատերը յանձն առին ու Վահանը սպարապետ գրին՝ և Սահակ Բագրատունին ալ մարզպան Այրվէնատպայ տեղը՝ զոր որ պատերազմի մէջ ըսպանեցին (481):

Հ. Վահան երբոր ուրիշ նախարարներու ալ իմացուց իրեն ապստամբելը ինչ ըրին անոնք.

Պ. Փոխանակ օգնելու՝ ուրիշ գացողներու ալ արգելք եղան ու եաւնէն վազելով խափանեցին. բայց քանի մը հոգի իրեն հետ միաբան կեցան:

Հ. Պերոզ երբոր լսեց Վահանայ ապստամբելը ինչ ըրաւ.

Պ. Աարնեբահէին ձեռքովը շատ զօրք խաբեց ապստրելով որ Վահանը ողջ բռնեն:

Հ. Վահան Աարնեբահէին դէմ քանի՞ հոգւով գնաց.

Պ. Իբատ քիչ հոգւով. Յովհան Մանդակունին ալ հետն առած. անոր համար քաջութեան հետ աստուածային զօրութիւնը և հաւատքը օգնական առած՝ մեծ ջարդ մը տուաւ Թշնամեաց բանակին:

Հ. Ո՞վ խաբուեցաւ նորէն Վահանայ դէմ.

Պ. Միհրանը, Հայոց և Վախթանկ Վրաց Թագաւորին դէմ:

Հ. Վահան ինչո՞ւ համար Վրաստան գնաց.

Պ. Վասն զի Վախթանկ օգնութիւն ուղեր էր Հայերէն Պարսից դէմ գնելու. Վահան ալ գնաց իրեն խոստմանը դէմ չընելու համար:

Հ. Վախթանկ ինչ խաղաղութիւն ըրաւ Վահանայ.

Պ. Միհրանայ հետ խօսքը մէկ ընելով, Վահանը անտրնապուց ան տեղուանքը, ինչուան որ Միհրան իր անթիւ զօրքերովը հասաւ ու Վահան յանկարծակիի գալով չկրցաւ պատրաստուիլ որով և յաղթուեցաւ:

Հ. Ի՞նչ երևելի մարդիկ մեռան ատ պատերազմիս մէջ.

Պ. Սահակ Բագրատունին ու Վասակ Վահանայ եղբայրը. իսկ մնացածներէն շատը Միհրանայ կողմը անցան ու մնաց հարիւր հոգի որոնք Տայոց կողմերը փախան:

Հ. Միհրանին տեղ ո՞վ սպարապետ գրուեցաւ.

Պ. Զաբմիհր Հաղարաւուխտ որ նոյնպէս չկրցաւ Վահանայ անպարտելի արուեստները յաղթել:

Հ. Վահան Հաղարաւուխտին ձեռքէն ինչպէս ազատեցաւ.

Պ. Հաղարաւուխտ խմնալով որ Վահան Դուինի փախեր է, գնաց Դուինը պաշարեց. Վահան չուզելով որ իր պատճառովը քաղքին մեծ մասնի, իրեն քիչ մարդիկներովը ելաւ քաղքէն ու Պարսիկները ձգելով գնաց Շաղագոմ գաւառը:

Հ. Հաղարաւուխտին տեղը ո՞վ խրկուեցաւ.

Պ. Շապուհ Միհրանեան պարսիկը, որ խմնալով Վահանայ ուր տեղ ըլլալը՝ եկաւ պաշարեց:

Հ. Վահան ինչ կերպով ազատեցաւ Շապուհին ձեռքէն.

Պ. Խել մը գեղացոց ձեռքը վահաններ ու բահեր տալով իր կեցած տեղը շարեց, ու ինքը ուրիշ

Ձամբով Պարսից վրայ վազէց դիւերանց, ու խուռ-
ւռելիւն ձգելով Պարսից բանակին մէջ վեց հա-
րիւր հոգիի չափ մեռուց ու մնացածներն ալ փա-
խան:

Հ. Վահան ուրիշ ինչ քաջութիւններ ըրած
ունի.

Պ. Այնգամ մը երեսուն հոգւով Շատուհին դէմ
ուրիշ մեծ յաղթութիւն մ՚ալ ըրաւ նոյնպէս յան-
կարծակի վրանին վազելով երբոր անոնք անփոյթ
կեցեր էին առնելով Վահանին զօրացը քիչութ-
րութիւնը:

Հ. Պարսիկք ինչ կերպով Վահանայ հետ հաշ-
տուեցան.

Պ. Երբոր Պերոզ մեռաւ ու Վաղարշ իր եղ-
բայրը թագաւորեց, ասիկայ լսած ըլլալով Վա-
հանայ քաջութիւնները ու իրեն արդար պահանջ-
մունքը, ուզեց հաշտուիլ հետը. ուստի Նիխոր ա-
նունով խաղաղասէր մարզը խաւրեց որ երթայ աս
բանս կատարէ.

Հ. Ի՞նչ կերպով կատարուեցաւ աս հաշտու-
թիւնը.

Պ. Վահան դաշինք դրաւ Նիխորայ հետ, որմէ
գլխաւորն էր թէ քրիստոնէութիւնը ազատ պահ-
տուի Հայաստանի մէջ ու Պարսիկք բնաւ չխառ-
նուին. Նիխոր յանձն առաւ. ան աւուն Վահան
գնաց Պարսից գուռը ուր նորին երդումն առաւ թա-
գաւորէն, և ընդհանուր ապարատկա դրուելով
դարձաւ Հայաստան:

Հ. Ի՞նչպէս մարզպան եղաւ Վահան.

Պ. Երբոր Անգեղեան մարզպանը Պարսկաստան
դարձաւ այնչափ գովեց զՎահանը, որ Վաղարշ

ալ զինքը մարզպան դրաւ, ու Վահանին Վարդ
եղբայրն ալ ապարատկա:

Հ. Ինչու համար վերջը նորէն Վահանին տեղը
Պարսիկ մարզպան դրուեցաւ.

Պ. Երբոր Վաղարշ մեռաւ, Պերոզին որդին Կա-
ւատը թագաւորեց. ասիկայ մոգերէն յորդորուած
Վահանայ տեղ Պարսիկ մարզպան մը խաւրեց և
հետն ալ շատ քուրմեր. ատով նորէն խառնուածութիւն
ինկաւ Հայաստան:

Հ. Հայերը ընդունեցան նոր մարզպանն ու
քուրմերը.

Պ. Վահան ուրիշ նախարարաց հետ միաբանե-
լով վազեց նոր մարզպանին վրայ ու վռնտեց Հայ-
աստանէն:

Հ. Վահան որչափ տարի մարզպանութիւն ը-
րաւ.

Պ. Քսանվեց տարի ամեն գովելի հանգամանք-
ներով (491):

ԴԱՍ ԺԴ.

*Վարդան Ամատունի կ՚իշխապատուի-
րուի:*

Հ. Վահանին տեղը ո՞վ դրուեցաւ մարզպան.

Պ. Վարդ Վահանին պզտիկ եղբայրը որ չորս
տարիէն մարզպանութենէն ինկաւ, վասն սուտ
մեքսասանութիւններ ընելուն համար:

Հ. Վարդին տեղը ո՞վ դրուեցաւ.

Պ. Բուբղան անուշով անպիտան պարսիկը որ իրեք տարի Հայերը շատ նեղեց։

Հ. Ի՞նչ մարդ է Մժեժ Գնունի.

Պ. Կարճ մարդ մըն էր, որ երբոր Հռնք Հայաստանի վրայ վազելով աւերմունք կ՚ընէին, դէմերնին ելլելով յաղթեց անոնց ու վռնտեց Հայաստանէն։

Հ. Մժեժ իրեն ա՞ս արդեանցը համար ի՞նչ փոխարէն ընդունեցա՞ւ Կաւատէն.

Պ. Բուբղանէն տեղը մարզպան դրուեցա՝ որն որ երեսուն տարի մարզպանութիւն ըրաւ.

Հ. Մժեժին տեղը որո՞նք մարզպան դրուեցան.

Պ. Դէնշապուհ պարսիկը որ Հայերը շատ կը նեղէր հաւատքի համար, որն որ Մովսէս Կաղուղիսոյն աղաչանքովը փոխուեցաւ ու տեղը ուրիշ մը եկաւ. վերջը զղուեցաւ Սուրէն Ձիին որ Հայերը շատ նեղեց։

Հ. Ա՛ս միջոցներուն ի՞նչ նշանաւոր փոփոխութեան բան եղաւ Հայաստանի մէջ.

Պ. Մովսէս Կաղուղիսոյ տօմարը նորոգելով նոր Թուական հաստատեց. ուսկից սկսեալ ինչուան հիմա 1320 տարի է։

Հ. Սուրէն մարզպանը ի՞նչպէս սպաննուեցաւ.

Պ. Սուրէն՝ Վարդան Մամիկոնեանին Մանուէլ եղբայրը սպաննեց. Վարդան ա՛ս բանիս վրայ բարկացած՝ զօրք ժողվեց վազեց Դուին քաղքին վրայ ու քաղաքը առնելով Սուրէնը սպաննեց ու զօրքն ալ ջարդեց ու ցրուեց (364)։

Հ. Երբոր Վարդանայ ա՛ս ըրած գործքը հասաւ

Խոսրով Պարսից Թագաւորին ականջը, ի՞նչ ըրաւ Խոսրով.

Պ. Շատ զօրք խաբեց Վարդանայ վրայ. բայց Վարդան վարպետութեամբ պատերազմելով յաղթեց անոնց ու ցրուեց։

Հ. Երբոր Խոսրով աւելի մեծ բանակ մը խաբեց, Վարդան ի՞նչ ըրաւ.

Պ. Տեսնելով որ իր քովինները շատը փախան զատուեցան, ինքն ալ Սամոսէտ գնաց և Յունաց նիանոս կայսրին օգնութիւն ուղեց. Յունաւինիանոս ալ տուաւ։

Հ. Վարդան Յունաց օգնութեամբը կրցա՞ւ Պարսից յաղթել.

Պ. Խոսրով ինքը անձամբ հարիւր քառասուն հազար զօրքով Վարդանայ և Յունաց վրայ եկաւ. և երկու կողմէն ալ շատ ջարդ ըլլալէն ետև, Նորբէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան։

Հ. Երբոր Նորբէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան ո՞վ եղաւ մարզպան.

Պ. Ձիին Վղոնին տեղը ո՞վ եղաւ մարզպան.

Պ. Սմբատ Բագրատունի իրեն քաջութիւնները համար, որն որ ութը տարի մարզպանութիւն ըրաւ։

Հ. Իրեն ո՞վ յաջորդեց.

Պ. Դաւիթ Սահառունի որ քանիցըմս տարի մարզպանութիւն ընելէն ետքը, վախնալով Պարսիկներէն Թոզուց իշխանութիւնը և Կոստանդնուպոլիս փախաւ։

Հ. Դաւիթ Սահառունիին տունը ինչ յիշատակի արժանի գործողութիւն եղաւ Հայաստանի մէջ.

Պ. Մուշեղ Մամիկոնեան իշխանին և Գայլ Վահանին Պարսից հետ ըրած պատերազմները:

Հ. Ինչ պատճառաւ եղան այս պատերազմները.

Պ. Խոսրով պատճառաւ մը թշնամանալով Մուշեղի հետ, վրան պատերազմի ելաւ. Մուշեղ ալ իրեն օգնութիւն կանչեց Վահան իր ազգականը, որ իր վարպետութիւններուն համար Գայլ ըսուեցաւ:

Հ. Գայլ Վահանին քաջութեանցը ու վարպետութեանցը մէջ հետևող եղաւ.

Պ. Իր որդին Սմբատը որ Պարսից շատ անգամ յաղթեց ու ջրս երևելի զօրավարներ սպաննեց:

Հ. Դաւիթ Սահառունիին տեղ ով մարզպան դրուեցաւ.

Պ. Վարազտիրոց Սմբատ Բագրեւանդացին որդին, որ Եօթը տարի մարզպանութիւն ընելէն ետքը իր ընտանիքովը Սասմզօլ վախաւ:

Հ. Ո՞վ եղաւ առջի հիւրապաղատը.

Պ. Դաւիթ Սահառունին:

Հ. Ինչպէս եղաւ որ Դաւիթ հիւրապաղատ խրհուեցաւ.

Պ. Այս միջոցներուն Պարսից մէջ խառնութիւն կսնալով, Հայերը Յոյներուն ապաւինեցան ու իրենց մէջ իշխան մը ուզեցին. անոնք ալ Դաւիթը խաւրեցին Հիւրապաղատ անուանելով որ իշխանութեան անուն մըն է. բայց չորս տարիէն նորէն Հայերը վռնտեցին զԴաւիթը:

Պ. Պարսիկներէն զատ ուրիշ ինչ Թշնամի սկսաւ վազել Հայաստանի վրայ աս միջոցներուն.

Պ. Հագարացիք՝ որ Պարսիկներէն աւելի շատ չարիք հասուցին Հայոց:

Հ. Հագարացւոց արշաւանացը եղանն նախատրիները որ դէմ դնեն.

Պ. Թէոդորոս Ռշտունի և Վահան Կամսարական ուղղը հազար զօրքով (676):

Հ. Վահանին այսպիսի ազգասիրական գործողութեանը որո՞նք արգելք եղան.

Պ. Երբոր Հագարացւոց դէմ պատերազմի ելեր էր, Սահուռ Անձևացին և ուրիշները Հագարացւոց կողմը անցնելով սկսան Տաճիկներուն հետ մեկտեղ Հայերը ջարդել և այսպէսով ցրուեցին Վահանայ զօրքերը:

Հ. Հագարացիք Վահանայ զօրքը ջարդելէն ետև ինչ ըրին.

Պ. Շատ մարդ Թրէ անցնելէն ետև, երեսունը հինգ հազար հոգի ալ գերի տարին:

Հ. Հագարացւոց աս ըրած ջարդէն ետև ով խրհուեցաւ կիւրապաղատ Յունաց կողմանէ.

Պ. Վարազտիրոց որ տարիէ մը մեռաւ և իրեն յաջորդեց իր տղան Սմբատ:

ԴԱՍ ԺԵ·

Սմբատ կիւրապաղատական ինչուան Բագրատունեաց թագաւորութեան կանգնուիլը:

Հ· Սմբատին կիւրապաղատութեան առեն Հայերը հանգիստ անցուցի՞ն·

Պ· Սմբատին կիւրապաղատութեան երրորդ տարին Հագարացիք վազեցին Հայաստանի վրայ ու շատ կառարածներ ըրին· Նախարարները վիրաւոր Հնազանդեցան Հագարացւոց և Յունաց իշխանութենէն ելան, որուն Յոյները շատ նեղացան (683)·

Հ· Սմբատին տեղը ո՞վ եղաւ իշխան·

Պ· Համազասպ Մամիկոնեան որ քիչ մը առեն նորէն Յունաց հնազանդելով անոնցմէ Պատրիկ ըսուած իշխանութիւնը առաւ: Ամիրապետը բոլոր իրեն քովի եղած Հայ պատանդները Թրէ անցընել տուաւ· անոր յաջորդին նորէն հնազանդեցան Հայերը, ու քիչ առենէն Համազասպն ալ մեռնելով իրեն տեղը պատրիկ դրուեցաւ իր եղբայրը Գրիգոր·

Հ· Գրիգոր ո՞րչափ առեն պատրիկ եղաւ ու իրեն ո՞վ յաջորդեց·

Պ· Քսանըչորս տարի· ու վերջը պատերազմի մէջ մեռաւ: Երկու տարի առեն ու վերջ եղաւ Հայաստան, ինչուան որ Աշոտ Բագրատունին զօրանալով Թշնամեաց դէմ դրաւ Հագարացւոց հարկ տալով:

Հ· Աշոտ ո՞րչափ առեն պատրիկութիւն ըրաւ·

Պ· Յոյները նմանալով որ Հայերը Հագարացւոց հարկատու եղեր էն, շատ զօրք խաբէլով մեծամեծ աւերմունքներ ըրին Հայաստան· Հագարացիք ալ երդնդակառուին կարծելով որ Հայերը Յունաց հնազանդեր են՝ իրենք ալ նոյնպէս շատ վնասներ հասուցին Հայոց· Աշոտ առնոց դէմ դրաւ քաջութեամբ, բայց ինքն ալ զարնուելով մեռաւ իրեք տարի իշխելէն ետքը (692)·

Հ· Աշոտին մեռնելէն ետև ո՞վ իշխեց Հայոց·

Պ· Հագարացիք, որոնք Քրիստոսի 693 թուականին սկսան Հագարացի իշխան մը խաբել Ոսմիկան անուամբ, որոնց առջինը եղաւ Աբդլա·

Հ· Աբդլային առջի գործողութիւնը ո՞րն եղաւ·

Պ· Նախարարները և Սահակ կաթուղիկոսը բռնեց ու Դամասկոս խաբեց: Ինչ մը առենէն Սմբատ Բիւրատեանը վռնտեց զինքը Հայաստանէն Յունաց օգնութեամբը·

Հ· Հագարացիք Սմբատայ առ ըրած գործողութեան վրէժը ինչպէս հանեցի՞ն·

Պ· Մոհմետ անուամբ զօրավարը խաբեցին որ շատ ձիաւոր հասուց· ու վերջը Սահակ կաթուղիկոսին աղաչանաց Թղմոնը խաղաղութիւն ըրաւ ու գերիները ազատեց·

Հ· Նախարարաց ազատելէն ետև Կաշմ ոսոխանը ինչ չարիք հասուց Հայոց·

Պ· Նախարարները ետևնէն ազին մեծերը Նախճուանի եկեղեցւոյն մէջը այրել տուաւ (704)·

Հ· Կաշմին տեղը որո՞նք գրուեցան ոսոխան·

Պ· Վիլհէմ ու Մահմետ, որոնք շատ չարիք հա-

սուլթան. և Աբդլաղիզ որ քաղցրութեամբ իմա-
մեց ազգը։

Հ. Ասոնց ետեւն ալ որո՞նք դրուեցան ոսոխական.
Պ. Մրուան որ երկու տարիէն Աչտաք իշխան
դնելով ինքը գնաց ամիրապետ եղաւ. բայց երբոր
Մրուան մեռաւ, Աչտաին տեղը Եզիտ անուամբ
չար մարդը ոսոխական դրուեցաւ որ Հայերը շատ
նեղեց (758)։

Հ. Եզիտին տեղը ո՞վ իշխեց Հայոց.
Պ. Սահակ Բագրատունի բարեպաշտ մարդը
պատրիկ դրուեցաւ, որուն վեցերորդ տարին Սիւ-
լէյմանը ոսոխան խրկուեցաւ. քիչ մը տաճէն
եկաւ Պէքքը անողորմ մարդը, ու վերջն ալ Հա-
սան՝ որ ամէնէն աւելի նեղեց Հայերը։

Հ. Հասանին տաճիկը Հայերը ինչ գործողու-
թիւն ըրին.
Պ. Մուշեղ Մամիկոնեան իշխանը Հասանին զօր-
քերը լաւ մը ջարդեց ու զինքն ալ Գուխէն վտա-
խուց. նոյնպէս նաև Աչոտ Մամիկը իշխանը քանի
մը անգամ յաղթեց Հագարացոց, ինչուան որ
Եզիտ Բ. շատ զօրքով նորէն նուաճեց Հայերը ու
շատ չարիք հասուց որուն նմանը չէր եղած Հա-
յաստանի մէջ (787)։

Հ. Եզիտէն ետքը Հայերը ինչ վիճակ ունեցան.
Պ. Քիչ մը հանգստացան, որովհետև որ Յու-
զիմա և Հալ ոսոխականները որ եաւէ եաւ նաւե-
ցան՝ այնչափ ընեղեցին զՀայերը։

Հ. Հոլին տեղը ո՞վ իշխեց Հայոց.
Պ. Նախարարաց ազատքովը պատրիկ դրուե-
ցաւ Բագրատ Բագրատունին, որ վերջէն տէ-

րութեան առջև յանցաւոր գտնուելով աչքէ ըն-
կաւ։

Հ. Բագարատին տեղը ո՞վ խրկուեցաւ ոսոխան.
Պ. Ասլուսէթ, որ Բագարատը բռնեց ու Դա-
մասկոս խուրձեց։ Այս բանիս բարկացած Սասուն-
ցիք՝ Ասլուսէթին վրայ վազեցին ու սպաննեցին
(849)։

Հ. Ամիրապետը երբոր լսեց Ասլուսէթին սպան-
նուիլը ինչ ըրաւ.
Պ. Բուղա ոսոխականը խուրձեց հրաման տալով
որ ձեռքէն եկած չարիքը հասցընէ Հայոց. որն որ
բոլոր Հայաստան ալրհնելուայ ըրաւ։

Հ. Նախարարներէն չելնո՞ւ մարդ մը որ Բու-
ղային ընդդիմանայ.
Պ. Աշոտ Ամբրունին ի՛ուղէր ընդդիմանալ.
բայց տեսնելով որ ուրիշ նախարարներ չէն օգ-
ներ, ինքն ալ շատ ընծաներով գնաց Բուղային
սիրաշ առնելու. բայց փոխանակ պատիւ ընդու-
նելու անով տեղով դէրի գնաց։

Հ. Նախարարներէն ո՞վ եղաւ որ Բուղային ա-
ռաջնորդեց, որպէս զի ինքը պատուոյ հասնի.
Պ. Ամբաս սպարապետը. բայց Բուղա ամէն
չարութիւն ընելէն ետքը փոխանակ պատուոյ հաս-
ցընելու շղթայի զարհաւ ու Պաղատաս դէրի տա-
րաւ, իր տեղը Շեխի անուամբ Պարսիկը ոսոխան
դնելով։

Հ. Նախարարները և ուրիշ գերիները հան ինչ
եղան.
Պ. Ամիրապետին բռնութիւններէն ամենը հա-
տաքնին ուրացան ու շատն ալ նահատակուեցան.

Սմբատ ալ մեղայը վերջ զրջալով բանակին մէջը մեռաւ ու Խոստովանող ըսուեցաւ (856)։

Հ. Հայոց այսչափ թշուառութեանց պատճառ որո՞նք եղան։

Պ. Ո՛չ այնչափ Յոյները և Պարսիկները կամ Հագարացիք, որչափ նոյն միջոցուան մէջ ազգին նախանձու, տեսլութեան, անմիաբանութեան և որ մեծն է անկրթութեան և անճնասիրութեան զօրացած ախտերը։ Ասոնցմէ ամեն կրթեալ ազգերը խորշէր են, ինչպէս նաև մեր ազգն ալ իրեն կրթութեան տուներ։

ԹԱԴԱԽՕՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԴԱՍ ԺԶ.

Աշոտ Ա. և Սմբատ Ա.։

Հ. Բագրատունեաց իշխանութեան առջի թագաւորը ո՞վ եղաւ։

Պ. Աշոտ Սմբատ Խոստովանողին որդին։

Հ. Ի՞նչ կերպով Աշոտ ատ իշխանութեան հասաւ։

Պ. Շեխին ոստիկանութեան տուներ Հայաստանի վերջ հոգ տանելով և Հագարացւոց հաւատարմութիւն ցուցընելով, Շեխին տեղը վերակացու եղաւ Հայաստանի (859)։

Հ. Ի՞նչպէս թագաւոր եղաւ Աշոտ։

Պ. Նախարարները Գէորգ կաթուղիկոսին հետ միաբանած ամիրապետէն խնդրեցին որ իրենց թագաւոր դնէ Աշոտը, խոստանալով որ հաւատարիմ կը կենան։ ամիրապետը Աշոտին յանութիւնները լսած ընդունով կատարեց խնդիրքնին։

Հ. Աշոտ ինչ պատիւ գտաւ Լևոն կայսերէն, ու ինչպէս մեռաւ։

Պ. Հայաստանի ամեն կողմերը խաղաղընկեր էին եաքը Աստմպօլ գնաց Լևոն կայսեր յարգութեան համար, ուր որ մեծամեծ պատիւներ գտաւ. վերջը Հայաստան դառնալու առենը Շիրակ հասնելով ծանր հիւանդացաւ, ու ամեն հոգևորական պատարաստութիւնները ընելով մեռաւ 71 տարեկան, 26 տարի իշխելէն ու հինգ տարի թագաւորելէն եաքը:

Հ. Սմբատ երբոր հօրը տեղը անցաւ, ճվ եղաւ որ թագաւորութեան աչք ձգէ.

Պ. Աբաս իր հօրեղբայրը շատ զրկեց. Ժողոված կ'ուզէր ինքը թագաւորել. բայց երկու անգամ յաղթուեցաւ. Սմբատ Աբասին տեղը սպարապետ դրաւ իր Շապուհ եղբայրը:

Հ. Սմբատ Աբասը նուաճելէն հետև ուրիշ ինչ թշնամի ունեցաւ.

Պ. Ափշին Պարսից ոստիկանը նախանձելով Սմբատայ մեծնալուն վրայ երեսուն հազար զօրքով վրան պատերազմի եկաւ. Սմբատ քաղցրութեամբ Ափշինին սիրտը իջեցուց ու հաշտուեցաւ հետը:

Հ. Ափշին որչափ առին հատատուն ինաց իր դաշինքին վրայ.

Պ. Իսիա քիչ. վան կ'ուզալով ըրած հաշտութեանը վրայ, նորէն Սմբատայ վրայ վազեց ու առջի բերան շատ ջարդեց. Սմբատ շատ զօրք Ժողվեց ու փախուց Ափշինը:

Հ. Սմբատ Ափշինին յաղթելէն հաքը ուրիշ ինչ թշնամի ունեցաւ.

Պ. Ահմատ Մելքագետաց ոստիկանը, որուն հետ միացաւ նաև Գագիկ Արծրունին Սմբատայ տղայականներէն մեկը՝ ու Ահմատին առաջնորդ եղաւ.

Սմբատ թէպէտ և յանկարծակիի եկաւ, բայց քաջութեամբ պատերազմելով յաղթեց Ահմատին ու փախուց իր տեղը:

Հ. Սմբատ Ահմատին ալ յաղթելէն հաքը հանդիսա ինաց.

Պ. Զէ. Վան կ'ուզալին նորէն պատերազմի ելաւ վրան, ու Սմբատ ալ անօդնական ինալով պատրաստուեցաւ իր օրդին. բայց Ափշին երբոր ուրիշ ջարդեք ալ կ'ուզէր հասցնել, ինքը սոսկալի մահով մեռաւ, ու իրեն տեղը յաջորդեց Յուսուփ իր եղբայրը:

Հ. Սմբատ ոստիկաններուն բանութենէն ազատելու համար ինչ ձար գտաւ.

Պ. Ամիրապետէն խնդրեց որ վրանակ տուրքերը ոստիկաններուն ձեռքովը տալու, ուղղակի ամիրապետին խաւրել ինքը:

Հ. Ինչու համար Աբրնեբսեհ վրաց թագաւորը ու նախարարները Սմբատայ դէմ ելան.

Պ. Եգեբացւոց Կոստանդին թագաւորը տպրատամբեր էր Սմբատէն. Սմբատ Աբրնեբսեհին հետ մեկտեղ վրան պատերազմի ելաւ, ու զինքը Աբբնեբսեհին ձեռքովը բռնել տալով Անիի ամրոցը դրաւ. չորս տարի վրան գ'ծալով բռնեցին հանեց ու արձակեց իր աերութիւնը: Այ բանս նախարարները երեսից նախատինք սեպելով ապստամբեցան:

Հ. Նախարարներուն ապստամբութիւնը ինչ վերջ ունեցաւ.

Պ. Ըրած գործերնին պարապ երկելով չարաչար յաղթուեցան. Սմբատ նախարարներուն շատին աչքը կուրցուց, ու Աբրնեբսեհին վրայ գ'ծալով ազատեց:

Հ. Սմբատ նախարարներուն յաղթելէն եաքը, ինչ նոր խռովութիւն ընիաւ Հայաստանի մէջ.

Պ. Գագիկ Արծրունի Սմբատայ քեռորդին ապստամբելով երկիր, գնաց Յուսուփին քով. Յուսուփ ալ զրպէս զի Հայաստանի մէջ խռովութիւն ձգէ՝ զինքը Թագաւոր ըրաւ (908).

Հ. Գագիկայ Թագաւորութենէն ինչ չար հետեւանքներ եղան.

Պ. Գագիկ և Յուսուփ միացած վազեցին Սմբատայ վրայ, որոնց կողմը անցան նաև նախարարներէն շատը. Սմբատ ալ տեսնելով որ միտակ դէմ ելլելու դնել, Գուգարացւոց երկիրը փախաւ:

Հ. Սմբատ Գուգարացւոց քովէն ո՞ւր գնաց քաշուեցաւ.

Պ. Երբոր տեսաւ որ իր Աշոտ ու Մուշեղ որդիքն ալ յաղթուեցան Սևորդիներուն մօտերը Թեմամբը, ինքն ալ յուսահատած Կապոյտ ըսուած ամուր բերդը գնաց քաշուեցաւ:

Հ. Յուսուփ ինչպէս առաւ Կապոյտ բերդը.

Պ. Սմբատ տեսնելով որ իր պատճառաւը ասոնիկ Ջարդ կ'ըլլայ, անձնատուր եղաւ Յուսուփին՝ երդումն առնելով որ իր անձին վնաս չհասցնէ:

Հ. Յուսուփ Սմբատայ ինչ ըրաւ.

Պ. Նախ զրսեւորեց պատիւ ցոյցով ու նաև ազատ ալ Թողուց. բայց վերջը նորէն խարդախութեամբ կանչելով սկսաւ տանջել ու չարչարել որ կամ հաւատքը ուրանայ և կամ մեռնի. տակաւին տանջանքներ տալէն վերջը մորթել ու գլուխն ալ կտրել տուաւ՝ տասնը չորս տարի Թշուառութեամբ Թագաւորելէն եաքը (913):

ԴԱՍ ԺԱ.

Աշոտ Բ. Երկաթ և Աբբաս:

Հ. Սմբատին մեռնելէն եաքը Հայոց վիճակը ինչպէս եղաւ.

Պ. Յուսուփ Երնջակ ամուր բերդը առնելով, բնակիչներուն մեծ մասը ջարդեց ու շատն ալ գերի տարաւ. ու տասվ բոլոր Հայաստանի տիրելով պահապաններ Թողուց ու ինքը Պարսկաստան դարձաւ:

Հ. Երբոր լսեց Աշոտ Սմբատայ սպան իր հօրը մեռնիլը ինչ ըրաւ.

Պ. Վեցհարիւր հոգւոյ չափ մարդիկ Ժողվելով, վազեց Յուսուփին Թողուցած պահապաններուն վրայ ու սասակ ջարդ տալով զամենքն ալ փախուց:

Հ. Հայերը Աշոտ Երկաթին քաջութիւնները տեսնելով ինչ ըրին.

Պ. Միաբանեցան ու զինքը Թագաւոր դրին. բայց քիչ մը առենէն նախարարներէն ոմանք վրդովեցան նախանձելով, ապստամբեցան իրմէ ու նորէն խռովեցին աշխարհը: Աբբասներէս զօրացած Յուսուփ՝ շատ չարիք հասուց Հայոց:

Հ. Հայոց աս Թշուառութիւններուն մէջ, ինչ ազգ մէկը որ ողորմի ու խաղաղեցնել ջանայ.

Պ. Կասանդին Պերպեռաժէն Յունաց կայսրը, որ լսելով Հայոց խեղճութիւնները Աշոտը Սամոզոլ կանչեց, ու շատ պատուելէն եաքը՝ Յունաց

զօրքով վինքը իր Թագաւորութեանը դարձուց (921)։

Հ. Աշոտ ասանկ փառքով Հայաստան դառնալէն վերջը կրցաւ խաղաղ Թագաւորել։

Պ. Չէ. վասն զի Յաւսուպ Աշոտ Երկաթին հօր եղբօրը տղան Աշոտը Թագաւորեցուց որ Բանաւոր ըսուեցաւ. ասով նորէն խառնուածքին ընկաւ Հայոց մէջ. ու ասասիկ Լոռեցիք եղան երկու կողմէն ալ, ինչուան որ Յովհաննէս կաթուղիկոս հաշտեցուց զնոսանք։

Հ. Աշոտ երկաթ Աշոտ բանաւորէն զատ ուրիշ ինչ թշնամիներ ունէցաւ։

Պ. Անկրթութեան և անկարգութեան հոգի մըտած ըլլալով, ամենքը կ'ուզէին ինքնիշխան Թագաւոր ըլլալ. ինչուան նաև Աբասն Աշոտի եղբայրն ալ ապստամբեցաւ, ու պատերազմներ ըրաւ եղբօրը հետ. Աշոտ ալ յաւսահատած գնաց Սևան կղզին քաշուեցաւ հարիւր հոգւով։

Հ. Աշոտ Սևան կղզին քաշուելէն առաջ ինչ քաղաքութիւն ըրաւ Յլիկ Ամրամին դէմ.

Պ. Երբոր օր մը Աշոտ զաւարձութեան համար Ուտէաձոց կողմը գնացեր էր, լսելով անոնց խիանային Յլիկ Ամրամին ապստամբութիւնը, Եգեբացոց Թագաւորէն քիչ մը զօրք օգնութիւն առաւ ու գնաց ամուր բերդի մը մէջ պահպանեցաւ. Ամրամ ինկաւ պաշարուց վինքը. Աշոտին քովվի մարդիկը տեսնելով որ խաղաղութիւն չկայ, մէջերնին որոշեցին որ Աշոտը բռնեն Ամրամին մատնեն ու իրենք ազատին. Աշոտ իմանալով անոնց դաւաճանութիւնը գիշերանց ձի հեծաւ ու թշնամեաց մէջէն քաջութիւնով անցնելով փախաւ Սևան կղզին գնաց. ասոր նման շատ քաջութիւններ ըրաւ Աշոտ։

Հ. Երբոր Աշոտ Սևան կղզին քաշուեր էր, Հայաստան ինչ վիճակի մէջ էր։

Պ. Յաւսուպ Ընտր անուշով վերակացու մը խաւրեր որ շատ չարիք հասուց Հայոց. իրենց անմիաբանութիւնը պատճառ եղաւ արաբացիներուն տիրելու։

Հ. Աշոտ Երկաթ ինչպէս յաղթեց Բրչը ոսկիկանին։

Պ. Նըսրին տեղը Բրչը խրկուեցաւ. ասիկայ իմանալով որ Աշոտ Սևան կղզին քաշուեր է՝ ուզեց բռնել. բայց Աշոտ իրեն քիչ ուժով մարդիկը այլ և այլ դաշտերու մէջ բաժնելով նետաձգութեամբ շատ մարդ սպաննեց, որով թշնամիները սկսան փախչիլ. ինքն ալ հասնելով խնայլով հալածեց, ու գարձաւ իր տեղը։

Հ. Աշոտ ինչպէս եղաւ Սևան կղզին քաշուած ատեն.

Պ. Տեսնելով որ կամաց կամաց խաղաղացաւ Հայաստան, ինքն ևս իր Թագաւորութիւնը ձեռք առաւ ու հաշտութիւն ըրաւ Աբասն եղբօրը հետ. և քանիշերս ասկի ընդհատ ու անդադար կերպով Թագաւորելէն ետքը՝ մեռաւ։ Սահկայ Շահէն, շահ (Թագաւորներու Թագաւոր) ալ ըսուեցաւ։

Հ. Աբասն եղբօրը տեղը յաջորդելով ինչ կերպով կառավարեց ազգը.

Պ. Անոնը Կարս գրաւ. իր զգօնութեամբը թշնամիներուն յաղթեց ու խաղաղութիւն ըրաւ, որով Հայաստան սկսաւ ծաղկիլ։

Հ. Աբասն ինչ երեւելի պատերազմ ըրած ունի.

Պ. Իր վերջերուն Պարսից Թագաւորը պատերազմի ելաւ Աբասին դէմ, ու ծաղրելով պատգամ խաւրեց որ Կարսին մայր եկեղեցին ինքը պիտի

գայ օրհնէ վրաց ծխով. Աբաս գէմն ելաւ յալ-
Թէց ու բռնեց և կարս բերելով ցըցուց ան եկե-
ղեցին որ կ՚ուզէր օրհնել, ու վերջը աչքերը հան-
ցուց:

Հ. Աբաս նրչափ տարի Թագաւորեց.
Պ. Քանըչորս տարի խելքով ու խաղաղու-
Թեամբ (953):

ԴԱՍ ԺԸ.

*Արծրունեաց կամ վասպուրականի աշխարհին
թագաւորութիւնը: Աշոտ Ողորմած ու Սրմ-
բատ Բ:*

Հ. Ո՞վ եղաւ Արծրունեաց առաջին Թագաւորը.
Պ. Գագիկ, Սմբատ առաջինին քեռորդին, ինչ-
պէս որ վերը ըսինք:

Հ. Գագիկին որո՞նք յաջորդեցին.
Պ. Իր որդին Աշոտ Դերենիկ 16 տարի. հաքը
Դերենիկին պզտի եղբայրը Համազասպ Աբու-
սահլ, որուն յաջորդեցին իր իրեք պղտքը Աշոտ,
Գուրգէն, Սենեքերիմ. ասոնց Սենեքերիմը Սկիւթա-
ցւոց քանուԹիւններէն ազատելու համար՝ ինքը
Սեբաստիոյ գաւառը առաւ Յունաց ու վաս-
պուրականը անոնց տուաւ 1021ին: Ասոնք իրեն յա-
ջորդեց իր որդին Դաւիթ, անոր ալ յաջորդեցին
Աստմիւ Աբուսահլ որոնք երբոր մեռան 1080ին,
բոլորովին վերցուեցաւ ան Թագաւորութիւնն ալ:

Հ. Աշոտ Դերենիկին Թագաւորութեան առե-
ղը ի՞նչ յիշատակի արժանի գործ պատահեցաւ.

Պ. Ապլհարիպ Հաւնունիին Դերենիկը մատնե-
լը ու վերջին ըրած քաղաքութիւնը:

Հ. Ապլհարիպ ինչո՞ւ համար Դերենիկը մատ-
նեց Թշնամեաց ձեռքը.
Պ. Վասն զի Դերենիկ ուրիշներուն գրգռու-
Թեամբը Ապլհարիպը սպառազէնութեան պաշ-
տօնէն ձգեր էր. Ապլհարիպ ալ աս բանիս վրէժը
առնելու համար Էեր ու Զարեւանդ գաւառներուն
իշխանները պատերազմի յորդորելով անոնց ձեռ-
քը մատնեց զինքը:

Հ. Ապլհարիպ իր ըրածին վրայ ի՞նչպէս զղջաց.
Պ. Վանայ հայրները ու եպիսկոպոսները ըսելով
աս բանս նեղուեցին Ապլհարիպը. ինքն ալ զղջաց
իր յանցանացը վրայ. օր մը երբոր իշխանները
դաշտի մը մէջ Դերենիկը կը շարչարէին հետը խա-
ղալով, Ապլհարիպ իմացաւ ու հոն տեղնաւքը գա-
րան մտաւ և իշխաններէն որը սպաննեց որը վա-
խուց Էեր քաղաքը, որոնք մեկէն քաղքին գռնե-
րը գոցեցին. Ապլհարիպ այնպէս կատաղութեամբ
զարկաւ՝ որ սուրը երկրին գրան մէջը խրեցաւ մը-
նաց. և ասանկով ազատեց Դերենիկը (940):

Հ. Աբասին մեռնելէն ետև Հայոց վիճակը ի՞նչ-
պէս եղաւ.
Պ. Նախարարները չմիաբանելնուն համար աս-
սը տարի առանց Թագաւորի մնաց Հայաստան.
Թէպէտ և Աշոտ Աբասին որդին շատ զօրք ժող-
ված խելքով ազգը կը կառավարէր ու Թշնամինե-
րուն սիրտը վախ ձգեց իրեն քաջութիւններովը
(952):

Հ. Աշոտ Գ. ի՞նչպէս Թագաւորեց.
Պ. Տեսնելով նախարարները Աշոտին կատարե-

լուծիւններըը՝ Թագաւոր օծելին վինքը. ասիկայ իր ողբմածութեանը համար Աշոտ Ողորմած ըսուեցաւ։

Հ. Աշոտին տանը ուրիշ ինչ Թագաւոր ալ կար Հայաստան.

Պ. Մուշեղ Աշոտին եղբայրը գլուխ քաշելով Կարսի մէջ Թագաւորեց. Աշոտ խռովութիւն չըլլալու համար ձայն չհանեց. ուստի Թագաւորական ան ձիւղն ալ քիչ մը ատեն պնաց ու վերջը Յունաց անցաւ։

Հ. Աշոտին յիշատակի արժանի գործողութիւնները որո՞նք են.

Պ. Իրեն խաղաղասեր խելացկութիւնն ու բարեպաշտութիւնը, որուն նմանը չեղաւ Բագրատունեաց մէջ. Այսիկայ Անին մայրաքաղաք ընելով զարգարեց։

Հ. Աշոտ ինչ արդիւնք ըրաւ որ ամիրապետէն պատիւներ ընդունեցաւ.

Պ. Համառն Տաճիկներուն սպարապետը ապստամբելով ամիրապետէն, Հայաստանի վրայ վազեց. Աշոտ դէմը ելլելով վինքը սպաննեց։

Հ. Աշոտին ով յաջորդեց.

Պ. Բանըվեց տարի սքանչելի կերպով կառավարեցին երը, սրբութեամբ մեռաւ. իրեն յաջորդեց Սմբատ իր անդրանիկը։

Հ. Սմբատ Ա. ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Իր հօրը պէս խաղաղասեր ու շինութեանց հաւէս եղաւ, ու Տրդատ Ճարտարապետին ձեռքը վը շինել տուաւ Անիի մայր եկեղեցին և ուրիշ շատ շինքեր։

Հ. Ինչուան երբը իր բարեպաշտութեանը մէջ մնաց.

Պ. Չէ. սկսաւ վերջերը եկեղեցական օրինաց դէմ բաներ ընել որով տեսնել եղաւ. տասնեւերկու տարի Թագաւորելէն երբը մեռաւ (988)։

Դ.Ս.Ս Ժ.Թ.

Գագիկ Ա. և Յովհաննէս Սմբատ։

Հ. Գագիկ Ա. ինչ կողմանէ անուանի եղաւ.

Պ. Թէ բարեպաշտութեամբ և Թէ քաղաքաշնութեամբ Բագրատունեաց երեւելի սեգովելի Թագաւորներէն մէկը եղաւ. երեսուն տարի Թագաւորելէն երբը մեռաւ. ասիկայ լսընցուց Անիին շինքերը։

Հ. Ո՞վ յաջորդեց Գագիկ Ա.ին.

Պ. Յովհաննէս Սմբատ որ Թէպէտ և խելացի էր, բայց գործունեայ և աշխոյժ չըլլալուն շատ չարիքներ հեւեւեցաւ Հայաստանի մէջ. նաև Աշոտ եղբայրն ալ ապստամբեցաւ իրմէ որ քաջ ու տաքգլուխ երիտասարդ մըն էր։

Հ. Յովհաննէս՝ Աշոտին հետ ինչպէս հաշտուեցաւ.

Պ. Աշոտ Սեւնէքերիմ Վասպուրականի Թագաւորէն օգնութիւն առնելով եկաւ Անին պաշարեց. Պետրոս կաթուղիկոս ու Գորգի Վրաց Թագաւորը մէջ մտնելով հաշտեցուցին զիրենք։

Հ. Աշոտ իր խոստմանը մէջ հաստատուն մնաց.

Պ. Ձգձալով ըրած խոստմանը վրայ, հիւանդ ձեւացաւ. երբոր Սմբատ զինքը տեսնելու եկաւ, հոն որոգայթի մէջ բռնուելուց ու սկսաւ ապաչէլ Աշոտին որ իր կենացը խնայէ. Ապիւռատ իշխանը բռնեց զՍմբատն ու ձեւացուց թէ մեղքընելու կը տանի. բայց գնաց Անի՝ ու նորէն Սմբատը թագաւորեցուց և ինքը փախաւ գնաց:

Հ. Ի՞նչ պատճառաւ Յովհաննէս Սմբատ Անին Յունաց Վասիլ կայսեր խոստացաւ տալ.

Պ. Վասն զի իր թագաւորութեանը չորրորդ տարին Սկլեթացիք Հայաստանի վրայ վազելով շատ ինամներ հասուցին. ինքն ալ չկրնալով դէմ դնել՝ Վասիլ կայսեր Թղթով խոստացաւ որ իր մեռնելէն ետքը Անին Յունաց անցնի, միայն թէ Վասիլ օգնէ իրեն Սկլեթացւոց դէմ (1024):

Հ. Սմբատին Թղթով ըրած ասխոստմունքը ի՞նչ հետևանքներ ունեցաւ.

Պ. Կոստանդին՝ Վասիլ կայսեր եղբայրը՝ մեռնելու առնը, Կիրակոս անունով հայ քահանայ մը կանչեց ու էտ առաւ Անիին համար եղած դաշինքին նամակը: Ա՛ս անգամ քահանան ալ պահեց Թուղթը քովը, ու երբոր 1034ին Միքայէլ կայսրը նստաւ, տարաւ նորին անոր տուաւ Թուղթը. ու ինքը անոր փոխարէն շատ ստակ առաւ. ա՛ս բանս պատճառ եղաւ որ Բագրատունեաց Թագաւորութիւնը կործանեցաւ:

Հ. Սմբատ մրջալի տանն Թագաւորեց.

Պ. Քանի տարի ու անորդի մեռաւ: Ա՛նոր Թագաւորութեան վերջին տարիները Տուղրիլ Սկլեթացւոց իշխանը խիստ շատ ինամ ու աւերմունքներ ըրաւ Հայաստանի մէջ, որուն դէմ դրաւ քաջութեամբ քիչ մը տաճն Վասակ Պահլաւունի,

Թէպէտ և վերջը ինքն ալ սպանուեցաւ առանձնացած աղօթք ընելու տաեն:

Հ. Վատպուրական գաւառին մէջ ա՛ս միջոցներս ի՞նչ անողորմութեան գործք եղաւ.

Պ. Խաբիկ անունով Պարսիկը որ Բերկրիին քաղաքապետն էր, Հայերէն հալածուելով ո՛ս պահեց. ու քանի մը ամիրաներու օգնութեամբը յաղթելով Հայոց, մարդաշատ խորութեամբ փոս մը փորել տուաւ, ու ձեռքը ինկած մարդիկը մորթել տալով արիւնով լեցուց փոսը, ու ինքը արիւնաբոյծ գազանի պէս մէջը մտնելով լուացուեցաւ:

ԳԱՍ Ի.

Գագիկ Գ. և Բագրատունեաց թագաւորութեան կործանիլը:

Հ. Յովհաննէս Սմբատին մեռնելէն ետքը ի՞նչ վիճակ ունեցաւ Հայաստան.

Պ. Երկու տարի անտէր մնալով Վէտա Սարգիս Սիւնեաց իշխանը զօրացաւ ամէնուն վրայ և ի՛ուզէր թագաւորել:

Հ. Ի՞նչ հնարք բանեցուց Վէտա Սարգիս որպէս զի իր խռովասէր ու ամբարտաւան խորհուրդը առաջ տանի.

Պ. Երբոր լսեց Միքայէլ կայսրը որ Սմբատ մեռեր է, իրեք անգամ զօրք խաբեբայ Հայոց վրայ որ երթան Անին առնեն. Վէտա Սարգիս ամէնայն կերպով անոնց օգնեց, որպէս զի Միքայէլ կայսեր առջևը արդիւնք մը ըրած ըլլայ:

Հ. Նախարարները Հայաստանի աւերմունքը տեսնելով ինչ ըրին.

Պ. Վահրամ Պահլաւունիին յորդորանքովը միաբանեցան ու Գագիկ Բը. Թագաւոր օծեցին. որն որ Յովհաննէս Սմբատին Աշոտ եղբօրը տղան էր՝ իմաստուն և շատ հնազանդիկ կառավարելու Թիւններով զարդարուած (1042):

Հ. Գագիկ Բին առջի գործողութիւնը ո՞րն եղաւ.

Պ. Վէստ Սարգիսը բանեց ու կապած Անի բերաւ. բայց վերջը ուրիշներու միջնորդելովը ազատ Թողուց զինքը:

Հ. Գագիկ Բ. ուրիշ ինչ քաջութեան գործք ըրաւ.

Պ. Սկիւթացիք Հայաստանի վրայ վազը էին. Գագիկ տամբվից հազար զօքով անոնց դէմ ելաւ ու վարպետութեամբ և քաջութեամբ պատերազմելով զամենքն ալ փախուց:

Հ. Ուրիշ որո՞ւ հետ պատերազմ ըրաւ.

Պ. Մոնոմախոս՝ Միքայէլ կայսեր յաջորդը նորին ատեն Անին ուզել. երբոր Գագիկ յանձն չառաւ, Մոնոմախոս երիւր անգամ վրան պատերազմի ելաւ, բայց յաղթուելեցաւ. ասանկն չարութեանց պատճառն էր Վէստ Սարգիս:

Հ. Վէստ Սարգիս երբոր տեսաւ որ Մոնոմախոս յաղթուելով իր խորհուրդը փուճ ելաւ, ինչ չարիք մտածեց.

Պ. Իրեն պէս քանի մը ազգատեաց փառամոլ ու չար նախարարներու հետ միացած, խորհուրդ տուաւ Մոնոմախոս կայսեր որ բարեկամութեամբ Սամսոլ կանչէ Գագիկը, ու վերջը երեքը մատնեն Անին:

Հ. Գագիկ յանձն առաւ կայսեր հրաւէրքը.

Պ. Իմանալով կայսեր ու իր Թշնամեաց չար միտքը ամենևին յանձ չառաւ. բայց նախարարները սուտ երդում ընելով Թէ երեքը Անին կը պաշտպանեն՝ յորդորեցին զինքը որ կայսեր երթայ. ինքն ալ ելաւ գնաց, աւելի ձարը հատնելով քան Թէ համոզուելով:

Հ. Կայսրը ինչ կերպով ընդունեցաւ զինքը.

Պ. Նախ մեծ պատիւ ու սէր ցըցուց, բայց վերջը սկսաւ Անին ուզել. Գագիկ ամենևին կերպովմ՝ ալ յանձն չառաւ. ան ատեն Վէստ Սարգիս ու իր հուսակիցները Անիին բանալինները կայսեր խըրկեցին:

Հ. Գագիկ երբոր տեսաւ Անիին բանալինները ինչ ըրաւ.

Պ. Կրքէն ու յուսահատութենէն Թագաւորութիւնն ալ ձգեց երեք տարի իշխելէն ետքը. կայսրը առ բանիս վրայ ուրախացած՝ Գագիկին քանի մը քաղաքներ տուաւ ու ինքը Հայաստանի տիրեց (1043):

Հ. Բագրատունեաց Թագաւորութեան կործանելէն ետքը, ինչ խեղճութիւններու հասաւ Հայաստան.

Պ. Ամեն տեսակ Թշնամի Հայաստանի վրայ վազելով մոքէ չանցած չարիքը հասուցին Հայոց, որոնց մէջ նշանաւոր եղան Տուղրիլ, Ալփասլան ու իր տղան Մելիք շահ:

Հ. Ա՛ս միջոցներուն մէջ ինչ քաջութեան գործք կը պատմուի Թաթուլ սպարապետին վրայ.

Պ. Ասկից Տուղրիլին զօրացը դէմ ելլելով, շատ չարիք հասցընելէն վերջը, անոր իշխաններէն մէ-

կուն տգան վերաձօրեց։ Երբոր Թաթուլը բռնուե-
լով Տուղրիլին դիմացը ելաւ, ըսաւ Տուղրիլ. «Թէ
որ տպրի տգան զքեզ ալ կը խաղցեմ»։ պատաս-
խան տուաւ Թաթուլ. «Թէ որ զարնուածքը խմն
է չապրիս»։ մեռաւ տգան, անոր համար զինքն
ալ սպանեցին։

Հ. Ալփասլան Տուղրիլին յաջորդելով ինչ չա-
րիք հասուց Հայոց։

Պ. Երկար տաեն Անին պաշարելէն եաքը առաւ
ու սոսկալի կոտորած ըրաւ Անոյ մէջ։

Հ. Գագիկ Աբասեան ինչ հնարքով տգատե-
ցաւ Ալփասլանին հարուածէն։

Պ. Սուգի լսելէ հագած Ալփասլանին դիմացը
ելաւ, ըսելով որ «Տուղրիլին մահուանը համար
սուգի մտեր եմ»։ Ալփասլան վրան խղճալով սի-
րով պատուեցաւ հետը ու չարիք մը չհասուց։

Հ. Գագիկ Բ. ինչու համար թշնամացաւ Յու-
նաց հետ։

Պ. Կատադովկիոյ Յոյները չարաչար կը նախա-
տէին զՀայերը. ու Կեսարիոյ մետրապօլիան ալ
իր չանը անունը Արմէն դրեր էր, ինչպէս նաև ու-
րիշ շատերը։

Հ. Գագիկ Բ. ատ նախատանաց վրէժը ինչպէս
հանեց։

Պ. Երբոր մետրապօլիին քովը կերթակուրի գա-
ցեր էր, խնդրեց Գագիկ որ շունը կանչէ. մետրա-
պօլիան ալ Արմէն ըսելով կանչեց. ան տաեն Գագ-
կայ ծառաները բռնեցին շունն ու մետրապօլիտը՝
ու պարկի մը մէջ դնելով սկսան շունը չարաչար
ծեծել. ան ալ կատաղութեամբ այնչափ խածաւ
զմետրապօլիտը որ երիսուքն ալ պարկին մէջ մեռան։

Հ. Յոյնք երկնց վրէժը ինչպէս հանեցին Գա-
գիկէն։

Պ. Երբոր անգամ մը Կիլիկիա բերդը գացած՝
պարտէզին մէջ կը հանգչէր, բերդին տէրերը, ո-
րոնք յոյն էին, դարան մտնելով բռնեցին զինքը
ու սոսկալի տանջանքներով սպաննեցին. վերջը
մարմինն ալ բերդին վրայ կախեցին։ Թշուառու-
թեամբ թագաւորեց ու տպրեցաւ, խեղճու-
թեամբ ալ մեռաւ (1079)։

Հ. Յոյները որչափ տաեն տիրեցին Հայաստանի։

Պ. Քիչ միջոց. վասն զի Մելիք շահ Յոյները
վռնտեց ու ինքը տիրեց Հայաստանի։

Հ. Բագրատունեաց տէրութիւնը կործանելէն
եաւ, մեկալ տպատամբ կամ բռնաւոր թագաւոր-
ները ինչ եղան։

Պ. Ա՛ս միջոցներուն վերցուեցան անունք ալ, որ
էին Արծրունեաց ու Կարսի թագաւորութիւնը
որն որ իրենք թագաւոր ունեցաւ Մուշեղ, Աբաս
ու Գագիկ, որ իր տէրութիւնը Յունաց տուաւ և
ինքը Մաւնդաւ բերդը քաշուեցաւ (1066)։

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

ԳԱՍ ԻԱ.

Ռուբէն Ա. կոստանդին Ա. Թորոս Ա. Լևոն Ա. Թորոս Բ. Մլեհ և Ռուբէն Բ։

Հ. Ռուբինեանց Թագաւորութիւնը ինչպէս սկսաւ.

Պ. Բագրատունեաց տէրութեան կործանելէն երեսունըչորս տարի վերջը, Ռուբէն անուանով իշխան մը Գադիայ տղտկանութենէն, Կիլիկիոյ կողմերը երթալով հոն տէրն Հայոց սիրաը վաստըկեցաւ, ու թէպէտ մը կարճ դլուխը ժողվելով քանի մը պզտի քաղաքներու տիրեց ու սկսաւ կառավարել զանոնք (1080)։

Հ. Ռուբէն որչափ տարի իշխեց.

Պ. Պոլ Վասիլ ըսուած իշխանին օգնութեամբը ուրիշ քաջութիւններ ալ ընելէն վերջը Յունաց դէմ, տասնըվեց տարի իշխելէն ետքը մեռաւ։

Հ. Ո՞վ յաջորդեց իրեն.

Պ. Իր որդին Կոստանդին Ա. որ թէպետ հինգ տարի կառավարեց տէրութիւնը, ու Լատինա-

ցւոց՝ որ սուրբ երկիրը ազատելու կ'երթային օգնեց. որոնցմէ վերջը շատ ընծաներ ու պատիւներ առաւ։

Հ. Թորոս Ա. իր հօրը տեղը յաջորդելով ինչ քաջութիւններ ըրաւ.

Պ. Յոյներէն պատերազմով Անտիոքայ քաղաքը առաւ. Սկիւթացիները ու Պարսիկները որ Հայաստանի վրայ կը վազէին՝ ցրուեց ու փախուց. Կիլիկիոյ բերդն ալ վարպետութեամբ առնելով Գադիկը մեռցընողները սպաննեց։ Թորոս քանի մ'իրիք տարի իշխեց ու մեռաւ։

Հ. Թորոս Ա.ին ով յաջորդեց.

Պ. Իր եղբայրը Լևոն Ա. որ Մամեստիա և ուրիշ շատ քաղաքներ առնելով ամենուն սիրտը վախ ձգեց՝ ինչուան նաև Յունաց ալ։

Հ. Լևոն Ա. ինչպէս բանութեցաւ Պետրոս Անտիոքի կոմսին.

Պ. Պետրոս՝ Լևոնին վրայ նախանձելով զինքը սեղանի կանչեց ու բանելով բանտը դրաւ. Լևոն քանի մը քաղաքներ ու իր որդին պատանդ տալով ազատեցաւ։

Հ. Լևոն աս նախատանոց վրէժը ինչպէս հանեց.

Պ. Մէկէն զօրք ժողվեց ու տուած քաղաքները էս առնելէն զատ, այնչափ նեղը խոթեց Պետրոսը, որ ինքը Լևոնին պատանդներ տալով հաշտ խաղըսեցաւ ձեռքէն։

Հ. Լևոն ինչուան վերջը կրցաւ խաղաղութեամբ իշխել.

Պ. Չէ. վասն զի Յովհաննէս Պերպերուժէն ան-

համար զօրքով վրան պատերազմի ելաւ՝ նախանձելով ըրած քաջութիւններուն վրայ. Լևոն իշխաններուն անմիաբանութեամբը անօգնական մնալով յաղթուեցաւ, ու բռնուելով Սատմպէլ բանտ դրուեցաւ (1137):

Հ. Լևոն ո՞րչափ տաւն բանտը կեցաւ.

Պ. Տարի մը բանտը մնալէն վերջը՝ կայսրը վրան խղճալով բանտէն հանեց ու իր պալատը կը պահէր: Քանի մը տարիէն նորէն բանտը դրուեցաւ իր Թորոս որդւոյն հետ մէկ տեղ, ուր որ սպանն ցաւէն մեռաւ:

Հ. Թորոս Բ. ինչ կերպով իշխանութիւնը ձեռք ձգեց.

Պ. Երբոր Կիւ Մանուէլ կայսր եղաւ՝ Թորոս որ սրտէն բանտէն էլած էր, փախաւ ու Կիլիկիա գալով յայտնեց իշխաններուն իրեն ով ըլլալը. անոնք ալ միաբանեցան ու զինքը իշխան դրին իրենց վրայ, որ սկսաւ մէկէն քաջութիւններ ընել:

Հ. Կիւ Մանուէլ երբոր լսեց Թորոսին քաջութիւնները ինչ ըրաւ.

Պ. Անդրոնիկոս զօրավարը խաբեց շատ զօրքով որ երթայ Թորոսը չզթայի զարկած Սատմպէլ բերէ:

Հ. Անդրոնիկոս կրցա՞ւ կայսեր պատուէրքը կատարել.

Պ. Չէ. վասն զի երբոր լսեց Թորոս սա բանս՝ սաստիկ բարկանալով, անանկ քաջութեամբ պատերազմեցաւ, որ մեծ ջարդ տալէն եաքը Յունաց, շատ իշխաններ ալ գերի բռնեց անոնցմէ:

Հ. Թորոս ինչ ըրաւ սա իշխանները.

Պ. Կայսրը խիստ շատ տտակով գնաց երմէ. Թորոս բոլոր առած տտակը զօրացը բաժնեց դեպ պանդերուն առջին. երբոր անոնք զարմացան. ըսաւ Թորոս. « Կամաւ ըրի որպէս զի նորէն բըռնեն ձեր իշխանները »:

Հ. Ինչո՞ւ համար նորէն պատերազմ բացուեցաւ Հայոց և Յունաց մէջ.

Պ. Սահմանէ Թորոսին եղբայրը ապստամբելով երմէ՝ շատ չարիք հասուց Յունաց. անոնք ալ հնարքով մը զինքը բռնելով եռացեալ ջուրի մէջ սպաննեցին. տասվ պատերազմ բացուեցաւ Յունաց ու Թորոսին մէջ:

Հ. Թորոս ասոնց պատերազմներուն մէջին ալ յաղթե՞ց Յունաց.

Պ. Առջի բերանները միշտ յաղթեց. բայց երբոր տեսաւ որ Կիւ Մանուէլ մեծ պատրաստութեամբ վրան կուգայ, հաշտութիւն ըրաւ կայսեր հետ, ու քանի մը տարիէն մեռաւ. քանըչորս տարի իշխելէն եաքը:

Հ. Ինչո՞ւ համար Թորոսին մեռնելէն եաքը խռովութիւն ինկաւ Հայոց մէջ.

Պ. Վասն զի Թորոսին տղան պզտիկ ըլլալով՝ երեն խնամակալ դրուեցաւ Թովմաս Պայլ որ աղգաւ Լատին էր: Մլեհ Թորոսին եղբայրը որ արդէն ապստամբած էր՝ հերթայի ամիրային օգնութիւն առնելով նաև ու ինքը սկսաւ իշխել, շատ խռովութիւններ ըլլալէն եաքը:

Հ. Մլեհ ո՞րչափ տաւն իշխեց.

Պ. Հինգ տարի իշխելէն եաքը սպաննեցին զինքը՝ իրեն անկարգութիւններուն համար, ու Ռուբէն Բ իշխան դրին (1174):

Հ. Ռուբէն Բ. Ինչպէս կառավարեց իր պզտի տէրութիւնը.

Պ. Շատ մեծ խնամք ունեցաւ իր երկրին բարեկարգութեանը վրայ. բայց ափսոս որ Հեթում Լամբրոնի իշխանը հետը Թշնամացաւ, պատճառաւ որ Ռուբէն Տարսոնը Յունաց Ձեռքէն առեր էր:

Հ. Ի՞նչ հետեւանք ունեցաւ ասոր իշխանաց Թշնամութիւնը.

Պ. Պատերազմի ելան իրարու դէմ, ու Հեթում յաղթուելով օգնութիւն կանչեց Պեմունդ անուն Անտիոքայ լատին կոմսը. Պեմունդ ալ բարեկամութիւն ձեւացնելով Ռուբենին հետ, բռնեց զինքը ու շղթայի զարկաւ:

Հ. Ի՞նչ կերպով ազատեցաւ Ռուբէն բանտէն.

Պ. Լևոն Ռուբենին եղբայրը լսելով ասոր բանտ շատ զօրքով սաստիկ նեղը խոթեց Հեթումն ու Պեմունդը, ու իր եղբայրը ազատելով բերաւ աթոռը նստեցուց:

Հ. Ռուբէն Բ. որչափ տարի իշխեց.

Պ. Տասնըմէկ տարի իշխեցին եռքը վանք մը շինելով կրօնաւոր եղաւ, ու Լևոնը իր տեղը իշխեցուց:

ԴԱՍ Ի Բ.

Լևոն Բ. Փիլիպպոս ու Հերառմ Ա. Լևոն Գ:

Հ. Լևոն Բ. Ինչ բաներով երեւելի եղաւ.

Պ. Իրեն խնամատարութեամբը, քաջութեամբը ու ան ամէն կատարելութիւններով որ Թագաւորի մը հարկաւոր են. որով նաեւ իր տէրութիւնը ամենայն մասամբ ծաղկեցուց ու ընդարձակեց:

Հ. Ինչպէս Թագաւոր եղաւ Լևոն Բ.

Պ. Երուսաղէմի վրայ գացող խաչակիրը զօրաց օգնելով անունը Եւրոպա հռչակուեցաւ, ու Փրեդերիկոս Կերմանացւոց կայսրն ալ Թագ խոստացաւ. բայց ինքը մեռնելով իրեն յաջորդը Հէնրիկոս և Կեղեսաթանոս Պատը կատարեցին Փրեդերիկոսի խոստումնքը Թագ ու գրօշ խաւրելով. Լևոն ալ Սսոյ մէջ Թագաւոր օծուեցաւ Գրիգոր կաթուղիկոսէն (1198):

Հ. Լևոն Թագաւոր օծուելէն եռքը ինչ պատերազմներ ըրաւ.

Պ. Գայքաուզ Իկոնիոյ ամիրային յաղթեց, Թէպէտ և սկզբան յաղթուեցաւ իշխաններուն յանդգնութեանը պատճառաւ. նոյնպէս նաեւ Եւբոյ ամիրային ալ յաղթեց, ուսկից շատ աւար առաւ ու անոր իրմէ պահանջած հարկը՝ ինքը անկէ առաւ:

Հ. Լևոն Բ. որչափ տարի Թագաւորեց.

Պ. Երեսունըչորս տարի, ու բարի անուամբ մեռաւ:

Հ. Լևոն Բին առեղծ մի անցաւ.

Պ. Մանչ տպայ չուենեալով Զապէլ անուանով աղջիկը առեղծ անցաւ: Իշխանները միացան ու Զապէլը փիլիպպոս անուանով լատինի մը հետ կարգեցին որ մօր կողմանէ միայն հայ էր. ասիկայ երկու տարի իշխելէն ետքը սկսաւ Սսոյ հարստութիւնները Անտիոք կրել. ան բանիս բարկանալով իշխանները բանաը դրին զինքը՝ ուր որ մեռաւ քիչ առենէն:

Հ. Փիլիպպոսին առեղծ մի յաջորդեց.

Պ. Հեթում Ա. որ Զապէլին հետ կարգուելով ինքը թագաւոր եղաւ ու շատ զարգարեց Հայաստանը:

Հ. Ինչու համար Հեթում Թաթարաց Մանգոյ խանին գնաց.

Պ. Տեսնելով որ Թաթարները շատ չարիք կը հասցընեն Հայաստանի, ու կրնան նաև իր երկրին վրայ ալ գալ, եկաւ Թաթարստան գնաց որպէս զի խանին աղաչէ որ ձեռա չընէն Հայոց: Մանգոյ խանը սիրով ընդունեցաւ զինքը և խնդիրքը կատարեց:

Հ. Հեթում Թաթարստանէն գառնալէն ետքը ինչ պատերազմներ ըրաւ.

Պ. Իկոնիոյ ամիրան վրան նախանձելով պատերազմի եկաւ, բայց յաղթուեցաւ: Նոյնպէս նաև Կաստանդին Լամբրոնի իշխանը ապստամբելով Իկոնիոյ ամիրային հետ միաբանած վրան պատերազմի եկաւ. բայց երկուքն ալ յաղթուեցան:

Հ. Հեթում վերի ըսած թշնամիներէն զատ ուրիշ ինչ նոր թշնամի ունեցաւ.

Պ. Փոռուխասար Եգիպտոսի ամիրան, որ Սկիզ-

թացոց և ուրիշ շատերուն յաղթելէն ետքը, գնաց պատերազմելու որ Եգիպտացոցին առած քաղաքները ետ տայ. Հեթում յանձն չառաւ ան բանս ու իր երկու որդիքը Լևոնն և Թորոսը թագաւոր անոր դէմ, ինքը գնաց որ Թաթարներէն օգնութիւն առնէ:

Հ. Թորոս և Լևոն կրցան Փռուխասարին յաղթել.

Պ. Թորոս պատերազմի մէջ մեռաւ: Լևոնն ալ դերի ինկաւ. տասը տարի երկիրը թշնամիներէն կոխկռտուեցաւ:

Հ. Հեթում ետ դառնալով ինչպէս գտաւ Կիլիկիան.

Պ. Այն բան տակն ու վրայ ու աւերակ դարձած. և տեսնելով որ դարման չկայ ետ Ամերեց վարձուորը զօրքերը, ու ազաչանքով և շատ տակ տալով Լևոնը գերութենէ ազատեց:

Հ. Լևոնին դառնալէն ետքը, գէթ որչափ տակն ալ թագաւորեց Հեթում.

Պ. Ինչ մը տակնէն Լևոն որգւոյն յանձնեց թագաւորութիւնը ու ինքը Կրաղարկ վանքը քաշուելով բարի մահուամբ մեռաւ քառասունըվեցերորդ տարի թագաւորելէն ետքը:

Հ. Լևոն Գ. ինչպիսի մարդ էր.

Պ. Խոհեմ, բարեպաշտ և ուսումնասէր, որով մեկէն սկսաւ գպրոցներ բանալ ու գիտութիւնը ծաղկեցընել, որպէս զի ազիատութեան, նախանձու, տաքութեան և փառամոլութեան անիծեալ շառաւիղները ջորջենէ. բայց ափսոս ինչպէս որ կ'ուզէր վախճանին չհասաւ (1269):

Հ. Ի՞նչ արգելք եղաւ որ Լեւոն միաբը դրածը չիրցաւ առաջ տանիլ.

Պ. Իշխաններէն ոմանք հետը Թշնամանալով գացին Փնտուխտաորը Լեւոնին դէմ գրգռեցին. ան ալ անհիւ բազմութեամբ Կիլիկիոյ վրայ եկաւ. Լեւոն անօգնական մնալով միտաւ պահուըտեցաւ, որով Թշնամիք ամէն չարիք հասուցին:

Հ. Լեւոն տեսնելով Կիլիկիոյ ասերմունքը ինչ ըրաւ.

Պ. Եկաւ պահուըտած տեղէն ու քիչ մը զօրք ժողվելով Սմբատ եղբօրը հետ միացած վանեց Եգիպտացիները, ու յաղթեց նաև Իկոնիոյ սուլթային: Տանջելին տարի Թագաւորելէն ետքը մեռաւ:

ԴԱՍ ԻԳ.

Հերում Բ. ևն յիշուած Հռոբիևեանց թագաւորաբևան կործանիլը:

Հ. Հեթում Բ. ինչո՞ւ Թագաւոր չօծուեցաւ.

Պ. Վասն զի սաստիկ կրօնասէր ու բարեպաշտ ըլլալով, չէր ուզեր արտաքին բաներու խառնուիլ. անոր համար ալ չորս տարի իշխելէն ետքը վանք մը քաշուեցաւ ու Թորոս եղբայրը Թագաւորեցուց (1293):

Հ. Թորոս Գ. ո՞րչափ տաեն Թագաւորեց.

Պ. Իրիք տարիէն Թագաւորութիւնը ձգեց ու ինքն ալ վանք մը քաշուեցաւ, սպասելով որ նորէն Հեթումը գայ Թագաւորէ:

Հ. Ա՛ս միջոցներուն ինչ խռովութիւն եղաւ Կիլիկիոյ մէջ.

Պ. Մարիամ կայսրուհիին աղաչանքովը (որ իրենց քոյրն էր) Հեթում ու Թորոս Սատալոյ գացին. ան միջոցին Սմբատ մեկալ եղբայրնին՝ իշխանները համոզելով ինքը Թագաւոր օծուեցաւ. ու երբոր անոնք կը դառնային դէմերնին ելլելով երկուքն ալ բռնեց, Հեթումը կուրցուց ու Թորոսը սպաննեց:

Հ. Սմբատ կրցա՞ւ հանգիստ Թագաւորել.

Պ. Չէ. վասն զի Կոստանդին մեկալ եղբայրնին աս բանիս վրայ բարկանալով, շատ զօրքով Սմբատին վրայ հաւ ու յաղթելով անոր՝ բռնեց զանիկայ ու բանտ դրաւ, և ինքը անոր տեղը Թագաւորեց: Հեթումն ալ բանտէն հանած հանգիստ կը պահէր:

Հ. Կոստանդին ր. ո՞րչափ տաեն Թագաւորեց.

Պ. Երկու տարի չափ. վասն զի երբոր հրաշքով մը Հեթումին աչքերը բացուեցան, ամենքը սկսան ուղել որ նորէն Հեթում Թագաւորէ. բայց երբոր Կոստանդին աս բանիս վրայ սկսաւ խռովութիւն հանել, Հեթում ալ բռնեց զինքը և Սըմբատ ալ մեկտեղ Սատալոյ խաբեց:

Հ. Հեթում Բ. երրորդ անգամ Թագաւորելով ինչ ըրաւ.

Պ. Այլ և այլ անգամ Եգիպտացւոց ու Կիլիկացւոց յաղթելէն վերջը, իր Թորոս եղբօրը տալան Լեւոնը իր տեղը Թագաւորեցուց ու ինքը նորէն առանձնացաւ վանքը. բայց միշտ խորհրդով կ'օգնէր Լեւոն Դ-ին, որն որ խելացի ու բարեպաշտ էր:

Հ. Լևոն Դին առնը ինչ նոր խռովութիւն ինկաւ Կիլիկիոյ մէջ.

Պ. Լևոն Գ. Դրիգոր Անաւարզեցի կաթուղիկոսին յարդարելովը Սսոյ մէջ եկեղեցական ժողովք մը ընել տուաւ, որուն մէջը շատ բան փոխեցին ծէսերուս վերաբերեալ. իսկ մը խռովարար ու անկարգ մարդիկ աս բանիս վրայ բարկացած մեծամեծ խռովութիւններ հանեցին Կիլիկիոյ մէջ, ու ասոնք ալ բաւական չսեպելով, անզգամութեամբ գացին Թաթարաց Պիլարը իշխանը, որ Անարզաբա կը նստէր, Լևոնին դէմ դրդռեցին:

Հ. Պիլարը ինչ չարիք հասուց Լևոնին.

Պ. Խարդախութեամբ Լևոնը իրեն կանչեց, իբրև թէ խորհուրդ հարցնելու համար. ան ալ շատ իշխաններով ու Հեթումն ալ միասին առած եկաւ գնաց. Պիլարը նախ սիրով ընդունեցաւ ու վերջը զամինքն ալ Թրէ անցուց (1308):

Հ. Լևոն Դին ո՞վ յաջորդեց.

Պ. Օշինն Հեթումին եղբայրը շատ զօրք ժողված՝ Պիլարին զօրքերը ցրուեց փախուց ու ինքը Թագաւոր եղաւ, ստիպելով որ Սսոյ ժողովքին կանոնները պահուին: Օշինն գրեթէ ասոր ամէնուն հրաշքով մը Նոբը Եգիպտոսի ամիրային ալ յաղթեց որ շատ զօրքով վրան եկեր էր. տասուերկու տարի Թագաւորեց ու լաւ մահուամբ մեռաւ:

Հ. Լևոն Ե. իր հօրը տեղը յաջորդելով ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Ուրբինեանց Թագաւորներուն մէջ գրեթէ ամէնէն աւելի անգութ և անկարգ կեանք անցնողը ինքն եղաւ, որով իր կինը, եղբայրը ու Օշին Պայլ փեսան սպաննել տուաւ անիրաւութեամբ:

Հ. Լևոն Ելն առնը օտար Թշնամիները ինչ չարիք հասուցին Կիլիկիոյ.

Պ. Եգիպտոսի Սուլդանը, Թաթարներն ու Թուրքերը շատ անգամ Կիլիկիոյ վրայ վազելով շատ ձիառներ հասուցին, միշտ պատճառ բերելով որ Հայերը Լատինացուց հետ Թղթակցութիւն ու վերաբերութիւն ունին ու զանոնք կը դրդռեն Երուսաղէմի վրայ գալու:

Հ. Լևոն Ե. որչափ առնն Թագաւորեց.

Պ. Քանըմէկ տարի. շատ անհանգիստ ու խեղճ կերպով:

Հ. Ո՞վ յաջորդեց Լևոն Ելն.

Պ. Յովհաննէս Պայլ ազգաւ Լատին. ասիկայ տարիէ մը ապստամբեցաւ իշխաններէն իր հայատեցութեանը համար:

Հ. Յովհաննեսին ո՞վ յաջորդեց.

Պ. Եղբայրը Գուիտոն որ երկու տարիէն սպաննուեցաւ, Լատինի ծէս ազգին մէջ խոթել ուզելուն համար:

Հ. Կոստանդին Գուիտոնին տեղը յաջորդելով, ինչ Ճամբայ բռնեց.

Պ. Թէպէտ և ազգաւ Լատին էր, բայց խելքով կառավարեց ազգը տասներեք տարի: Նոյնպէս տասը տարին ալ Եգիպտոսի ամիրան շատ զօրքով Կիլիկիոյ վրայ եկաւ. բայց չարաչար յաղթուեցաւ Կոստանդինէն:

Հ. Լևոն Զ. ինչ տեսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Երկու տարի աթոռը առանց Թագաւորի մնալէն վերջը իշխաններուն փառամոլութեանը

համար ընտրուեցաւ Թագաւոր Լևոն Զ. որուն մայրը միայն հայ էր. խելացի ու բարեպաշտ ըլլալով շատ լաւ պիտի կառավարէր ազգը, բայց ափսոս ժամանակին պարագաները չեն ողջունցին(1365):

Հ. Ռուբինեանց Թագաւորութիւնը ինչպէս կործանեցաւ.

Պ. Լևոն տասնըմէկ տարուան Թագաւորութեան մէջ շատ անգամ Եգիպտացիներէն յաղթուելէն վերջը, Եգիպտոսի Սուլտանը Էշրեֆ Շաւպան անհամար զօրքով վրան եկաւ ու երկար տարի պաշարեցաւ եաքը բռնեց Լևոնը ու շղթայի զարնելով Եգիպտոս տարաւ, որով վերջացաւ Հայոց Թագաւորութիւնը Քրիստոսի 1375 Թուականին:

Հ. Լևոն Զ. ինչ եղաւ Եգիպտոս.

Պ. Եօթը տարի բանտը կեցաւ հաւատքը չուրանալուն համար. վերջը Սպանիայէց Յովհաննէս Թագաւորին ազաչանքովը՝ գերութենէ ազատեցաւ ու Եւրոպա գնաց:

Հ. Լևոն գերութենէ ազատելէն եաքը ուր գընաց.

Պ. Նախ Երուսաղէմ, ուր իր ընտանիքը Թողուց և ինքը անցաւ Հռոմ. վերջը Յովհաննէս Սպանիոյ Թագաւորը իրեն բնակութեան տեղ տուաւ:

Հ. Ո՞ւր մեռաւ.

Պ. Փարիզ. երբոր գացեր էր հոն Ճամբորդութեան համար՝ մեռաւ 1393ին, Նոյեմբերի 19ին վեցասուն տարուան, ու թաղեցաւ Կելեստինեանց վանքին մէջը, ուր որ ինչուան հիմա կայ իր գերեզմանը:

ԴԱՍ ԻԴ.

Որբևհանց տէրութեան կործանելէն ի վեր ազգին մեր ասենի եղած դիպուածները:

Հ. Լանկթեմուր ինչ չարիք հասուց Հայաստանի.

Պ. Ռուբինեանց Թագաւորութեան կործանելէն տասնուերկու տարի ետքը, Լանկթեմուր Էօզպէք Թաթարաց Թագաւորը շատ տերերու տիրելով Հայաստանի վրայ եկաւ, շատ տեղ այրեց աւերըշակեց ու շատ ալ արիւնհեղութիւններ ըրաւ, մասնաւորապէս Սեբաստիոյ մէջ (1387):

Հ. Ի՞նչ մարդ էր Պէյազիտ Ռուպէլեան.

Պ. Քաջ և խոհեմ մարդ մըն էր որ Սիւնեաց գաւառին մէջ (Թափանի կողմերը) հինգ վեց հազարի չափ Հայերու վրայ կ'իշխեր հայրաբար, ու զամենքը կը խնամէր:

Հ. Ո՞րչափ տևեց տասը իշխանութիւնը.

Պ. Վրաց Թագաւորը վրան դանդանձելով Ախ Հադին անուշով անզգամ և շահասէր Հայու մը ձեռքով Թոյն խմցնել տուաւ ու մեռուց. Թէպէտ և վերջը Այնտեղին ալ չարաչար մահուամբ սպանուեցաւ (1438):

Հ. Ի՞նչ չարիք հասուց Հայոց Շահաբաս Պարսից Թագաւորը.

Պ. Սոսկալի արիւնհեղութիւններ ընելէն եաքը, հազարաւոր ընտանիք Պարսկաստան տանելով Նոր Ջուղան շինել տուաւ ու հոն բնակեցուց. բայց

աս Ճամբորդութեան մէջը խիստ շատ մարդիկ խեղճաբար մեռան, ու մնացածներըը հազիւ տասնհինգ կու հազար տուն (1604)։

Հ. Ի՞նչ գիտեվլիք կայ Դաւիթ Սիւնի իշխանին վրայ։

Պ. Խելացի ու կարիճ մարդ ըլլալով Սիւնեաց աշխարհքին կողմերը շատ գօրացաւ, ասկէ 140 տարի մը առաջ՝ իր քանի մը կարիճներովը, ու չորս տարի Տաճկներուն դէմ պատերազմեցաւ քաջութեամբ։ Իրեն հետ էին Մխիթար, Տէր Աւետիք և Մելիք Բարսադան կարիճ հայերը (1724)։

Հ. Դաւիթ որչափ տարի իշխեց։

Պ. Վեց տարի. շատ չարչարութիւններ ընելէն հաքը մեռաւ չիտունըչորս տարուան ու իրեն յաջորդեց Մխիթար։

Հ. Մխիթարին իշխանութիւնը որչափ տարի տևեց։

Պ. Խիստ քիչ. վասն զի քովի մարդիկը զինքը անօգնական ձգելով փախան ցրուեցան, ու վերջը զինքն ալ սպաննեցին։ Առնցմէ վերջը Հայոց վայ իրենց աղգէն իշխող մը չեղաւ, բայց՝ ի գեղերու վրաքաղուածներէն։ Հայաստան ալ Պարսից և Օսմանեանց և վերջը Ռուսաց իշխանութեան տակն անցաւ։ Շատ թշուառութիւններէ ու խեղճութիւններէ վերջը հիմայ կրթութեամբ, գիտութեամբ և հայրենասէր անձանց ջանքով աղգերնիս յառաջադիմութեան մէջ է։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԴԱՍ Ա.

Մեր ազգին սկիզբը. Հայկայ ապստամբութիւնը, Բելայ հետ բրած պատերազմը. և իրեն կատարելոգործիւններն ու մահը։

1. Մեր ազգը Նոյնահապետին Յաբեթ որգիէն կ'սկսի ըլհեղեղէն քիչ վերջը։ Երբոր Նոյայ որդիքը ան ատեիճան բազմացան Հայաստանի կողմերը որ տեղերնին քիչ գալով սկսան ազգին անդամներ երթալ, ատ գնացողներուն հետ մեկտեղ գնաց նաև Հայկ անուանով մեկը որ Յաբեթին երրորդ սերունդն էր, այսինքն Յաբեթին սրտէն Գամերին,

1. Մեր ազգը որ առեղէն կ'սկսի, և ոմ է մեր ազգին նախահայրը.

Ի դիւրութիւն ուսանողաց և ըստ խնդրոյ ամանց ի բաց թեկուսանց այս երկրորդ մասիս մէջն ալ Հարկ սեպեցինք Հարցմունքներ դնել։

Թամերին տղուն Թորգոմին տգան էր: Ա՛ս գալթա-
կանները երեթալու տանեն մեկ մեծ գաշտի մը հան-
դիպեցան Սենաար ըսուած տեղը և հոն տմբարաս-
տանութեամբ ուզեցին բարձր աշտարակ մը շինել,
ինչպէս որ տուրը գիրքը կը պատմէ, բայց Ա՛ս-
տուած բարկանալով լեզուին խառնակեց ու ցի-
րինք ալ ցիր ու ցան ըրաւ:

2. Սենաարայ դաշտին աշտարակը շինել ուզող հսկաներուն մէջ Բել անունով մեկը ուրիշներէն աւելի զօրաւոր գտնուելով, կէս մը բռնութեամբ կէս մ՛ալ խոստմունքով անոնցմէ շատը իրեն հնազանդեցուց և կ՛ուզէր Աստուծոյ պէս պաշտուիլ տմենէն և անոնց Թագաւոր եղաւ: Ա՛ս բանս երբոր իմացաւ Հայկ՝ չուզեց Բելայ հնազանդիլ*. ուստի Ժողվեց տղաքն ու Թոռունները, որ իրէք հարիւրի չափ կային, և իրեն ուրիշ ծառաները ու եկաւ նորէն Հայաստան գարձաւ. հոն իրեն առջի բնակութեան տեղին անունը Հարք դրաւ և շինած քաղքին անունն ալ Հայկաշէն. և բոլոր ան կողմի բնակիչները սիրով հնազանդեցան աս կարեւ և վեհանձն հսկային (2107):

3. Բել երբոր լսեց Հայկայ ապստամբութիւնը՝ իսկոյն պատգամաւոր խաբեց եաէին որ գայ նորէն իրեն հնազանդի, Թէ չէ՝ անով տեղով կը ջնջէ զինքը. բայց Հայկ աներկիւղ վստահութեամբ մերժեց Բելայ անիրաւ սպառնալիքնու խաբուած պատգամաւորները եա դարձուց. ասով Բել մեծ ու ա-

2. Հայկ ինչպէս ապստամբեցաւ Բելէն.
3. Հայկ ինչպէս սպաննեց Բելը.

* Մեր վարդան պատմիչը կը զուցէ Թէ Հայկ ձշմարիտ ատուածպաշտութեամբ Բելայ արձանը չպաշտելու համար ապստամբեցաւ Բելէն:

հեղ պատերազմութեամբ Հայկայ վրայ պատերազմի ելաւ:

Հայկ փոխանակ վախնալու Ժողվեց իրեն Թոռներն ու տղաքը և ուրիշ հաւատարիմ մարդիկը, ու զանոնք յորդորելով Վանայ ծովուն քովերը պատերազմի պատրաստուեցաւ: Բել իրեն ուժին վրայ վստահացած ու տմբարատանութեամբ լեցուած, առանձին խումբով մը զատուած եկաւ Հայկայ բանակը դիտելու: Քաջ Հայկ ասիկայ յարմար առնն տեսնելով զօրքերը շարեց ու պատերազմիլ սկսաւ, և այնպէս քաջութեամբ պատերազմեցաւ իրենները՝ որ Բել զարհուրած ուզեց եա գառնալ, ինչուան որ իրեն մեկալ զօրքերը օգնութեան հասնին. բայց Հայկ Բելայ յանդգնութենէն իրեն օգուտ քաղելով, քաշեց ազեղը ու այնպէս Թափ անցուց նետը Բելայ կուրծքին, որ երկաթը ջերտաչերտ զրահներուն մէջէն անցնելով կռնակէն գուրս ելաւ ու ան աչագին և վնթխալ հսկան գետին պառկեցուց: Հայկ վսեմ խորհրդով Բելայ մարմինը առաւ ու զմռսել տալով բարձր տեղ մը Թաղեց. որպէս զի ամենուն ցուցնէ Աստուծոյ դէմ ապստամբողին ու հպարտութեամբ լցուած մարդուն վիճակը. և յաւիտենական յիշատակ Թողու ապագային որ զիրենք այսպիսի բռնաւորէ մը խուսեց. իսկ պատերազմին տեղոյն անունը Գերեզմանք գրաւ:

4. Ա՛ս բաներուս մէջ աղեկ կը տեսնուի Հայկայ հոգւոյն կատարելութիւնները: Վեհանձնութիւնը կը տեսնուի, որ երբոր Բել անհամար բազմութեամբ վրան պատերազմի ելաւ, Հայկ ազատութեան և իր օրգուցը սիրոյն համար լաւ համարեցաւ պատերազմով մեռնիլ, քան Թէ բռնաւորի մը տակ գերի ըլլալ: Խոհեմութիւնն ու խելացիու-

4. Ի՞նչ հոգւոյ կատարելութիւններ ունէր Հայկ.

թիւնը կը տեսնուի անով որ այնչափ քիչ մարդով անթիւ բազմութեան յաղթել յաջողած ժամանակը, դիւքը և տեղը ընտրելով։ Քաջութիւնը նոյն իսկ իրեն ըրած պատերազմը կը քարոզէ, իսկ անհպարտ կամ անաշխարհական հոգին անկէ կ'խոցուի, որ եթէ ինքն ալ ուզենար՝ կրնար Բելայ պէս բռնութեամբ ուրիշներուն վրայ տիրել, որուն ամենևին բան մը չէր պակսեր, մանաւանդ այն ատեն որ Բելայ յաղթեց, կրնար զանոնք հալածել ու իրեն թագաւորութիւնը մեծցնել, ինչպէս ըրած են բոլոր աշխարհակալները. իսկ ընդհակառակն ինքը թշնամին վռնտելէն վերջը դարձաւ իրեն առնը՝ ան բանիս վրայ ուրախացած, որ աշխարհքիս վրայէն ջնջեց Աստուծոյ, և մարդկան և իրեն անձին թշնամին։

5. Տարակոյս չկայ որ Հայկայ արտաքին տեսքն ու գեղեցկութիւնն ալ համեմատ էր հոգւոյն կատարելութիւններուն, որով և մեր Մովսէս Խորենացին Մարաբաստ գրուածքէն հանելով կ'ըսէ. «Ա՛յս Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջադանդուր, խոյատակին և հաստաբազուկ». ան բառերովս յայտնի կը ցուցնէ Հայկայ մարմնոյն արտաքին գեղեցկութիւնը ու պատշաճ հասակը. և ինչպէս որ Խորենացին կը զրուցէ, նոյն տեսնուան հակայից և դիւցազնաց մէջը քան զամենը աւելի երևելի էր. ուրեմն պէտք է ասկէ ձանձնանք այսպիսի նահապետի մը յարգը ու մեզի պարծանք սեպնենք իրեն անունը մեր վրայ կրելը։

6. Հայկ հայրաբար կառավարեց իր տէրութիւնը ու շատ կարգեր կանոններ դրաւ և շինութիւններ ըրաւ։ Պատմութիւնը որոշ բան չզրկեր Հայ-

5. Հայկայ արտաքին տեսքը ինչպէս էր.

6. Հայկ ինչպէս կառավարեց իր տէրութիւնը ու որչափ տարեկան։

կայ մահուանը վրայ. բայց հաւանական է որ չորս հարիւր տարիի չափ ապրած ըլլայ. որովհետև տուրքը դրոց խօսքերուն նայելով՝ նոյն միջոցներուն մարդիկ ինչուան 400 տարի կ'ապրէին. խաղաղութեամբ մեռաւ Հայկ իր տղային իշխանութիւնը յանձնելով Արմենակ որդւոյն (2027)։

Հայկայ իշխանութեան տեւողութիւնը նոյ և իրեն նեմրոթ կամ Նեմրոթայ կինը մեռան. Նոյ ետքը պատ լեռան վրայ թաղուեցաւ կ'ըսեն, ու Նեմրոթ զարթ ան լեռան մօտիկները Մարանդ ըսուած տեղը։

ԴԱՍ Բ.

Հայկայ յաջորդները մինչուան Արամ։

1. Արմենակայ վրայ պատմութիւնը երկայն չէ. շատ տեղեկութիւն չունենք։ Միայն կ'ուզենք թէ որովհետև կ'ուզէր որ Հայաստանի ամէն կողմը մարդաբնակ ըլլայ, ուստի իր Մանուազ ու Խոռ եղբայրները Հարք գաւառը թողուց ու ինքը Հայաստանի հիւսիսային կողմը գնաց, ուր որ իր բնակութեան տեղին անունը Արտատ դրաւ։ Իսկ Խոռ, Մանուազ և Բազ եղբայրքը իրենց բնակութեան տեղերնին բազմանալով, տեղերնին ալ իրենց անուամբը Խոռխոռունիք, Մանուազեանք ու Բզնունիք ըսուեցան։ Արմենակ քառասունվեց տարի իշխեցէն վերջը խաղաղութեամբ մեռաւ՝ իր Արամայես որդւոյն յանձնելով աղգին իշխանութիւնը։

1. Արմենակայ վրայ պատմութիւնը ինչ յիշատակութիւն կ'ընէ.

2. Նոյնպէս Արամայիսի վրայ ալ մանուածոյ բան մը չպատմուիր. բայց միայն Թէ իր անունովը Արմաւիր քաղաքը չկոչեց (1975), որ վերջէն Թագաւորանիստ քաղաք եղաւ, և քառասուն տարի իշխեցին վերջը մեռաւ հանգստեամբ: Կ'ըսեն Թէ Արամայիս շատ ազաք ունի եղեր՝ որոնց մէջէն Շարա անունով մէկը սատակ չտակեր ըլլալով Արամայիս Երասխ գետին քովի դաշտերը կը խոտըէ զինքն որ բերրի ըլլալով հանգստեամբ տարի հան. ուստի իրեն անունովը ան տեղին ալ Շիրակ ըսուեցան: Ակն եղած է ան առածը որ ինչուան Խորենացւոյն առնը կ'ըսէն եղեր շատակեր մարդկանց. «Թէ քո Շարայն օրկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն»:

Ամասիա Արամայիսին որդին իշխեց անոր տեղը ազգին վրայ երեսուներկու տարի. եաքը Գեղամ Ամասիային անդրանիկ որդին՝ որ յիսուն տարի իշխեց ու իրեն անուամբը կոչուեցաւ Գեղարքունի գաւառը ու Գեղամայ ծովը: Եաքը Հարմա Գեղամայ որդին երեսունըմէկ տարի իշխանութիւն քըշեց, իր Արամ որդւոյն յանձնելով ազգին կառավարութիւնը (1827):

2. Արամայիսի վրայ ինչ կը պատմուի ու անոր մէջ յայտնեց.

ԴԱՍ Գ.

Արամ և իրեն քաշտրիւնները:

1. Որովհետև տեղն անցնելով Հայկայ քաջութիւնները մոռցուեր էին, ուստի Հարմային վերջի տարիները այլ և այլ թշնամիներ Հայաստանի վրայ վազել սկսան ու զանազան մասերուն տիրեր էին, ասով պէտք էր որ մէկ ուրիշ Հայկայ պէս քաջ մ'ալ ելլելով նորէն թշնամիները վախցնէր. և ահա ասիկայ եղաւ Արամ որ հօրը տեղ նստելուն պէս հարկ եղաւ որ ան թշնամիները Հայաստանէն դուրս հանէ. շուտ մը զօրք ժողվեց, քաջութիւնն ու իրեն բնական խելացութիւնը և պատերազմի յարմարութիւնն սկսաւ բանի բերել. որով չէ թէ միայն թշնամիներն իր երկրէն հանեց, հապա նաև հեռաւոր աշխարհքներ հալածեց, և կամ բռնելով սպաննեց:

2. Ա՛ս թշնամիներուն առջինն ու աւելի զօրաւորն էր Նիւքար անունով Մարաց իշխանը որն որ հպարտ մարդ մըն էր, ու Հարմային վերջի տարիները Հայաստանի մէկ կողմին վրայ վազելով հարկատու ըրեր էր. և որովհետև Հարմա նոյն տարիները մեռաւ, ուստի ասիկայ երկու տարիի չափ տիրեց ան մասին: Արամ հօրը տեղն անցնելուն պէս յիսուն հազար զօրք ժողվեց կայծակի պէս վրայ հասաւ. ջարդեց անոր զօրաց բազմութիւնը, զինքն ալ բռնեց Արմաւիր բերաւ, և նոյն ժամա-

1. Արամ ինչպէս Հայաստանը իրեն թշնամիներէն խալսեց.
2. Արամայ աւաջին թշնամին ով էր.

նակի քաղաքականութեանը համեմատ, հրաման տուաւ որ բարձր աշտարակի մը ծայրը հաստելով երկաթէ ցիցով Յակոբեն դամին ազդին անիրաւ Թշնամին. և Նիւքաբրին ըրած առջի անիրաւութեանը փոխարէն՝ անոր երկրին մէկ մասը հարկառու ըրաւ:

3. Արամայ երկրորդ Թշնամին էր Բարշամ Բաբելացւոց իշխանը որն որ քառասուն հազար հեւաւակով և հինգ հազար ձիաւոր զօրքով Հայաստանի վրայ վազեց, Նիւքաբրին պէս ուզելով որս մը ձեռք ձգել. բայց Արամ աս բանս իմանալուն պէս մեկէն զօրքերը ժողվեց և շուտով մը վրան հասաւ, Թշնամւոյն զօրքերուն կէսը կոտրեց, կէսն ալ ցրուեց ու զինքն ալ բռնելով սպաննեց. աս է՛ղաւ Արամին երկրորդ յաղթութիւնը:

4. Արամայ քաջութիւններուն համբաւը մեծ ձակայ ազգերուն սիրտը վախ ձգած ըլլալով, երբոր Կապադովկացւոց Պայապիս անունով իշխանը լսեց որ Արամ քառասուն հազար զօրքով իր երկրին մօտերն եկեր է, վախնալով որ չըլլայ թէ Կապադովկիոյ ալ տիրէ, բոլոր ուժովը Արամայ դէմ պատերազմի ելաւ. բայց Արամ վրան հասաւ սաստիկ կոտորածով քշեց հալածեց զինքն ու Միջերկրական ծովուն կղզիներուն մէկուն մէջը փախուց: Իսկ Պայապիսին երկրին տիրելով Մշակ անունով Հայ մարզպան մը դրաւ ան տեղերուն՝ տասը հազար զօրք տալով իրեն. բայց ասկէ հրաման հանեց որ ամենքն ալ հայերէն խօսին:

Իսկ Մշակ մարզպանը Կապադովկիոյ մէջ քաղաք մը շինեց ու իրեն անունովը Մշակ անուա-

3. Արամ իմացուկս յաղթեց ու սպաննեց Բարշամ Բաբելացւոց իշխանը.

4. Արամ գեռ ուրիշ իմ քաջութիւններ ըրաւ.

նեց*. բայց բնակիչները չկրնալով ազէկ հնչել Մշակ կը զրուցեին. վերջէն ան քաղաքը Հռոմայեցւոց Յուլիոս Կեսար ինքնակալին ծորգուեղ Կեսարիա ըսուեցաւ, որ է հիմակուան Ղայսարի ըսուածը:

5. Արամ բոլոր Թշնամիները Հայաստանէն վանելէն վերջը՝ երբոր տեսաւ որ ամեն կողմանէ ապահով է, սկսաւ բարեկարգել Հայաստանը կարգեր կանոններ դնելով, և այնչափ երեւելի եղաւ ու անունը օտարաց մէջ տարածեցաւ որ բոլոր ուրիշ ազգերը մեր ազգը իրեն անուամբը սկսան Արամեան կամ Արմէն կոչել, ինչպէս նաև ինչուան հիմա նոյն անունը կուտան մեզի իրենք:

6. Աս միջոցին Ասորեստանեայց Նինոս Թագաւորը կարգալով իրմէ առաջ եղած քաջերուն պատմութիւնը, կ՛ուզէր որ անունց նմանի ու միայն իրեն անունը յիշուի աշխարհքին վրայ. աս խորհրդով բոլոր իրմէ առաջ եղած քաջերուն պատմութիւնները այրել տուաւ. ու ինքն ալ շատ զօրք ժողվելով այլ և այլ տեղերու տիրեց, առաջ Բաբելացոց ու անոր շրջակայ սահմանները: Անցաւ

5. Արամ իր ըրած բարեկարգութիւններուն ու քաջութիւններուն [illegible] համբաւ ասացաւ օտար ազգաց մէջ.

6. Արամայ քաջութիւններուն համբաւը [illegible] ազգերուն վրայ.

* Աս պատճառաւ Յոյները փոքր Ասիոյին աս մասը Արմինիա անուանեցին. իսկ Հայերը Ասորիին Հայք գրին ան մասին անունը, ու անկէ վերջը Հայոց տիրած տեղերուն անունը Երկրորդ Հայք, Երրորդ Հայք: Իսկ Զորրորդ Հայքը ասոնց մասը չէ, հապա բուն Հայաստանին հնգերտասան նահանգներէն մէկն է որ ասոնց սահմանակից ըլլալով, Զորրորդ Հայք ըսուեր է:

անկէ Հնդկաստան, բայց հոն չարաչար յաղթուելով եւ դարձաւ։ Նոյնպէս պատմուԹիւններուն մէջ կարգալով որ Հայկ զԲէլը սպաններ է, ուզեց Արամէն վրէԺը առնել· բայց Արամայ քաջուԹիւններէն վախնալով եւ կեցաւ իր խորհուրդէն. հաշտուԹիւն խօսեցաւ Արամայ հետ եւ Թող ապրեալ որ մարգարէ պատկ գործածէ։

7. Խորենացին Արամայ վրայ խօսելու առեն առանկ կը զուրցէ Մարիբասայ խօսքերէն հանելով. «Սա այր աշխատասէր եւ հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիրը, (այսինքն Մարիբաս Կատինա) լաւ համարէր զնեռանելն ի վերայ հայրենեացն, քան Թէ տեսանել զորդիս օտարածնոց կոխելով զսահմանս հայրենիս, և հարազատից արեան նորա տիրել արանց օտարածնոց»։ Ցիրաւի կարճ և քիչ բան կը դնէ, բայց առ կատարելուԹիւներն ու առաքինուԹիւներն են որոնք ազգին Թշնամիներուն յաղԹեց և իրեն անուն անմահացուց, ազգին սիրելի ու միանգամայն պատկառելի ըրաւ զինքը, և կարգաւորեց տէրուԹիւնը՝ կարգեր կանոններ դնելով։ Այս գլխաւոր առաքինուԹիւններէն զատ կը տեսնուի Արամայ վրայ առ կատարելուԹիւններն ալ· բարեխառն կեանք, հմտուԹիւն պատերազմական բաներ ու մէջ, աշխարհակալուԹեան անյագ սիրոյն չափ դնել· արագուԹիւն ի գործս և ուրիշ կատարելուԹիւններ։ Պատերազմական հմտուԹիւնը կ'իմացուի իրեն պատերազմներու մէջ յաղԹելէն, և այնպիսի Թշնամեաց, որոնք նոյն առեները շատ էրեւելի էին, մանաւանդ Բարշամը որ Խորենացւոյն

7. Մովսէս Խորենացին ինչ գովեստ կուտայ Արամայ վրայ և իրեն գլխաւոր կատարելուԹիւնները որո՞նք են։

ըսածին նայելով, Ասորիք երկար առեն պատերազմի զինքը իրեն քաջուԹիւններուն համար։

Արամայ աշխարհակալուԹեան սէրը ամենևին անոնց պէս չէր որոնք շատ անգամ օտար ազգերուն վրայ կը յարձակէին առանց իրաւանց, միայն իրենց անյագ փափաքը լեցնելու համար. Արամ անոնց երկրին միայն սիրեց որոնք որ ուզեցին իրեն և կամ իր հայրենեացը ձեռնտու մը հասցնել. որ ամենայն կերպով արգարացի է։ Դարձեալ երբոր իր Թշնամիներուն յաղԹեց՝ ալ անկէց վերջը փոյԹ ջըրաւ աշխարհակալուԹեան։ Ահա այսպիսի գեղեցիկ կատարելուԹիւններով զարդարուած էր առ մեծ մարդը, որ յիսունըրեք տարի չափ իշխելէն վերջը՝ խաղաղուԹեամբ մեռաւ, յանձնելով կառավարուԹիւնը իր Արայ որդւոյն։

ԴԱՍ Դ·

Արայի Շամիրամայ հետ րրած պատերազմը, ու Շամիրամայ գործքերը։

1. Արայ Նինոսի վերջի տարիները իր հօրը յաջորդելով նոյն պատիւն ունեցաւ Նինոսէն, ինչ որ ունեցեր էր Արամ իր հայրը. ասկից զեղեցկուԹեանը համար Արայ Գեղեցիկ ըսուեցաւ։ Իշխան Նաւեւրան պէս մեկէն շինուԹիւններու եռեւ սկսաւ ըլլալ և ան պատճառաւ Արմաւիր քաղաքը իրեն շրջակայ տեղերովը Արարատ կամ Այրարատ ըսուեցաւ։

2. Երբոր Նինոս Ասորեստանցւոց Թագաւորը

1. Արամի ով յաջորդեց·

2. Ինչ՞ն բացուեցաւ Արայի Շամիրամայ հետ ըրած պատերազմը ու ինչ վերջ ունեցաւ·

մեռաւ, Շամիրամ* իր կինը տեղը յաջորդեց. ու լսելով Ասբային դէղեկուԹիւնը ուզեց կարգուիլ հետը, խոստանալով Ասբային որ իրեն հետ մեծ տեղ Ասորեստանի վրայ ալ Թագաւորէ: Բայց Շամիրամայ խնամալով Շամիրամայ անկարգ ու չար միտքը, մերժեց իրեն խնդիրքը, և աւելի յանձն առաւ պատերազմով մեռնիլ քան Թէ իրեն առաքինուԹիւնն ու բարեխառնուԹիւնը ոտքն տակ առնել: Փուճ տեղը շատ աշխատեցաւ Շամիրամ համոզելու զինքը այլ և այլ անգամ պատգամաւորներ խաբելով, և ամեն անգամ իրեն աներեսուԹիւնը խաղը եղաւ, բայց դիմացինին համեստուԹենէն չամչցաւ. վերջապէս յուսահատուԹեամբ ու բարկուԹեամբ լցուած պատերազմով Ասբայի վրայ եկաւ ու Ախրատայ գաշտին մէջ պատերազմի պատրաստուԹեան երկու կողմն: Շամիրամ իրեն զօրացը և զօրավարներուն խոսիւ արդիլեց որ զԱսբան չսպաննեն, հապա ողջ բռնեն. բայց պատերազմին տաք միջոցները Ասբան զարնուելով մեռաւ, որ շատ աւելի մեծ յաղԹուԹիւն էր քան Թէ Շամիրամայ անկարգ հաճոյքը կատարել ու հարիւրաւոր տարի ալ ԹագաւորուԹիւն ընել:

3. Շամիրամ երբոր խնացաւ Ասբայի մեռնիլը շատ ցաւեցաւ որ իր գէշ կամքը չկրցաւ կատարել, ու իրեն տմարիչ ախտովը կուրցած, ի՛ուզէր դիւԹուԹեամբ ողջընցնել. բայց որովհետև դին սկսաւ հոտիլ և Հայոց զօրքն ալ Ասբային մահուանը վրայ բարկացած ի՛ուզէին նորէն պատե-

3. Շամիրամ լինչ վարպետուԹիւն բանեցուց Հայերը խաբելու համար.

* Ասիկայ եղաւ աշխարհքիս մէջ առջի Թագուհին որ Թագաւորեց, և միանգամայն էն կարճեռը ու էն երևելին,

բազմ բանաւ, Շամիրամ իրեն մարդիկներէն մէկը, որ քիչ մը Ասբայի կը նմանէր, զարդարելով ձայն հանեց Հայոց զօրաց մէջ որ աստուածները Ասբան լըսելով ողջացուցին: Իսկ Ասբայի մարմինը խորհուրդ վիհ մը նետել տուաւ, որպէս զի Հայերը չգտնան. ասով Թէպէտ և բոլոր Հայերը չխաբուեցան, բայց զօրաց մէջ չիսԹուԹիւն ինալով Շամիրամայ դէմ չգրին, ու անով Շամիրամ Հայաստան մտաւ (1743):

4. Ասբայի վրայ ունեցած գլխաւոր տեղեկուԹիւննիս ասնէ, և Խորենացին ուրիշ բան չպատմեր վրան. բայց տարակոյս չկայ որ բոլոր աշխարհքի տերերէն շատ աւելի վեր է իրեն համեստուԹեան առաքինուԹիւնը. մանաւանդ այնպիսի գաղտու և կատաղաշտուԹեան խաւարին մէջ: Ասբա ընդ ամենը 26 տարի իշխեց ազգին վրայ իրեն յաջորդ Թողուլ իր Կարգոս որդին:

5. Ինչպէս որ Խորենացին կը զուրցէ, տմառատեն ըլլալով Շամիրամայ Հայաստան մտնելը, Շամիրամ տեսնելով օդին մաքրուԹիւնն ու զովուԹիւնը, դիրքին աղուորուԹիւնը, աղբիւրներուն ու գետերուն շատուԹիւնն ու յատկուԹիւնը, ուզեց իրեն ամառուան բնակուԹեան տեղ մը շինել Հայաստանի մէջ. ուստի սա բանին համար ընտրեց ԱղԹամարայ ծովուն եղերքը ու հոն քաղաք մը չինեց որ իրեն անուամբը Շամիրամակերտ ըսուեցաւ ու վերջէն Վան. սա չինելիս համար քանուեներիկ հազար գործաւոր ու վեց հարիւր Ճարտարապետ ի՛աշխատին եղեր: Շամիրամ Ասբային սիրոյն համար անոր տատուեներիկ տարուան

4. Սակէց գուբս Ասբայի վրայ ուրիշ բան մը կը պատմուի.

5. Շամիրամ իր մեծագործուԹեանը լինչ յիշատակ մը Թողուց Հայաստանի մէջ.

Կարգոս որդին յաջորդ նստեցուց անունն ալ Սբա դրաւ, և ինքը ամառը կուգար Հայաստան կը բնակէր, իրեն տեղը փոխանորդ դնելով Զրադաշտ անունով մոգը որ Մարաց իշխան էր: Բայց Շամիրամայ որդիքը չկրնալով իրենց մօրը անկարգութիւնները դիմանալ, զինքը այլ և այլ անգամ խրատեցին. երբոր խնացաւ Շամիրամ որ զինքը կ'ուզեն սպաննել, ինքը փութաց ու բոլոր որդիքը թրէ անցուց, բայց 'ի պզտի տղէն որ Նինուաս կ'ըսուէր:

6. Ատէն անցնելով Զրադաշտ Նինուասին հետ միացած պատերազմի ելաւ Շամիրամայ դէմ. պատերազմը երբոր սաստկացաւ՝ Շամիրամ Հայաստան փախաւ ու Կարգոսին հետ միանալով անոնց դէմ պատերազմի ելաւ. բայց յաղթուեցան ու երկուքն ալ պատերազմի մէջ ընկան մեռան, Շամիրամ վաթսունուերկու տարուան ու Կարգոս երեսուն տարուան, տասնըմեկ տարի իշխեցին վերջը: Նոյն պատերազմի մէջը գերի ընկաւ նաև Կարգոսին Անուշաւան որդին որ տասնըչորս տարուան էր, ու սա պատճառաւ քիչ մը տատն Հայաստան Նինուասայ իշխանութեան տակը մնաւ. ուստի քիչ մը տատն Հայերը առանց իշխանի մնացին, ինչուան որ Անուշաւան մեծցաւ ու պալատին մէջն եղած մեծերուն շատին սիրելի ըլլալով, անոնց միջնորդութեամբը ու ազատքովը Հայաստանին մեկ մասին տիրեց խոստանալով որ տարուէ տարի տուրք տայ. բայց վերջէն իրեն խաղմուտքեամբը մեկալ մասերուն ալ տիրելով, բոլոր Հայաստանի բացարձակ տէր եղաւ. շատ բարե-

6. Հայաստան ինչպէս Նինուասայ իշխանութեանը տակ մնաւ ու հոքը նորէն ինչպէս խաղաղեցաւ.

կարգութիւններ ըրաւ ու վաթսունուերկը տարի իշխեցին վերջը խաղաղութեամբ մեռաւ:

7. Ա՛ս վտառաւոր իշխանին վրայ թէպէտ և քիչ պատմութիւն ունինք, բայց Խորենացին ազէկ կը համառօտէ իր արժանաւոր գովեստը և կատարելութիւնները աս երկու տողովս. « Արբայեանն Սբա մեռանի ընդ Շամիրամայ, թողուլ արուզաւակ ամենահարուստ և շատահանճար յիր և 'ի բան զԱնուշաւանն »: Բայ 'ի Խորենացւոյն աս մեծ գովեստէն, երեն խելացիութիւնը յայտնի կը տեսնուի իր գործողութեանը մէջ ալ որ այնպիսի մեծ տերութեան մը ձեռքէն հայրենական ժառանգութիւնը տուաւ առանց արիւնհեղութեան, և ինչպէս որ Խորենացւոյն վերի գրած խօսքէն կ'իմացուի, բոլոր իրեն քաղցրաբանութեամբը: Կ'ըսէ Խորենացին որ երբոր ծնաւ Անուշաւան՝ Կարգոս իր հայրը նուիրեց զինքը ան Սօսեաց անտառին որն որ անկած էր Արմենակ. տակէ Անուշաւանը Սօս կամ Սօսանուէր կոչուեցաւ: Կը կարծէին Հայերը որ տատուածներ կը բնակին ան անտառին մէջ, որով անոր նուիրուածը անարատ, կարէճ ու սուրբ կը համարուէր (1685):

7. Անուշաւան ինչ կոչմանէ երևելի եղաւ.

ԴԱՍ Ե·

Պարստեն սկսեալ ինչուան մահն Տիգրան։

1. Որովհետեւ Անուշաւանին ցեղէն իշխանու-
թեան օրինաւոր յաջորդ չէր մնացած, ուստի
հարկ եղաւ որ Հայկայ մեկալ որգւոցը ցեղէն Պա-
րթեւ անունով իշխանը աթոռ Հայոց վրայ· որուն
վրայ երկայն ծանօթութիւն չունինք, բայց միայն
գիտենք որ շատ պատերազմներ ըրեր է յիսուն
տարի իշխելով Հայոց վրայ։ Առաջ սկսաւ են-
չուան Պարոյր առաջինին միջոցները, Խոսրեանային
բան չպատմեր աս իշխաններուն վրայ, հապա ազ-
գին Թագաւոր ունենալուն վրայ ուրախութեամբ
լցուած մեկին Թագաւորութեան սկսելուն վրայ
կը խօսի, մեկալնուք զանց առնելով*։ Միայն ա-
ռանցմէ մեկ քանիին վրայ համառօտ տեղեկու-
թիւններ ունինք։

1. Անուշաւանին մեռնելէն վերջը մէկ իշխանց
Հայոց վրայ։

* Անուշաւանէն վերջը կարգաւ եւեւէ եւս նստած իշ-
խաններուն անուններուն ասոնք են. Պարէտ, Աբրակ, Ջա-
ւան, Փառնակ Ա., Սուր, Հաւանակ, Վաչտակ, Հայկակ,
Ամբակ Ա., Աձնակ, Շաւարշ Ա., Նորայր, Վասակ, Կար,
Գոռակ, Հրանտ, Ընձակ, Գղակ, Հօրոյ, Զարմայր, Շա-
ւարշ Բ., Պերճ Ա., Աբրուն, Պերճ Բ., Բագուկ երկպատ-
կեաց, Հայ Հրաշակերտ, Ցուսակ, Ամբակ Բ., Կապակ,
Փառնաւազ, Փառնակ Բ., Սկայորդի ու իրեն ազգն Պա-
րոյր։

2. Կը զուրկեն մեր պատմիչները որ Զարմայր
նահապետը Տրդատայ մեծ պատերազմին առենը
Տրդատայ Պրիամոս Թագաւորին օգնութեան գնա-
ցեր է ու հոն շատ քաջութիւններ ընելէն վերջը
պատերազմին մէջ մեռեր է. Խորենացին կը զուրկ-
կէ ասոր համար։ «Մեռանի՛ ի քաջացն Եղենա-
ցւոց»։ Նոյնպէս նաեւ կը տեսնուի որ Սկայորդին
ալ քաջ մարդ եղած պիտի ըլլայ ինչպէս որ Խո-
րենացւոյն խօսքէն ալ կ'իմացուի որ զինքը «Քաջ
նահանին մեր» կ'անուանէ. բայց վրան ամենևին
բան չպատմեր (749)։

3. Հայց՝ ի գլխաւոր աս երկուքէն մեկալնոց
վրայ որոշ տեղեկութիւն մը չունինք. բայց յայտ-
նի կը տեսնուի որ անոնց մէջն ալ շատ քաջ մար-
դիկներ եղած պիտի ըլլան, ինչպէս որ իրենց ա-
նուններէն կամ քովի դրած մակդիրէն կ'իմացուի,
ինչպէս Սուր, Վաչտակ, Աձնակ, Կար, Հրանտ,
Պերճ, Բագուկ, Հայ Հրաշակերտ և այլն։ Այս ա-
նուններէը որոնք նշանակութիւն ունին, կը տես-
նուի որ իւրաքանչիւր մարդուն կատարելութիւնը
համեմատ գրուած են, և ոչ եթէ ըստ դիպաց·
զարձեալ՝ գրեթէ հազար տարուան միջոց է այս-
չափ իշխանաց եւեւէ եւս յաջորդելը, որոնց ա-
նունը Հայաստան ամենևին գերութեան տակ չմը-
տաւ՝ թէպէտ և հարկատու եղաւ այլ և այլ ան-
գամ· այս բանս յայտնի կը տեսնուի պայազատ-
ներուն շարունակութենէն որոնց անուններէը վե-
րը գրինք։

4. Պարոյր իր հօրը Սկայորգւոյն տեղը յաջոր-

2. Զարմայր Նահապետին ու Սկայորգւոյն վե-
րայ ինչ մանուածոյ բան մը կը պատմուի·

3. Մեկալ իշխաններուն քաջութեանը ինչ բան
կրնայ իբրև առոյգ նշան մը տեսնուիլ·

4. Պարոյր Վաթրակէսին օգնելով ինչ պատիւ
ունեցաւ·

դելով հինգ տարի տգդը կառավարեց ամեն տեսակ բարեկարգութեւնեւ ընելով: Նոյն միջոցին Աւորեսանի վրայ կը թագաւորեր Սարգանաբաղ որ զեղծ ու անհնէք մարդ մը ըլլալուն համար, իշխանները իրմէ ապատամբեցան Վաբրակէս անուանով իշխանին առաջնորդութեամբը: Վաբրակէս իրեն կողմը զօրացընելու համար Պարոյր մէր նահապետը որսաց, խոստանալով որ եթէ Սարգանաբաղին յաղթեն, գինքը թագաւոր ընէ Հայաստանի: Ա՛ս պատճառաւ ժողվեց Պարոյր իրեն քաջ ու ազնիւաւոր զօրքերը ու Վաբրակէսին օգնութեան գնաց. հոն Սարգանաբաղին յաղթելով Վաբրակէս բոլոր Աւսորեսանի թագաւոր եղաւ, ու ինչպէս որ խոստացեր էր, Պարոյրին ալ թագ կապեց ու թագաւորական գաւազան տուաւ:

5. Պարոյր ուրախութեամբ Հայաստան դառնալով քառասունը ութը տարի խաղաղութեամբ թագաւորեցին վերջը մեռաւ.

Պարոյրի տաեն Սենեքերիմին երիտ տղաքը Սպարամէնք և Սանասար հայրերնին սպանելով Հայաստան փախան, զորոնք ընդունեցաւ Պարոյր մեծ հիւրասիրութեամբ: Ասոնցմէ սերեցան Սանասունք կամ Սասուն ըսուածները և Աբծրունիք ու Գնունիք: Հոս պատմութիւնը նորէն կ'ընդհատի, որովհետև Պարոյրէն սկսեալ ինչուան մեծն Տիգրանայ թագաւորութիւնը գրեթէ ամենեւին պատմութիւն չունինք. վասն զի Խորենացին համառօտութեան համար բոլոր ան թագաւորներուն ըրած գործքերը ձգելով միայն անուններն կը յիշէ ու մեկէն մեծին Տիգրանայ քաջութիւնները կ'սկսի պատմել: Բայց այսու ամենայնիւ իրեն մեծ

5. Պարոյր ընդ ամենը քսանի տարի թագաւորեց ու իրեն միջոցը ուրիշ ինչ նշանաւոր դիպուածներն ալ հանդիպեցաւ.

համաբժնութիւնը կը ցուցնէ Հայոց թագաւորութեան սա մասին վրայ սա խօսքովը. « Սերեվն էր ինձ յայնժամ գալ Փրկչին և վնս գնել, և առնոքօք յաչխարհ վճուան իմ առնել, և նոցա տեսութեամբն խրախճանալ »: Բազմիմաստ ուշադրելու է Խորենացւոյն այս խօսքը, որն որ ազգին այլ և այլ առնուան վիճակները ազէկ ըմբռնելէն վերջը, սա միջոցս ուզեր է աչխարհք գալ: Իսկ թագաւորները սոսկ են. Պարոյր, Հրաչեայ, Փառնաւազ, Պաճոյճ, Կոտնակ, Փաւոս, Հայկակ, Երուանդ ու Երուանդայ տգան Մեծն Տիգրան: Սոսկ մէկ միայն Հայկակին վրայ գիտելիք մը կայ թէ Նաբուգոդոնոսորայ հետ մեկտեղ պատերազմի գնաց Երուսաղեմի վրայ. երբոր յաղթեցին ու ետ պիտի դառնար Հայկակ՝ խնդրեց Նաբուգոդոնոսորէն որ Հրեից գերիներէն ուզածը առնէ. ուստի Շամբատ անունով իշխանը առաւ ու իրեն ընտանիքովը Հայաստան բերաւ. վերջը Վաղարշակայ տաեն Բագրատ երևելի նախարարին տանուտիրոջը բոլոր ցեղն ալ Բագրատունիք ըսուեցաւ (580):

ԴԱՍ Զ.

Մեծն Տիգրան ու իրեն քաջութիւնները։

1. Մեծն Տիգրան Երուանդայ որդին պարծանք մեր Թագաւորութեանը և պայծառացուցիչ ազգին, մեր ամեն Թագաւորներէն աւելի երևելի ու անուանի եղաւ՝ չէ թէ միայն իրեն արտաքին քաջութիւններովը, հապա նաև իրեն հոգւոյն կատարելութիւններովը։ Խորենացին ալ բոլոր Հայկազանց պատմութեան մէջ, մեծին Տիգրանայ մասը ամենէն ընդարձակ կը պատմէ. անոր համար կ՚արժէ որ մենք ալ քիչ մը ընդարձակ խօսինք անոր վրայ։

Խորենացին միայն Ճաշակ մը կուտայ Տիգրանայ առաջին քաջութիւններուն վրայ, առանց պատմելու թէ որոնց յաղթեց և թէ ան պատերազմներուն մէջը ինչ կերպ բռնեց. ուստի ասանկ կը զուրցէ. « Աւրանց կացեալ գլուխ, և արութիւն ցուցեալ, զազգս մեր բարձրացոյց. և զընդ լծոյ կացեալս՝ լծոյիցս և հարկապահանջս կացոյց բազմաց »։ Ասկէց բնականապէս կրնանք մակաբերել թէ շատ քաջութիւններ ըրած պիտի ըլլայ, և ասոնց համար կը զուրցէ որ Յոյները նուաճեց և Հայաստանի առաջին սահմանները նորոգեց։

1. Ո՞վ է մեծն Տիգրան և ինչ քաջութիւններ ըրած ունի.

2. Կիւրոս Պարսից Թագաւորը լսելով Տիգրանայ քաջութիւնները՝ ուզեց անոր հետ բարեկամութիւն հաստատել. արդէն Տիգրան ալ կ՚ուզէր Կիւրոսին բարեկամութիւն ու օգնութիւնը, անով մէկ կողմէն բարեկամութիւն հաստատելէն։ Այս բանս երբոր խմացաւ Աժդահակ Մարաց Թագաւորը, որ նոյն օրերը Կիւրոսի հետ թշնամացեր էր, կասկածի գնաց որ չըլլայ թէ ասոնք երկուքը միաբանելով իրեն դէմ պատերազմի ելլեն։ Ինչի որ ասոնց վախցաւ կը ծփէր, գիշեր մը աստիկ խռոված երազ մը տեսաւ որ ձիւնով ծածկած բարձր լեռան մը ծայրը, կին մը նստած իրեք դուցաղն ծընաւ. առաջինը ամբողի վրայ նստեցուց գէպ 'ի արևմտեան կողմը կը վազէր. երկրորդը ընծաւ վրայ նստած հիւսիսային կողմը կը նայէր, իսկ երրորդը վիշապի վրայ հեծած իր թագաւորութեան վրայ կը վազէր։ Երբոր իր խորհրդականներէն ու պաշտօնեաներէը լսեցին ասոնց բանս՝ խորհուրդ տուին իրեն որ այլ և այլ ազգերէ զօրք ժողվելով անոնց դէմ պատերազմի ելլայ. բայց Աժդահակ գիտնալով Տիգրանայ քաջութիւնները, վախցաւ անոր դէմ պատերազմի ելլելու. հապա վարպետութեամբ մտածեց որ նախ զՏիգրանը սպաննէ ու վերջը կիւրոսին դէմ պատերազմի ելլէ. ասոր պատճառաւ խաբէութեամբ՝ Տիգրանայ Տիգրանուհի քոյրը իրեն կին առաւ, որպէս զի անոր ձեռքովը սպաննէր, ասոր զՏիգրանը։ Այս ամեն բաներս ընելէն վերջը սկսաւ Տիգրանուհիին յայտնել իրեն սրտին չարութիւնները, ըսելով որ Տիգրան նախանձելով իր մեծնալուն վրայ, միացեր է Կիւրոսին հետ ու կ՚ուզէ նախ Թագաւորութիւնը ձեռ-

2. Աժդահակ ինչէ՞ն թշնամացաւ Տիգրանայ հետ ու ինչ վարպետութիւն բանեցուց զինքը ըսպանելու.

քէն առնել մեռցնել զինքը ու վերջը զՏիգրանուհին. ուստի պէտք է որ եղբայրդ մէջ տեղէն վերցուի որպէս զի մեր կեանքը ապահովեալ ըսաւ, ապա թէ ոչ զքեզ սպկնուելենէ կը ձգեմ:

3. Ա բաներս փոխանակ վախցնելու զնեմնախոհ թագուհին, աւելի քաջալերեցին զինքը որ ինքն ալ ուրիշորդայնները լարէ Աժդահակայ դէմ: Ուստի խմանալով որ եթէ չհաւանելու կերպ ցուցնէ ասոնց բանից մէջ՝ դէշ բաներ կրնան հետևիլ, անոր համար առջի բերան չէ թէ միայն համաձայնեցաւ, հապա նաև ինքն ալ վրայ առաւ. բայց վերջը վարպետութեամբ մը խնայուց իր եղբօրը՝ Աժդահակայ սրտին չարութիւնը: Նոյն միջոցին Աժդահակ ալ խորհրդատուներէն Տիգրանայ պատգամաւորը խաբեց որ իրեն տեսութեան գայ Մարաց երկրին սահմաններուն մօտիկ. բայց Տիգրան գնանալով Աժդահակայ դաւաճանութիւնը, նոյն խաբէից պատգամաւորները ըսելով որ խրատելու համար պատերազմելու, ու մէկէն Կիւրոսին խնայուց. և դեռ ան չեկած՝ Տիգրան ժողվեց Հայոց, Կապադովկացւոց, Ազուանից ու Վրաց աշխարհքին զօրքերը ու Մարաց կողմերը գնաց: Հոն հինգ ամիսէ չափ պատերազմը ուշացուց որպէս զի Կիւրոս օգնութեան գայ, ու Տիգրանուհին ալ խորհուրդ առնոց վերաստեղծու: Խոհեմ ու քաջ թագուորին վարպետութեամբը երկուքն ալ եղաւ. Տիգրանուհին խորհեցաւ, ու հինգ ամիսէն վերջը Կիւրոս ալ օգնութեան հիւս հասաւ: Մէկէն Տիգրան պատերազմը սկսաւ, ու պատերազմին սաստկութեան առենը Տիգրան և Աժդահակ իրարու հան-

3. Տիգրանուհին երբոր եղբօրը մահուան խորհուրդը լսեց ինչ ըրաւ, ու Աժդահակ ինչպէս մեռաւ.

պնդելով, Տիգրան այնպէս ուժով խոթեց իրեն սեպը Աժդահակայ սիրտը, որ դուրս հանելու առեն Թագն ալ հետը դուրս հանեց: Ընկաւ Աժդահակ ու հոգին փչեց. բայց Տիգրան պատերազմը առաջ տանելով վանեց Թշնամիները, ու տասը Նաղար հոգի չափ գերի բռնելով՝ յաղթութեամբ Հայաստան դարձաւ: Ա պատերազմիս մէջ գրեթէ բոլոր յաղթութիւնը Տիգրան ըրաւ. վասն զի ինչպէս որ Խորենացին կը զրուցէ, քաջ քաջի հանդիպելով՝ պատերազմը անպարտելի կը մնար, ինչուան որ Տիգրան զարկաւ մեռցուց Աժդահակը: Նորէն ան գործողութեանս մէջն ալ Հայոց գիւղացին պահուած էր ընծելու աշխարհքին վայելն Աստուծոյ օծելոյն և աշխարհքին թշնամին, որն որ թէպէտ Կիւրոսին բազուկն ալ կարող էր ան բանս ընելու, բայց տարակոյս չկայ որ քաջագուշնին պահուած էր ան պարծանքն՝ երկիւղածութեամբ: Ահաւիկ վերջը երբոր Կիւրոս Բաբելացւոց վրայ պատերազմի ելաւ, իրեն օգնութեան գնաց մեր Տիգրան թագաւորն ալ, որմէ երկուքը մէկտեղ Բաբելոնը առին ու յաղթութեամբ իրենց տեղը դարձան: Տիգրան այսպիսի փառաւոր յաղթութիւններով քառասունը հինգ տարի թագաւորելէն վերջը խաղաղութեամբ մեռաւ, իրեք որդի թողլով որ են Բաբ, Տիրան ու Վահագն:

4. Խորենացին Տիգրանայ համար կը զրպէ Ձմմարիա և իրաւացի կերպով գովելով: Առաջին գովեստը ան է. «Ամենեցուն որ առ իւրովքն էին ժամանակաւք նահանձելի, և յետնոցս ըղձալի՝ ինքն և ժամանակ իւր»: Ա խօսքերէս վերջը կը գնէ Հայաստանի երջանիկ վիճակը, թէ ազգը ինչ հա-

4. Տիգրանայ կառավարութիւնները Խորենացին ինչ գովեստներով դուրս կը յառաջցնէ.

ըլսաուԹեան մէջ էր, զինուորուԹիւնը ինչ աս-
տիճան առաջ գացած էր, արդարուԹիւնն ու խա-
ղաղուԹիւնը որչափ ծաղկած էին, որոնք ազէկ
բացատրելու համար այսպէս կը զուգէ. « Խաղա-
ղուԹեան և շինուԹեան բերող, իւղով և մեղրով ըզ-
հասակս ամենայն պարարեալ »: Աստնցմէ զատ կը
դնէ նաև այնպիսի գովեստներ ալ որ ամենայն կա-
տարելուԹեամբ զարդարեալ մարդու մը կարկա-
ւոր են. « Ջօրմէ ասէին 'ի հինան մեր որք բամ-
բասեն երդեին՝ լինելսմա և 'ի ցանկուԹիւնս մարմ-
նոյն չափաւոր. մեծխոհասա և պերճաբան, և կա-
մենայն որ ինչ մարդկուԹեանն պիտանի »: Խո-
րենացւոյն այսպիսի նշանաւոր և գեղեցիկ գովեստ-
ներուն ճշմարտուԹեանը վասն չենք տարակուսիր.
միայն աս բանիս իրաւունք ունի ցաւելու մարդ
որ այսպիսի ընտիր, խելացի, ազատամիտ, վեհ-
անձն ու ազգասէր Թագաւորի մը բարեմտամ
հովանաւորուԹիւնը քաւասունչ էինգ տարի վայ-
լեր է Հայաստան. որն որ եԹէ հաղարաւոր տարի
ալ վայելէր՝ միշտ գոհ, միշտ ուրախ և միշտ շնոր-
հակալ պիտի ըլլար վինքը պարգևողին:

ԴԱՍ Լ.

Վահագն ու անոր յաջորդները: — Հայկազանց թագաւորութեան վերջանալը:

1. Տիգրանայ իրէք որդւոցը մէջ Վահագն Թէպէտ ամենէն պզտիկն էր, բայց ուրիշներէն աւելի զօրաւոր գտնուելով Հայոց վրայ իշխեց: Ասկայ խիստ քաջ մարդ էր, որուն վրայ Հայերն ուրացիք այլ և այլ երդեր չինելով կ'երդուն եղեր, ինչպէս նաև Խորենացւոյն աւետնեն ալ, որ կ'ըսէ նաև ասոր համար Թէ Վրացիք արձանը կանգնելով երկար աւուն պաշտեցին վինքը: Ասոր ցեղը Վահունիք ըսուէցաւ, որ քրմութեամբ իրէն պաշտամանը նուիրուած էին:

Վահագնէն վերջը եւս եւս յաջորդեցին հինգ վեց Թագաւոր ալ, որոնց վրայ պատմութիւն չունենալով կ'ասիպտուինք միայն անունները յիշելով անցնելու, որ են ասոնք. Ասաւան, Եբասէհ, Զարեհ, Ամոգ, Բայգամ ու Վան՝ որ Շամիրամայ դէմ քաղաքը նորոգելով իր անունովը Վան կոչեց (382):

2. Վանայ որդին Վահէ հօրը տեղը անցնելով շատ քաջութիւններ ըրաւ իրէն Թշնամիներուն դէմ՝ որոնք կ'ուզէին Հայաստանի տիրել: Նոյն մինչոյն ատենները Ալէքսանդր Մակեդնացւոյ Թագաւո-

1. Տիգրանէն ինչպէս Վահէ որոնք յաջորդեցին.

2. Վահէ ով է ու ինչպէս վերջացաւ Հայկազանց Թագաւորութիւնը.

թը սաստիկ զօրացած ըլլալով՝ Պարսից վրայ պատերազմի ելաւ. Վահէ օգնութիւն խնդրեց անոնց, բայց տեսնելով որ Պարսիկք չարաչար յաղթուեցան և Աղէքսանդր իր վրայ սիրտ դայ. ապիւէն անդիմն զօրք ժողվեց ու Աղէքսանդրի դէմ ելաւ, և պատերազմի մէջ մեռնելով՝ բոլոր զօրքերը ցրուեցան և Աղէքսանդր Հայաստանի տիրեց (327):

Ահա այսպիսով վերջացաւ Հայկազնից Թագաւորութիւնը որ 1800 տարի դիմացեր էր: Անկից ետքը 300 տարիի չափ Հայերը երբեմն Սելեւկիացւոց կողմանէ խրկուած կուսակալներու, երբեմն ալ Հայ իշխաններու կը հնազանդէին:

3. Այս Հայ իշխաններուն մէջ երեւելի եղան քանի մը հոգի, և առաջին երեւելին Արտաւազդ Սիւնեաց նախարարը, որ Կապադովկիացւոց Թագաւորին Արքելաոս տղուն խորհրդովը ապստամբեցաւ Մակեդոնացւոց տէրութենէն: Այս բանս երբոր լսեց Պերդիկկաս, Եւմենէս անունով իշխանը Արտաւազդին վրան խնդրեց, որ Արտաւազդին հետ դաշինք դրաւ ու հաշտութիւն ըրաւ: Արտաւազդ խաղաղութեամբ երեսունուերեք տարի իշխեց ու մեռաւ: Երկրորդ՝ անունի եղաւ Արտաւազդ Հայոց մեծ իշխանը, որ Սելեւկիացւոցմէ ապստամբելով ինքնագլուխ սկսաւ Հայաստանի տիրել. բայց երբոր Անտիոքոս շատ զօրքով վրան վազեց, Արտաւազդ վախնալով դէմը ելլելու՝ ընծաներ խնդրեց Անտիոքոսին ու սիրտը առաւ խոստանալով որ բոլոր հարկը վճարէ. ասիկայ չորսուն տարի իշխեցին վերջը մեռաւ (212):

4. Արտաւազդին տեղը մեծ Հայոց վրայ կուսա-

3. Արտաւազդ՝ Սիւնեաց նախարարին ու Արտաւազդ վրայ ինչ գիտելիք կան.

4. Արտաշեսին միջոց ինչ նշանաւոր բան մը հանդիպեցաւ ու իրեն որո՞նք յաջորդեցին.

կալ դրաւ Անտիոքոս՝ Արտաշեսա անունով իշխանը, որուն տեղը Աննիբաղ Հայաստան փախաւ: Արտաշեսա անոր խորհրդովը Արտաշատ քաղաքը շինեց, ու ինքնագլուխ սկսաւ Թագաւորել: Երբոր լսեց սա բանս Անտիոքոս Եպիփան, վրան պատերազմի եկաւ, ու յաղթելով անոր՝ բռնադատեց որ սովորական հարկը տայ:

Արտաշեսա կ'ուզէր փոքր Հայոց վրայ ալ իշխել, որուն կուսակալն էր Ձահրատ անունով մեկը. բայց մահը վրայ գալով չկրցաւ առաջ տանիլ իր խորհուրդը, և իր տեղը յաջորդեց Արտաւազդ որդին, որ տասը տարի իշխեցին վերջը՝ Արշակ Պարթեւաց Թագաւորը վրան պատերազմի ելլելով վնեքը վռնեց, ու իր Վաղարշակ եղբայրը Հայոց Թագաւոր դրաւ, ուսկից սկսաւ Արշակունեաց Թագաւորութիւնը (149):

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ա. ՐԾԱ. ԿՈՒՆԵՍ. Ց

ԴԱՍ Ը.

Աբշակունեաց թագաւորութեան սկիզբը: — Վաղարշակ, Աբշակ Ա.

1. Երբոր Սելևկիացիք Մակեդոնացւոց ձեռքովը արևելեան ազգերուն մեծ մասին տիրեցին, այսինքն Պարսից, Մարաց, Հայոց և Պարթևաց վրայ, երկար ատեն կուսակալներու ձեռքով տա ազգերը կառավարեցին: Բայց Քրիստոսէ 247 տարի առաջ Պարթևաց մէջէն Աբշակ անունով քաջ իշխանը ատենիկ զօրանալով՝ ապստամբեցաւ Սելևկիացւոցմէ ու շատ երկիրներու տիրեց: Ուրիշ շատ մեծամեծ յաղթութիւններ ալ ընելով այլ և այլ զօրաւոր ազգերու դէմ, շատ երևելի եղաւ ու ամէն տէզ անունը հռչակուեցաւ: Ասոր Թոռը Աբշակ Բ. նոյնպէս քաջութեամբ շատ տերերու տիրեցին վերջը, եկաւ Հայաստանի վրայ ալ՝ երբոր Հայոց վրայ կուսակալ էր Արտաւազդ իշխանը, հալածեց զինքը հանեց, ու Հայոց վրայ իր

1. Աբշակունեաց Թագաւորութիւնը ինչպէս սկսաւ ու ո՞վ է Վաղարշակ.

Վաղարշակ եղբայրը Թագաւոր դրաւ: Ասիկայ ազգին վրայ ատոնիկ սեր կապեցին վերջը՝ մանաւոր ջանքով ուսումնասիրութեան եանէ եղաւ. ազգին պատմութիւնը գանելու առանձին փոյթ ունեցաւ, քաղաքական կարգերն ու կառավարութիւնը շատ ծաղկեցուց, և ազգին ամեն տեսակ յառաջադիմութեանը վրայ հոգ ունեցաւ: Ա մեն բաներս ըրաւ առանց քաջութիւնը ձեռքէ ձգելու: Եւ տարակոյս չկայ որ այսպիսի կերպով սկսած Թագաւորութիւն մը շատով ալիսի զօրանար ու շատով ալ ալիսի ծաղկէր, ինչպէս եղաւ Աբշակունեաց Թագաւորութիւնը:

2. Վաղարշակ աթոռը Մծբին դրաւ՝ ինչպէս որ իրեն եղբայրը տպատարը էր. բայց խմանալով որ Մօրփիւղիկէս անունով իշխան մը փոքր Հայոց տիրէր է, շատ մը զօրք Ժողվեց ու անոր վրայ գընաց, երբոր անիկայ բոլոր Պոնտոսի ազգերուն առաջնորդ եղած առաջ կուգար: Պատերազմի ատեն, որովհետև Մօրփիւղիկէս քաջ մարդ էր, շատ ջարդ ընելով Վաղարշակայ վրայ կատաղաբար վազեց, բայց Վաղարշակայ քովի կորիճ Հայերը անոր վրայ վազեցին զորկին ու գետինը պառկեցուցին զինքը. տասվ մեկալ զօրքերն ալ սիրտ առնելով յարձակեցան Մօրփիւղիկէսին մնացած զօրացը վրայ ու այնպէս չարաչար կոտրեցին, որ անձրևի հեղեղի պէս արիւնը կը վազէր, ինչպէս կ'ըսէ Խորենացին: Ա յս պատերազմին վերջը տիրեց Վաղարշակ ան կողմի ազգերուն, ու անոնց առջևը առնաւոր եղաւ:

3. Տեսնելով Վաղարշակ Հայոց աս ատենները

2. Վաղարշակ ինչպէս յաղթեց ու սպաննեց Մօրփիւղիկէսը.

3. Ի՞նչ էին գրգռութեան Վաղարշակ Հայկազնոց պատմութիւնը գրել տալու.

ութեամբ եւ ուրիշ կառավարչական ընդունակութիւնները եւ Հայաստանի ծաղկած վիճակը, երբեմն ազնիւ բարքերը բնական հեռաբերութիւն մը ունեցան թէ արդեօք ով եղեր է ասոնց պղնձին դլխաւորը, որ՞նք իրմէն առաջ թագաւորեր են, եւ արդեօք ինչը քաջերո՞ւ տեղ կը թագաւորէ՝ չէ թէ վատերու. ուստի ասոնց համար Մար Աբաս Կատինա առնելով Ասորի մը գրաւ, եւ անոր ապագրեց որ Հայոց պատմութիւնը գրէ. Մար Աբաս Կատինա երբոր Հայաստանի մէջ ամբողջ պատմութիւնը չգրաւ, Վաղարշակայ հրամանովը Նինուէ դնաց, ու հոն թագաւորական գրատան մէջ գիրք մը գտաւ որ բոլոր աղգերուն պատմութիւնը կը գրէր, ու Մեծին Աղեքսանդրի հրամանովը յունարէն թարգմանուած էր. անոր մէջէն հանեց բոլոր Հայոց պատմութիւնը՝ Հայկէն ինչուան Վաղարշակ: Վաղարշակ տեսնելով ասոնց բանին՝ ասանիկ ուրախացաւ որ քաջ մարդկանց տեղ ու քաջերու վրայ կը թագաւորէ. եւ երբեմն երբեն ամենէն աւելի մեծ հարստութիւնը ըլլար այն մտածողը՝ իր գանձատան մէջ պահեց: Այս պատմութեան վրայ աւելցուց Մար Աբաս Վաղարշակայ եւ անոր որդւոյն Աբշակայ գործքերը:

4. Ամեն կռմանէ եղած յաջողութիւնները տեսնելով Վաղարշակ, սկսաւ ուրիշ բարեկարգութիւններու ալ ձեռք զարնել. քանի մը հարկաւոր օրէնքներ դրաւ. նախարարութիւններ բաժնեց, զինուորութեան կարգ դրաւ, ամեն բանի պաշտօնեաներ որոշեց, եւ արհեստաւորներու կարգ կանոն դրաւ: Բայց ամենէն աւելի Վաղարշակայ խելացի գործքը եւ իրեն հոգին յայտնողը սա էր. որ օրէնքի է որ դրաւ. մէկու մը իշխանութիւն

4. Վաղարշակայ ըրած բարեկարգութիւնները որո՞նք են.

տուաւ՝ որ երբոր թագաւորը անիրաւ դատաստան մը կամ հրաման մը հանէ, իրեն խմացնէ տուած հրամանին անիրաւութիւնը. իսկ ուրիշ մը իշխանութիւն տուաւ որ եթէ թագաւորը անհոգ ըլլայ չարագործները պատժելու՝ միտքը ձգէ: Բագատրատ անունով իշխանին ալ Աբշակունեաց թագաւորներուն թագադիր ըլլալու պատիւը տուաւ: Որդւոյը մէջէն միայն անդրանիկը քովը պահեց, ու մէկալնուկը բոլոր թագաւորական ընտանիքով Հաշտենից գաւառը խաւրեց: Այս կարգը պահեցին ինչուան վերջը Աբշակունեաց թագաւորները: Վաղարշակ տասնկ խելքով քսանուերկու տարի թագաւորելէն վերջը խաղաղութեամբ մեռաւ:

5. Մեր աղգին երեւելի մարդկանց մէջ առաջին տասիճանի յիշատակի արժանի մարդիկներէն մէկն է Վաղարշակ, որ Հայաստանն հիմ մը դրաւ կարծանեալ տերութեան մը, որ մէկէն զօրացաւ եւ ամեն բանի մէջ, ժամանակին համեմատ, չափէն դուրս աւելի առաջ գնաց: Վաղարշակայ գործքերէն յայտնի կ'իմացուի իրեն քնութիւնը, մանաւանդ պարզ կը տեսնուի ուսումնասիրութիւնը, խաղաղասէր և աշխարհաշէն հոգին. գարձեալ կը տեսնուի այնպիսի վեհանձնութիւն մը որուն նմանը պատմութիւններու մէջ քիչ կայ. աւելի դուրս կը ցայտէ ան կարգադրութեան մէջ որ մանուածոյ պաշտօնեաներ կարգեց իրեն տուած անիրաւ հրամաններուն միտք ձգելու համար: Այս բանիս մեծութիւնը ամեն մարդ կրնայ իմանալ մտածելով թէ որչափ ծանր բան է թագաւորի մը լսել իրեն ըսած խօսքին ծանրութիւնը, տուած հրամանին անիրաւութիւնը՝ մանաւանդ որ հին աստիճը թագաւորին խօսքերը պատգամի տեղ կ'ընդունէին հպա-

5. Ի՞նչ կատարելութիւններով Վաղարշակ մեր աղգին երեւելի մարդկանց մէջ կը սեպուի.

տահնեը։ Աբգարեւթիւնն ալ նոյնպէս կը փայլի առ երկու մարդկանց իշխանութիւն տալուն մէջ, որուն վախճանն է անկրաւ գործողութիւն մը չընել։

6. Վաղարշակայ տեղը յաջորդեց իր անդրանիկ որդին Արշակ Ա. որ հօրը առաքինութեանցը նմանելով անոր պէս քաջ ու խելացի, և ինչպէս որ Խոսրենացին կը զուրկէ, շատ բարեկարգութիւններ ըրաւ։

Առոր առենը Պոնտացիք ապստամբելով Հայրէն՝ պատերազմ բացին. բայց Արշակ իրենց չափաւոր յաղթեց, և ծովեզերքը իրեն ըրած յաղթութեանը նշան՝ կոթող մը անկեց։ Կ'ըսեն թէ Արշակ նիզակ մը ունի եղեր օձի արիւնով ջնարած. անդամ մը ան նիզակը անանկ ուժով նետեց կոթողին վրայ որ մէջը գնաց խրեցաւ։ Ան կոթողը երկար առեն պաշտեցին Պոնտացիք իբրև Աստուծոյ գործ. բայց երբոր իր տղան Արտաշէսին հետ նորէն պատերազմ բացուեցաւ՝ բարկանալով ծովը նետեցին։

Արշակ կռոց սասկի պաշտօնեաներ ըլլալով՝ Բագրատունեաց մէջէն երկու հոգի նահատակեց կուռք չպաշտելնուն համար. մեկալնուք ալ սասպեց որ Թլփատութիւնը ձգեն, շաբաթ օր որսի և պատերազմի երթան և ուրիշ խորհրդական օրէնքներ Թողուն. անոնք ալ չհանձն առին ան բաները՝ բայց ի կուռք պաշտելէն։ Արշակ տասնըվեց տարի Թագաւորելէն վերջը մեռաւ, ու իրեն տեղը անցաւ Արտաշէս (114)։

6. Վաղարշակայ մահ յաջորդեց.

ԴԱՍ Թ.

Արտաշէս Ա.

1. Արտաշէս Ա. բնութեամբ կարիճ, պատերազմող ու աշխարհակալութիւն սիրող ըլլալով մեծամեծ յաղթութիւններ ըրաւ, շատ երկիրներ ու տէրեր ու Հայաստանը ընդարձակեց, և գրեթէ բոլոր աշխարհք դողացուց։ Ինչուան իր առենը Պարսից Թագաւորը անհնազով պատուով ու մեծութեամբ առաջին կը սեպուէր, ու Հայոցը երկրորդ. բայց Արտաշէս Պարսկոյը երկրորդ ըրաւ ու Հայոցը առաջին։ Պարսկաստանի տէրեց, իր անունովը տասի կոխել տուաւ ու հոն ալ իրեն արքունիք շինեց։ Իր Տիգրան անունով որդին՝ Վարաժ ըստուած իշխանին յանձնեց, որ զինուորական արհեստ սորվեցընէ, որով ան իշխանին ցեղին անունն ալ Վարաժնունիք ըսուեցաւ։ Իսկ Արտաշատա աղջիկն ալ Մ'իհրգատայ տուաւ, որ Պարսից Դարեհ Թագաւորին նախարարներուն ցեղէն էր ու Վրաց բդեշխ, և զինքը բոլոր Պոնտոսի կողմերուն կուսակալ դրաւ իրեն քաջութեանը համար։

2. Թէպէտ և մանրամասնաբար չենք գիտեր Արտաշէսին ըրած պատերազմները, բայց Խորենացին կ'ըսէ Թէ արեւելքէն ու արեւմուտքէն այնչափ զօրք Ժողվեց՝ որոնց և ոչ Թիւը գիտէր։ Ասանկ բազմութեամբ բոլոր Յունաստանի տիրեց և զանոնք վախցուց. Մ'իջերկրական ծովուն մէջ շատ

1. Ո՞վ է Արտաշէս Ա.

2. Արտաշէս Ա. ինչ քաջութիւններ ըրած ունի.

նաւերով կղզիներու տիրեց, և ուրիշ շատ աշխարհակալութիւններ ըրաւ։ Կ՚ըսէ Խորենացին թէ երբոր բազմութեամբ զօրաց քարտս տեղէ մը կ՚անցնէին, հրաման կու տար Արտաշէս որ ամէնքը մէյմէկ քար նետեն, և անոնցմով բլուր մը կը ձեւանար։ Նոյնպէս նաև արևու տաեն եթէ ամէնը մէկէն նետ նետէին՝ բոլոր գետինը չուք կ՚ըլլար կ՚ըսէ։ Այսչափ անթիւ բազմութեամբ շատ յաղթութիւններ ընելէն ետքը մեծ փառքով ու յաղթականով Հայաստան դարձաւ. բայց որովհետև կ՚ուզէր Պարսկաստանի բոլորովին տիրել, ինքը հոն գնաց Թագաւորելու, և իր Տիգրան որդին Հայաստանի վրայ։ Բայց անկէց ալ նորէն զօրք ժողվեց ու դէպ՚ի արևմտեան կողմերը սկսաւ արշաւել։ Արտաշէս Յունաստանէն դառնալու տաեն Արտեմիսի, Հերակլի ու Ապողոնի պղծձէ արձաններէը գտաւ ու իրենց քուրմերովը Արմաւիր խաւրեց։ Զգիացուիր ինչ պատճառաւ զօրացը մէջ խռովութիւն կսկսալ՝ զօրքերէն սպանուելուց, քանի հինգ տարի Թագաւորելէն վերջը։

3. Աղէկ գիտնալով Խորենացին որ օտարազգիի մը բերնէն ելած գովեստը աւելի զօրաւոր և աւելի յարգի է, քան Թէ համազգիի մը բերնէն, Թէպէտ և Ճշմարտախօս ըլլայ, անոր համար Յունաց մատենագիրներուն տուած գովեստը առաջ կը բերէ, որոնց մէջէն մէկ երկուքը դնենք հոս. «Վէհ ինձ Արտաշէս պարթև քան զմակեդոնացին Աղեքսանդր. զի կալով յիւրում աշխարհին, իշխեաց Թեբայ և Բաբելոնի... Աւաղ բազդին. միայն Թէ՚ի տէրութեանն և ոչ՚ի փախստեան էր վախճանեալ»։ Ա՛ս խօսքս կը զգուշէ Պողիքրատէս յոյն պատմագիրը։ Նոյնպէս նաև Փլեգոնիոս պատմա-

3. Օտար ազգաց մատենագիրներն ինչ գովեստ ներ կու տան Արտաշէս Ա.ին վրայ.

գիրը կ՚ըսէ. «Ամենայն Թագաւորաց հուժկու և զեալ պարթևն Արտաշէս... յԵլեսպոնտոս և՚ի Թրակէ զտարերացն փոխեաց զբնութիւն. ծովագնաց ընդ երկիր բերեալ լինէր, և ընդ ծով հեծեալ երկրով... առ հասարակ նմա Ելլադա մատուցանէր զահն»։

Բայց անաչառ խօսիլ ուզելով՝ չենք կրնար չպարտաւորիլ Արտաշեսի աշխարհակալութեան հոգին, որ ըստ ինքեան անիրաւութիւն ու բռնաւորութիւն է, և կրթելու ու քաղաքականացնել Թագաւորի մը չվայելէր. բայց աս ալ խոստովանելի է որ հին տաեները իրաւունք ազգայ ըսածը և արդարութեէ տահմաններէը ինչպես որ պէտք է չէին հասկըցած, աս պատճառաւ է որ Արտաշէսներ, Սելեւկոսներ ու Պտղոմեոսներ ամէն հին ազգի մէջ աւելի գոնուած են, քան Թէ ատ վերջի տաեներս. և ըսածնիդուս մեծ ապացոյց մը կրնայ ըլլալ Հռովմէական հզօր պետութիւնն որ անիրաւ աշխարհակալութեամբ, այսինքն ըստ արդի իրաւանց ազգայ՝ բռնաւորութեամբ, այնչափ մեծացաւ, զիրացաւ ու պարարտացաւ։

4. Արտաշեսի իր զօրքերէն սպանուելուն վրայ որոշ բան մը չենք կրնար ըսել, որովհետև որչափ որ իր բռնաւորութեանը համար կրնան ըսպանուած ըլլալ զինքը, նոյնչափ ալ կրնան ըրած ըլլալ զօրքերը ատ՚բանս իրենց անկրթութենէն, և կամ նաև առանձնականայց չարութենէն։

Աղէկ ճանչցեր էր Արտաշէս որ աշխարհակալութիւնն ընելէն վերջը՝ պէտք է նաև պահել և օգուտը քաղել. և Թէ ազգին հանդերձեալ վիճակին հաստատուն օգուտ մը չունի. անոր համար ըսաւ. «Աւաղ փառացս անցաւորի»։ Ա՛ս պատ-

4. Արտաշեսի մահուանը պատճառ ինչ բան կրնայ ըլլալ և ո՞րն է իրեն մէկ երևելի խօսքը.

Հառաջ Արտաշէս անվոյթ չեղաւ ազգին քաղաքական կառավարութեանը և ապագայ բարւոյն վասն, հապա ան մտածելով՝ ուզեց որ իր Տիգրան որդին աղէկ կրթուի, ու չեղաւ ան աշխարհակալ ներուն պէս որ իրենց մեռնելովը՝ աւերութիւնն ալ մեռուցին և կամ սասկիկ ախարացուցին:

ԳԱՍ Ժ·

Տիգրան Բ. և իրեն քաչոտիւնները·

1. Յոյները և ուրիշ հարիւրաւոր ազգեր լսելով Արտաշէսի մահը և իրեն քալի եղած զօրաց ցրուիլը, սկսան ապստամբիլ և Հայաստանի վասն վազել: Տիգրան որ երկու տարիէ ի վեր Թագաւորած էր, միանգամայն պատերազմական բաներուն վարժ ըլլալով և հօրը պէս քաջ պատերազմող, մէկէն զօրք ժողվեց և Միհրդատայ հետ մէկտեղ վրանին պատերազմի ելաւ. զամենքը ցրուեց հալածեց, և սրտերնուն մէջ իր հօրը ապաւորած վախը ժամանակ չթողուց որ հանգչի, հապա աւելի հաստատեց:

Անկէց գառնալու առին Կեսարիա հանդիպելով տիրեց բոլոր փոքր Ասիոյ, և բոլոր ան կողմերը Միհրդատայ յանձնեց ու Պոնտոսի Թագաւոր անուանեց զինքը, որպես զի ուրիշ անգամ չկարենան ապստամբիլ: Այլ և այլ պատերազմներով ուրիշ շատ ազգերու ալ տիրեց, և ամեն պատերազմներու մէջ քաջութեամբ յաղթող դանուելուցաւ. իր անունէն զրեթէ բոլորը աշխարհք կը դո-

1. Տիգրան Բ. Արտաշեսի յաջորդելով իր քաջութիւններովը ինչպէս փառաւորուեցաւ.

ղաք, անանկ որ շատ օտարազգի պատմիչներ կարծելին թէ Հայոց Թագաւորութիւնը Տիգրանէն սկսած ու Տիգրանով լմնցեր է: Հռովմայեցւոց պատմիչներէն շատը կ'ըսեն թէ խել մը զերի Թագաւորներ կը ծառայէին իրեն, որոնց մէջէն չորսը միշտ քովը կ'էին, և երբոր ձիով տեղ մը երթար, անոնք իրենց Թագաւորական զգեստովը ոտքով կ'երթային չորս դիէն. նոյնպէս նաև ամեն գառատառնական և քաղաքական հանդիսութիւնը մէջ գնացը առջի վրայ կը կենային:

2. Տիգրան սա պատերազմներէն վերջը Հայաստան գառնալով, մեհեանները շինեց, և Յունաստանէն բերած Արամազդայ, Աթենասայ, Արտեմեայ, Աֆրոդիտեայ և Հերակլէսի արձանները այլ և այլ քաղաքները դրաւ, նախապարծերուն ալ խըսեաւ ապստղեց որ կուռքերուն ազէկ պատիւ տան. և որովհետև Խաղրատունիք առջի բերան յանձն չառին կուռապաշտութեան բանները, անոր համար Այսուդ անուշով նախարարին ընդուն կոթել տըւաւ, տասուածները նախատելուն համար. տասուածները յանձն առին զոհեալ խոզի միս ուտել:

3. Այս միջոցներուս գրգռուեցան ան տոհմալի ու երկարատև պատերազմները որ Միհրդատ ու Տիգրան ըրին Հռովմայեցւոց դէմ. վասն զի Միհրդատ որ Պոնտոսի Թագաւոր էր՝ Տիգրանայ օգնութեամբը շատ Թագաւորութիւններու տիրեց, և ինչպէս որ Հռովմայեցւոց պատմիչները կը զրուցեն, քանոնէրիկու Թագաւոր կը ծառայէին իրեն,

2. Տիգրան Բ. ինչ կարգաւորութիւններ ըրաւ նաև կրօնքի նկատմամբ.

3. Տիգրան ու Միհրդատ մէկմէկու հետ միանալով ինչ յաղթութիւններ ըրին Հռովմայեցւոց վրայ.

և ամենուն հետ իրենց լեզուովը կը խօսէր. անոնց մէ զատ տիրեց նաև Կապադովկիոյ, և հոն Թագաւոր դրաւ իր Արիարաթէ որդին, ու Արիոբարզանը որ Հռովմայեցիք Թագաւորեցուցեր էին՝ վռնտեց: Բայց որովհետև ուժը տարեկան էր Արիարաթէ, Գորգիաս անունով իշխան մը խնամակալ դրաւ անոր:

Կապադովկացիք Հռովմայեցւոց տալուինեցան որպէս զի դան ազատեն զիրենք Միհրդատայ ձեռքէն. անոնք Կուռնելիոս Սիլլա քաջ զօրապետը խաբեցին, որ եկաւ Արիարաթէը հալածեց անկէ, ու Արիոբարզանը նորէն Թագաւորեցուց:

Սաստիկ բարկանալով Միհրդատ՝ Տիգրանայ իմացուց, որպէս զի օգնութիւն խնդրէ իրեն. Տիգրան ալ իր երկու եղբայրները խնդրեց, որոնց գալը երբոր լսեց Արիոբարզան՝ Հռովմիսաւ, որով դիւրաւ տիրեցին Հայերը, և նորէն Արիարաթէը Թագաւորեցուցին Կապադովկիոյ: Այս տեսնելով Միհրդատ սիրտ առաւ, և բազմութիւն զօրաց ու շատ նաւերով սկսաւ վանել Հռովմայեցիները և ուրիշ Թշնամիները և տիրել շատ տեղերու. բայց Հռովմայեցիք նորէն երկու հարիւր հազարի չափ զօրք խաբեցին Միհրդատայ վրայ, որոնք շատ հեղ յաղթուեցան, և Միհրդատ անոնց Ակիլլաս անունով զօրապետը բռնեց ու բերինէն վար հալած ոսկի լեցընելով մեռուց, ուզելով ցուցընել Թէ ինքը քան զՀռովմայեցիները աւելի ձոխ ու առատաձեռն է: Նոյնպես նաև Տիգրան ուրիշ տեղեր մեծամեծ ջարդեր ըրաւ Հռովմայեցւոց զօրացը վրայ, ինչուան որ եկաւ Լուկուլլոս:

4. Երբոր Տիգրան Հռովմայեցւոց պատերազմին բէն քիչ մը դադրեցաւ, Սէվէկիացւոց Թագաւո-

4. Տիգրան ինչ պատերազմներ ըրաւ նաև Ասորւոց դէմ.

րութեան մէջ խռովութիւն նկատելով՝ իշխաններէը ուզեցին որ Տիգրանայ յանձնեն իրենց Թագաւորութիւնը: Տիգրան շատ զօրքով գնաց Անտիոքոսը վռնտեց հանկէ, և գրեթէ բոլոր Ասորւոց երկիրն տիրեց, և Անտիոքիայի մէջ իրեն տեղապահ դրաւ Մագդաս անունով իշխան մը (79):

Ասորւոց Թագուհին բոլոր Ասորիները գրգռեց որ Տիգրանէն ապստամբին. բայց Տիգրան շուտ մը անհամար զօրքով վազեց Ասորւոց վրայ, առաւ Պաղմայիսը և Սելևնէ Թագուհին բռնեց ու սպանեց: Երբոր լսեցին Հրեայք որ Տիգրան ան կողմերն է, վախնալով որ չըլլայ Թէ Հրեաստանի վրայ ալ վազէ՝ դեսպան խաբեցին Տիգրանայ որ դիմայ իրենց վրայ և չարիք մը չընէ. ան բանիս համար մանաւանդ պատճառներ ըրին Թագրատուհիք ալ, և Տիգրան խոստացաւ չարիք մը չընել իրենց Ագրիպպադրա Թագուհւոյն:

5. Տիգրան Սէվէկիացւոց տիրելէն վերջը երբոր լսեց Սիլլայի մահը՝ շատ զօրքով վազեց Կապադովկիայի վրայ, և տիրեց բոլոր աշխարհէն. Միհրդատայ ալ մանաւանդ գունդ խաբեց, որ անոնցմով շատ տեղերու տիրեց Ասիոյ մէջ. բայց երբոր Կիզիկոն քաղաքը պաշարեր էր՝ զօրայ պաշարը լմնցաւալ յաղթուեցաւ Լուկուլլոսէն. գարձեալ ուրիշ անգամ մը պատերազմի առնն զօրքին մէջ խռովութիւն նկատելով զօրավարներէն շատը Հռովմայեցւոց կողմը անցան. տասվ Միհրդատ հարկադրեցաւ Տիգրանայ քովը փախչել, որուն վրայ սաստիկ բարկացաւ Տիգրան, ու երկու տարի չուզեց տեսնել:

6. Լուկուլլոս խնդրելով որ Տիգրան Միհրդա-

5. Տիգրան երբոր լսեց Սիլլայի մահը ինչ ըրաւ.

6. Հռովմայեցիք Տիգրանակերտին ինչպէս տիրեցին ու ինչպէս նորէն առպեցան Թողուց.

տայ բարկացեր է, գեսպան խրկեց Տիգրանայ որ Միհրդատը իրեն մատնէ. բայց Տիգրան որ ապէկ գիտէր բարկութեան ժամանակը և չափը, նա Ճամբեց գեսպանը. Միհրդատայ ալ տասը հազար զօրք տալով Պոնտոս խաբեց։ Նոյն միջոցին Լուկուլլոս պաշարեց Տիգրանակերտը, որուն վրայ եկաւ Տիգրան իրեք հարիւր հազար զօրքով. բայց տեսնելով Հռովմայեցւոց սակաւութիւնը, արհամարհելով ըսաւ. «Թէ որ գեսպան են եկեր՝ շատ են, իսկ թէ որ Թշնամի՝ քիչ». ասոր ըսելովն անհոգ եղաւ պատերազմի պատրաստուելու, որով Հռովմայեցիք սիրտ առին ու յանկարծակի վազեցին Հայոց վրայ, և Տիգրանը փախցընելով Տիգրանակերտն ալ առին։ Տիգրան խմանալով իրեն ամբարտաւանութեան սխալմունքը, մէկէն հեծելազօրքը խաբեց Լուկուլլոսի եաւէն. անոնք Ճամբան Հռովմայեցւոց հեծելազօրացը հանդիպելով չարաչար կոտրեցին։ Տիգրան ուրիշ շատ տեղեր ալ յաղթելով Հռովմայեցւոց, Հայաստանէն դուրս հանեց ու Լիչուան Կապադովկիա հալածեց։ Վերջը նորէն ապարատեա դրաւ Միհրդատը, որ Հռովմայեցիներէն վրէժ առնելով շատ անգամ յաղթեց անոնց և բոլոր առջի կորնցուցած տեղերուն տիրեց. նոյն միջոցին Տիգրան ալ Կապադովկիոյ վրայ վազելով հռնկեց ալ հալածեց Հռովմայեցիները ու նորէն տիրեց Կապադովկիոյ։

7. Տիգրանայ ու Միհրդատայ ըրած յաղթութիւններուն լուրը երբոր Հռովմ հասաւ, սատակ շփոթեց ու բարկացուց Հռովմայեցիները, որոնք Լուկուլլոսը կանչելով՝ տեղը Պոմպէոսը խաբեցին։ Միհրդատ շատ անգամ անոր դէմ ալ պատերազմ ընելով երբեմն յաղթեց՝ երբեմն յաղթուեցաւ. բայց իր Կասպոր անուշով նախապարը

7. Միհրդատ ինչպէս մեռաւ.

Հռովմայեցւոցմէ կաշառք առնելով ապստամբեցաւ իրմէ. նոյնպէս նաև իր փառամոլ և ինքնահաւան Փառնակ անուշով որդին ապստամբեցաւ, և Հռովմայեցւոց օգնութեամբը հօրը տեղ թագաւոր եղաւ։ Միհրդատ որ բերդի մը մէջ ամրացեր էր՝ վախնալով որ չըլլայ թէ Հռովմայեցւոց ձեռքը ինկայ, բոլոր ընտանեացը Թոյն տուաւ, ինքն ալ իր Թուրին վրայ խրնալով մեռաւ։

8. Ան միջոցին որ Փառնակ Միհրդատէն ապըստամբեր էր, Տիգրանայ Տիրան որդին ալ իր հօրմէն ապստամբելով Պարսից Թագաւորին օգնութեամբը եկաւ Ասորւոց քաղաքը պաշարեց. բայց Տիգրան հալածեց զՏիրանը, ան ալ նեղը մըտնելով գնաց Պոմպէոսի ապաւինեցաւ և անոր առջեւը գնաց Պոմպէոս Հայաստան մտաւ։ Ասոր ձախորդութիւնները տեսնելով Տիգրան՝ խնայուց որ գժուարին է Պոմպէոսի դէմ դնել, ուստի հաշտութիւն ըրաւ հետը՝ այլ և այլ տեղեր տալով Հռովմայեցւոց։

9. Տիգրան իր տեղը Թագաւորեցուց իր Ասրատազդ որդին, Թագաւորութեն երեսուն և երրորդ տարին։ Պոմպէոսի տեղը խաբեցին Հռովմայեցիք Գաբիանոսը. և Տիգրան Հռովմայեցւոցմէ վրէժ առնելու համար Գաբիանոսին վրայ պատերազմի ելաւ, ու շատ տեղեր նորէն ձեռքէն առաւ. Գաբիանոս հաշտութիւն խոսեցաւ, և ծածուկ ետ տուաւ Միհրդատայ ոսկեքը ու ինքը Եգիպտոս գնաց։

Հռովմայեցիք խմանալով Գաբիանոսի յաղթութ-

8. Տիգրան ինչո՞ւ հաշտութիւն խոսեցաւ Պոմպէոսին հետ.

9. Տիգրան ինչ յաղթութիւններ ըրաւ Գաբիանոս և Կրասոս Հռովմայեցւոց զօրավարներուն դէմ.

լը և խարդախութիւնը, Կրասոսը խաբեցին. անիկայ նախ Երուսաղէմի վրայ երթալով սկսաւ հարըստութիւն առաւ Երուսաղէմէն, ու Տիգրանայ վրայ սկսաւ գալ. բայց Տիգրան Պարսից հետ միաբանած քաջութեամբ պատերազմելով Կրասոսը մեռուցին և բոլոր զօրքը ցրուեցին, հեռը ուներցած հարստութիւնները առին: Անոր տեղը Ասորեստանի կուսակալ դրին Հռովմայեցիք նախ Կասսիոսը, վերջը Բիբուլոսը, որոնց հետ շատ պատերազմներ ըրին Հայերը ու շատ անգամ յաղթեցին. բայց վերջապէս Հռովմայեցիք տիրեցին Ասորեստանի մեծ մասին, որովհետև Տիգրան ալ ծերացեր էր:

10. Մինչդեռ մեռաւ, և Տիգրան տեսնելով որ իր որդին Արտաւազդ երեն հոգին ու քաջութիւնը չունի, ուղեց Պարսից Արշէզ թագաւորին հետ հաշտութիւն ընել և անոր հետ միկտալ Հռովմայեցիները հալածել. բայց որովհետև առանց նախագահութիւնը անոր տալու չէր կրնար ըլլար ասբանս, և տեսնելով որ իր մեռնելէն վերջը նախագահութիւնը պիտի առնեն Պարսիկք, իր կամքովը տուաւ նախագահութիւնը Արշէզին, որ շատ զօրք օգնութիւն խաբեց Տիգրանին. ան ալ զօրավար դրաւ Որշտունեաց Բարդափրան անունով քաջ նախարարը. տեսիկայ բոլոր Ասորւոց երկիրը նուաձեց, եաքը Անտիպոնոսին հրաւիրելովը Հրէաստան գնաց. և հոն Անտիգոնոսի խոստացած պարգևին սիրոյն համար Հիւրկանոսը և Փասայէղոսը, որ նոյն միջոցին Հրէաստանի կը թագաւորէին, երդմունքով և մեծամեծ դաշինքներով կանչեց ու խարդախութեամբ բռնեց, որպէս զի Անտիգոնոս կարենայ թագաւորել. անկէ վերջը բոլոր Հիւր-

10. Տիգրան ինչու նախագահութիւնը Պարսից տուաւ.

կանոնաի հարստութիւնն ալ կողոպտեցին: Բարզափրան Գինէլ անունով քաջ զօրավարը բազմութեամբ զօրաց հոն թեղմով ինքը Հայաստան գաձաւ, ու հեռը բերաւ Հիւրկանոսը և շատ գերիներ: Վերջէն Հռովմայեցիք նորէն զօրք խաբելով Հայերը երբեմն յաղթեցին երբեմն յաղթուեցան, ինչուան որ բոլորովին Հռովմայեցիք տիրեցին Հրէաստանի:

11. Տիգրան յիսունըչորս տարի թագաւորէն վերջը՝ ուխտունըհինգ տարեկան մեռաւ, բոլոր կեանքը պատերազմով անցընելով: Իր կենացը մէջ կը տեսնուի անպատանի արիութիւն, անխոնջ աշխատասիրութիւն, վեհանձնութիւն մտաց, ինչպէս ցրցուց՝ Մինդրատը թշնամւոյն ձեռքը չտալուն մէջ, խոհականութիւն՝ որով գիտեր ըստ տեղւոյն և ըստ պարագային նաև թշնամւոյն խնդրել, ինչպէս Պոմպէոսի հետ հաշտութիւն խօսելու մէջ և Արշէզին նախագահութիւնը տալու տաեն. կրծնից սէր, և ուրիշ գովելի կատարելութիւններ: Տիգրանայ ըրած սխալմունքներն ասէին՝ որ երբեմն չափէն աւելի իր վրան վստահանալով պատշաճ զգուշութիւնները չըրաւ, և քիչ մը տաեն իր մեծ փառքովը չապրաւ:

Եթէ Տիգրան կենացը մէջ թշուառութիւն մը ունեցաւ՝ իրեն արժանաւոր յաջորդ չունենալն է: Թէ որ յաջորդը չկրցաւ իրեն քաջութեամբը կենդանի պահել Տիգրանայ արդիւնքը, ազգը իրեն երախտագիտութեամբը պարտական է կենդանացընել իր անմահ արդիւնքները:

11. Տիգրան քանի՞ տարի թագաւորեց և ինչ կատարելութիւններ վրան կը փայլին.

ԴԱՍ ԺԱ.

Արտաւազդ Ա. ու Արշամ։

1. Տիգրան երկրորդին յաջորդեց Արտաւազդ որ հօրը պէս քաջութեան եւեւէ ջըլլալով ինքզինքը կերեւոյթի մէ զբօսանաց տուաւ. ան պատճառաւ բոլոր Թշնամիները սկսան զօրանալ, մանաւանդ Հռովմայեցիք, որ Անտոնիոսի տաքնոտութեամբը Ատրպատ երկրին եւ ուրիշ շատ տեղերը տիրեցին։ Այս տեսնելով ազգը սկսաւ տրտունջալ. անով Արտաւազդ խելքը քիչ մը գլուխը ժողվեց, և տպիէն անգիէն զօրք ժողվելով դէմ գրաւ Հռովմայեցւոց. բայց որովհետեւ հաստատուն քաջութեան և արիութեան տէրը չէրլար, անոր համար ալ չկրցաւ ինչուան վերջը պաշտպանել երկրին ժառանգութիւնը։ Երբոր Անտոնիոս ուզեց Պարսից վրայ պատերազմի երթալ օգնութիւն խնդրեց Արտաւազդէն։ Արտաւազդ թէպէտ և արտաքուստ օգնեց Անտոնիոսին, բայց ծածուկ աւելի Պարսից կողմն էր, որով Անտոնիոս չարաչար յաղթուեցաւ ու Եգիպտոս փախաւ։ Վերջէն Անտոնիոս իմանալով Արտաւազդայ ըրած խաբեութիւնը, շատ զօրքով վրան պատերազմի եկաւ. բայց փոխանակ քաջութեամբ պատերազմելու՝ վատութիւնը ձեռք առնելով երդմնազանց ու խարդախութեամբ կանչեց զԱրտաւազդը ու ոսկի շղթայի զարնելով Եգիպտոս տարաւ ու հոն Կղէոպատրա թագուհւոյն տուաւ. վերջը ինքը Հայ-

1. Անտոնիոս ինչպէս գերի բռնեց Արտաւազդը ու Հայաստանի տիրեց.

տատան գառնալով Սաորին Հայքը իր Ալեքսանդր տղուն յանձնեց, վերինն ալ Մարաց տուաւ, և իրեն անուանուին ալ սահակ կոխեց վրան սահնակ գրոշմած. Անպանիոս Յաղթող Հայաստանի։

2. Արտաւազդ քիչ տարի ետքը մեծ վտանգի մէջ. վասն զի երբոր Անտոնիոս երկու իրեք տասնեակ Օգոստոսէն յաղթուելով ինք զինքը սպանեց, ան բանիս Կղէոպատրա սահնակ տրտմած կառաւորութենէն Արտաւազդայ գլուխը կարել տալու։ Իրաւ Արտաւազդ քիչ մը թագաւորութիւն ըրաւ, բայց իրեն մեղկութեամբը ազգին անանկ մը ընաւ մը ըրաւ որ ինչուան վերջը միաց. այսինքն հարկատու ըրաւ ազգը Հռովմայեցւոց և զինքն ալ մշանջենաւոր գերի։ Թորենացին, որուն ճշմարտասիրութիւնը ամենուն յայտնի է՝ այսպէս կը գրէ. « Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եղոյց. այլ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, մօրից և եղեգնասրացս թափառեալ ջրէրբ և առատաբաց, զիշատայրես և զեռզ արածելով (օրաշրով). զնմանատութենէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անխոյթ արարեալ, ծառայ և սարսուկ արգարև որովայնի լինելով »։

3. Արտաւազդայ վրայ Հռովմայեցւոց պատմիչները շատ գովեստով կը խօսին յիշելով իրեն լեզուագիտութիւնն, ատանաւորներն ու ճարտասանական քանի մը ճառերն, որոնց համար կ'ըսէ Պլուտարքոս թէ ինչուան իր առներն կան եղեր։ Այս վկայութիւնս Թորենացւոյն խօսքին դէմ կ'ելլէ, ինչպէս որ յայտնի է վերի առաջ բերած խօս-

2. Արտաւազդ ինչպէս մեռաւ ու ինչ ելաւ ըրաւ ազգին իր մեղկութեամբը.

3. Արտաւազդայ վրայ ինչ գովեստի բան մը կը յիշատակեն Հռովմայեցի պատմիչներ.

քերէն. բայց տարակոյս չկայ որ Խորենացին ա-
ռոնք կ'ընէ Աբգաւազդայ Թագաւորութեան մի-
ջոցին համար. Իսկ օտար պատմչաց Աբգաւազ-
դայ ուսումնասիրութեանը համար առած գոհե-
րը խիստ հաւանական է որ Աբգաւազդ իրեն գե-
րութեան առնելը ստացած ըլլայ ատ գովելի յատ-
կութիւնը, իբրև իրեն գան գերութեանը միակ
միխիթարութիւն ու գեղեցիկ պարագումնը մը,
ինչպէս ատ բանիս օրինակը ունինք այլ և այլ թա-
գաւորաց վրայ: Ատով Խորենացւոյն տուած պար-
ապատճառները՝ օտար պատմչաց դէմ չելլեր, որով և
Աբգաւազդ պատմութեանց մէջէն իր արժանաւոր
անունը արբելով, վերջի խնդասութեան գնացքո-
վը գիւցազն և վեհանձն հօր որդի ըլլալը կը յու-
ցընէ:

ԳՒՍ ԺԲ.

Աբշամ, և Աբգարու գործքերը:

1. Երբոր Աբգաւազդայ գլուխը կարեցին, Աբ-
շամ Տիգրանայ եղբօր որդին Հռովմայեցւոց ձեռ-
քէն վախչելով՝ Պարսից Աբշէզ Թագաւորին հետ
միաբան Մարերը վանտակ և Հռովմայեցւոց ալ մեծ
ջարդ մը տուաւ. ասով Աբշէզ վերին Հայոց տի-
րեց, Աբշամ ալ Ատորին Հայոց մինչև Կեսարիա
և Ատրուց մեկ մասին:

2. Աբշամ լսելով թէ Հռովմայեցւոց վրայ Թա-

1. Աբշամ ինչ կերպով կրցաւ Ատորին Հայե-
րը Հռովմայեցւոց ձեռքէն խալտնել.

2. Հայաստան ինչու հարկատու եղաւ Հռո-
մայեցւոց ու Աբշամայ գլխաւոր արդիւնքը ո՞րն է.

գաւորէր է Օգոստոս կայսր, գեսպան խաւրեց որ
Աբգաւազդայ երիտ տղաքը ետ տայ. բայց երբոր
տեսաւ թէ լսելի չեղաւ իրեն խնդիրքը, նորէն գես-
պան խաւրեց, խոստանալով որ տարուէ տարի
հարկ տայ, ու տիկիայ եղաւ Հայոց հարկատուու-
թեան սկիզբը. Օգոստոս յանձն առաւ ատ գա-
ւինքը: Քանի մը տարի վերջը երբոր Ատրուց եր-
կիրն եկաւ, վերին Հայոց բնակիչները ձանձրա-
ցած Պարսից ըրած բռնութիւններէն, Օգոստոսէն
խնդրեցին որ Աբգաւազդայ որդին Տիգրանը ի-
րենց Թագաւոր գնէ, ինչպէս որ կատարեց Օգոս-
տոս: Աբշամ Բագրեւանդունեաց մէջէն մեկը նահա-
տակեց, մեկալնոնք ալ տուիրեց որ կռապաշտու-
թիւնը յանձն առնուն. անոնք մահուընէ ազատե-
լու համար յանձն առին բոլոր ընտանիքով: Աբ-
շամ քանդուիրեք տարի Թագաւորելէն վերջը մե-
ռաւ: Աբշամ եղաւ մեր այնպիսի Թագաւորներէն
մեկը որ իրեն ըրած բարիքովը բոլոր Հայոց սի-
բոյն, համարմանը ու երախտագիտութեանը ար-
ժանաւորեցաւ. վասն զի ամբողջ տղէի մը գերու-
թեան կապերը խզեց քակեց ու իրեն առջի եր-
ջանկութեան ու փառաւորութեան մէջ հաստա-
տեց. ու ատ բանս այնպիսի կերպով մը ըրաւ որ
գովութեան ու զարմացման արժանի է. Նախ լաւ
ընտրեց Թէ որու հետ բարեկամութիւն պիտի ընէ
ու ինչ կերպով. երկրորդ՝ ազէկ գիտցաւ քիչ մար-
գով ու քիչ արիւնհեղութեամբ մեծ գործողու-
թիւն ընել. եաքը մեծ խոհեմութեամբ Թշնամին
բարեկամ դարձուց. և ըրած ապստամբութիւնը
օրինաւոր երևցուց. որով և կրցաւ խաղաղու-
թեամբ վայելել և վայելեցնել իր յաջորդներուն
ան մեծաղօր տէրութեան ժառանգութիւնը:

3. Աբշամայ յաջորդեց իր որդին Աբգար, ա-

3. Աբգար ո՞վ է ու ինչ նշանաւոր բան հանդի-
պեցաւ իրեն Թագաւորութեանը միջոց.

բուն վայ շատ գովեստներ կուտան Յունայ և Լատինացւոց մատենագիրները. անոր համար Հայերն ալ Աւագ այր ըսին իրեն, բայց Յոյներն և Ասորիները չկրնալով շիտակ հնչել՝ Ապակար կամ Աբգար կ'ըսէին, ուսկից սովորութիւն մնաց Աբգար ըսելու: Աբգարու թագաւորութեան առջի տարիները Քրիստոս Տէրն մեր ծնաւ Հրէաստանի մէջ. նոյն միջոցին Օգոստոս կայսրն ալ հրաման հաներ էր աշխարհագիր ընելու բոլոր իր տէրութեան մէջ. միանգամայն հրաման հանեց որ ամեն մէհեանները մէջ գրուի իր արձանը. Հերովդէս որ Հրեից կը թագաւորէր ուզեց որ իր արձանն ալ մեկտեղ կանգնուի Հայոց սահմանները, բայց Աբգար յանձն չառնելով՝ սաստիկ պատերազմ ըրաւ Հերովդեսի եղբօր որդւոյն հետ, որ իրեն զէմ եկեր էր, ու բոլոր Ջորեց անոր զօրքերը: Նոյն օրերը մեռաւ Հերովդէս, ու տեղը անցաւ Արքեղայոս:

4. Հերովդեսին կուսակիցները տեսնելով որ Աբգարու պատերազմով չկրցան յաղթել, ուզեցին վրան ամբաստանութիւններ ընելով Օգոստոսի աչքէն հանել. բայց Աբգար Հռոմ գնաց, և հոն իրեն սիրելի և խնամատուն կերպովը անանկ հաճոյ եղաւ ամենուն, և մանաւանդ Օգոստոսի որ զԺուարաւ Թողուց զինքը իր հայրենիքը գառնալու: Պտղոմեոս յոյն պատմագիրը կը պատմէ Թէ Աբգար այսպիսի վարպետութիւն մը բանեցուցած ըլլայ որպէս զի Օգոստոս զինքը աղատ թողու: Օր մը Աբգար իր ծառաներուն որսի կ'երթայ, ու խել մը ողջ վայրի կենդանիներ բանելով Հռոմ կը բերէ, և իւրաքանչիւրին բանտած տեղէն մէկմէկ քիչ հող ալ հետերնին կ'առնէ:

4. Աբգար ինչու Հռոմ գնաց ու Պտղոմեոս ինչ կը պատմէ իրեն վրայ.

բոր իրիկունը Օգոստոս Թէատրոն մտաւ, Աբգար հրամայեց ծառաներուն որ բերած հողերնին զատ զատ դնեն ու վերջը կենդանիները միաբան արձակեն. երբոր ասոնք բանս ըրին՝ մէկէն իւրաքանչիւր կենդանի ինչ հողի վրայ որ մեծցած ու սնած էր՝ հոն գնաց անշփոթ. զարմացաւ Օգոստոս ասոնց բանին վրայ ու պատճառը հարցուց Աբգարու. և իմանալով հանճարեղ Թագաւորին միտքը՝ հրամայեց տեսնել որ պատուով տեղը դառնայ, Թէպէտև մեծ վնաս եղաւ ասոնց բանս Օգոստոսի:

5. Օգոստոսի մեռնելէն վերջը երբոր Տիբեր տեղը անցաւ, Աբգար ինդակցութեան դեսպան խրկեց իրեն. բայց անիկայ փոխանակ դեսպանները պատուելու՝ պատժեց: Ան բանիս վրայ սաստիկ նեղացած Աբգար՝ սկսաւ պատերազմի պատրաստութիւն տեսնել, ու Եգեսիան ամրացնելով հոն փոխադրեց աթոռը. բայց ան գիտաւորութեանը արգիլք եղաւ Պարսից Արշաւիր Թագաւորին մահը, որուն տղոցը մէջ խռովութիւն կրնալով՝ տարկեղաւ որ Աբգար Պարսկաստան երթայ զիրենք խաղաղցնելու համար: Միայն Աստուածացոյց Աբգար Թագաւորին օգնեց, որով ան ալ Հերովդէս յորդորգալեաին յաղթեց:

6. Պարսկաստան Աբգարու վրայ բորոտութիւն եկաւ, և երբոր ամեն տեսակ մարդկային հնարքներէ յոյսը կարեց՝ լսելով Քրիստոսի հրաշքները, դեսպան խրկեց իրեն՝ աղաչելով որ գայ զինքը բժշկէ: Իսկ իրեն Քրիստոսի հետ ծանօթացնողը ան կերպով եղաւ:

Երբոր Հերովդէս Արեւմէն յաղթուեցաւ Աբգա-

5. Աբգար Հռոմայեցւոց հետ ինչպէս ապրեցաւ.

6. Աբգար Քրիստոսի հետ ինչպէս ծանօթացաւ ու բորոտութիւնը ինչպէս անցաւ.

թառ օգնութեամբը, Հերովդէս ուզելով Աբգարէն
ան բանիս վրէժը առնել՝ զրպարտութիւններ ընե-
լով ամբաստանեց զինքը Հռովմայեցւոց առջև: Աբ-
գար ինք զինքը արդարացընելու համար գեսպան-
ներ խաւրեց Երուսաղէմի մէջ եղած Հռովմայե-
ցւոց զօրավարին. հոն գեսպանները տեսան ու լսե-
ցին Քրիստոսի ըրած հրաշքները, ու դարձան և
կան պատմեցին Թագաւորին: Աբգարու երկնային
ու երկրաւոր խնամատարութեամբ լցուած սիրտը՝ ծա-
գեց մեկին ատոնց հաւատոյ պայծառ լոյ-
սը, որով խոհչն հաւատաց Թէ Քրիստոս ըրած-
նին՝ կամ Աստուծոյ օրդի է և կամ երկնային բա-
րեբար աստուածներէն մեկը որ իրեն ըրած գերա-
ծայրեալ բարիքներովը գմբրթիկ Աստուծոյ հետ
պիտի միաւորէ: Ուստի Թուղթ մը գրեց Քրիստո-
սի, ու իր Անանէ սուրհանդակին ձեռքովը խաւ-
րեց, աղաչելով որ գայ զինքը բժշկէ ու Եգեսիա
քեակի հանգիստ. գեսպանին հետ պատկերահան
մ՝ ալ խաւրեց, որ եթէ Քրիստոս չգայ՝ գէմքը
օրինակին ու բերէն: Գեսպանները Հասան Երու-
սաղէմ ու ի՛ուզէին Քրիստոսի հետ տեսնուիլ ան
օրը՝ որ Քրիստոս յաղթանակով Երուսաղէմ կը
մտներ. ուստի Փիլիպպոս առաքեալին քովը մտե-
նալով խնդրեցին որ Քրիստոսի հետ տեսնուին.
Քրիստոս մեծ ուրախութիւն ցուցընելէն ետքը՝
հրամայեց Թովմաս առաքեալին որ Աբգարու Թուղ-
թին պատասխանը տայ, որուն մէջ նախ իրեն
հաստատուն հաւատքը գովելէն ետքը՝ խոսք կու
տայ որ իր յարութենէն վերջը առաքեալներէն
մեկը կը խաւրէ զինքը բժշկելու համար: Ան միջո-
ցին պատկերահանը անկիւն մը քաշուած եռանդ եր
Քրիստոսի գէմքը օրինակելու. բայց երկար տանն
աշխատելէն վերջը չկրցաւ օրինակել. ան տուն
հանդչեց Քրիստոս զպատկերահանը, ու ձեռքը լաթ
մը առած՝ երեսին վրայ բռնեց. մեկէն տպաւո-

րուեցաւ իր աստուածային ու լուսաւոր գէմքը
լաթին վրայ: Գեսպանները մեծ ուրախութեամբ
դարձան. ու Թագաւորին հետ մեկտեղ ի՛սպա-
սէին խոստացուած առաքելոյն գալստեանը, որն
որ քիչ առնէն եկաւ, և էր Թադէոս առաքեալը:
Երբոր Թադէոս առջև անգամուն ձեռքը դրաւ Աբ-
գարու վրայ, մեկէն սրբեցաւ Թագաւորին բորո-
տութիւնն ու բոլորովին բժշկեցաւ. վերջը մկըր-
տեց զԹագաւորը ու բոլոր Եգեսացիքը և իրեն
տեղը եպիսկոպոս դնելով Սգդէ անունով մեկը՝ որ
Թագաւորին խոյրարարն էր, ինքը գնաց որ Հայ-
աստանի մեկալ տեղերն ալ քարոզէ քրիստոնէա-
կան հաւատքը (32):

7. Աբգար քրիստոնեայ ըլլալէն ետև երիտու-
րեք սարի ալ ապրեցաւ ու մեռաւ խաղաղու-
թեամբ, երեսունհնգ տարի Թագաւորելէն վերջը:
Այնպիսի յիշատակ մը Թողուց Աբգար որ
մեկ Թագաւոր մը չէ ունեցած: Աբգարու հեզու-
թիւնը, խոհեմութիւնը, խոնարհութիւնը, պար-
կեշտ վարքը և ուրիշ առաքինութիւնները կը քա-
րոզեն իրեն պատմութիւնը և իրեն վախճանը, ո-
րով երկրաւոր Թագաւորութենէն երկնաւոր
փառքը և յաւիտենական ուրախութիւնը հրա-
ւիրուեցաւ:

7. Աբգար քանի՞ տարի Թագաւորեց ու ինչ-
պէս.

ԴԱՍ ԺԴ.

Աղեաւնի, Սանասարուկ, Երուանդ և Արտաշէս Բ:

1. Աբգարու մեռնելէն վերջը Թագաւորութիւնը երկու բաժնուելով՝ մեծ չփոթութիւն ընկաւ ազգին մէջ, վասն զի Անանէ Աբգարու որդին՝ Հայաստանի մէկ մասին տիրեց, և Սանասարուկ Աբգարու քեռորդին մեկալ մասին տիրեց մի և նոյն ժամանակի մէջ, իրարու հակառակ: Անանէ որ հօրը տեղը Եգեսիա Թագաւորեց՝ քրիստոնէութիւնը վերցուց ու սկսաւ մեհեանները բանալ և քրիստոնեաները մարտիրոս ընել, ինչպէս Ագդէ Հայրապետը և ուրիշները: Բայց ինքն ալ Աստուծմէ իրեն պատիժը գտաւ. վասն զի իր նոր շինած պալատին մէջ սիւն մը կանգնել տալու տեն՝ սիւնը վրան կնալով մեռցուց զինքը:

2. Սանասարուկ լսելով Անանէի մահը՝ մեծ ուրախութեամբ մեկէն զօրք ժողվեց ու սկսաւ Եգեսիոյ վրայ գալ. երբոր լսեցին աս բանս Եգեսացիք գնացին խաբեցին ըսելով՝ որ սիրով կ'ընդունին զինքը Թէ որ իրենց քրիստոնէական հաւատքին չդպչի. աս բանս երդմնելնուվ յանձն առաւ Սանասարուկ, բայց երբ որ երդմնելու տեղը հասան Թագէոս և Բարթուղիմէոս առաքեալները, և իր աղջիկը Սանդուխտ կոյսը, որ առաջին մարտիրոս կոյսը եղաւ, և ուրիշ շատ մարդիկ,

1. Անանէ ով է ու ինչպէս մեռաւ.

2. Սանասարուկ խարդախութեամբ Եգեսիա մտնալով ինչ անպիտանութիւններ ըրաւ ու ինչ դիտեղը կայ Հեղինէ Թագուհւոյն վրայ.

Եղբոր Աբգարու ընտանիքն ալ Թրէ անցուց, և միայն աղջկունքն ու Աբգարու կինը որ Հեղինէ կ'ըսուէր և իրեն ալ շատ բարիքներ ըրած էր, ապրեցուց: Ասոր համար կ'ըսեն Թէ շատ բարեպաշտ ըլլալով ջուզեց կատպաշիկ մէջ բնակիլ. ուստի Երուսաղէմ գնաց ու հոն սովի մը տաեն բոլոր ունեցածը ծախելով բնակչաց ցօրեն կը բաժնէր: Աս ըրած բարեացը համար գերեզմանի մը չնեցին Հրեայք Երուսաղէմայ դրան առջև:

3. Սանասարուկ Թէպէտև քրիստոնեաները հալածեց, բայց շատ շինութիւններ ալ ըրաւ ընդհանուր Հայաստանի՝ մանաւանդ Մծբնայ մէջ. վասն զի աս քաղաքը երկրաշարժէ ճնշուած ըլլալով, բոլոր քաղաքը փլցուց ու նորէն չնեց շատ գեղեցիկ. և քաղքին մէջ իր արձանը կանգնել տուաւ, ձեռքն ալ դրամ մը, ըսել ուզելով Թէ բոլոր ունեցածը ծախեր է քաղքին շինութեանը համար և միայն ան մնացեր է: Սանասարուկ երեսունը չորս տարի Թագաւորէն վերջը որսի մէջ պատահմամբ նետով զարնուելով մեռաւ: Կը տեսնուի որ Սանասարուկ մտանուր ախորժակ ունի եղեր քաղաքական շինութեանց: Բնութեամբ խոռամանկ և ճարտար եղած պիտի ըլլայ որ կրցեր է այնչափ տարի Թագաւորել իրեն երդմանը դէմ ընելէն վերջը: Բայց Սանասարկոյ մեծ անարգանք է իրեն երդմանը վրայ հաստատուն չկենալը, անպիտանութեամբ Աբգարու ցեղը Թրէ անցընելը, և իր աղջկանը սպանելը (67):

4. Սանասարուկէն եղբը քիչ մը տաեն շփոթե-

3. Սանասարուկ ինչ շինութիւններ ըրաւ ու ինչպէս մեռաւ.

4. Սանասարուկին մեռնելէն եղբը ինչպէս շփոթեցաւ Թագաւորութեան յաջորդութիւնը ու ով է Երուանդ.

յաւբուն օրինաւոր թագաւորութեան յաջորդութիւնը. վասն զի Սանտարկոյ առնը Աչքակուն կին մը երկու որդի ունէր Երուանդ ու Երուազ անուններով: Երուանդը կարճ, հակայ, անուշ բարքով ու ճարտար մարդ մըն էր, որ Սանտարը կոյ առնը շատ քաջութիւններ ըրած ըլլալով ամենուն սիրելի եղած էր. ուստի երբոր Սանտարուկ մեռաւ՝ քաղցր կերպերով և առատաձեռնութեամբ բոլոր նախարարներուն սիրտը իրեն քաշեց և թագաւոր եղաւ Հայոց վրայ, առանց Բագրատունի ազգէն պահանջելու: Բայց վախնալով որ չըլլայ թէ Սանտարուկին տղաքը իրեն թագաւորութիւնը արգիլք ըլլան՝ զամենքն ալ Թրէ անցուց, բայց 'ի պզտիկ տղէ մը որ Սմբատ Բագրատունին մեծ գժտութեամբ Պարսկաստան փախուց, և տղուն անունն էր Աբրաշէս. բայց Երուանդ իմանալով աս բանս և միշտ վախ մէջ ըլլալով որ օր մը չըլլայ նէ օր մը թագաւորութիւնը կրնայ ձեռքէն առնել, շատ թղթեր գրեց Պարսից Դարեհ թագաւորին և Սմբատին, որ Աբրաշէսը մեռցընեն, ըսելով որ Մարի ազգ է ու Աբշահունի չէ. բայց խնդիրքը լսելի չեղաւ:

5. Երուանդ բարեկամիա և հանիսաւոր մարդ ըլլալով՝ հայրենի կը գուշակեր թէ քանի որ Աբրաշէս ողջ է՝ անկարելի է իրեն թագաւորութեան հաստատութիւնը, անոր համար սկսաւ պատրաստութիւններ տեսնել. աս պատճառաւ օգտակար սեպեց բոլոր ազգին իշխանութիւնը իրեն ձեռքը առնել: Միջագետաց երկիրը՝ որ Հայաստանէն դուրս էր՝ Հառմայեցւոց տուաւ ու ինքը վերին Հայքը առաւ. և ոյսպէս ալ Հառմայեցիները իրեն

6. Երուանդ իր թագաւորութիւնը ապահովցընելու համար ինչ զգուշութիւններ ու պատրաստութիւններ ըրաւ.

բարեկամ ընէ՝ աւելի հարկ տալ խոստացաւ. արքունիքը փոխեց Աբմաւիր տարաւ աւելի ամուր տեղ համար. Երասխ գետին վրայ աշխենեց երուանդաշատ քաղաքը, որ ինչպէս կը տարաբերէ Խորենացին՝ Հայաստանի գեղեցիկ, զուարճալի ու ամուր քաղաքներէն մէկը եղաւ: Նոյնպէս շինեց Ախուրեան գետին վրայ Բագարան անուն քաղաք մը ու բոլոր կուռքերը հոն փոխադրեց, և քրմապետ դրաւ իր Երուազ եղբայրը: Երուանդայ բոլոր աս ամեն պատրաստութիւնները պարագայ եղան. վասն զի Սմբատ տպէտը իրեն լաւ բարուքը և շատ քաջութիւններ ընելով Պարսից նախարարներուն առջև, ամենուն սիրելի եղաւ. ուստի Պարսից նախարարները ազաչեցին Դարեհին որ Սմբատ ինչ բան որ խնդրէ՝ կատարէ թագաւորը: Սմբատ ալ խնդրեց որ Աբրաշէսը հաստատ իր թագաւորութեանը մէջ՝ օգնութիւն տալով Աբրաշէսին որ կարենայ յաղթել Երուանդայ: Յանձն առաւ Դարեհ օգնելու. ուստի շատ մը զօրք տուաւ Սմբատայ ու Աբրաշէսի և Երուանդայ վրայ խաւրեց:

6. Երուանդ Ուտէացւոց վրայ պատերազմի գացեր էր՝ երբոր լսեց Աբրաշէսի գալը. հոն պահապան թողուց զօրաց մէկ մասը և նախարարներէն շատը, ու ինքը գնաց առատ վարձքով զօրք ժողվելու վրայ, Միջագետաց և Կեսարիոյ կողմերէն:

Աբրաշէս առանց գիտնալու թէ Երուանդ Ուտէացւոց աշխարհքէն հեռացեր է՝ ան կողմերը գնաց բոլոր զօրքովը. երբոր իմացան տեղացիք և Երուանդայ ձգած զօրքերն ու նախարարները Աբրաշէսի գալը, բոլոր իրեն կողմը անցան. աս բանս նաև Երուանդայ քովի եղած նախարարներուն

6. Աբրաշէսի և Երուանդայ մէջի պատերազմը ինչպէս եղաւ ու Երուանդ ինչպէս մեռաւ.

միաքը պղտորեց, որոնցմէ շատը կ'ուզէին Աբատաշեսի կողմը անցնիլ: Աբատաշէս և Սմբատ տեսնելով Երուանդայ զօրաց բազմութիւնը՝ ամենևին չէին վախնար, միայն մեծ վախ ունէին Արգամ նախարարին, որովհետև կարճ մարդ էր և սիգաւոր զօրաց մեծ մասը իր ձեռքն էր. անոր համար պատերազմին առաջ ծածուկ խմացուցին Աբգամայ որ եթէ իրենց կողմը անցնի, Երուանդայ տուած պատիւները պահէլէն զատ՝ կրկին պատիւ և կրկին հարստութիւն կու տան իրեն: Այս պատճառաւ պատերազմին սկիզբը մեկէն Արգամ Աբատաշեսի կողմը անցաւ, և Սմբատայ գնդին հետ միացաւ, և երկու գունդը մեկտեղ յարձակեցան Երուանդայ բանակին վրայ. պատերազմին տաքցած միջոցը Երուանդայ բանակին մեկ մեծ մասը Աբատաշեսի կողմը անցնելով՝ անոր զօրացը հետ միասին սկսան ջարդել Վրացիքը և ուրիշ վարձուոր զօրքերը. բայց որովհետև Երուանդ Տուրտցւոց շատ պարգևներ խոստացեր էր՝ որ Աբատաշեսը մեռցընեն, երբոր անոնք կատաղաբար Աբատաշեսի վրայ կը վազէին՝ Գիսակ անունով քաջ նախարարը առաջ նետուեցաւ ու արգիլեց իրենց յարձակմունքը, ու ինքը գեղեցիկ ու գովելի սիրասրտութեամբ մեռաւ՝ գլխուն կէսը կորնցընելով. սասնկ կարճութեամբ ինչուան իրիկուն պատերազմելով բոլոր Երուանդայ զօրքը ցրուեցին. իսկ ինքը Երուանդ հազիւ կրցաւ Երուանդաշատ փախչելով ազատիլ: Երկրորդ օրը հրաման ըրաւ Աբատաշէս որ մեռելները թաղեն. և քիչ մը զօրքերը հանգչեցընելէն եաքը գնաց Երուանդաշատի վրայ ու քաղաքը առաւ: Երուանդ իր որոգայթաւոր պալատին մէջ պահուըտած ըլլալով, գինուոր մը գտաւ զինքը ու զարկաւ սպաննեց քսան տարի թագաւորելէն վերջը: Սասնկով լմընցուց Երուանդ իր թագաւորութիւնը, որուն վրայ

յայտնի կը տեսնուի որ անիրաւութեամբ թագաւոր եղողը ոչ երբեք կրնայ խաղաղութեամբ թագաւորել, թէպէտ և գէշ մարդ ալ չըլլայ ու շատին սիրելի, ինչպէս էր Երուանդ. Աբատաշէս փառաւոր գերեզման շինել տուաւ Երուանդայ վրայ՝ մօր կողմանէ Աբշամունի ըլլալուն համար (89):

7. Երուանդայ մեռնելէն վերջը Սմբատ թագաւորական գահին մէջ փնտռելով՝ գտաւ Սանատրուկայ թագը, ու բոլոր Հայոց վրայ թագաւոր ըրաւ զԱբատաշէսը. Աբատաշէս թագաւոր ըլլալուն պէս՝ Մարտց և Պարսից զօրքերը եաւ խաբեց շատ պարգևներ տալով անոնց. Աբգամն ալ, ինչպէս որ խոստացեր էր, իրեն երկրորդը ըրաւ, ուրիշ շատ պատիւներով ու հարստութիւններով: Նոյնպէս Սմբատն ալ շատ պատիւներով մեծարելէն եաքը՝ ընդհանուր ապստամբութեան պատրաստ տեսնելով զարատես տան տէրունին և ամեն պաշտօնատարից վերակացու. ուրիշ ամեն իրեն բարեբարեացուն ալ իրենց արդեանցը համեմատ պատիւներ ու պարգևներ տուաւ:

8. Այնկէց եաքը Աբատաշէս հրամայեց Սմբատայ որ երթայ Երուանդայ Երուազ եղբայրը սպանանէ. Սմբատ ալ կատարեց հրամանը, ու բոլոր անոր ունեցած հարստութիւնները Աբատաշէսի բերաւ. Աբատաշէս ալ անոնց վրայ շատ անգին բաներ աւելցընելով Սմբատայ տուաւ որ Վարեհի տանի՝ ի շնորհակալութիւն և՝ ի փոխարէն անոր ըրած բարեացը:

7. Աբատաշէս ինչպէս թագաւոր պսակուեցաւ ու ինչ փառքի հասուց զՍմբատ և իրեն ուրիշ սիրելիները.

8. Երուազ ինչպէս մեռաւ.

9. Արտաշէս երբոր իրեն ազնիւ բնութեամբը ամենուն սիրելի եղաւ և ամէն բան կարգի դրաւ, սկսաւ ուսումնական և արուեստին բաներուն ուշ դնել. Երասխ և Մեծամօր դեռերուն քով Արտաշատ քաղաքը մեծցուց ու զարդարեց, մեծամեծ պալատներ շինելով, և հոն փոխադրեց իր աթոռը: Ինչպէս իր տաճիկը, ինչպէս կ'ըսէ Խորենացին, կամուրջ, հաւակ և ուրիշ ասոնց նման բաներ խիստ անհատուր էին. բոլոր Արտաշէս շինել սըկսաւ, վարձ խոստանալով անոնց որ նոր նոր գիւտեր գտնան: Այլ և այլ տեղերէ գաղթականներ բերելով բոլոր Հայաստանը բազմամարդ ըրաւ. երկրագործութեան վրայ ազգին մէջ այնպիսի սէր ձգեց, որ ինչպէս կ'ըսէ Խորենացին՝ Հայաստանի մէջ ափ մը տեղ չկար Արտաշէսի ժամանակ որ մշակած չըլլար, ինչպէս նաև լեռներուն վրայ ալ, բոլոր երիվերը այլ և այլ տահմանները բաժնեց՝ տահմանագլուխները կոմոյներ կանգնելով: Ամէն գիտութեանց և արհեստներու վարժարաններ բացաւ. և տէր ասոնց բաներովս ոչ իր ազգին միայն սիրելի եղաւ, հապա նաև Պարսիկք, Մարք և ուրիշ ազգերը լսելով իր նախանձեին Հայաստանի գլուխ չելի վիճակին վրայ, և շատերն ալ Հայաստան կուգային:

10. Երբոր Արտաշէս այսպիսի բարեկարգութեանց եռեռ էր, Ալանները ուրիշ լեռնցի ազգերու հետ միաբանած Հայաստան վրդեցին. բայց Արտաշէս բազմութեամբ զօրաց վրանին երթալով, պատերազմի առնն Ալանաց Թագուհորին որդին

գերի բռնեց. ասոր պատճառաւ սկսան հաշտութիւն խնդրել Ալանները Արտաշէսէն. բայց անիկայ չուներ առնելը, ինչուան որ Ալանաց Թագաւորին Սաթենիկ անուանով աղջիկը աղաչելով Արտաշէսի սիրոյը վաստակեցաւ. որով Արտաշէս հաշտութիւն ընելով արձակեց Թագաւորին որդին, ու իրեն Թագուհի ըրաւ Սաթենիկը:

11. Արտաշէս որչափ որ կը ջանար ուրիշի թըշնամութեան պատճառ չըլլալ, այնչափ ալ ինքը վտանգ ունեցաւ իր որդեցոյը կողմանէ, վասն զի վեց որդի ունէր՝ որ են Արտաւազդ, Վրույր, Մաժան, Տիրան, Զարեհ, Տիգրան. ասոնք ընդհանրապէս իրարու և ուրիշներու պատուոյն վրայ նախանձելով՝ խռովութեանց պատճառ եղան. բայց ամենէն աւելի Արտաւազդը բնութեամբ տաքարիւն, հպարտ ու նախանձոտ ըլլալով Արքայից վրայ ամբաստանութիւններ ըրաւ ու անիրաւ սեղ սպաննել տուաւ, բոլոր անոր ցեղին երեւելի մարդիկը թրե անցուց, ու ինքը առաւ անոր իշխանութիւնը: Նոյնպէս նաև Ամբաստայ վրայ նախանձելով կ'ուզէր սպաննել. ասս բանս երբոր լսեց Արտաշէս սաստիկ խռովեցաւ և չէր գիտեր ինչ ընելիքը. բայց հայրենասէրն և մեծախորհուրդն Ամբաս իր կռմանէ յօժարամիտ հրաժարելով սպարապետութեան պաշտօնէն ամենայն խռովութեանց առաջը առաւ, և Արտաւազդ իր ամբարտաւանութեան վախճանին հասնելով Ամբասին տեղը սպարապետ եղաւ: Տեսնելով ասս բանս մեկալ եղբայրները սկսան նախանձիլ Արտաւազդայ վրայ. Արտաշէս ալ ասս իրենց նախանձը և խռովութիւնը դադրեցնելու մտքով, Վրույրը որ խելացի մարդ էր, Թագաւորական տանը հազա-

9. Արտաշէս ինչ բարեկարգութիւններով զարգարեց զՀայաստան ու ինչ փոյթ ունեցաւ ուսմանց և արուեստից.

10. Ալաններուն ինչպէս յաղթեց Արտաշէս ու ինչ կերպով հաշտութիւն ընելու ջլջաւ.

11. Արտաշէս քանի որդի ունեցաւ ու ինչ վախեր քաշից անոնցմէ:

թագէտ գրաւ, Մաժանը քրմապետ. իսկ զօրքը գլխաւոր չորս գունդ բաժնեց. Արևելեան՝ որ Արտաւազդայ յանձնեց, Արևմտեան՝ որ Տիբանայ տուաւ, Հարաւային՝ որ Սմբատայ յանձնեց, ու Հիւսիսայինը Զարեհի:

12. Երբոր տեսաւ Արտաշէս որ ամէն բան կարգի մէջ է՝ ջուզեց վճարել Հռովմայեցւոց սովորական հարկը, ասպատճառաւ բարկացաւ Տրդայնոս ու շատ զօրք խաբեց Հայոց վրայ: Առաջ Արտաւազդ դիմացին ելաւ արևելեան ու հիւսիսային զօրքովը, բայց չկրնալով դէմ դնել Հռովմայեցւոց՝ երբոր սասակի պիտի յաղթուէր, պատերազմին վերջերը հասաւ Սմբատ հարաւային գնդովը, ու քաջութիւն պատերազմելով յաղթեց Հռովմայեցւոց, և անոնց եւեին խնալով հալածեց Հայաստանէն դուրս: Երբոր ասոնք իմացաւ Տրդայնոս կայսրը, անհիւ զօրքով սկսաւ անձամբ Արտաշէսի վրայ գալ. ուսոի մեկնեն Արտաշէս փութայ շատ ընծաներով դիմացը ելաւ և Տրդայնոսի յաստուծ ընկալաւ բոլոր հարկը տալով:

13. Անկէ քանի մը տարի ետքը Արտաշէս Մարաց կողմերը գացած ըլլալով հիւանդացաւ. անոր համար մեկնեն Բակուրակերտ աւանը դարձաւ, ու չկրնալով աւելի առաջ գալ՝ մեռաւ հոն քառասունըմեկ տարի թագաւորելէն ետև: Փառաւոր հանգիստներ ըրին Արտաշէսի թաղմանը՝ ինչպէս որ կ'ատորպէդ Խորենացին Արիստոն Փիլոպատրին խօսքերէն առնելով. « Դագաղքն էին ոսկեզինք, գահոյքն և անկողինք բեհեզեայ, և պատմուճանն

12. Ի՞նչ պատերազմի առիթ ունեցաւ Արտաշէս Հռովմայեցւոց հետ ու ինչպէս նորին հաշտուեցաւ.

13. Արտաշէս ինչպէս մեռաւ ու ինչ հանդիսաւոր թաղումն ըրին իրեն.

որ զմարմնոյնէ՝ ոսկեթել. թագ կապեալ՝ի գլուխն, և զէնն ոսկւով առաջն եդեալ »: Անկէց վերջը կ'ատորպէդ պաշտօնատարց կարգը, և թէ ինչպէս բոլոր ազգին թէ ամենաժողովուրդն ու մեծ ասպատճառ եղաւ Արտաշէսի մահը, և թէ ինչպէս շատ մարդիկ իրենք զիրենք կամաւորապէս զոհ ըրին՝ ողջ ողջ Արտաշէսի գերեզմանը երթալով: Անկարելի բան է որ մարդ ասպատմութիւնը կարդայէն վերջը կարենայ իր աղջին հետ մէկտեղ վշտակից ու ցաւակից չըլլալ որ այսպիսի թագաւորէ մը զրկուեր է, որ ամենուն իրաւցընէ հայր, Հայաստանի բարերար, աղջին պարծանք, ամենուն վշտակից, ամենուն երջանկութեանը պատճառ եղեր է:

14. Արտաշէսի հետ մեկտեղ գովութեան արժանի է նաև Սմբատ Բագրատունին ասպէսը, որ շատ երևելի եղաւ իրեն քաջութեամբը, ինչպէս որ տեսնուեցաւ պատմութեան մէջ: Սմբատայ տիբասիրութիւնը, հասարակաց օգուտը մտածելը՝ առանց իր շահը մտածելու, որով սպարապետութենէն կամաւ հրաժարեցաւ, որպէս զի խռովութիւն չըլլայ. հաւատարմութիւնը, վեհանձնութիւնը, և ուրիշ կատարելութիւնները ոչ միայն իր յիշատակը անմահացնելու արժանի կ'ընեն, այլև աշխարհքիս մեծամեծ մարդկանց ու մեծանուն սպարապետաց կարգը կ'անցընեն զինքը: Սմբատ ինչուան խոր ծերութիւն տարելով խաղաղութեամբ մեռաւ (128):

14. Ի՞նչ առանձին գովեստից արժանի է նաև Սմբատ Բագրատունին.

ԴԱՍ ԺԴ.

Թագաւորք վերին Հայոց.

1. Թէպէտ և վերին Հայոց Թագաւորութիւնը պզտի և մանաւանդ բան ըլլալով, մեր ազգին պատմութեանը հետ խիստ այնչափ վերաբերութիւն մը չունի, բայց եղած գործողութիւնները Հայաստանի մէկ մասին մէջ ըլլալով, ան պատճառաւ համառօտ յիշատակութեան մը արժանի են. մանաւանդ որ Հռովմայեցւոց պատմիչները Հայոց պատմութեան աւելի ասկէ մասին վրայ տեղեկութիւն ունենալով, վերին Հայոց գէպքերը բաւ մը պատմութեանց հետ կը շփոթեն, որով մեծ մեծ սխալանաց մէջ կ՚ինկան: Ուստի ան ուղղութիւն և չորս տարուան պատմութեան ծուռը դիտալը հարկաւոր է՝ անոնց սխալը ուղղելու համար:

2. Երբոր Անտոնիոս Հայաստանի տիրեց՝ վերին Հայքը Մարաց տուաւ, ինչպէս որ առաջ ալ ըսինք: Արշաւիր Պարսից Թագաւորը Աբտաշիսա անունով փոխարքայ մը դրաւ ան կողմերուն, որուն բռնութիւններուն չդիմանալով Հայերը՝ Օդոստոսէն խնդրեցին որ Արտաւազդայ տղան փոքր Տիգրան ըսուածը իրենց Թագաւոր դնէ: Օգոստոս կատարեց խնդիրքնին. բայց երբոր Տիգրան մեռաւ, Հռովմայեցիք անոր Երուազ եղբայրը խաւ-

2. Անտոնիոսի Հայաստանի տիրելէն ետքը ո՛րպիք Թագաւորեցին վերին Հայոց յաջորդաբար ինչուան Ջենոն.

բեցին. Հայերը չընդունելով զանիկայ՝ տեղը Տիգրան անունով ուրիշ իշխան մը դրին, որ Տիգրան կրտսեր ըսուեցաւ: Իրեք տարիէն Տիգրան կրտսերն ալ վռընտեցին ու Ասպրամ անունով Արծրունեան Թագաւորեցուցին, որ ամենուն սիրելի և հաճոյ եղաւ: Երբոր ան ալ մեռաւ, Պարսից Թագաւորը իր Արշէզ որդին Թագաւորեցուց, բայց Հռովմայեցւոց կամացը դէմ ըլլալով՝ Հռովմայեցիք հալածեցին զինքը ու Պոնտոսի Թագաւորին Ջենոն որդին Թագաւորեցուցին՝ որ ինչուան իր մահը խաղաղութեամբ Թագաւորեց:

3. Ջենոնին մեռնելէն ետքը Արտաշէս Պարսից Թագաւորը իր Արշակ անունով տղան Թագաւոր դրաւ Հռովմայեցւոց կամացը դէմ. անոր համար Տիբեր կայսրը Վրաց Թագաւորին Միհրդատ եղբայրը յորդորեց որ Արշակը վռընտէ ու ինքը Թագաւորի վերին Հայոց: Միհրդատ սակայն կերցընելով սպանանել տուաւ Արշակը ու ինքը աեղն անցաւ. բայց քանի մը տարիէն Հռամիզդ իր եղբօրը տղան՝ նախարարաց սիրտը իրեն քաշելով, ու հօրմէն ալ օգնութիւն առած, եկաւ Միհրդատը իր ընտանեօքը սպանել տուաւ ու ինքը անգթութեամբ Թագաւորեց: Երբոր լսեց աս եղած բաները Պարսից Թագաւորը, շատ զօրքով Հռամիզդին վրայ եկաւ, ու զանիկայ վռընտեց և իր Տիրիմ եղբայրը աեղը դրաւ: Հռամիզդ եաևէ եղաւ նորին Պարսիկներէն հալածելու, բայց նեղը մանելով տարաւ փախչիլ իր Ջենոբիա կնկանը. բայց Ջենոբիա տղաբերքի մէջ ըլլալով ճամբան սաստիկ ցնաւութեան, որով ալ չէր կրնար առաջ երթալ. ուստի խնդրեց Հռամիզդէն որ զինքը

քը սպաննել. Հռամիզդ ալ վախէն ու յուսահատութենէն խենդեցած ի սէն ըլլալով, զարկաւ սրտը ու վիրաւորելով գետը ձգեց զինքը. իսկ ինքը փախաւ գնաց Վրաստան: Հոն մօտիկները գտնուած քանի մը դեղացիները տեսնելով կիսամեռ ղՋէնոբիան, հանեցին գետէն ու վերքը պատելով առողջացուցին. վերջը Տիրիթէն սարին՝ որ մտերնաւոր խնամքով կը պահէր զինքը: Այս գեղքս Եբօսպացւոց խիստ ծանուցեալ ըլլալով, կը կարծեն որ Ջենոբիա մեր Սրշակունի Թագուհիներէն մէկն ըլլայ:

4. Ներսէն կայսրը լսելով Պարսից տիրելը վերին Հայոց վրայ, Կորբուլոնն անուանով զօրավարը խաբէից շատ զօրքով որ Տիրիթը վռնտէ հոնկէ. Կորբուլոն եկաւ յաղթեց Պարսից, Տիրիթն ալ փախուց ու անոր տեղը Տիգրան կրտսերին եղբօրորդին Թագաւոր դրաւ, որ ըստ ետուս Տիգրան կըրտսերագոյն. իսկ ինքը Թագուց վերին Հայքը ու Աղբեսեան գնաց: Թարեհ նորէն շատ զօրք ժողված վազեց վերին Հայոց վրայ ու շատ յաղթութիւններ ընելով սկսաւ առաջ երթալ. ան ատեն կայսրը Բեռոս անուանով քաջ զօրավարը խաբէից որ պատերազմը ընդունի: Սակայ Կորբուլոնին հետ միացած երկար ատեն պատերազմեցաւ Պարսից հետ. բայց վերջապէս գլուխ չկրնալով ելլել յաղթութեան ու հաշտութիւն ըրաւ Պարսից հետ, ասպայմանով որ վերին Հայքը Պարսից ձեռքը մնայ, միայն Թէ Թագաւորը՝ կայսրը անուանէ ընտիէնները զոր որ ուզեն: Ուստի նորէն Տիրիթ Թագաւորից ու Հռոմ գնաց. ուր որ կրկին անգամ Թա-

4. Ի՞նչ պատերազմներ ըրաւ Ներսէն կայսրը Պարսից հետ վերին Հայոց Թագաւորութեանը համար ու ինչպէս հաշտութիւն եղաւ մէկերնին.

գաւոր պահուեցաւ Ներսէն կայսրէն մեծ հանգիստով ու փառաւորութեամբ:

Տիրիթ ինը տարի Թագաւորելէն ետքը երբոր ինքը մեռաւ՝ վերին Հայոց Թագաւորութիւնն ալ վերջացաւ. վասն զի Երուանդ Միջագէտքը Հռովմայեցւոց տալով, ինքը վերին Հայոց Թագաւորութիւնը առաւ ու իր մահին հետ միացուց:

ԴԱՍ ԺԵ.

Արտաւազդ Բ. Տիրան Ա. Տիրան Գ. և վաղարշ:

1. Արտաւազդայ խիստ և կատաղի բնութիւնը որ արդէն հօրը կենդանութեան ատեն ալ տեսնուեր էր՝ Թագաւորելովը ամենևին տարբերութիւն մը չըրաւ: Եղբայրները Ա. յրարատեան գաւառէն վռնտեց, միայն Տիրանը քովը պահեց՝ որովհետև ինքը տղայ չունէր: Արտաւազդ ասանկով երկու տարի Թագաւորելէն վերջը, օր մը որսի մէջ կատաղաբար ձին վազցնելու ատեն խոտունկ փոսի մը մէջ ընկաւ ու կոտրուեցաւ:

2. Ասոր վրայ առասպել մը հանեցին որ կ'ըսէին Թէ, Արտաշէսի Թաղման ատեն երբոր շատ հոգի իրենք զիրենք կամաւորապէս Արտաշէսի գերեզմանը կը նետէին՝ ըսեր է Արտաւազդ հօրը, «Դու գնացիր և բոլոր երկիրը և մարդիկները քեզի հետ

1. Արտաւազդ ինչպէս ըրաւ իր Թագաւորութիւնը ու ինչպէս մեռաւ.

2. Արտաւազդայ մահուանը վրայ ինչ առասպել եղաւ Հայոց մէջ.

տարիը, եա աւերակներուն թագաւորեմ»: Ա՛ս պատճառաւ անիծեր է Աբրահամ զինքը ըսելով. «Եթէ գոս յորս հեծցիս յայտան ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յայտան ի վեր ի Մասիս, անդ կացցես, և զյոյս մի տեսցես»: Ահակ կը կարծէ եղեր ռամիկը Թէ Աբրահամդ մուրճ պրի մը մէջ շղթաներով կապած է, քանի երկու շուն կեցած՝ միշտ կը կրծեն շղթաները որ Աբրահամ ելլէ ու աշխարհքս կործանէ. բայց դարբիններուն կռանահարութեան ձայնէն կը զօրանան եղեր շղթաները: Ա՛ս պատճառաւ ինչուան նաև Խորենացւոյն Ժամանակը ագէտ դարբիններ կերակի օրերն ալ չորս հինգ անգամ սաղը կը ծեծեին որ ան շղթաները չմեռնին:

3. Տիրան որ Աբրահամդայ քոյրն էր՝ եղբօրը տեղը յաջորդեց, բայց անոր պէս Թագաւորութեան բաներուն անփոյթ ըլլալով, աւելի զբօսանքի և որսի եռանդ եղաւ, մանաւանդ որ լաւ ձի հեծնել գիտէր: Երևելի գործք մը չգրաւ, ու քսանը մէկ տարի խաղաղութեամբ Թագաւորելէն վերջը, Ամման երթալու առին ձեռն հիւս մը վրան խնդալով՝ տակը մնայ ու խղդուեցաւ:

4. Տիրանայ տեղը յաջորդեց Տիգրան Գ. իր պզտիկ եղբայրը Պարսից Պերոզ Թագաւորին հաճութեամբը: Երբոր Անտոնիոս Պիոս Հռովմայեցւոց կայսրը մեռաւ, Պերոզ ու Տիգրան միաբանած՝ Ասորւոց երկիրը եղած Հռովմայեցւոց վրայ վազեցին ու մեծ կոտորած ըրին. անկէ ի՛ուզէին Կապադովկիոյ վրայ ալ վազել: Աւերիանոս Կապադովկիոյ կուսակալը, վախնալով պատերազմին անյաջողութենէն՝ պատգամ Հարցուց. քրմապե-

3. Աբրահամդայ ով յաջորդեց.
4. Տիգրան Գ. ով է ու ինչ պատերազմ ունեցաւ Հռովմայեցւոց հետ.

րը ամէնայն կերպով բարեյաջողութիւն պատեհ տալմի գուշակեց. անով զօրացաւ Աւերիանոս, աներկիւղ ու թեթև պատրաստութեամբ Հայաստան վազեց. բայց Հայերէն ու Պարսկներէն չափաւոր յաղթութեամբ ինքն ալ ապաներուեցաւ: Աբգիսոս կայսրը երբոր լսեց Հռովմայեցւոց կրկին անգամ յաղթութիւնը, Պաղկիոս իր կայսերակիցը խրատեց մեծ պատրաստութեամբ. բայց անիկայ գեռ չհասած՝ Տիգրան փոխանց փոքր Հայոց սիւնիքը. հոն կնկան մը չորքորթութիւններէն խաբուելով գերի բռնուեցաւ, ինչուան որ Պաղկիոս եկաւ ու բոլոր թշնամիները ապստամբեցուց. վերջը տեսնելով զՏիգրան՝ որ գերի ընկեր է, խղճայ վրան և ազատեց զինքը: Պաղկիոս Տիգրանայ կերպարն և գեղեցկութեանը հաւնեցաւ, խիստ սիրեց զինքը ու հետը կապուեցաւ սիրտը. անոր համար նորէն Թագաւորեցուց ու շատ պատուով Հայաստան դարձուց: Պաղկիոս իրեն սիրոյն նշան Արտէմի անունով աղջիկը, որ իր ազգականներէն մէկին էր, Տիգրանայ կնութեան տուաւ: Պարթեւաց բանակորս չկրցաւոյ պահելու համար ստակ կոխել տուաւ ան կերպով. ինքը Պաղկիոս գահը նստած՝ Տիգրանը Թագաւոր կը պսակէ Հայոց. վրան ալ տասնի գրած. «Թագաւոր Հայոց տուեալ»: Տիգրան Հայաստան գտնալով, խել մը տաճն ալ տպրեցաւ ու քառասունքմէկ տարի Թագաւորելէն ետքը մեռաւ, տասնից քաղաքութեան յիշատակ մը ձգելու (193):

5. Տիգրան Գ֊ին յաջորդեց անոր պզտիկ որդին Վաղարշ, որ առջի իրքերին պէս գբօսանաց եռանդ ջրլալով՝ շատ չենութիւններ ըրաւ, միանգամայն հայրենասէր ու քաջ եղաւ. Վաղարշեան քա-

5. Տիգրան Գին ով յաջորդեց ու ինչ կոմսնեն երևելի եղաւ Վաղարշ.

ղաքը չհնազանդեցաւ ան տեղը՝ ուր ինքը ծներ էր մօրը Ճամբայ ընելու առնը. վարդապետ աւանը պարսպով պատեց ու աթոռը հոն փոխադրեց, անունն ալ Վաղարշապատ դրաւ: Ասոր թագաւորութեան քսաներորդ տարին Հիւսիսային ազգերը սկսան բազմութեամբ Հայաստան վազել. Վաղարշ ալ ժողվեց բոլոր իր զօրքերը և քաջութեամբ պատերազմելով հալածեց զանոնք հեռ մը տեղ՝ շատ մարդ ջարդելով, բայց թշնամիները նորէն միաբանած, աւելի կատաղութիւ վազեցին Հայաստան: Հայերը սաստկապէս պատերազմելով նոյնպէս երկրորդ անգամուն ալ վանեցին ան վայրենի ազգերը. բայց ափսո՛ որ Վաղարշ զարնուելով մեռաւ՝ զոհ ըլլալով իր ազգին օգտին համար, որով անունն ալ անմահացուց, ինչպէս նաև կ'ըսէ Խորենացին. Թէպէտ և ինքը մեռաւ, բայց դեռ կենդանի է իրեն բարի անուամբը:

ԴԱՍ ԺԶ.

Խոսրով Ա.

1. Խոսրով Ա. Թագաւորելուն պէս ուզեց իր հօրը մահուան վրէժը առնել Հիւսիսային ազգերէն. ուստի բոլոր զօրքերը ժողվեց և անոնց վրայ պատերազմի ելաւ, բոլորովին ընկճեց ան զօրաւոր ազգերը անոնց ընտիրներուն մէջէն հարիւրին մէկ պատանդ առաւ, իրեն քաջութեանը յիշատակ յուշարձան մը կանգնեց, ու այնպէս փառաւոր յաղթութեամբ Հայաստան դարձաւ: Խոսրով ազգը ծաղկեցընելու Նպատակով

1. Խոսրով Ա. Թագաւորելուն պէս ինչ ըրաւ.

լցուած՝ սկսաւ շատ չհնազանդելով զարդարել Հայաստանը, և ան շինութեանց համար քրիստոնեաները կ'աշխատցընէր. շատ քրիստոնեաներ ալ հալածանքի համար նահատակեց:

2. Այն միջոցին Անտոնիոս Կարակալլա Հռովմայեցւոց կայսրը Միջագետաց կողմերն եկած ըլլալով Խոսրով առջի բարեկամութիւնը հաստատելու մտքով անոր հետ տեսնուելու գնաց. բայց կայսրը քովը պահեց զինքը որպէս զի գիւրաւ կրնայ Հայաստանի սերեր Հայերը լսելով տրտնջանք՝ անանկ բարկացան որ մէկէն պատերազմի պատրաստուեցան. վախցաւ Կարակալլա, ու շատ պատուով արձակեց քովէն Խոսրովը:

3. Խոսրովու թագաւորութեան առնը Պարսից վրայ կը թագաւորէր Արտաւան, որ ազգաւ Արշակունի ըլլալով մանաւանդ սէր և բարեկամութիւն ունէր Խոսրովու հետ: Արտաշիր անունով Պարսից նախարարներէն մէկը ուրիշ նախարարները իր կողմը քաշեց, շատ զօրքով Արտաւանին վրայ պատերազմի ելաւ, և տարին մը չտի պատերազմելէն վերջը սպանեց զինքը: Ա՛ս բանս երբոր իմացաւ Խոսրով շատ ցաւեցաւ Արտաւանին մահուանը վրայ, և կը մտածէր որ վրէժը առնէ Արտաշէսէն. մէկէն զօրք ժողվեց Այրարատից, Վրաց, Ալփնաց, Կասպից կողմերէն, ու անթիւ բազմութեամբ Արտաշիրն վրայ պատերազմի ելաւ: Մինչ յաղթող գտնուեցաւ մեծն Խոսրով, տասը տարին չտի պատերազմելով ինչուան Հնդկաստան վռնտեց Արտաշիրը. գրեթէ բոլոր Պարսկաստանի տի-

2. Խոսրով Կարակալլային ձեռքէն ինչպէս խաղսեցաւ.

3. Ինչէ՞ն ծագեցաւ Խոսրովին Պարսից հետ ունեցած պատերազմը, ու Խոսրով ինչպէս յաղթեց.

բեց, Աւարպատակաւն մէջ ալ քաջութիւն մը չունենալ՝ Դավիթէ անուշով, այսինքն դո՛ ի՛նձ Աբեսաղոմ (253):

4. Աբեսաղոմ փորձով տեսնելով թէ չիրնար Խոսրովու յաղթել, և գիտնալով թէ քանի որ Խոսրով կենդանի է՝ իր թագաւորութիւնը և ինքը հանգստութիւն պիտի չգտնէ, մեծամեծ պարգևներ ու պատիւներ խոստացաւ անմարդուն որ ըլլ Խոսրով սպաննէ: Նախարարներէն մէկն ալ չհամաձայեցաւ առ բանս յանձն առնելու. միայն Աշնակ անուշով նախարարը, որ ազգաւ Պարթև էր, սիրով յանձն առաւ կատարել Աբեսաղոմի կամքը. ուստի անով առիթով Հայաստան եկաւ, բանակով թէ Աբեսաղոմին ձեռքէն փախայ և Խոսրովու կ՚ապաւինի: Աշնակ իր կեղծաւորութեամբը ամենուն սիրելի ըլլալով, շատ մեծ պատիւներ գտաւ Խոսրովէն և շատ բանի մէջ անոր հետ էր. անգամ մըն ալ օրսկ առեն Աշնակ և իր եղբայրը մեկտեղ խօսք դրած՝ զարկին Խոսրովը չարաչար վիրաւորեցին, և իրենք ձիերնին հեծան ու սկսան փախչիլ. մեկէն հասնին ընկան Խոսրովի մարգիկը. և երբոր զանոնք պիտի բռնէին, անոնք իրենք զիրենք դեռ նետեցին ու խղդուեցան: Խոսրով դեռ չմեռած՝ հրաման տուաւ որ Աշնակայ ընտանիքը բոլոր թրէ անցընեն՝ որոնցմէ միայն երկու տղայ ազատեցաւ, մեկը Սուրէն՝ որ Պարսկաստան փախուցին, մեկալը մեր սուրբն Գրիգոր Լուսաւորիչը որ Կեսարիա տարին: Այսպէս Խոսրով քառասունը ութը տարի թագաւորելէն վերջը, բոլոր Հայերը մեծ սուգի մէջ թողուվ մեռաւ (258):

5. Աբեսաղոմ լսելով Խոսրովու մահը շատ ու-

4. Աբեսաղոմ ինչպէս կրցաւ Խոսրովը սպաննել տալ.

5. Աբեսաղոմ ինչպէս Հայաստան մտաւ.

րախացաւ, մեծամեծ հանգիսներ կատարեց, ու շատ զօրքով Հայաստանի վրայ վազելսկաւ: Նախարարները իրենց սիրելի թագաւորին մահուանը վրայ տրտմած ու չհոգեծած, մեկէն չկրցան Աբեսաղոմի դէմ գնել, բայց գովելի միաբանութեամբ մը շուտով օգնութիւն ուղեցին Հռովմայեցւոց Վաղերիանոս կայսրէն: Հռովմայեցւոց զօրքը Հայաստանէն գուրս այլ և այլ երկիրները ասպատակութիւն ընելով ուշացան Հայոց օգնութեան գալու. ան միջոցին ալ Վաղերիանոս մեռաւ, որով յուսահատեցան Հայերը Հռովմայեցւոց օգնութենէն, Աբեսաղոմ ալ առանց շատ գժուարութեան Հայաստան մտաւ: Մեկէն հրաման տուաւ որ Խոսրովու ցեղը թրէ անցընեն. անոնց մէջէն միայն Տրդատ անուանով տղան ազատեցաւ. Աբեսաղոմ Մանգակունին զՏրդատը Կեսարիա մեծցնելէն վերջը՝ Հռովմ տարաւ: Ընդհակառակ ազատեցաւ նաև Տրդատայ Խոսրովիդուխտ անուանով քոյրը՝ Օտա նախարարին ձեռքովը:

6. Աբեսաղոմ ընդհանրապէս նախարարները իրենց պատուոյն մէջը պահեց. բայց Մանգակունին զեղը բոլոր թրէ անցընել տուաւ՝ խմանալով որ Տրդատը փախցընողը Մանգակունի է: Սանտիով քսան տարի ալ Հայոց վրայ թագաւորեցին վերջը մեռաւ Աբեսաղոմ, ու տեղը անցաւ իր Շապուհ որդին, ինչպէս որ Տրդատ եկաւ Հռովմայեցւոց զօրքովը ու նորէն տիրեց իր հայրենի ժառանգութեանը:

5. Աբեսաղոմ Հայոց հետ ինչպէս վարուեցաւ ու քանի՞ տարի թագաւորեց.

ԴԱՍ ԺԱ.

Տրպատայ քաջութիւնները ու թագաւորելը։

1. Տրդատ երբոր Հռոմէ գնաց, Լիկիանոս ա-նուանով մեծ իշխանին ծառայութեան մէջ մնաւ՝ ա-ռանց իմացընելու իրեն ով ըլլալը. հոն շատ քա-ջութիւններ ընելով և միշտ հաւատարիմ դանուե-լով Լիկիանոսին շատ սիրելի եղաւ։ Իր գլխաւոր քաջութիւնները, որով թագաւորութեան արժա-նի եղաւ,ասոնք են։ Անգամ մը ձիրնթացի առեն թշնամւոյն կառքը վարպետութեամբ մը առաջ անցնելով, զինքը կառքին վար ձգեց. Տրդատ մէկէն վազեց հասաւ կառքին եաեկէն ու բռնեց կառ-քը կեցուց։ Անգամ մ՚ալ երկու վայրենի ցուլե-րու հետ կռուելու առենեղջիւրներէն բռնեց թօթ-վեց ու փրցուց։ Պառոս կայսեր զօրքը երբոր ա-պըստամբեցան սովի պատճառաւ պատերազմի ա-ռեն, ու զինքը և իշխանները սպաննեցին, Տրդատ Լիկիանոսի դրանն առջևը կեցած՝ չէզոքուց որ մէկը ներս մտնէ։ Պատերազմի առեն ձիերուն խոտը լմնցած ըլլալով, Տրդատ պարսպէն անդին անցաւ, ու հոն տեղի դիզած խոտերը՝ պահապաններով ու հներով մէկտեղ պարսպէն ասդին նետեց։

Դիոկղետիանոս Պոմպացւոց Հռչէ թագաւորին դէմ պատերազմի ելեր էր, որ խիստ քաջ և ու-ժով մարդ էր. Հռչէ առաջարկեց Դիոկղետիանո-սի որ երկուքը առանձին մենամարտութիւն ընեն և ով որ յաղթէ՝ յաղթութիւնը անոր կողմը սե-

1. Հռոմայեցիք զՏրդատը իրեն ինչ քաջու-թիւններուն համար թագաւորեցուցին.

պուի։ Դիոկղետիանոս ինքը անձամբ չէր կրնար Հռչէին դիմացը ելլել, և ոչ բոլոր զօրացը մէջ ալ դանուելացաւ մարդ մը որ կարող ըլլար անոր դի-մացը ելլել. ան առեն Լիկիանոսի խորհրդովը Տըր-դատ Հռչէին հետ պատերազմելու բռնեց զինքը ու կապած Դիոկղետիանոսին դիմացը բերաւ, Դիոկղետիանոս առանելով Տրդատայ քաջութիւնը՝ ուզեց մեծ պատուոյ մը հասցընել զինքը. և երբոր իմացաւ թէ Խոսրովու Հայոց թագաւորին որդին է, մէկէն թագաւոր անուանեց զՏրդատ, ու շատ ընծաներ տալէն վերջը բաղմութեամբ զօրաց Հայ-աստան խաւրեց որ երթայ իր հայրենական թա-գաւորութիւնը ժառանգէ։

2. Տրդատ երբոր Կեսարիա հասաւ, մէկէն լ-մացուց նախարարներուն իր գալուստը. ուստի նախարարներուն շատը եկան Կեսարիա գնացին, ու զինքը փառաւորապէս ընդունելով կրկին ան-դամ պսակեցին Սմբատ Բագրատունին ձեռքովը (286)։

Տրդատ Կեսարիացէն բոլոր նախարարներով Երզնկայ եկաւ, ուր մանաւոր ընորհակալութիւն ըրաւ Աստուծոյ, որ ան կռապաշտութեան առենը Հայաստանի պաշտպան սեպուած էր, և սոխակ նաև զսուրբն Գրիգոր Լուսաւորիչը որ նոյնպէս Աստուծոյ նուէրը սայ. երբոր անկից յառնձն ջա-ռաւ, Տրդատ շատ ջրբարանքներ առաւ սրբոյն Գրիգորի. վերջը երբոր իմացաւ թէ անկից իր հայրը սպաննող Անակին որդին է, Աբրահառու մէջ խոր վերապ մը կար՝ հոն նետել տուաւ. իսկ իր բարերարութեան՝ այսինքն Սրսուաղդ և Օսոս նախարարներուն՝ հազարապետութեան պատիւ-

2. Տրդատ ինչ կերպով Հայաստան մտաւ ու ինչպէս Պարսից ձեռքէն խալսեց Հայաստանի այլև ապ քաղաքները.

տուաւ: Վերջը նախարարներէն ու Հայաստանի զանազան կողմերէն շատ մը ժողվելով, Հռովմայեցւոց զօրապետ հետ մէկ տեղ Հայաստանի այլ և այլ քաղաքներուն վրայ գնաց ու առաւ Պարսիկ իշխաններուն ձեռքէն. իրեք անգամ ալ Շապուհին հետ պատերազմելով՝ բոլորովին վռնտեց Հայոց գինքը Հայաստանէն: Այնկէց եաքը սկսաւ ամէն բան կարգի կանոնի դնել, ինչպէս էր առաջ, և բոլոր ազգը մեծ ուրախութեան մէջ էր՝ տեսնելով իր օրինաւոր կարգ թագաւորը:

3. Տրդատ այսպիսի փառաւոր յաղթութիւններով ուրախացած՝ հրաման խաչեց ամէն կուռ կռպտերուն ու քուրմերուն որ զոհերով նուէրներով պատուեն սատուածները, և ամէն տեղ գըտնուած քրիստոնեաները կամ ատնջելով սպանեն և կամ հաւատքին ուրացընեն: Երբոր ամէն սըրած հրամանները կատարուեցան, ուզեց իրեն թագուհի առնել Աչեանց թագաւորին Սչխէն անուն աղջիկը. աս բանիս համար հարսնախօսութեան զրկուեցաւ Սմբատ Բագրատունի ատպէտը. անիկայ ալ գնաց բերաւ գնա Սչխէնը: Տրդատ նախ հրամայեց որ Աբշահունի գրեն գինքը, վերջը Աբշահունի թագուհիներուն թագն ու ծիրանիները հագցընելով հետը տանեցաւ, և հարսանեաց հանդէսը շատ շքեղ եղաւ:

4. Այն միջոցին որ Տրդատ սասիկ հրաման հաներ էր քրիստոնեաները հալածելու՝ Գիսկղեթիա նոս կայսրէն Թուղթ մը եկաւ իրեն, որուն մէջ կ'խնդրեր կայսրը Հռիփսիմէ կուսին և իր ընկերաց Հայաստան փախչելը, և կրկին կրկին կը յանձ-

3. Տրդատ իրեն փառաւոր յաղթութիւններէն վերջը ինչ ըրաւ.

4. Տրդատ զՀռիփսիմէն ինչու սպանեց ու իր վրայ ինչ կերպարանափոխութիւն եղաւ.

նէր Տրդատայ որ փնտռէ գտնայ զանոնք, և թէ որ Հռիփսիմէին գեղեցկութեանը հետևի՝ իրեն կնութեան առնէ, տակա թէ ոչ Հռոմ խաբէ: Սէկէն ամէն տեսակ հնարք՝ի գործ դրաւ Տրդատ ու տեղ չմնաց որ ինգրտիներ չխաբէ. ուսկի քիչ առեներն գտան ան կուսանքը որ այդիի մը մէջ քաշուած կը ճգնէին վաղարշապատի քովերը: Տրդատ երբոր տեսաւ Հռիփսիմէին գեղեցկութիւնը հիացաւ, և շատ եաւէ եղաւ որ կարենայ Հռիփսիմէին համրերէ իրեն կին ըլլալու. բայց ամէն չարքը պարապը ելաւ, և ուզեց տանջանքով իրեն չար կամացը խոնարհեցընել զինյսը. և չկրնալով միտքը գործը առաջ տանել՝ բարկութենեն անդորմարար մեռցընել տուաւ Հռիփսիմէն և եաքը անոր ընկերներն ալ: Բայց անոր վրայ մեծ ցաւի ու տրտմութեան մէջ ընկաւ, և տեսնելով որ չկրցաւ աղջիկ մը յաղթել և իր փափաքին հասնիլ, քանի մը օրէն տրտմութիւնը փարատելու համար որսի ելաւ. և երբոր կառքով կ'երթար՝ յանկարծակի գիւտահաւ մը եկաւ ու խոզի կերպարանք մտնելով կառապետութեամբ կառքին վար ընկաւ և սկսաւ ինք զինքը խածնել, և անապատ անմարդաբնակ տեղերը քաշտելով չէր ուզեր որ քովը մարդ մտնեայ. նոյնպես նախարարներէն ոմանք ալ հարուածեցան՝ նոյնպիսի պատիժներով:

5. Երբոր բոլոր Հայաստան սուգի ու տրտմութեան մէջ էր սա երկնառաք պատիժներուն համար, և սարսափած չէին գիտեր ընելիքնին, օր մը հրեշտակ Աստուծոյ երևցաւ Տրդատայ Խոսրովիա գուխտ քրոջը, և խնդրուց իրեն որ ինչուան Աղա-

5. Գրիգոր Լուսաւորիչ ինչպես եղաւ վերապէն, ինչպես զՅոաւաւորը և հարուածեալ նախարարները բժշկեց ու ինչպես սկսաւ քրիստոնէութիւն խոթել Հայոց մէջ.

ֆայ որդին Գրիգորը խոր վիրապէն չելլէ՝ չեն կրնար հոգալ և մարմնոյ բժշկութիւն ստանալ: Այս տեսիլը ամենուն ծանրելի երևցաւ. բայց երբոր երկու օրուան մէջ հինգ անգամ նոյն բանը կրկնուեցաւ, ան ատեն Օասն նախարարը խաբեցին որ երթայ Գրիգորը վիրապէն հանէ (301):

Անհաւատ ու հեռաբերքիր մարդիկ անթիւ բազմութեամբ վիրապին չորս դին ժողվուած կ'սպասէին տեսնոր տեսարանիս վերջը տեսնելու. և տկար խելքին իրենց անհաւատութիւնը հաւատքի փոխուեցաւ, երբոր տեսան ու իմացան որ Գրիգոր՝ վիրապին մէջ երկընցուցած չուանը բռնելով շարժեց, և տասընչորս տարի անբարբառ անլուր մնացած ձայնը հնչեցուց թէ «Ողջ եմ»: Դուրս հանեցին զինքը, մկիէն բզքտած ու մքլոտած հագուստները փոխեցին, սեացեալ մարմինը լուացին ու մաքրեցին. երբոր վաղարշապատ կը բերէին, Թագաւորն ու հարուածեալ նախարարները սըրտի Գրիգորի դէմն ելան և բժշկութիւն կը խընդրեին. սուրբն Գրիգոր հոն մկիէն աղօթքի կեցաւ և զամենքն ալ լրիւ ողջոյնէն բժշկեց: Անկէ առաջ երթալով գնաց Հռիփսիմեան կուսանաց նահատակութեան տեղը. անոնց սուրբ մարմինները դիպակներով պատեց որ ինն օր բացօթեայ մնացեր էին առանց ապականելու: Վաթսուն օր միայն երբ ամենուն քրիստոնէական կրօնքը քարոզեց, ու անկէ ետքը ան սուրբ կուսանաց համար մատուռներ շինել տուաւ, որոնց համար Տրդատ անձամբ լեռնէն մեծամեծ քարեր կը բերէր. իսկ Սէֆէ խէն արևիկին ու Խոսրովիդուխտ հող և ուրիշ նիւթեր կը կրէին:

Այս բաներս լմնցընելէն վերջը՝ հոգին սուրբն Գրիգոր աղօթքի կեցաւ հարուածեալներուն հասմար որ բոլորովին բժշկուեցան. որովհետև առջի անգամուն ղազատացեր էին, իսկ երկրորդ անգամ

մուն մարմիններնուն այլանդակութիւնները ալ անցան: Ետքը սուրբն Գրիգոր ու Տրդատ գացին միաբան մեհեաններն ու կուռքերը կործանեցին, և ամեն տեղ քրիստոնէութիւնը հաստատեցին. և սուրբն Գրիգոր Կեսարիա երթալով Վկնդիոս պատրիարգէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ:

Երբոր Կեսարիայէն ետ կը դառնար, Դեմետր, Գիսանէ և ուրիշ շատ չաստուածներու կուստուն նեերը կործանեց. և Վաղարշապատ գալով՝ սիրտեց զՏրդատ, որ Յովհաննէս կոչուեցաւ: Վերջը շինեցին էջմիածնայ տաճարը և ուրիշ շատ եկեղեցիներ:

6. Ան միջոցներուն Հռոմայեցւոց Կոստանդիանոս թագաւորն ալ սրբոյն Սեղբեստրոսի ձեռքը քրիստոնեայ եղած ըլլալով, Տրդատ և սուրբն Գրիգոր Լուսաւորիչ Հռոմ գնացին խնդակցութեան համար. հոն շատ պատիւ գտան երկուքն ալ Կոստանդիանոս թագաւորէն և Սեղբեստրոս պապէն, ու մկրտեցին սիրով և բարեկամութեան դաշինք հաստատեցին գրով. ետքը սուրբն Սեղբեստրոս Գրիգոր Լուսաւորչին աթոռը պատրիարգական աթոռ անուանեց պատուոյ համար:

7. Տրդատայ իր թագաւորութենին հեռանալը լսելով Շապուհ Պարսից թագաւորը, յարմար առին սպեց Հայերէն վրէժը առնելու. անոր համար շատ զօրք ժողվեց ամեն կողմէն, և Հիւսիսային ազգերը գրգռեց որ իրեն հետ մկտեղ Հայաստանի վրայ վազեն: Տրդատ հազիւ թէ Հռոմէն դարձաւ, տեսաւ որ ամեն դիսց պաշարեր են Հիւսիսային ազգերը, որով առանց սրէկ մը պատրաս-

6. Տրդատ ու Գրիգոր Լուսաւորիչ ինչո՞ւ Հռոմայ գացին.

7. Տրդատայ Հայաստանէն հեռանալը քի՞նչ դէպ հետևանք ունեցաւ.

առեալու հարկադրեցաւ պատերազմի ելլելու, և յաղթեց Սկիւթացւոց Թեզաեհեան զօրավարին որ քաջութեան կռմանէ չատ անուանի էր: Երկրորդ անգամուն պատերազմելով Թեզաեհեանն ալ սպանեց. և այնպէս ուժով լինելոց Թուրը որ մէկ հարուածով երիւս կոտր ըրաւ զօրավարը ձիովը հանգերձ:

Տրդատ Հայոսիայեն ազգերը վանելէն վերջը չատ պատերազմներ ալ ըրաւ Շապուհին հետ ու միշտ յաղթող դառնալեցաւ, եւ քը հաշտութիւն ըրաւ հետը ու իսաղաղութեամբ Թագաւորեց:

8. Ինչպես որ յայտնի է՝ բոլոր ան պատերազմներուն մէջ մեծ գործողութիւն ընողը Տրդատ էր, որուն քաջութիւնը չատ բանակիներու տեղ կը բաներ. և ինչպես որ պատմութենէն յայտնի է՝ իրեն պէս կորիճ մարդ խիստ քիչ տեսնուեր է աշխարհքիս մէջ. բայց աւելի զարմանալին սա է որ այսպիսի Թագաւոր մը քրիստոնեայ ըլլալէն վերջը աքանչելի բարեպաշտութեամբ մը զարգացեալ, այնչափ որ անուղղայ և զեղծ նախապարտները համարձակ կը խրատեր որ հեթանոսական մոլութիւններէն ետ կենան: Բայց որովհետև ծանր է ձշմարտութեան ձայնին մտիկ ընելը, անոնք ոչ միայն չզգաստացան, այլ նաև Տրդատայ դէմ ապստամբելու սկսան, որով Տրդատ ալ ղնրնկը խրատելէն ձանձրացած՝ Թագաւորութիւնը Թողուց և Լուսաւորչայ բնակած այրը քաշուեցաւ: Նախապարտները քանի մը անգամ կանչեցին զինքը որ գայ նորէն Թագաւորութիւնը ձեռք առնէ. բայց երբեք Տրդատ չանձն չառաւ, Թուսաւորելով մնալին զինքը յիսունվեցկ տարի Թագաւորելէն վերջը, ուեթսունվեցնդ տարուան (341):

8. Տրդատ ինչու Թագաւորութիւնը Թողուց ու անձնատացաւ ու ինչպես մեռաւ.

9. Տրդատայ անպարտելի ուժին հետ զարմանալի է հոգւոյն զօրեղութիւնը, անընկճելի արիութեան հետ հաւատքն ու ջերմեռանդն բարեպաշտութիւնը. ահեղ և պատկառելի դէմքին հետ ներողամիտ զիջողութիւնն ու հեզաբարոյութիւնը, քաջ պատերազմող բարուցը հետ բարեկրթութիւն ու շնորհութիւն սիրող հոգին. վեհանձնութեան հետ վսեմ խոնարհամտութիւնը, և ուրիշ սանոյ նման գեղեցիկ սահաբինութիւններ: Խորհեցայն ալ տեսնելով որ Տրդատայ վայելչութ ու իրաւացի գովեստը համառօտ պատմութեան մը մէջ ամբողջ բովանդակելը շատ գժուարին է, այսպես կը ջանայ արգարացընել ինք զինքը, կամ թէ սանձել իր եռանդուն փափաքը զՏրդատ գովելու. « Պատմութեանց, ի՛ըսէ, և ոչ գովեստից է ժամանակս »:

10. Որչափ որ հայրենասիրի մը սիրտը ուրախութեամբ կը լեցուի Տրդատայ և ուրիշ իրեն պէս սահաբինազարդ Թագաւորներ ունենալուն վրայ, որ մեր ազգութեան Թագին վրայ մէյմէկ անգին ու անգնելա սիւնք եղան, նոյնչափ ալ ան ուրախութեան վրայ սգաւոր քօղ մը կը ծածկուի երբոր յիշէ Թէ այսպիսի ամենայն պատկառանաց ու սիրոյ արժանի Թագաւոր մը անանկ վերջ ունեցեր է քանի մը անկարդ մարդկանց պատճառաւ. քանի մը կ'ըսեմ, վասն զի անկարելի է որ բոլոր ազգը միաբանած ըլլայ սա գործողութեանս մէջ, որ բովհետև շատ բարեպաշտ մարդիկ ու նախապարհներ ալ կային որ Թագաւորին գեղեցիկ սիղբանցը

9. Տրդատ իր զօրաւոր ուժէն դուրս ուրիշ ինչ կատարելութիւններ ու բարեմասնութիւններ ալ ունէր.

10. Տրդատայ մահը ինչքան աւելի ցաւալի է հայրենասիրի մը սրտին:

մանակից ու գործադիր էին. բայց ափսոս որ դէ-
ՀԵրուն չարութիւնը ան դիպուածին մէջ ալ ար-
գարեներուն քաղցրութեամբը զեղծաւ, որով և ան
սոսկալի ոճիրը գործեցին՝ իրենց անձանց յաւի-
տենական նախատինք և ազգին անդարմանելի վը-
նաս: Այս իրաւ է որ ամեն ազգի մէջ ալ քիչ կամ
շատ թագաւորներ և իշխաններ զոհ եղած են հա-
ւատոյ համար. և կամ մեծամեծաց չար կամքը
չիսաւարելնուն պատճառաւ. ուստի ասոր նման
քանի մը դիպուածի համար պէտք չէ ազգը նախա-
տել և ուրիշ ազգերին աչքի վար ու անարգ սե-
պել, և կամ առանձնահանուց պահպանութիւնը
ընդհանուրի տալով բոլոր ազգը ազգաւեաց, ոխե-
աւեաց, անօրէն կոչել. բայց փափաքելի էր որ
մեր ազգին խաղաղասէր ու խոհեմ կառավարու-
թեանց պատմութեանը մէջ այսպիսի պարսաւելի
դիպուածներ ամենևին չգտնուէին:

ԴԱՍ Ժ Ը.

Խոսրով Բ. Տիրան, Աբշակ Բ:

1. Որովհետև Տրդատայ որդին Խոսրով երկրորդ
ակար և թոյլ մարդ էր, չկրցաւ մեկէն թագաւո-
րութիւնը ձեռք առնել, ու իրեք տարիի չափ թա-
գաւորական աթոռը պարապ մնաց, որով շատ
դէշ հեռևանքներու պատճառ եղաւ: Վասն զի ո-
մանք քրիստոնէութենէ թուլնալով ուզեցին Լու-
սաւորչայ թոռները սպաննել որպէս զի ուզածնին

1. Տրդատայ մահուանէն ետքը թագաւորական
աթոռին պարապ մնալը ինչ դէշ հետևանքներ ու-
նեցաւ.

ընեն: Ասով սուրբ Աբիսաակէսը՝ որ Լուսաւոր-
չայ կրտսեր որդին էր՝ զերեզք յանդիմանելուն հա-
մար՝ սպանեցին. զսուրբն Գրիգորիս որ Ալբանից
կաթուղիկոս և Լուսաւորչայ թոռն էր՝ ձիու պոչի
կապած վազցնելով մեռցուցին, նոյնպէս նաև ըզ-
սուրբն Վրթանէսը կ'ուզէին մեռցընել, բայց ա-
նիկայ մէջերնէն անելաս անցնելով ազատեցաւ:

Քաղաքական վիճակին ալ հոգևորին պէս մեծ
խեղճութեան մէջ էր. վասն զի մեկ քանի խռով-
արար և վտառասէր նախարարներ առեն գտնելով
սկսան իրարու հետ կռուիլ պատուոյ և իշխանու-
թեան համար, որով իրարու ջեղն ալ բոլորովին
ընկճեցին, ինչպես Բզնունիք և Մամիկոնէանք և Որ-
դունիք ըսուած նախարարութիւնները. Արտանէս
ապստամբեցան, և Արշակունեաց ցեղէն Սանա-
տրուկ անունով մեկը ինքնագլուխ թագաւորեց՝
Պարսից Շապուհ թագաւորին օգնութեամբը. նոյնպէս նաև Աղձնեաց բդեաշխը բակուր ապըս-
տամբեցաւ Պարսից օգնականութեամբ:

2. Նախարարներէն շատը տեսնելով աս անկար-
գութիւնները, և թէ ատոնց վախճանը ազգին կոր-
ծանումն պիտի ըլլայ, միաբանեցան մէջերնին և
սրբոյն Վրթանեսի քովը ժողվուելով, խորհուրդ
ըրին որ Կոստանդ կայսեր օգնութեամբ թագա-
ւոր գնեն իրենց՝ զԽոսրով Բ: Այս բանիս համար
նախարարներէն երկու հոգի ղրկեցին Կոստանդ-
նուպոլիս, որ երթան Կոստանդ կայսեր հաճո-
թիւնը առնեն Խոսրովը թագաւորեցընելու հա-
մար: Կայսրը շատ հաւնեցաւ Հայոց հաւատար-
մութեանը ու մեկէն Անտիոքոս անունով իր պա-
լատան հազարապետը շատ զօրքով խաբեց, որ ե-
կաւ Խոսրովը թագաւորեցուց Հայոց վրայ, ու

2. Խոսրով Բ. ինչպէս թագաւորեց ու Պար-
սիկք ինչպէս յաղթութեան Հայոցմէ.

ինքը նորէն Պօլիս դարձաւ։ Գլխաւոր նախարարները միաբանելով մէկերկին՝ ամէն բան կարգի դրին, ապստամբները ընկճեցին և եկեղեցական բնակարգութիւններուն ալ հոգ ունեցան։ Բայց ո՛չ հաւ Խոսրով բնութեամբ ախար և անկարող մարդ էր, ինչպէս որ ըսինք, Շապուհ և Սանատրուկ որ արդէն գիտէին, գրգռեցին Հիւսիսային ազգերը ու անոնց հետ Հայաստանի վրայ սկսան վազել։ Խոսրով նախ ինքը անձամբ պատերազմի գնաց ու չարաչար յաղթուեցաւ, անանկ որ Թշնամիները ինչուան Վաղարշապատ հասան. ան միջոցին վրայ հասան Վահան և Բագարատ երեւելի սպարապետները, և մեծ ջարդ տալով վռնդեցին Թշնամիները։

3. Խոսրով ինը տարի Թագաւորելէն վերջը մեռաւ. տեղը յաջորդեց իր որդին Տիրան, որ հօրմէն աւելի Թոյլ եղաւ, և ամէն տեսակ անզգամութիւն ըրաւ։ Սրբոյն Վրթանէսի հետ մէկտեղ Պօլիս գնաց ու Թագաւոր պսակուեցաւ Կոստանդիանոպոլսէն. և երբոր ինքը դեռ հոն էր՝ Շապուհ իր Ներսեհ եղբայրը խարեց որ երթայ Հայաստանի սիրէ։ Այբշաւիր կամաւորական, որուն յանձնուած էր Հայաստանի պահպանութիւնը, ուրիշ նախարարներուն հետ մէկտեղ դիմացը ելաւ ու ցրուեց բոլոր Պարսից բանակը Թէպէտ և Հայերէն ալ մեծամեծ նախարարներ մեռան։ Տիրան Թագաւոր պսակուած Հայաստան գարձաւ, բայց իրեն անկարգ գործողութիւններովը անունը և արքունական ծիրանին արատաւորեց։ Ընդհակ իրեն դաշանցը և երդմանը որ ըրեր էր Շապուհի հետ՝ Յուլիանոս ուրացողին օգնեց որ Պարսից դէմ պատերազմի կ՚երթար. և անոր խաբած պատիկը՝ ու-

3. Տիրան ոմէ է ու ինչ անպատմութիւններ ըրաւ։

րուն վրայ Յուլիանոսի դէմքը քաշուած էր, երբոր կ՚ուզէր մայր եկեղեցւոյն մէջ կախել, տուրքն Յուսիկ ան պատիկը ձեռքէն յափշտակեց ու տարքին տակը առնելով կտոր կտոր ըրաւ։ Բայց Տիրան փոխանակ խրատուելու այնչափ դեղել տալ սուրը հայրապետը՝ որ դեղի առեն մեռաւ. նոյնպէս խղդել տուաւ նաև Դանիէլ սուրբ սուրբ դերասանին՝ զինքը խրատելուն համար։ Ա՛ս անպատմութիւնները ընելէն վերջը անով տեղով ջնջեց Որշապուհեաց ցեղը. վասն զի Տիրանին հրամանովը Յորդոյ Որշապուհեաց նահապետը որ Յուլիանոսին օգնութիւն գնացեր էր մասնաւոր գնդով, տեսնելով Յուլիանոսի անօրէնութիւնները բոլոր զօրքովը փախեր էր գովէն։ Տիրան ալ Յուլիանոսին կամքը կատարելու համար՝ ջնջել տուաւ Որշապուհեաց նախարարութիւնը, և միայն մէկ տղայ մը ազատեցաւ որ գայեանիները փախուցին։

4. Երբոր Յուլիանոս Պարսկաստան պատերազմի մէջ վիրաւորուելով սպաննեցաւ, Շապուհ Տիրանայ ըրած խարդախութեան վրէժն ուզեց տալով ուսան բարեկամութիւն ձեւացընելով կանչեց զինքը Պարսկաստան ու աչքերնին կուրցուց՝ սպանդիկ տարի Թագաւորելէն վերջը։ Շապուհ փախնալով որ ջրալայ Թէ Հայերը սպասիկ սրդոյին Տիրանայ աչքերը փորելուն համար, մէկէն անոր Արշակ որդին Հօրը տեղը Թագաւոր դրաւ, որ ան ալ Հօրը պէս և աւելի անկարգ և անօրէն կեանք ունեցաւ (363)։

5. Թէպէտ և սա միջոցներուս ետևէ ետև անպիտան Թագաւորներ ունեցեր ենք, բայց Ա-

4. Տիրան ինչ մահ ունեցաւ ու իրեն ոմէ յաջորդեց.

5. Ո՞վ է Մեծն Ներսէս ու ինչ կարգաւորութիւններ ըրաւ Հայաստանի մէջ.

տուած բոլորովին երեսէ չէգելով Հայաստանը՝ ան
մղգամ Թագաւորներուն տեղը այնպիսի հայրա-
պետներ տուաւ որ Թագաւորաց ընելու օգուտ
ներն ու բարեկարգութիւնները իրենք կ'ընէին.
ազգին խեղճութեանը կ'օգնէին և վշտակից կ'ըլ-
լային, ըլլալու չարիքները ետ կարի կը խափա-
նէին, զեղծմունքներն ու անկարգութիւնները
կ'արգիլէին, վերջապէս ազգին հոգևոր և մարմնա-
ւոր պիտոյքը կը հոգային, ինչուան նաև թշնա-
մեաց բարկութիւնը իջնէցուցին՝ միշտորդ ըլլալով
Հայոց Թագաւորին և օտար Թագաւորաց մէջ: Ա-
ռաքը հայրապետաց մէջ գլխաւորն է Մեծն Ներ-
սէս որ անթիւ օգտակար բարեկարգութիւններ
ըրաւ Հայաստանի մէջ, աղքատանոցներ, հիւան-
դանոցներ և գպրաւուններ բացաւ, և անոնց հա-
մեմատ կարգեր դրաւ, խակ Աբրշակ ընդ հակառակն
անհոգութ ըլլալով ասոր բարեկարգութիւններուն՝
արգելք ալ եղաւ անոնց գործադրութեանը, որով
մեծամեծ վնասներու և գրեթէ Թագաւորութեան
կործանմանը պատճառ եղաւ. ուստի չենք կրնար
չափսոսալ որ այսպիսի անպիտան Թագաւորներ
յաջորդաբար Հայոց գահը ելլելով պղծեցին զա-
նիկայ ու խարխուլեցին որ այնչափ քաջ, առաքե-
նի և խելացի Թագաւորներով անուանի եղեր էր
ու ազգին ուրախութեանը պատճառ:

6. Երբոր Վաղէնտինիոս գեսպան խաւրեց Աբ-
շակայ որ Պարսից հարկ տալը դադրեցնէ, Աբ-
շակ գեսպաններըը նախատելով վռնտեց, և հարկ
տալը դադրեցուց: Ա՛ս բանիս վրայ սաստիկ բար-
կացաւ Վաղէնտինիոս, ու Աբրշակին Տրդատ եղ-
բայրը՝ որ քովը պատանդ կեցած էր՝ մեռցնել տը-

6. Վաղէնտինիոս Աբրշակայ դէմ ունեցած բարկութենէն իւնչպէս զինքն ու ինչ՛ն սկսաւ Տի-
բրիթ Գնելայ վրայ նախանձիլ.

ւաւ, ու Թէոդոս սպարապետը չատ զօրքով Աբ-
շակայ վրայ խաւրեց: Աբրշակ ա՛ս բանէս սարսա-
փած՝ ապաչէց սրբոյն Ներսէսի որ միջնորդ ըլլայ
Թէոդոսին ու կայսեր բարկութիւնը իջեցնէ: Եր-
բոր լսեց Վաղէնտինիոս սրբոյն Ներսէսի միջնոր-
դութիւնը՝ իւնչ բարկութիւնը և ինչա մը չըրաւ
Աբրշակայ. խակ Տրդատայ սրդոյն Գնելին հիւ-
պատուութէ պատիւ տուաւ, չատ ալ ընծաներ՝
իր հօրը անիրաւ տեղը սպանուելուն համար: Ա՛ս
բանիս սաստիկ նախանձեցաւ Տիրիթ Տիրանին
Թոռը՝ ու առիթ մը կ'ապասէր որ ա՛ս իրեն նա-
խանձու առելութիւնը յայտնէ: Երբոր Գնել
իր պատուոյ քովը գնաց որ Կուաշ աւանը կընդու-
նէր, պատմեց իր հօրը Տրդատին Թշուառ մահը՝
որուն վրայ խիստ չատ ցաւեցաւ Տիրան. և ուզե-
լով իր Թոռը միխիթարել, որով և ինքն ալ միսի-
թարուիլ, բոլորը իրեն ունեցած ժառանգութիւն-
ներն ու կալուածներն ալ Գնելին տուաւ. ասով
աւելի զայրացաւ Տիրիթին նախանձը, մանաւանդ
երբոր Փառանձէմն ալ իրեն կին առնելով Թագա-
ւորավայել հարսանիք ըրաւ, որով չատ մեծամեծ-
ներու հաճոյ ըլլալով անոնց սիրելի եղաւ: Տիրի-
թին համար չատ զօրաւոր պատճառ եղան ասոնք
Գնելայ կեանքը կարճեցընելու համար, ուստի
վարդան անուանով Մամիկոնեան նախարարի մը
հետ միացած՝ Գնելին վրայ ամբաստանութիւն ը-
րին Աբրշակայ առջև Թէ Գնել կ'ուզէ Թագաւորել
Հայոց վրայ, անոր համար եաւէ է նախարարնե-
րուն սիրտը իրեն քաշելու որուն համար ամենայն
ջանք կ'ընէ կ'ըսէին: Աբրշակ որ առիթ կ'ապա-
սէր, Ա՛յրարատայ գաւառէն վռնտել տուաւ Գնել-
լը. ա՛ս բանիս խիստ նեղսնալով Տիրան՝ յանդի-
մանութեան Թուղթ մը գրեց Աբրշակայ. Աբրշակ
ալ անզգամութեամբ ծածուկ խղդել տուաւ Տի-
րանը:

7. Անգամ մը Աբշակ Վարդանայ ու Տիրիթի հետ Փաղկոան ըսուած լեռան քովերը որսի ելլելէր. երբոր Աբշակ կը պարծէր սրսերուն ու տեղւոյն գեղեցկութեանը, Տիրիթ ու Վարդան սկսան վար զարնել, ըսելով թէ Գնեղնն որսի անասունն քովբան մը չէ: Մէկէն Աբշակայ նախանձը շարժեցաւ և ուզեց հոն որսի երթալ: Հաւատով մը գրեց որ ամեն բան պատրաստ ըլլայ. ու ինքն ալ անգանգատ եւեւէն ձամբայ ելաւ որ ևթէ պատրաստ չգտնայ զինքը, իրեւ յանցաւոր սպաննել տայ. երբոր եկաւ ու տեսաւ որ ամեն բան պատրաստ է, ձայն չկրցաւ հանել, բայց նախանձը աւելիշարժելով ծածուկ ապըսպրեց Վարդանայ որ նետով սպաննէ. ան ալ մէկէն կատարեց. եաքը իրիքը մէկէն սկսան լայ ու ողբ ձեռցընել իբրեւ թէ դիպուածով եղած ըլլայ. վերջը մեծահանդէս յուղարկաւորութիւն ըրին զուրկը նեղը խաբելու համար, բայց անօգուտ. վասն զի ամենքը խմցան ու սուրբ Ներսէս խաթեր յանդիմանեց Աբշակը և նզովեց զինքը ու երկն գործածկիցները առ անզգամութեան համար:

8. Շապուհ Յունաց վրայ պատերազմի երթալու առեն կերակուր ուզեց Տիգրանակերտ քաղաքին բնակիչներէն. անոնք գոնները գոցեցին ու արհամարհեցին զինքը. ուստի Շապուհ Յունաց հետ ունեցած պատերազմը լինցընելով ետ գառնալու առենը՝ առաւ Տիգրանակերտը ու մեծ կոտրած ըրաւ քաղաքացւոց, ծառացածներն ալ գերի ըրաւ:

9. Յայն միջոցներուն Աբշակ ալ քաղաք մը շինեց իր անզգամութեանը յիշատակ, և անունը Աբ-

7. Գնել ինչպէս մեռաւ.

8. Տիգրանակերտը ինչպէս առնուեցաւ.

9. Աբշակաւան քաղքին վրայ ինչ պիտի լիք կայ.

շակաւան գրաւ, և որպէս զի քաղաքին բնակիչները շատանան՝ հրաման հանեց որ ևթէ յանցաւոր մը փախչի հոն, պատժէ ազատ ըլլայ. ան պատճառաւ ամեն տեսակ անզգամութեամբ լեցուեցաւ քաղաքը՝ ուստի բոլոր նախաարարները միաբան ղրկեցին Աբշակայ որ ան բանին դարման ընէ. բայց երբոր անիկայ մտիկ չըրաւ, օգնութիւն կանչեցին Շապուհ Պարսից Թագաւորը որ գայ իրենց հետ միաբանի Աբշակաւանը կործանելու համար. Աբշակ երբոր լսեց ան բանս՝ վրացւոցմէ օգնութիւն առնելու գնացեր էր, նախաարարները սիրեցին Աբշակաւանին ու բոլոր միջի բնակիչքը Թրէ անցուցին բայ՝ ի կամընկեր ազգմէ՝ որ սրբոյն Ներսեսի ազատութեան:

Աբշակ վրացւոց օգնութեամբը նախաարարներուն վրայ պատերազմի ելաւ ու երկու սարիւ պատերազմելով՝ երկու կողմանէ ալ շատ մարդիկ ջարդուեցան: Ահա այսպիսի անպիտան Թագաւորի մը երած յիշատակի արժանի գործողութիւնները սասիք են, որ բոլոր խռովութեանց, անիրաւութեանց պատճառ եղաւ:

10. Երբոր Աբշակ նախաարաց հետ կը պատերազմէր, վազէս կայսրն ալ լսած ըլլալով որ Աբշակ օգներ է Շապուհին, նորէն Թէոդոսը շատ զօրքով վրան խաբրեց: Աբշակ երբոր տեսաւ Թէոդոսի գալը բոլորովին անձրիւեցաւ և նորէն սուրբ Ներսեսի տպաւինեցաւ որ ան բաներուս գարման տանի. ան սքանչելի ու հայրենասէր անձն ալ գերեզման գժուարութեամբ հաշտեցուց նախաարարները Թագաւորին հետ, և վերջը Թէոդոսի բարկութիւնը իջեցուց պատանեզ տալով Աբշակայ Պապ

10. Ս. Ներսես ինչպէս աքսորուեցաւ, ու Աբշակ ինչ վերջ ունեցաւ.

որդին. իսկ ինքը սուրբն Ներսէս Թէոդոսի խորհրդովը Սատմպօլ գնաց վաղեմին բարկութիւնն ալ հանդարտեցնելու համար. բայց վաղէս ա-րիոսեան ըլլալով մեկին սուրբ Ներսէսը քշել սըկսաւ: Արշակ երբոր լսեց սրբոյն Ներսէսի քշուիլը նորէն իր առջի ընթացքը սկսաւ բռնել. քանի մը նախարարներ անիրաւ սպանել տուաւ, Կամսարականաց ցեղը բոլորովին ջնջեց, բայց 'ի Սպանդարատէն որ իր ազգումը վախնալով ազատեցաւ: Նախարարները սա բաներս տեսնելով առթի մը կ'ապատէին որ Արշակայ չարեացը վերջը հանեն. ուսկ նոյն միջոցներուն Շապուհ պատերազմ բացած ըլլալով Արշակայ դէմ, նախարարները միաբանեցան Պարսից հետ ու այնչափ նեղը խոթեցին զԱրշակը որ անձնատուր եղաւ, ու Շապուհ ալ զինքը Անյուշ ըսուած բերդը խաւրեց (380):

11. Հաղիւ թէ ազգը Արշակայ բռնութիւնն-ներէն խալըսեցաւ, ահա անոր տեղը ելաւ ուրիշ ազգատեաց մը՝ ազգին հիմը քանդող ու վնասակար, որ է Մերուժան Արծրունեաց նախարարը. ասկայ անափառութեամբ կ'ուզէր Հայոց Թագաւոր ըլլալ. ատով հաւատքը ուրացաւ և Պարսից կրօնքը ընդունեցաւ, որպէս զի անոնց օգնութեամբը Թագաւորէ. ուսկ Արշակայ բռնուելէն վերջը տսկայ շատ զօրքով Հայաստանի վրայ եկաւ, ու մեծամեծ վնասներ հասցուց ազգին, շատ քաղաքներ աւերեց աւրշրկեց ու անապատ դարձուց: Արշակ սա բաներս լսելով և յուսահատելով իր վիճակին, անգամ մը կերթակուր ուտելու տանն զարկաւ մեռցուց ինք զինքը: Ասյսպիսի թշուառութեամբ կորսուեցաւ գնաց, առանց բարի յիշատակ մը թողուլ՝ որուն մահուանը վայ և ոչ

11. Ո՞վ է Մերուժան Արծրունին.

մեկը լացաւ. ուրիմն տես Թէ որչափ տարբերութիւն կայ ան Թագաւորին մէջ որ մեռնելովը բոլոր աշխարհք սուգի և ողբի մէջ կը ձգէ, և անոր՝ որուն մահուանը վայ կ'ուրախանան աւելի քան Թէ կը սրսմին:

ԴԱՍ ԺԹ.

Մերուժան Արծրունիին ըրած անզգամութիւնները ու մահը. Պապայ և Վարազդատայ թագաւորելը:

1. Շապուհ ուզելով որ Հայաստանի մէջ նորէն կռապաշտութիւն խոթէ, խոստացաւ Մերուժան Արծրունիին որ եթէ կարենայ աւաջ տանիլ սա բանս, զինքը Հայոց Թագաւոր կը դնէ. ուսկ բազմութեամբ զօրաց և շատ մոգերով Հայաստան խաւրեց որ երթայ խոստացածը արդեամբը'իգործ դնէ: Մերուժան բռնութեամբ Հայաստան մտաւ և շատ մարդ նահատակեց, եկեղեցիները կռատուն շինեց, բոլոր Ցունաբերն գրով գանուած գրքերը այրեց և արգիլեց որ Ցունաբերն չսորվին: Սա բաները լսելով սուրբ Ներսէս որ աքսորանքէն գառնալով դեռ Սատմպօլ էր, աղաչեց Թէոդոս կայսեր որ Պապը Թագաւոր դնէ Հայոց վրայ և Հայաստան խաւրէ, որպէս զի քրիստոնէութիւնը պաշտպանէ Պարսից և Մերուժանայ դէմ: Թէոդոս ալ զինչնելով սրբոյն Ներսէսի աղաչանացը կատարեց իրեն խնդիրքը օգնական տալով Տերենտիանոս զօ-

1. Ի՞նչպէս կրցաւ Մերուժան բռնութեամբ Հայաստան մտնալ ու ինչ ընտաներ ըրաւ.

բավարը: Մերուժան լսելով Պատայ գալը մեկին Պարսկաստան փախաւ հրաման առալով որ նախապարագայ կանայքը բերդերէն կախեն. առ երբոր ասան նախապարսիկները կատղեցան ու բերդերուն վրայ վազելով սիրեցին անոնց ու մէջի Պարսիկ պահապանները կարգեցին:

2. Մերուժան նորէն այլ և այլ աղգերէ զօրք ժողված վազեց Հայաստանի վրայ. նոյնպէս նաև Տէրենախանոս ալ շատ զօրք ու շատ պատերազմական գործիքներ բերել տուաւ Ագիլ զօրավարին հետ մեկտեղ Պօլսէն: Երբոր պատերազմը սկսան սկսեր, սուրբ Ներսէս Նպատ լեռան վրայ ելաւ ու բազկատարած սկսաւ աղօթել պատերազմին յաջողութեանը համար. և որովհետև արեը Հայոց բանակին դիմացէն էր և զիրենք կը նեղէր՝ սրբոյն աղօթքովը ամպ մը եկաւ ու արեը ծածկեց. նոյնպէս նաև հով մը ելլելով Պարսից նետերը իրենց վրայ կը դարձնէր: Այսպէս սիրտ առած Հայերը սկսան կատաղաբար յարձակիլ Պարսիկներուն, ու Սպանդարատ Կամսարականը մեկ զարնելով սպանեց Վէկայ Շերվիը Թագաւորը որ արդէն տաւիծի պէս մարդ մը ըլլալով, և չորս դին ալ կարիճ վիրաւորներով պաշարուած անհնարին յարձակում Հայոց բանակին: Նոյնպէս նաև Մուշեղ Մամիկոնեանը Պարսից Կարէն քաջ սպարապետը սպաննեց ուրիշ շատ քաջութիւններ ընելով:

3. Պատերազմին առջեւ ծիջոցները Մերուժան նեն ձին վիրաւորուելով չկրցաւ Պարսից զօրաց հետ փախչիլ ու հոն մնաց. ան բանս տեսնելով Սըմբատ Բագրատունին հասնելով վազեց ու հանելով

2. Հայերը ինչպէս հրաշքով և իրենց քաջասիրտ արիութեամբը յաղթեցին Պարսից.
3. Մերուժանը սպանեց.

բանից ու ի՛ուզէր բանակը բերել. բայց երբոր մը-տածեց որ եթէ սուրբ Ներսէս իմանայ գիտալով վրան կ՛արձակէ զինքը, ուզից հոն սպասենել. և չորս դին նայելով տեսաւ որ հոն մօտիկները վարդապետ գիշատներ կրակ վառած միս կը խորովեն շամբուրով. ուստի քովերնին մտանելով կզօրացաց շամբուրը ու կրակի պէս տաքցընելով Մերուժանայ գլուխը դրաւ՝ ըսելով. «Որովհետև կ՛ուզէիր Հայոց Թագաւոր ըլլալ, ահա ես կը պատկեմ զքեզ իմ հայրենական իշխանութեանդ» ու այնպէսով տաքկեցաւ: Ահա ան է ապրատեաց, փառամոլ ու շահասէր մարդուն վախճանը, որուն տեսնց աւելի գեղեցիկ փոխարէն չէր կրնար զրանուիլ իր անթիւ չարեացը համար, և ոչ տակից աւելի արժանավայել Թագով պատկուիլ (381):

4. Երբոր այսպիսի փառաւոր յաղթութեամբ լինցաւ պատերազմը, Պապ շատ ընծաներով Յաննայ զօրքը եւ խաւրեց, և Տէրենախանոսի ալ շատ պարգեւներ տալով, Հայաստանի մէջ բնակեցուց: Իսկ սուրբ Ներսէս՝ նախարարներն և Թագաւորը մեկ տեղ ժողվելով զամենքը յորդորեց որ աստուածպաշտութեի կեանքերնին անցընեն, Թագաւորին հաւատարիմ ըլլան, ու Թագաւորն ալ զիրենք հօր պէս արդարութեամբ խնամէ ու պահպանէ: Այսպէսով քիչ մը խաղաղացաւ աշխարհքը և Պապ քանի մը նախարարներուն իրենց քաջութեանցը համեմատ պարգեւներ ու պատիւներ տուաւ:

5. Այս խաղաղութեան վիճակագրութիւնը ափսոս որ երկար չտեւեց, վասն զի Պապ Թէպէտ և ար-

4. Այս պատերազմէս եաքը ինչպէս քիչ մը ատեն խաղաղացաւ Հայաստան.
5. Պապ ինչու Թուեաւորից զսուբբ Ներսէս ու ինքը ինչ ժամ ուներցաւ.

տաքուստ լաւ կը ձեւանար, բայց ծածուկ անկարգ ու անառակ կեանք կ'անցընէր. ան բաներուս համար սուրբն Ներսէս միշտ կը խրատեր զինքը. բայց Պապ ձանձրանալով անոր աքանչելի խրատներէն ծածուկ թոյն տուաւ ու զրկեց զՀայոց աշխարհէն եւ աքանչելի հօրէն, որուն հայրապետութիւնը կը վկայէին մարդկանց հետ նաեւ անբան անասուններն ու անշունչ արարածները: Պապ ան անօրէնութիւնս ընելէն եառքը իրեն ախոերոջը եւ ամբարտաւանութեամբը կուրցած ուզեց Թէոդոս կայսրէն ապստամբիլ. ուստի Տերենտիանոսը Հայաստանէն վռնտեց ու սկսաւ պատերազմի պատրաստուիլ. բայց Թէոդոս շատ զօրք եւ հրաման խաբեց Տերենտիանոսին որ Պապայ հետ պատերազմի, որ բռնեց զինքը և շղթաներով կապած Պօլիս Թէոդոսին գիմացը հանեց: Թէոդոս ալ հրամայեց որ սակրով գլուխը կտրեն իրեն չարութեանցը փոխարէն, իրեք տարի Թագաւորելէն վերջը:

6. Պապայ տեղը Մեծն Թէոդոս վարազդատ արշակունի իշխանը Հայոց Թագաւոր դրաւ, որն որ խիստ շատ քաջութիւններ ըրած էր ոլիմպիական խաղերու մէջ, և ամեն տեղ իրեն քաջութեան անունը հռչակուած էր: Գլխաւոր քաջութիւնները որոնք կը պատմէ Խորենացին ասոնք են. Թէոտրոնի մը մէջ քանի մը առիւծներու դէմ եկնելով յաղթեց անոնց ու սպանեց: Անգամ մը երբոր Լինդոբարատացոց դէմ պատերազմի գացեր էր, ինքը մինակ հինգ Լինդոբարատացիի դէմ մենամարտութեան ելաւ. հինգն ալ հոն եաւէ եաւ սպանեց ու ինքը չվնասուեցաւ. զարձեալ ուրիշ անգամ մ'ալ վազեց կատաղաբար բերդի մը վրայ,

6. Վարազդատ ով է ու ինչ քաջութիւններ կը պատմուին վրան.

ու այնպիսի արագութեամբ և յաջողութեամբ պատերազմեցաւ որ քանի մը վայրկենի մէջ բոլոր պարսկին վրայ եղած պահպանները ետեւով սպաննեց, որոնք տասնըեօթը հոգի էին: Վերջի բայց գրեթէ ամենէն մեծ քաջութիւնը ան եղաւ՝ որ երբոր Թագաւորութիւնը առած Յունաց զօրքով Հայաստան կուգար, Ճամբան ասորի աւազակներու հանդիպեցաւ, որոնց եաւէն վազելով հալածեց զերեզը. անոնք երբոր նեղը մտան, եփրատ գետէն անցնելով վրայի կամուրջի տեղ դրուած գերանը գետը ձգեցին: Վարազդատ կատղեցաւ ան բանիս և անանկ ուժով ցամքեց գետին վրայէն, որ կարծես թէ սասիկ բռնութեամբ ձգուած մեծահասակ քարի մը պէս մէկ մանր երկրորդի մէջ գետին անդիի կողմը ինկաւ, որուն լայնութիւնը քառասունհինգ կանգնաչափ էր. երբոր տեսան ան բանս աւազակները մեկէն զէնքերնին ձգեցին ու անձնատուր եղան: Վարազդատ Թագաւորութիւնը առնելէն վերջն ալ շատ քաջութիւններով բոլոր թշնամիները վախցուց. բայց քանի մը տարիէն չկրնալով Յունաց զօրավարներուն ամբարտաւանութեանը դիմանալ ուզեց Յոյներէն ապստամբիլ և Պարսից հարկատու ըլլալ. բայց երբոր իմացաւ Թէոդոս կայսրը Պօլիս կանչեց զինքը. ան ալ յուսալով որ եթէ անձամբ երթայ կրնայ ինքզինքը արդարացընել, եկաւ գնաց. բայց Թէոդոս առանց երեսն ալ տեսնելու Թուլիս կղզին քշեց, չորս տարի Թագաւորելէն վերջը:

ԴԱՍ Ի.

Արշակ Գ. վաղարշակ Բ. Խոսրով Գ. վռամշապուհ։

1. Թէոդոս տեսնելով որ Հայոց Թագաւորները կ՚ապստամբին իրմէ, մտածեց որ երկու Թագաւոր դնէ, որպէս զի չկարենան մէջերնին միաբանելով ապստամբիլ։ Ուստի Պապայ երկու տղաքը Արշակն ու Վաղարշակը Թագաւորեցուց Հայոց վրայ։ Արշակ Դուբին նստեցաւ ու Վաղարշակ Եքիլա, որ տարի մը չԹագաւորած մեռաւ։ Ինքնալով Շապուհ որ Մեծն Թէոդոս մեռեր է, ուղեցին Արկադիոս որդին յաջորդեր է, որ տակաւ մարդ մըն էր, ուզեց հաշտութիւն ընել որպէս զի Հայաստանին մէկ մասն ալ Պարսից հարկատու ըլլայ։ ուստի որոշեցին որ արեւմտեան մասը Յունաց հարկատու ըլլայ և արեւելեանը Պարսից։ ան պատճառաւ Արշակ, որ արեւելեան մասին Թագաւոր էր, չուզեց անհնազանդ Պարսից տակն ըլլալ, արեւմտեան կողմը եկաւ, աԹոռը Երիզա քաղաքը դրաւ, հետն ալ շատ նախարարներ մէկտեղ եկան՝ իրենց կալուածները Թողլով։

2. Շապուհ իր մասին վրայ Թագաւոր դրաւ

Խոսրով երրորդը, և Արշակայ հետ գնացող իշխաններուն ալ Թուղթ գրեց, յորդորելով որ դառնան գան, և Թէ իւրաքանչիւրին իրեն կը դարձընէ առջի ունեցած կալուածները։ ան պատճառաւ նախարարներէն շատը նորէն եկան գնացին Պարսից մասը՝ բայց 'ի մէկ քանիէն։ Ասոնք երթալուս առենին Արշակայ գանձերն ալ կողոպտեցին՝ Խոսրովու տարին։ Արշակ դեսպան խրկեց Խոսրովին որ գանձերը ետ գարձնէ. բայց երբոր աՆիկայ չտուաւ, պատերազմ բացուելով մէջերնին՝ շատ արիւնհեղութիւն ըլլալէն ետքը Արշակ սաստիկ յաղթուեցաւ և երկնակայ գառնալով հիւանդացաւ ու մեռաւ՝ հինգ կամ եօթը տարի Թագաւորելէն վերջը։

3. Կայսրը յշյն կոմս մը դրաւ Արշակին տեղը. անոր համար նախարարները բարկանալով Խոսրովին մասը գացին. և Խոսրով խոստանալով կայսեր Յունաց մասին հարին ալ տալու՝ ան մասին ալ Թագաւորութիւնը ինքը առաւ ու բոլոր Հայաստանի տիրեց։ Բայց քանի մը նախարարներ մտածուր Թշնամութիւն ունենալով Խոսրովու հետ, անխելքութեամբ յարմար առենի մը կ՚ապստիին որ ինքս մը հասցընեն Խոսրովու. ուստի երբոր Աղաւրակէս կաԹուղիկոսին մեռնելէն վերջը մեծն Սահակ ՊարԹեը կաԹուղիկոս գրուեցաւ, գնացին ատոնք ամբաստանութիւն ըրին Շապհոյ Թէ Հայերը կ՚ուզեն ապստամբիլ, և ահա ատոր նշան՝ ատանց Պարսից Թագաւորէն հրաման առնելու կաԹուղիկոս գրին։ Շապուհ հաւատալով անոնց՝ դեսպան խրկեց Խոսրովու որ իրեն գայ. բայց Խոսրով չանգիմանեց դեսպանները և բանի տեղ չդնելով Շապհոյ հրամանը։ Շապուհ ան բա-

3. Խոսրով ինչքն համար Աղիւսէ բերդը փակուեցաւ, ուր ալ են Շաւարշ ու Պարգև.

նիս վրայ շատ նեղացած՝ իր Աբրաշէսը որդին շատ զօրքով Հայաստանի վրայ խրկեց: Խոսրով յոյսահատած՝ եկաւ Աբրաշէսին գնաց, որ շղթանե-րով կապեց վնիքը ու տեղը անոր Վռամշապուհ եղբայրը թագաւոր դրաւ. զուարճ Սահակ կա-թուղիկոսութենէ ձգեց, և Գազաւոն նախարարը՝ որ ան առեններըը խնամ երևելի էր՝ խարդախու-թեամբ քովը կանչելով բռնեց ու շղթայի զար-կաւ: Նոյն իրիկունը Գազաւոնին եղբայրը Շա-ւարշ և Պարգև Ամատունին եօթը հարիւր կարճ մարգիներով գնացին որ Խոսրովը ու Գազաւոնը ազատեն, բայց գժբաղդութեամբ հնարքին չյա-ջողելով հարկադրեցան Պարսից հետ պատերազ-մելու. իրաւ է որ իրենց քիչութենովը համե-մատ՝ շատ կռուողներ ըրին Պարսիկներէն, բայց ամէնն որ Շաւարշ մեռաւ, Պարգևն ալ բռնուե-լով՝ Աբրաշէսին դիմացը տարուեցաւ, որ հրամայեց կաշին սիկ հանել. իսկ գԽոսրով Պարսկաստան տանելով Անյուշ բերդը դրաւ և դիմացը կայնե-ցուց Պարգևին կաշիկ սիկը: Ահա բարբարոսու-թեան գործ պատուհասին մեկը (392):

4. Վռամշապուհ իր եղբօրը տեղը յաջորդելով, ուսումնասէր ու հանգարտասիրտ և խոհեմ ընու-թեամբը մեր անուանի թագաւորներէն մեկը ե-ղաւ, թէպէտ և քաջութեան կողմանէ մանաւոր բան մը չունի: Բայց ամէնայնի Պարսից հպատա-կութենէն ցուցընելով՝ սիրելի եղաւ Պարսից Վռամ կրման թագաւորին, անոր համար Կրման ուղե-լով Վռամշապուհին հաճոյական բան մը ընել՝ Խոսրովը Անյուշ բերդէն հանից ու պատուով կը պահէր: Վռամշապուհ ասանկ խաղաղութեամբ և հանգարտութեամբ քսանուերկու տարի թագա-

4. Վռամշապուհ ինչ կերպով ըլաւ իրեն թա-գաւորութենը և գլխաւոր արդիւնքը ասոնք են.

սորելէն վերջը մեռաւ, իր բարի անունը յիշա-տակ կանգնելով աղգասիրաց սրտին մէջ, երախ-տագիտութեան անմահական արձանը:

Վռամշապհոյ գեղեցիկ արդիւնքներէն մեկն է իր ուսումնասէր բարքը, որ Հայաստանի ուսանող ոսկեդարեան տաճարին ոսկեձոյլ սիւներէն մեկն եղաւ Սահակայ, Մեսրոպայ ու Խորենացւոյն հետ: Իր առենը գտնուեցան մեր գեղեցկահիւս երկնա-պարգև գրերը, իրեն հովանաւորութեամբն ու ե-ռանդեամբը ան գրերուն արդիւնքը երևցաւ, որով այնպիսի պարծելի գրաւորական ճոխութեան ժա-ռանգորդ եղանք: Վռամշապուհ միայն գործակից, քաջալերիչ ու օգնական եղաւ, իսկ մեկնողը գործն է և արդիւնք, որով կ'իմացուի թէ որչափ աւելի երախտագէտ պիտի ըլլանք անոնց որ այս-պիսի անհամեմատ բարեաց պատճառ եղան, և ա-նանձնին հայկական տառից գիւտողը, որ առանկ հրաշալի կերպով եղաւ:

5. Վռամշապհոյ թագաւորութեան ժամանակը մեծ անուն հանած էր Մեսրոպ վարդապետը Տա-րոն գաւառէն իրեն արբանեակութեամբն ու խմաստու-թեամբը, և մեծին Ներսէսի աշակերտն ըլլալով՝ անոր հայրենասիրութեան ու բարեբարութեան հոգին զգեցած էր: Երբոր ինքը անապատ քա-շուած կը ճգնէր, ըսեց սրբոյն Սահակայ համբա-ւը, քովը եկաւ ու վարդապետութեան պատիւ առնելով անկէ՝ սկսաւ ամեն տեղ քարոզութիւն ընել, քանի մը աշկերտներով, և եաւէլ ըլլալ գի-տութիւնները ծաղկեցնելու. բայց տեսնելով մեր ազգին յատուկ գիր չունենալուն վնասները և ա-նով ուսանոց յառաջդիմելուն գժուար ըլլալը, եր-կուքը միաբան սկսան եաւէլ ըլլալ գիր գտնելու.

5. Հայկական տառից գիւտը որուն ձեռքովը եղաւ ու ինչպէս.

բայց շատ աշխատելէն եաքը երբոր մարդկային հնարքներէ յոյսերնին կտրեցին՝ ազօթքի ապաւինեցան։ Սուրբն Մեսրոպ քանի մը աշխերտներով եկաւ Եգեսիա գնաց՝ Պլատոս անունով մեծատուն մը փիլիսոփայի մը քով որ շատ հռչակուած էր աս տեսակ բաներու ճարտար ըլլալուն համար։ բայց յոյսը պարապ ելլելով, անկէ Սամուսատ գնաց՝ Հռուփանոս անունով ուրիշ փիլիսոփայի մը քով, որ նոյնպէս ան ալ մեծ անուն ունէր։ բայց անօգուտ եղաւ ան ճամբորդութիւնն ալ, որովհետեւ լոյս մը չկրցաւ առնել իր խնդրոյն վրայ։ Տեսնելով սուրբն Մեսրոպ աս գժուարութիւնները՝ նորէն Աստուծոյ առջև սրտագին իր սրտառուչ մաղթանքները. և ահա յանկարծ տեսիլք մը տեսաւ, որով սրտին մէջ տպաւորուեցան աստուածապարգև լեզուին գրերը. տեսիլքն որ անցաւ՝ սուրբն Մեսրոպ գրեց տառերը ու փորձեց տեսաւ որ լեզուին բոլոր յատկութիւնները յարմար կին, ան գրերը կարգի դնելով մեր այբուբենը ձեւացուց։ Այս գրերով հայերէն առակին գրուածքը եղաւ՝ Սողոմոնի Առակաց գրքին թարգմանութիւնը, որ երբոր տեսաւ ըստ ամենայն մտասանց յաղագած՝ առաջ մեծ ուրախութեամբ Հայաստան բերաւ։ Մեկին Թագաւորը սրբոյն Սահակայ և սրբոյն Մեսրոպայ հետ միաբան, գործիներ ու արհեստաւորներ բանալ տուաւ և մեծ չանք ունեցաւ անոնց յառաջդիմութեանը. որով քիչ միջոցին մէջ ամէն բան առաջ երթալով, ունեցաւ Հայաստան ալ՝ թէպէտ սակաւատեւ՝ բայց գեղեցիկ ոսկեդար մը՝ իր գրականութեանը պարծանք։

6 Որովհետեւ Վռամշապուհին օրդին Աբասակէս գեռ պզտիկ էր, նախարարները խնդրեցին Յազկերտէն որ զՍոսրով երթորդը նորէն իրենց թա-

6. Վռամշապուհէն եաքը ոմն Թագաւորեց.

գաւոր նստեցնէ. բայց Խոսրով հաղիւ մէկ տարի մը թագաւորեց՝ մեռաւ, և նորէն Հայաստան ան ու վայ եղաւ, այնպէս որ կիսատ թագաւորութիւնն ալ կործանեցաւ։ Վասն զի Յազկերտ ուզելով որ Հայերը արեւապաշտ ընէ, փոխանակ մեր ազգին մէկը թագաւոր դնելու՝ իր Շապուհ որդին թագաւորեցուց Հայոց վրայ, որ կը ջանար պարսկական սոներ, հանգիսներ ընելով՝ կամաց կամաց Հայերը ընտանեցնել արեւապաշտութեան. իսկ Հայերը խմանալով Յազկերտին միտքը սկսան արհամարհանօք վարուիլ Շապուհին հետ։

7. Անգամ մը Շապուհ Հայոց նախարարները հետ մեկտեղ որսի գնացեր էր, անոնց հետ էր նաև Առտմ Մոկացի քաջ նախարարը. տասնք հեռուէն վայրի եշերու երամակ մը տեսնելով սկսան հետնուն խնդալ ու հալածել. երբոր վայրի եշերը քարտ ու ժայռոտ տեղեր ելլելով իրենց որջերը քաշուեցան, նախարարները ուզելով իրենց քաջութիւնը ցուցընել Շապուհին, սկսան ժայռերէն վեր արշաւել. բայց Շապուհ վախկոտ ու միանգամայն անվարժ ըլլալով մեկի քաշուեցաւ. անատեն Առտմ Մոկացի նախատեց զինքն ու ըսաւ. « Ինչո՞ւ վատութեամբ կեցեր ես ոմ պարսից տոհմածորդի, չվախճա դուն ալ մեռ որ մարդ ես ու մարդու քաջութիւն ունիս »։ Պատասխան տուաւ Շապուհ. « Սատանաները միայն կրնան ատանկ քարտ տեղերէ վեր ելլել, ու ոչ մեզ մարդիկ »։ որով նախարարները սատանայի տեղ դրաւ։ Առտմ ան նախատինքը միտքը պահեց ու առթի մը կ'սպասէր որ ան խօսքին վրէժը հանէ Շապուհէն։ Ուստի երբոր ուրիշ անգամ մը կինձ

7. Հայերը ինչ դիպուածներու մէջ իրենց ընդդիմութիւնին ցցուցին Շապուհին դէմ ու Շապուհին տեղ Վռամ գրաւ.

որաալու գայիր էին, ինչպէս որ սովորութիւն էր, եղեգնուտին կրակ տուին. Շապուհ դանգաղելով չկրցաւ եղեգնուտէն դուրս ելլել ու կրակը շուրջ դին առաւ: Աւտոմ իմանալով որ Շապուհ վտանգի մէջ ու օգնութեան կարօտ է, մտեցաւ Շապուհին քովը ու ծաղը ընկելով ըսաւ. « Ահա քու հայրդ ու աստուածդ, ինչո՞ւ կը վախես »: Շապուհ նեղանալով ըսաւ. « Կատակի առեն չէ հիմայ. շուտով անցիր ու գուրս ելիր որ ես ալ կրնամ եւևէդ գալ, որովհետեւ ձիս խրատն է »: Աւտոմ աւելի համարձակութիւն առնելով Թագաւորին վախկոտութենէն ըսաւ. « Գիտցիր չափդ ու անկէ աւելի մի յոխորտար. Թէ որ դուն Սոկայիները սատակելի որդի կը կոչես, ես ալ զՊարսիկները կնամարդի ու վատ կը կոչեմ »: Ա՛ս ըսելէն վերջը զարկաւ ձիուն, անցաւ կրակին միջէն եւ Շապուհը ազատեց: Բայց գիտնալով որ ան իրեն համարձակախօսութիւնները Շապուհին ծանր եկած են, Թոզուց Հայաստանն ու իր Սոկայ աշխարհքը քաշուեցաւ: Աւտոր նման ուրիշ քանի մը նախատակաան դէպքերով այնչափ բարկացուցին զՇապուհ, որ առիթ մը կ'սպասեր Պարսկաստան փախչելու. ուստի լսելով որ Յազկերտ իր հայրը հիւանդացեր է, Ճամբայ ելաւ Պարսկաստան երթալու: Շապուհ երթալու առեն հրաման տուաւ իր զօրագլխին որ վերջը Հայոց նախարարները բռնեն ու իր եւևէն Պարսկաստան խաւրէ. բայց հաղիւ Թէ ինքը Պարսկաստան հասեր էր՝ հայրը մեռաւ, ինքն ալ իր քովի մարդիկներէն սպանուեցաւ: Նախարարները իմանալով Շապուհին հրամանը՝ ամենքը միաբան Պարսից զօրքը հալածեցին Հայաստանէն, ու շատ մարդ ալ սպաննեցին: Բայց վախնալով Պարսից Վռամ Թագաւորէն՝ ամենքն ալ իրենց բերդերը քաշուեցան, ու Պարսիկները շատ նեղութիւն տուին իրենց մասին

մէջի եղած Հայոց: Վռամ տեսնելով որ առանց մեկ զլխի մը չկրնար ժողվել սովորական հարկը, հաշտութիւն ըրաւ նախարարներուն հետ, ու Վռամշապուհին որդին Սրտաշէս երրորդը Թագաւորեցաւ որ տասներեքը տարեկան էր: Աչքի բերան ուրախանալով գոհ եղան նախարարները. բայց քիչ առենէն տեսնելով Սրտաշէսին անկարգութիւնները՝ զղուեցան իրմէ և կ'ուզէին Թագաւորութիւնը Պարսից տալ. սա բանիս շատ դէմ կեցաւ սուրբն Սահակ, գիտնալով որ աղգին կորստեանը և մեծամեծ վնասներու պատճառ է. բայց նախարարները ձանձրացած ըլլալով անանկ անկարգ Թագաւորներէ՝ մեկ ջրին սրբոյն Սահակայ խրատին ու գացին Վռամին խնդրեցին որ Թագաւորութիւնը վերցնէ ու անոր տեղը Պարսիկ իշխան մը դնէ:

8. Վռամ նախարարներուն խնդիրքը լսելով կանչել տուաւ զսուրբն Սահակ ու զՍրտաշէս: Սրտաշէս Թէպէտ և ինքզինքը արդարացուց ըսելով որ տէրութեան դէմ յանցանք մը ըրած չէ, բայց Վռամ ուզելով Թագաւորութիւնը վերցնել՝ զսուրբն Սահակ բանա դրաւ, Սրտաշէսի ալ Պարսկաստանի ներսերը քշեց ուր երեք ջրաստարի ալ տպրեցաւ ու մեռաւ, վեց տարի Թագաւորեցեր եղեր: Ա՛հա ասկէ վերջացաւ Արշակունեաց հզօր Թագաւորութիւնը Քրիստոսի 428 Թուականին, 580 տարի դիմանալէն եղեր:

9. Արշակունեաց Թագաւորութեան վերջանալուն բոլոր պատճառները հոս շարելը աւելորդ կը սեպենք, որովհետեւ պատմութեան եւին աւելի

8. Արշակունեաց Թագաւորութիւնը ինչպէս վերջացաւ.

9. Արշակունեաց Թագաւորութեան վերջանալուն պատճառները որո՞նք եղան.

ընգարձակ խօսած ենք. հոս համառօտ մը կ'ուզենք յիշել նախաթարաց անխոհեմ գործողութիւնը, որով մեր Աբշակունեաց Թագաւորութիւնը կործանեցին: Գործողութեան պախարակելի ըլլալը ամենուն ալ յայտնի է. վասն զի մարդուս ևս առաւել ազգի մը ազատութիւնը առաւածային տուրք ըլլալով, տուողը միայն կրնայ վերցընել աս գեղեցիկ ձիրքը ան իշխանութեամբը՝ որով տուեր է. ուստի ով որ պատճառ կ'ըլլայ վերնալուն և կամ ինքը կը վերցնէ, իրաւամբք առելի է ամենուն ու Աստուծոյ պատիժը կը սպասէ: Եթէ Թագաւորը գէշ էր, կրնային զինքը Թագաւորութենէն զրկել, թէ որ ազգին ու հայրենեաց օգուտը անանկ պահանջէր. որով ոչ միայն կ'արգարանար իրենց գործողութիւնը, հապա յաւիտենական օրհնութիւն կը ժառանգէին. իսկ հիմայ փոխանակ օրհնութեան անէծք կը ժառանգեն, որովհետև որչափ Թագաւորին գէշութիւնը՝ նոյնչափ ալ իրենց անկրկնութիւնը, հայրենեաց բարին չմտածելը, ու ասոնցմէ առաջ եկած չարիքներուն պատուհներն են, որով իրենց կրծքը զոհ ըրին այնչափ ժողովուրդ գերութեան մատնելով. և այնպիսի սոսկալի գերութեան մը մատնեցին ան գեղեցիկ ձիրքերով զարդարուած ազգը, որ բոլոր ունեցած աքանչելի ու օտարաց նախանձելի առաքինութիւնները խանգարուելով, այնչափ թշուառութեանց մէջ ընկաւ՝ որ պատմութեան յաջորդ թերթերուն մէջը պիտի տեսնենք ու լսենք:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՄՍՐՉՊԱՆՍՑ

ԳԱՍ ԻԱ.

Վ. Ահմիհրշապուհ առաջին մարզպան, և Վ. արդաւանից պատերազմը:

1. Աբշակունեաց Թագաւորութենէն վերջը մարզպան գրուեցաւ Վ. Ահմիհրշապուհ անունով պարսիկ իշխան մը, որ բնութեամբ խաղաղասէր և ազնիւ մարդ ըլլալով շատ լաւ կառավարեց Հայաստանը տասնըչորս տարի. և երբոր ինքը մեռաւ, տեղը անցաւ Վասակ Սիւնի, փառասէր, անհաւատ, նախանձոտ, ազգասէից նախաթարը, որ փոխանակ ազգին ուրախութեան և երջանկութեան պատճառ ըլլալու իբրև Հայ, թշուառութեան և մեծ տրամութեան պատճառ եղաւ Հայաստանի:

2. Ցազկերտ երկրորդ Պարսից Թագաւորը ուզելով որ ամեն իրեն հարկատու ազգերը արևա-

1. Աբշակունեաց Թագաւորութեան խնայելն եաքը ազգերնիս ինչ վիճակ ունեցաւ.

2. Ցազկերտ ինչ հնարք մտածեց Հայերը աթեւապաշտ ընելու.

պաշա ըլլան, ամեն Ձար մուտ ելլէն վերջը՝ մոգե-
բուն խորհրդովը հրաման խաբեց Հայոց, Աղուա-
նից, Վրաց, որ մէյմէկ բազմաթիւ գնդեր խաւ-
բեն, որպէս զի կարենայ ազգին երևելի զօրավար-
ներն ու նախարարները հեռացընել ու մնացած-
ները դիւրաւ արևապաշտ ընել: Ազգին վախ ալ
սէր ցուցընել ուզելով, նախարարներէն մէկ քա-
նին պատուեց, ինչպէս Վասակ Սիւնեաց նախա-
բարին մարզպանութիւն տուաւ, և Վարդան Մա-
միկոնեանին ընդհանուր սպարապետութեան պա-
տիւը (442):

Հայերը խորհուրդ ըրին մէջերնին ու բազմա-
դիւ դունդ մը խաբեցին՝ շատ քահանաներով ու
բազմութեամբ նախաբարաց, որպէս զի անհաւա-
տարմութեան կասկած մը չտան Յազկերտին. ա-
նոնց հետ մեկտեղ գացին նաև Վասակ ու Վար-
դան, նոյնպէս Աղուանից և Վրաց զօրքերն ալ է-
կան: Յազկերտ երկու տարի Հոնաց դէմ պատե-
րազմ ընելէն վերջը երբոր կիրցաւ յաղթել՝ դար-
ձաւ Պարսկաստան, ու սկսաւ նախարարները յոր-
դորել և ստիպել որ արևուն երկրպագութիւն ը-
նեն: Նախարարները միաբան դէմ կեցան Յազ-
կերտի, ոմանք ալ նահատակուեցան, ինչպես Գա-
րեգին, Ատոմ Գնունի ու Մանաճիհր Ռշտունի
իրենց զօրքովը. մեկալ նախարարներն ալ չատ
ստիպեց, բայց կիրցաւ մաքերնուն հատատուե-
լութիւնը խախտել:

3. Նոյն միջոցին Յազկերտ Դենշապուհ անու-
նով մարզպան մըն ալ Հայաստան խաբեց որ եր-
թայ ծանր տուրքերով և ուրիշ նեղութիւններ
տալով Հայերը դարձընէ. իսկ նախարարները

3. Ի՞նչպէս սկսաւ Պարսից կրօնքը Հայաստա-
նի մէջ տարածուիլ ու ինչ գիտելիք կայ Վարդա-
նայ ու Վասակ Սիւնիին վրայ.

ատաւիի բանտի մը մէջ դրած կը նեղէր, ըսելով
որ եթէ հաւատքնին ուրանան՝ զերծնք ազատ կը
թողու: Նախարարները տեսնելով որ տանից ի-
րենց Հայաստան ոքի տակ պիտի երթայ, մտա-
ծեցին՝ անգամ մը արտաքուստ ուրանալ հաւատք-
նին, որպէս զի դերութենէն ազատելով կարե-
նան օգնել ամբողջ ազգին. այսպէսով մէջերնին
միաբանելով արևու և կրակի երկրպագութիւն ը-
ընին. վերջը Յազկերտին դարձ Հայաս-
տան դարձան եկան. անոնց հետ մէկտեղ եկան
խել մը մոգերու բազմութիւն, որպէս զի Հայերը
կրակապաշտութեան մէջ կրթեն: Երբոր տեսան
Հայերը տա մոգերը, սրբոյն Ղևոնդ և ուրիշ տէրը
քահանայից առաջնորդութեամբը մոգերուն վրայ
վազեցին, շատ մարդ մեռուցին շատն ալ վիրաւո-
րեցին, մնացածներն ալ լեզապատառ փախուցին:
Վարդան որ արտաքուստ միայն ուրացեր էր, տես-
նելով որ մոգերը վնասուեցան Հայատանեն, մե-
կէն եկաւ Յովսէփ կաթուղիկոսին և ուրիշ քա-
հանայից առքը ընկաւ, թողութիւն խնդրելով ա-
կամայ ուրացութենէնը: Իսկ Վասակ տրտմոց ու-
րացած ըլլալով չէր ուզեր որ մոգերը երթան Հայ-
տատանէն, ուստի խաբեութեամբ կ'ըսէր որ տա-
ժամն ընդունին մոգերը, որպէս զի Յազկերտ վրա-
նին չբարկանայ, ու վերջը կամաց կամաց դուրս
հանեն զերծնք. տասվ շատին միտքը համոզուե-
ցաւ, մանաւանդ թուշահատանութիւնը, և շատ
տեղ կրակապաշտութիւնը սկսաւ տարածուիլ՝
մանաւանդ մեծամեծաց տները:

Մեծն Վարդան տեսնելով տա չարիքը և կիրնա-
լով գործոյն մը ընել, որպէս ցաւէն երաւ Հայաս-
տանէն և դէպ ի Յունաց մասը սկսաւ երթալ-
բայց մեկալ նախարարները երբոր լսեցին Վարդա-
նայ երթալը՝ շատ աղաչանքներով էտ գարձուցին
զինքը. և իրեն հետ միացած՝ անոնցն վրնտուցին

մոգերը, վերջը Պարսից զօրաց վայ յարձակելով, որ Վասակայ առաջնորդութեամբը Բագրեւանդ ժողուեր էին, մեծ կոիւ ըրին, և շատ մարդ բըռնեցին, որոնց հետն էր նաև Վասակ: Բայց սասանիկ աղաչելուն և աւետարանին վայ երդումնելուն համար նորէն ազատ թողուցին զինքը:

4. Յազկերտ Աղուանից երկիրն ալ շատ մոգեր խաբեր էր որ զանոնք ալ արեւապաշտ ընեն. ասոնք չկրնալով դէմ դնել Հայերէն օգնութիւն ուզեցին, անոր համար հարկ եղաւ որ բոլոր զօրքը երեք բաժնեն. առջինը տուին Ներշապուհ Արծրունիին որ Պարսից դէմ գնէ. երկրորդը Վասակայ՝ Հայաստանը պահելու համար. երրորդ գունդն ալ տուին Վարդանայ որ Աղուանից օգնութեան երթայ: Ձմեռն Վարդանայ զօրաց դէմ ելաւ Պարսից զօրքը՝ որոնք մեծ ջարդ կերան Հայերէն: Վարդանին զօրքերը Աղուանից երկիրն որ հասան՝ բոլոր մոգերը կոտրեցին, կրակատուներըը կործանեցին և Պարսից զօրքերը հալածեցին անկէ: Երբոր Վարդան Աղուանից երկիրը ասանկ քաշուքթիւններ կ'ընէր, անզգամ Վասակը իրեն երդմնիը վայ հաստատուն չկենալով հաւատքը ուրացաւ ու նորէն սկսաւ մոգերը Հայաստան մտցընել, կրակատուներըը բանալ, ու քահանաներըը և ուրիշ շատ մարդիկ ջարչարել իրեն հետ միաբանեցան մէկ քանի Թուրհատաւա մարդիկ ալ: Ինչ Վարդան երբոր լսեց Վասակայ նորէն ըրած դաւաճանութիւնը, մեկէն իր զօրքովը անոր վայ հասաւ, և հետը ուրացող միաբանողներուն մեծ ջարդ տուաւ: Վերջը Յազկերտին դեսպան խրկեց, որ եթէ զերծնք ազատ թողու որ քրիստոնէութիւն

4. Վարդան Աղուանից ինչ օգնութիւն ըրաւ ու Վասակ իր անօրէնութիւններովը ինչ չարիք հասուց գարձեալ Հայաստանի.

նին պաշտեն՝ իրեն սիրով կը ծառայեն: Յազկերտ թէպէտ և հրաման տալ ձեւացուց, բայց միաբը խաբդախութիւն ըլլալով Հայերը խմցան, և իրենց կերպը չփոխեցին: Յազկերտ Հայոց հաւատքը, նեղուն վայ հաստատութիւնը տեսնելով յուսահատեցաւ զերծնք չհեղէն, ու Միհրներսեհ հազարապետը խաբեց շատ զօրքով: Միհրներսեհ տեսնելով Վասակայ հաստատուն և անզգուշութիւնը, բոլոր զօրքը անոր չանձնեց և ինքը գարձաւ Յազկերտին քով, օգնական տալով Վասակայ Մուշէհան Նեւաստուերը:

5. Տեսնելով արին Վարդան Վասակայ մեծամեծ պատրաստութիւնները, ամեն տեղի Հայերուն դեսպան խրկեց որ ուղղոը իր քովը գայ. ասով Արտաշատու մէջ վաթսունըվեց հազար հոգի ժողովուեցան, ամենն ալ կարճ հաւատոյ համար պատերազմելու վառուած. մէջերնին կային նաև քանի մը եպիսկոպոսներ ու շատ քահանաներ: Իսկ Վասակ մէկ քանի տուա քահանաներու ձեռքով շատ մարդ խաբեց՝ իր կողմը ձգեց, ըսելով որ հրաման եկեր է Յազկերտէն համարձակ քրիստոնէութիւնը պաշտելու. ասով ինչուան Վրացիներն ու Աղուանները Հայոց միաքանութենէն բաժնեց: Երբոր երկու կողմն ալ պատերազմի պատրաստուեր էին, Հոգեպատառն վեցերորդ իրիկունը, որ երկրորդ օրը պատերազմ պիտի ըլլար, ամենն ալ խոստովանելով հաղորդուեցան, որպէս զի հզօրով և մարմնով զօրանան: Երիկորդ առաւօտը սկսաւ պատերազմը խիստ կատաղեր, և պատերազմին սկիզբներըը հինգ հազար հոգւոյ չափ Վասակայ կողմը անցան, ինչպէս որ

5. Վարդանանց պատերազմը ինչպէս եղաւ ու որչափ քաջեր զոհ եղան Հայոց կողմանէ.

առաջուց խօսք առեր էին, ու մեծ չիսթմուԹիւն պատճառեցին: Մեծ քաջուԹեամբ պատերազմեցան Վարդանանք. բայց երբոր սուրբն Վարդան առիւծի պէս ադին անդին վազելով մեծամեծ քաջուԹիւններ կ'ընէր՝ վերաւորուելով ընկաւ մեռաւ, ինչպէս նաև ուրիշ խել մը նախարարներ և երկու հարիւր վանՁսունըվեց հոգի. մնացածներն ալ տեսնելով Վարդանայ մահը, ցիր ու ցան եղան, և իրենց բերդերուն մէջը ամրացան: Բայց Պարսիկները վերջէն Հայոց այլ և այլ գունդերուն հետ ալ պատերազմելով ուրիշ եօՁը հարիւր հոգւոյ չափ ալ մեռուցին, որով Վարդանանց նահատակաց Թիւը եղաւ հազար երեսուն ու վեց: Իսկ Պարսից կողմանէ մեռան նոյն օրը երեք հազար հինգ հարիւր հոգի: Վասակ ասոնց ամեն չարիքներով չկշտանալով՝ խաբեուԹեամբ շատ մարդ բռնեց ու սպանեց, և Վահեդեանք ըսուած սուրբ քահանաներն ալ բռնեց շղԹայի զարկաւ (451):

6. Վարդանայ հետ միաբանած նախարարները գունդ գունդ ձեացած՝ սկսան Պարսից քաղաքներուն ու բերդերուն վրայ յարձակիլ ու ինամներ հասցընել. անոր համար Յազկերտ Աստղոմիզդ անունով մեկը դրաւ Հայոց վրայ որ նախարարները խաբեուԹեամբ բռնէ ու իրեն խաբէ: Նախարարները Թեպետ և իմացան Աստղոմիզդին միտքը, բայց մարդասիրուԹեան փափաքով վառուած՝ փղձի չերթին, ու եկան Աստղոմիզդին քովը գնացին. ան ալ զամենքը բռնեց և Վահեդեանց հետ մեկտեղ Յազկերտին խաբեց, ու հրաման առաւ Հայոց որ ամեն մարդ իր կրօնքը պաշտէ:

7. Վասակ ասամեն չարուԹիւններն ընելէն

6. Մեկալ մնացած նախարարները ինչ եղան.

7. Վասակ ինչպէս իրեն անօրէնուԹեանց պատիժը գտաւ և ինչ ստորգրուԹիւն կ'ընէ իրեն մահուանը մեր Եղիշէ պատմագիրը.

վերջը յանգաւոր գանուեցաւ Յազկերտին առջև, և անոր հրամանովը իր ամեն իշխանուԹիւնն ու հարստուԹիւնը տալին և տասկալի քանտի մը մէջ դրին: Վասակ իր անմտուԹեամբին ու փառասիրուԹեամբը չկրցաւ խնամալ Թէ ազգասէրաց անձնասէր և անմիաբանասէր մարդուն վախճանը տասկալի մահ է: Մերոց ժամանակ չարաչար մահը իրեն խրատ չեղաւ, անոր համար քան զան ալ աւելի գէշ և սարսափելի մահ ունեցաւ: Ո՛րչափ տարբերուԹիւն կայ աս երկու զօրավարաց, այսինքն Վարդանայ և Վասակայ մէջ. Վարդան բարերար և հայր աշխարհի, իսկ Վասակայ սեպհական ձակտին վրայ որոշ կը տեսնուի իր ԹշնամուԹիւնը պատճառը, այսինքն նախանձ, փառասիրուԹիւն, ազգասէրուԹիւն և անմիաբանասիրուԹիւն: Վարդանայ պէս անմահ բարերարներուն անունը մարմարիոն քարերու վրայ գրելն ալ ոչ ինչ է. վասն զի այնպիսեաց արժանաւոր տեղը մարդուս գերեզմանց միտքը ու ստուգածանման հոգին է: Իսկ Վասակայ պէս ազգասէրայ մարդկինքերուն անունը տալի վրայ գրելն ալ շատ է, Թէպետ և ոսկի կոխան ըլլան. վասն զի այնպիսիներուն անունը մարդկանց անուններուն կարգէն դուրս հանելու է՝ Թէ որ իրենց գէշ վարքը ուրիշներուն խրատի համար միայն հարկաւոր ըլլար: Նոսա արժանի է Վասակայ սրդնալից ցաւալի մահուն առորագրուԹիւնը որ կ'ընէ մեր Եղիշէ քաջ և Ճարտասան պատմիչը:

«Օր ըստ օրէ բերէին իբրև զգէշ ընկենուԹին՝ ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին, և տեսիլ ամենայն կարաւանին գնա առնէին... Եւ իբրև այսպէս չամենայն կողմանց հարեալ վատԹարացաւ, անկաւ չախտս գԺնդակս անդէն՝ ի կատարման: Ջեռաւ փոր նորա, և հատան և արուեցան գոգք նորա, և քաւեալ մէնջաւ ԹանձրամսուԹիւն նո-

բա: Եւ այնչն որդունք ընդ այս նորա, և 'ի վայր սորեցին ընդ անգունս նորա. իսյան լսելիք նորա, և ծակոտեցան ջղաջաղ ջղձունք նորա. լուծան ջիղք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կըր-կունք ոսից նորա: Բղխեաց 'ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն 'ի նմանէ ձեռնասուն ծա-ռայք նորա: Այզուն միայն կայր կենդանի 'ի բեւ-բան նորա, և ոչ գոսա խոսովանութիւն 'ի շըր-թունս նորա: Ձայնեաց զմահ հեզձամիձուկ, և ել 'ի գժոխս անհնարին գառնութեամբ: Ոանհայ եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սատկի հարուածովք ամենայն Թշնամիք նորա: Եւ այն որ կամէրն Թագաւոր լինել մեզք՝ Հայոց աշխարհին, ոչ երեւեցաւ տէրն գերեզմանին նորա. քանզի իբրև զգուն մեռաւ և իբրև զդէշ (կամ զէշ) քարշեցաւ....: Ոչ ինչ եթող չարիս զոր ոչ գոր-ծեաց 'ի կեանս իւր. և ոչ ինչ մեաց 'ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա 'ի մահուան նորա»:

ԴԱՍ ԻԲ.

Արտչնատպայ մարզպանութիւնը և վահանայ պատերազմը:

1. Ամրոմիզդ բոլոր նախարարները բռնած Պարսկաստան խաւրեց. հան Յազկերտին հրամա-նով բոլորն ալ բանտ դրուեցան՝ իսկ քահանանե-րը քիչմը տաճկին ծածուկ սպանուեցան: Նախ-արարները չորս տարի բանտը կենալէն վերջը

1. Վարդանանց պատերազմին եղբը նախարար-ները ինչ վիճակ ունեցան.

Շղամշապուհ իշխանին ազատութեամբ ազատեցան բանտէն, բայց Պարսկաստան մնացին. երբոր յա-ջորդ տարին մեռաւ Յազկերտ, տեղը Պերոզ որ-դին անցնելով՝ ուզեց տարի նախարարները երկն գործազրաւթիւններուն ծառայեցուց. բայց երբոր Աղուէնատպ մարզպանը Հայաստան կ'երթար՝ ըն-րենք ալ անոր հետ մէկտեղ գաղթուց երկնց Հայ-րենիքը (464):

2. Երջանիկ նախարարները Հայաստան որ գա-ղան՝ սկսան խաղաղութեամբ կառավարել երկնց երկիրները: Այն միջոցներուն մեծին Վարդանայ Հմայեակ եղբօրը մեծ որդին Վահան՝ իրեն քա-ջութեամբն ու խելացիութեամբը շատ սիրելի ե-ղած բոլոր Պարսից մեծամեծներուն և նաև Պե-րոզայ: Այս բանիս նախանձելով մէկ քանի ուրա-ցող նախարարներ, որ գէռ Պարսկաստան կը գըտ-նուէին, չարախօսութիւններ երկին Վահանայ վը-րայ. Վահան ալ վախնալով որ Պերոզին աչքէն չիյնայ՝ հաւատքը ուրացաւ, Թեպէտ և վերջէն սատկի զղջայ:

3. Քրիստոնեայ նախարարները շատ անգամ՝ նա-խատուելով ուրացող նախարարներէն՝ առթի մը կ'սպասէին որ աս նախատանաց վրէժը առնեն. ուստի երբոր Հեպեթաղներուն պատերազմին կը գառնային՝ լսելով որ Վրաց Վախտանկ Թագաւո-րը սպասամբեր է Պարսիկներէն, իրենք ալ միա-բանեցան մէկերնին ու Վահանը իրենց զօրապետ դնելով զաստուեցան Պարսից բանակին: Աւարնըչ-նալով երբոր լսեց աս բանս՝ վախնալով սկսաւ Պարսկաստան փախչիլ. ան տեսնելնէն գնա-ցին Վահանեանք և խել մը հոգի Ջարգեցին: Աս

2. Վահան ինչքա՞ հաւատքը ուրացաւ.

3. Ի՞նչ կերպով սկսաւ Վահանեանց պատե-րազմը.

պզաի յաղթութենէն վերջը Դաւին գառնալով Սմբատ Բագրատունին մարզպան դրին, Վահանն ալ ընդհանուր սպարապետ. և երբոր Աղուէնատղ նորէն եկաւ եօթը հազար զօրքով, Վահան չորս հարիւր հոգի միայն ունէր. զանոնք չորս գունդ բաժնելով Ախուեի մօտ պատերազմի պատրաստուեցաւ. պատերազմին սկիզբը Գաղջոյ նախաթարը իրեն հարիւրովը Թշնամեաց կողմը անցաւ. բայց ան քանի փոխանակ վերնէք վհատեցնելու աւելի զօրացուց, որով սաստիկ կարդ մը տուին Պարսից. և իրենք ուրախութեամբ Դաւին դարձան:

4. Վահան որչափ որ կրնար նէ կը ջանար բոլոր նախարարները միաբանել որպէս զի աւելի զօրանալով կարենան քաջութեամբ դէմ դնել Թշնամեաց և բոլորովին հալածել զանոնք, բայց ան իրեն փափաքանացը չհասաւ. վասն զի նախարարներէն ոմանք արտաքին շահու և փառասիրութեան համար հաւատքնին ուրացած՝ Պարսից կողմը անցեր էին, ոմանք ալ իրենց քաղաքը քաշուելով հանգիստին կը նայէին. Թէպէտ և կային նաև ոմանք որ հասարակաց օգուտը մտածելով իրեն քովը եկած իրեն հետ մէկտեղ սիրով կը պատերազմէին: Իսկ Վահան Թէպէտ և քիչ զօր էր, բայց միշտ յաղթող գտնուելուն, և չորս հինգ տարի միակերպ պատերազմելով մեծամեծ յաղթութիւններ ըրաւ Պարսից դէմ: Պարսիկք չորս հինգ զօրավար փոխեցին քիչ առնի մէջ, բայց ամէնքն ալ յաղթուեցան: Այս պատերազմներուն մէջ ազէկ կը տեսնուի Վահանայ անպարտելի արութիւնը, վհատնուելիքը, հաստատուն հաւատքը և առաւած յոյսը: Երբոր Պարսիկք Շապուհ Մինչ բանեան մարզպանը խաւրեցին Վահանայ վրայ, անիկայ սաստիկ կատղած Վահանայ ըրած յաղ-

4. Որոնք միաբանեցան Վահանայ հետ.

թութիւնները վրայ, միաքը դրեր էր որ կամ յաղթէ Վահանայ ու զինքը մեռցնէ, և կամ յաղթուելով ինքը մեռնի. ասոր մտքով պատերազմի պատրաստուեցաւ: Վահանին քովինները որ հարիւր հոգի չափ կային՝ տեսնելով Պարսից բազմութիւնը և իրենց քիչութիւնը՝ շատը եղան յուսահատեցան, և միայն երեսուն հոգի մնացին. Պարսիկք Վահանայ խուճապին քիչութիւնը տեսնելով երբոր անոգ կեցեր են, սոնք յանկարծակի վազեցին Պարսից վրայ, և մեծ չփոթութիւն ձգելով բանակին մէջ՝ սաստիկ կարդ տուին Պարսից զօրաց, և իրենցմէ միայն չորս հոգի մեռան:

5. Նոյն միջոցին Պերոզ Պարսից Թագաւորը մեռաւ, ու տեղը անցաւ իր Վաղարշ եղբայրը, որ քննելով Վահանայ քաջութիւնները և անոր ապստամբելուն պատճառը՝ իրաւունք տուաւ Վահանայ, և ուզեց հետը հաշտութիւն ընել, որպէս զի նաև կարենայ անվրէպ ժողվել Հայաստանին հարկը: Վաղարշ ան քանիս համար մարզպան խրկեց Նիխոր Վշնասպատ անունով խաղաղասէր մարդը: Նիխոր երբոր Վահանայ մարդ խրկեց հաշտութիւն ընելու համար, անիկայ ան իրեք պայմանս դրաւ. Ա, Քրիստոնէութեան բաներուն Պարսիկք չխառնուին. Բ, Աւրժանաւորս և հաւատարիմ մարդիկ միայն պատուոյ հանին. Գ, Ինչուան որ երկու կողմն պատճառները չլսեն՝ դադատան մը չկարուի: Այս իրեք խնդիրքին ալ հանդնեցաւ Նիխոր, ու անկէց վերջը գնաց Վահան Նիխորին քով, որուն հետ շատ սիրով տեսնուեցաւ, ու մէջերնին գաշինք հաստատեցին: Վերջը Պարսից դուռն ալ երթալով իրեն ետևս մը ջնջե-

5. Վահան ինչպէս Պարսից աչքը մտաւ ու Հայաստան ինչպէս գարձեալ իրեն քրիստոնեական կրօնքը տարաւ.

լու և գաշինքին վրայ հաստատուն կենալու երդմունք առաւ Վաղարշէն, և սպարապետութեան պատիւը առաջ՝ գարձաւ եկաւ Վաղարշապատ քաղաքը: Երբոր Անդեհան անուշով մարզպանը քիչ մը տաճն կենալէն եաքը հարկաւոր գործոդութեան մը համար ետ կանչուեցաւ, անանկ գովեց զՎահանը Պարսից դրան առջև որ Վաղարշ անոր լաւութեանը փոխարէն մարզպանութեան պատիւը տուաւ: Վահան ալ խնդրեց որ իր Վարդ եղբայրը սպարապետ ըլլայ: Բոլոր ազգին մեծ ուրախութիւն եղաւ տա անակնկալի յաջողութիւնը: Եաքը ընդդէմ Վահան բոլոր կրակատուններըը, և անոնց տեղը եկեղեցիներ շինելով սկսաւ ալ ալ բարեկարգութիւններ ընել (484):

6. Վահանին մարզպանութեան տասնը մեանելուվ Վաղարշ՝ տեղը Նաւաս Կաւատ, որ Թէոփիլա և տալի բերան Վահանին մարզպանութիւնը հաստատեց, բայց վերջը քուրմերուն խորհրդովը Պարսից մարզպան մը խաբեց, հետն ալ շատ քուրմեր, որոնք եկան նորին սկսան կրակատուններ շինել ու արևապաշտութիւն սորվեցնել: Այս եաքած անկարգութեան չդիմանալով Վահան՝ մէկ քանի նախարարաց հետ միաբանեցաւ, ու Պարսից վրայ վազելով զարգեցին զերկինք և կրակատուններըը աւերեցին: Բայց որովհետև Կաւատ Յուստոս դէմ պատերազմի կ՚երթար՝ ան պատճառաւ հաշտութիւն ըրաւ Հայոց հետ, շատ զօրք առնելով Հայոցմէ:

Վահան ան միջոցներուն մեռաւ քսանըվեց տարի մարզպանութիւն ընելէն վերջը, որուն յիշատակը անկարելի է որ Հայոց մէջէն ջնջուի, որ ազգին հանգստութեանը համար իր ամեն հան-

6. Կաւատին միջոց թնչ հանդիպեցաւ ու Վահան երբ մեռաւ.

գըստութիւնն, հարստութիւնն, փառքը, իշխանութիւնը կորնցուց, ինչուան որ գաւ բոլորն ալ նոյն իր ազգին և վերջը իր անձին համար, և իրաւցընէ իրեն անուանը համեմատ Վահան եղաւ ազգին բոլոր թշնամիներուն դէմ:

ԳԱՍ ԻԳ.

Վահանայ մահուանէն ինչուան Հազարապետոյ Հայաստանի տիրելը:

1. Վահանին տեղը մարզպան դրուեցաւ Վարդ իր պզտիկ եղբայրը, որ հազիւ թէ չորս հինգ տարի մարզպանութիւն ըրաւ. վասն զի քանի մը անպիտան մարդիկ նախանձելով իրեն պատուոյն, վրան ամբաստանութիւն գրեցին. անոր համար Կաւատ ալ մարզպանութիւնը ձեռքէն առաւ ու Բուզանդ անուանով անդամ Պարսկի մը տուաւ որ շատ չարչարեց զազգը: Այս առենները Հոնք Հայաստանի վրայ վազեցին ու շատ ջարդք հասուցին ազգին. անոնց դէմ եղաւ Մժեժ Գնունին իր զօրքովը, և Թշնամիները հալածելէն վերջը՝ ուրիշ քանի մը նախարարներու հետ միաբանելով ազգը հանդարտեցուց: Մժեժին հաւատարմութիւնը երբոր լսեց Կաւատ՝ զինքը մարզպան դրաւ, որ երեսուն տարի մարզպանութիւն ըրաւ (548):

2. Մժեժին տեղը եաւէ եաւ չորս հինգ Պարսիկ

1. Վահանէն եաքը մէկ եղաւ մարզպան ու ինչ պեաեվնիք կայ Մժեժ Գնունիին վրայ.

2. Մժեժէն եաքը եղած մարզպաններըը ինչպէս կառավարեցին զՀայաստան ու ինչ է Մեծ Թուական ըսուածը.

մարզպաններ դրուեցան, այսինքն Թենչապուհ, Վշնասպ Վահրամ, Վարազգաս, Սուրէն Ձիւր: Առանցմէ ոմանք ազգը նեղեցին հաւատքի համար, ոմանք ալ խաղաղութեամբ կառավարեցին: Առանց առեներ Մովսէս կաթուղիկոս Հայոց ժամբը նոթոգեց, և Մեծ Թուական ըսուածը գրաւ. որ Թուականութիւն հայոց կ'ըսուի (551):

3. Վարդան երկրորդ Մամիկոնեան առնալով Պարսից ըրած բռնութիւնները, մնաւանդ Սուրէն Ձիւր մարզպանին ըրածը, որ իր Մանուէլ եղբայրը մեղադրել տուեր էր, խօսք գրաւ քանի մը նախարարաց հետ որ ապստամբին Պարսիկներէն. ուստի Յուստինիանոս կայսեր խոստացան հարկատու ըլլալ՝ թէ որ իրենց օգնէ. անոր խոստմունքներուն վրայ վստահանալով վազեցին Դուին քաղքին վրայ. Սուրէնը սպաննեցին, մզգէն ալ ջարդեցին: Խոսրով աս բանիս վրայ բարկացած՝ շատ զօրք խրկեց Հայոց վրայ. բայց Վարդան նորէն յաղթեց Պարսից, և ցրուեց վերինք: Բայց ինքը կասկած առնելով քանի մը նախարարաց մահուամբ վրայ. եւս Պօլիս գնաց և Յուստինիանոսէն օգնութիւն առնելով եկաւ Պարսից վրայ, յաղթեց անոնց ու բանակին ցրուեց: Խոսրով ինքը անձամբ եւս Հայոց և Յունաց վրայ շատ անգամ մեծ մեծ պատերազմներ ըլլալէն վերջը՝ նորէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան ուր մարզպան դրին Ձիւր Վչոն անունով Պարսիկ իշխանը որ տասնուհինգ տարի խաղաղութեամբ կառավարեց Հայաստանը:

4. Ան առեներըը անուանի եղաւ Սմբատ Բագ-

2. Վարդան Բ. Մամիկոնեան ինչ յաղթութիւններ ըրաւ Պարսից դէմ ու վերջը ինչպէս յաղթուեցաւ.

4. Ի՞նչ գիտելիք կայ Սմբատ Բագրատունիէն ու իրեն յաջորդ մարզպաններուն վրայ.

մայաղթ իշխանը, վասն զի Պարսից Խոսրով Թագաւորին զօրավարներէն մէկը իրմէ ապստամբելով երբոր կը հալածէր զինքը, Խոսրով օգնութիւն ուղեց Մաւրիկ կայսրէն, որ շատ զօրք խաբեց, և անոնց զօրավարներէն էին Մուշեղ Մամիկոնեան, Ներսէս Բասենցի, և Սմբատ Բագրատունի. ասոնք շատ քաջութիւններ ընելէն վերջը՝ ապստամբը սպաննեցին ու Խոսրովը նորէն Թագաւորեցուցին: Խոսրով ասոնց ըրած բարեացը փոխարէն Սմբատը Պարսից զօրավար անուանեց, ու Մուշեղը Ազատ իշխան: Բայց Սմբատ ուրիշ շատ քաջութիւններ ալ ընելուն համար մարզպան դրուեցաւ Վրկանի կողմը, և ուրիշ տարի մարզպանութիւն ընելէն վերջը մեռաւ, ու շատ քաջութեան, բարեկարգութեան, բարեպաշտութեան և ազգասիրութեան յիշատակներ թողուց: Սմբատէն վերջը մարզպան դրուեցաւ Դաւիթ Սահակունի, որ քանուընջորս տարի մարզպանութիւն ընելէն վերջը՝ Կոստանդնուպոլիս փախաւ. տեղը մարզպան դրուեցաւ Վարազտիրոց Սմբատ Բագրատունիին որդին, որ նոյնպէս ուրիշ տարի մարզպանութիւն ընելէն վերջը Կոստանդնուպոլիս փախաւ (605):

5. Վարազտիրոցին մարզպանութեան առեներըը Խոսրով Պարսից Թագաւորը Թշնամացաւ Մուշեղ Ազատ իշխանին հետ ու վասն պատերազմի խաբեց իր Մեհրան քաւորդին տասը հազար զօրքով, որուն բացատակ իշխանութիւն տուած էր որ կրցած ջարդեր Հայոցմէ Մուշեղայ. բայց որով հետև Մուշեղ ծերացած էր ու չէր կրնար ինքը միտակ դէմ գնել Պարսից, քովը կանչեց իր Վա-

5. Գայլ Վահան իրեն կարճութեամբը ու տգիտութեամբը ինչ որոգայթներու մէջ ձգեց Պարսիկները ու ինչպէս յաղթեց.

հան անուշով ապրականը որ չատ հնարագիտ ու
ճարտար մարդ ըլլալուն Գայլ Վահան կ'ըսուէր,
և ապահէց անոր որ աս պատերազմը ինքը վրան
առնէ, և անոր խոստացաւ տալիր ունեցած հա-
րստութիւնները ու ստացուածքը: Վահան սի-
րով յանձն առաւ, որովհետև քաջ և միանգա-
մայն խորագէտ մարդ էր, և գրեթէ վստահ էր
պատերազմին յաջողութեը վրայ, մանաւանդ որ
իբրև հաւատոյ պատերազմ՝ Աստուծոյ վրայ յոյ-
սը գրած էր: Վահան որչափ որ անեղկիւղ և վըս-
տահ էր յաղթութեան վրայ, այնչափ ալ ջանաց
առանց արիւնհեղութեան ու քիչ մեռսով գործո-
ղութիւնը ընդունել. ան պատճառաւ սկսաւ հր-
նարքներ գիւաեր մտածել՝ որ թշնամին որոգայթի
մէջ ձգելով ուզածը առաջ տանի. ուստի առաջ
մարդ խրկեց Մխիթարայ՝ խոստանալով որ Մու-
շեղը կը մատնէ Պարսից՝ եթէ որ իրեն տան Տարօ-
նոյ երիվրն ու Մուշեղայ ուրիշ հարստութիւննե-
րը. Մխիթար մէկէն հաւանեցաւ, ու գարձաւ Մուշ
քաղաքը եկաւ, որ արդէն Ճամբայ ելեր էր ուրիշ
տեղ երթալու: Վահան բարեկամութիւն ձեւա-
ցընելով Մխիթարայ քովը գնաց ու համոզեց զինքը
որ իրեն չորս հազար հոգւոյ չափ Պարսիկ զօրք
տայ, որ երթայ Մուշեղը բռնէ: Վահան իր հետը
առաւ ան չորս հազարը, Խաթէ գեղը եկան. հոն
յիսուն հոգի միայն թողուց, ու մեկալներնք Օձ
քաղաքը խաւրեց. վերջը ապսպրեց ան յիսուն
հոգիին որ եթէ ինքը մարդ խաւրէ իրենց՝ իր ա-
նունովը ու նշանովը գործողութեան յաջողու-
թեանը վրայ, երթան Մխիթարին խմացընեն ու ան-
կէ ուրիշ զօրք առնելով իրեն գան: Աս բանս յայ-
տնացընելէն եաքը եկաւ Օձ քաղաքը մնացած զօ-
րայ քովը անոնց ալ ապսպրեց որ զէնքերնին ի-
րենց հագուստներուն տակը պահեն, բարեկամա-
կան կերպով քաղաքը մտնեն, և երբոր ինքը նշան

տայ՝ անհնայ ջարդէն քաղաքացիքը առանց մեկու-
մը ինայելու: Ինչ քիչ սկսաւ քաղաքը մտցընել
զանոնք, ուրիշներս որ առաջուց որոշած էր՝ բոլորն
ալ բաժնեց ան աներուն մէջ, ուր զինեալ մար-
դիկ պահուըտած՝ ներս մտածը կը խղդէին, որով
ամենքն ալ ապահոված. վերջը մեկէն մարդ խաւրեց
ան յիսունին որ երթան ուրիշ երկու հազար հա-
պի ալ օգնական բերեն. ան միջոցին որ մեկալներնք
գացեր էին օգնութիւն հանչելու, քաղաքացւոց
հագցընել առաւ Պարսից զօրաց հագուստները,
ու բոլորն ալ քաղքին դրան դիմացը շարել սը-
ւաւ. երբոր ան երկու հազար Պարսիկները սկսան
ահնուիլ, հրաման առաւ դրան քովի Հայ զօր-
քերուն որ քաղաքը մտնեն փող զարնելով, իբր
թէ քաղաքը առին. հասան քիչ առնէն Պարսիկ-
ներն ալ և ուրախութեամբ քաղաքը մտան, բայց
Հայերը զինենք մէջ առնելով զամենն ալ թրի ան-
ցուցին: Վահան նոյնպէս առանց հագուստան ալ
Հայոց հագցուց, և ուրիշ հարիւր կարիճ հետը ա-
ռած Մեղոյ բառած կրճին քով գարանի դրաւ,
իսկ ինքը եկաւ Մխիթարայ քովը գնաց ու սկսաւ
դանգատիլ իրեն առած զօրքերուն վատութեանը
վրայ. ան պատճառաւ ուրիշ երկու հազար հոգի
ալ ուզեց Մխիթարէն, և ան Մեղուայ կրճին քո-
վերը բերելով գարանամտեանները վրանին վազե-
ցին ու զամենն ալ Թրի անցուցին: Երբոր աս հր-
նարքն ալ յաջողեցաւ, մեկէն Վահան աւետաւոր
խաւրեց Մխիթարայ Թէ ամեն բան յաջողեցաւ,
Մուշեղ բռնուած է ու քիչ առնէն ինքն ալ ա-
մեն բան կարգի դրած կուգայ. պատգամաւորին
հասնելէն քիչ մը եաքը ինքն ալ եկաւ հասաւ, ու
Մխիթարը հիւանդ գտնելով մխիթարեց զինքը և
ուրախացուց՝ ըսելով Թէ քիչ առնէն Մուշեղը
կապած գիմացդ կը տեսնես, ու ամեն տրամու-
թիւնդ կը փարատի. աս բաներս ըսելէն եաքը քո-

վն մարդիկը ձամբեց, ու ինքը Մխիթարին հետ առանձին մնաց. երբոր իրարու հետ սիրով կը խոսէին՝ զարհուրանքի ձեռքն նիզակովը ու սպանդեց Մխիթարը. եղբը գուները գոցելով եւաւ ուրիշ սենեակ մը գնաց, ուր կանչել տուաւ Մխիթարեան վանադպրին ու սուրհանդակը, և ասիկա որ Մխիթարեան կողմանէ շուտ մը Թուղթ գրէ Վարշիր զօրավարին, որ իրեք հազար զօրք առած՝ իրեք օրէն իր քովը գայ. ուղածը գրել տալէն եղբը եկուբն ալ խղդել տուաւ, վերջը մնացած զօրաց մէջն ալ կրակ ձգելով բոլորն ալ այրեց, երբոր անոնք ուսելով խմելով կ'ուրախանային:

6. Այսչափ և այսպիսի հնարքներուն յաջողեցաւ եղբը, Կուէթ ըսուած լեռը գնաց բանակը հոն դրաւ, ու կ'սպասէր Վարշիրին գալուն. և որպէս զի զանոնք ալ խաբէ՝ Մխիթարեան վանքը կանգնել տուաւ ու վրանին դիմացը Հայ իշխաններուն կայնեցուց Պարսից հանգուսաններով: Երբոր եկաւ Վարշիր՝ իշխաններուն իրմէ առաջ ներս մտան, անոնց ետևէն մտաւ Վարշիր ու բարև տուաւ Վահանայ՝ կարծելով թէ Մխիթարն է: Վահան բարկանալով մը ըսաւ Վարշիրին, «Որդիք անօրէնութեան, թեև ձեզ մոքերնիդ դրած էիք Հայերը Պարսից առնոզը գարձնելու. անարժան էք կենդանութեան», ու ըսելով տրամցնց ծառաներուն որ Վարշիրը ձեծեն. երբոր անիկա սկսաւ աղաչել որ գէթ կենացը խնայէ, ըսաւ Վահան. Թէ որ ուզած կառարես՝ կը խնայեմ քեզի. ուստի մեկէն դրել տուաւ իր զօրապետին որ հազար հոգի Կուէթ լեռան տորոսը խաբէ, հազար հոգի ալ ուրիշ տեղ մը, մնացած հազար վեց հարիւրն ալ իրենց տեղը ձգէ, ու ինքը տասը հոգւով իրեն գայ: Թուղ-

6. Վահան ինչ հնարքով զՎարշիր բռնեց ու սպաննեց.

թը գրել տալէն եղբը մեկէն սպաննել տուաւ Վարշիրը. ու երբոր մեկալ զօրապետն ալ եկաւ, զան ալ խղդել տուաւ. վերջը տպին անդին ցրուած զօրացը վրայ վազելով ամենն ալ թրէ անցուց, ոբովհետև բազմութենէն հալիւ քառասուն հոգի չազատեցան ու փախան Խոսրովու քովը գացին, ու եղած կոտորածները պատմեցին:

7. Խոսրով շատ արամեցաւ ու բարկացաւ Վահանայ գէմ, առջինէն աւելի բազմութիւ զօրք ղրկեց Մխիթարայ Վախտանկ հօրեղբօրը ձեռքը ու Վահանայ վրայ խաբեց: Վահան Վախտանկայ գէմ վարպետութեան տեղը քաջութիւնն ու կենդանի հաստատը գինք ու օգնական առնելով իրեք չորս անգամ սաստիկ ջարդ տուաւ Պարսից ու փառաւոր յաղթութիւններով իր զօրավարութիւնը պահեց: Վահան սա յաղթութիւններէն եղբը արդէն ծերացած ըլլալով անընդհատ պատերազմներէ ալ տկարացած՝ մեռաւ, և իր հայրենասիրութեան ու ատտուածպաշտութեանը հետ անմոռանալի ըրաւ նաև իր պատերազմական հնարագիտութիւնը, որուն մէջ թէ որ չափազանց երևնայ խորագիտութիւնը, Պարսից անգթութեանը՝ և ան միջոցին Հայաստանի խելագարութեանը նայելով գիւրաւ կ'արդարանայ:

8. Վահանայ քաջութեանը ժառանգորդ եղաւ իր Սմբատ հայրենասէր որդին որ միշտ յաղթող գտնուեցաւ անպարտելի ու զարմանալի քաջութեամբ և Պարսից չորս երեւելի զօրավարները սպաննեց: Սմբատայ ալ յաջորդեց Վահան որդին որ իր նախորդներուն պէս քաջ, կարճ ու պատերազմող եղաւ:

7. Վահան ինչպէս արիացաւ Վախտանկին գէմ ըրած պատերազմին մէջ ու ինչպէս մեռաւ.

8. Վահանէն եղբը որոնք յաջորդեցին.

ԴԱՍ ԻԴ.

Հագարացւոց Հայաստանի տիրելեն ետքը Բագրատունեաց թագաւորելան սկիզբը:

1. Վահանայ մեռնելեն ետքը երբոր Վարազտիրոց մարզպանը Հայաստանէն փախաւ, նախարարները միաբանած՝ Յուդայ կայսրին խնդրեցին որ Դաւիթ Սահառունին իրենց կիւրապաղատ դնէ. բայց երեք տարիէն վերջը նորէն խռովութիւն հնարելով մէջերնին՝ Դաւիթ Սահառունին հանեցին կիւրապաղատութենէն: Ան միջոցներուն Պարսկաստան խռովութիւն ըլլալով Հագարացիք զօրացան և Պարսկաստանի տիրեցին: Անկէց ալ և այլ խռովարար ու ապստամբներ Հայաստանի վայ վազեցին ու սկսան շատ տեղ աւերել աւերշարիլ, ու շատ չարդեր ըրին Հայաստանի մէջ (635):

2. Վահան Կամսարական՝ Գայլ Վահանայ Թոռը, տեսնալով ազգին Թշուառութիւնները ու Թէ հազարի չափ զօրք ժողվեց, ու իր Տիրան եղբօրը և Մուշեղ զօրավարին ձեռքը տալով Հագարացւոց դէմ խաւրեց: Առնց հետ միացաւ Սահառունի Աշձևացին իրեն զօրքերովը. բայց պատերազմին առնը Սահառուն Թշնամւոց կողմը անցնելով սկսաւ իր ազգայիններուն դէմ պատերազմիլ, ասով Թշնամիները զօրացան ու բոլոր Հայերը չարդեցին

1. Սմբատայ ու Վահանայ մահուընէն ետքը Հայաստան ինչ վիճակ ունեցաւ.

2. Հագարացիք ինչպէս Հայաստանի տիրեցին ու ասիկայ ինչ չափ ըրաւ ազդեցուց.

իրենց զօրավարներովը հանդերձ: Հայաստանի նեսաբէն ալ վազելով շատ մշտաներ ըրին. Դուին քաղքին մէջ ալ ատաուերիու հազար մարդ Թրէ անցընելէն վերջը երեսունուհինգ հազար հոգի ալ դերի տարին:

3. Հագարացւոց առջի յարձակմունքէն վերջը Յունաց կողմանէ կիւրապաղատ գրուեցաւ Վարդաներոցը, որ տարին մը չափ պաշտօնը ընելէն ետքը մեռաւ, ու տեղը անցաւ իր որդին Սմբատ: Ասոր կիւրապաղատութեան երկրորդ տարին Հագարացիք նորէն անթիւ բազմութեամբ Հայաստանի վայ եկան և շատ կոտորածներ ըրին: Նախարարները տեսնալով որ Հագարացւոց անթիւ բազմութեանը և անոնց գազանայինադիմութեանը դէմ դնելը գրեթէ անկարելի է, աւելի օգտակար սեպեցին խոնարհութեամբ յաղթել անոնց գազանութեանը քան Թէ պատերազմիլ. ուստի իրարու հետ միաբանեցան, շատ ընծաներ տարին, հպատակութիւն խոստացան անոնց և հարկ տալ Յունաց չհպատակելով:

Ասկէց դուռ բացուեցաւ որ երբեմն Յոյները և երբեմն Հագարացիք Հայաստան արշաւելով սոսկալի մշտաներ հասուցին մեր խեղճ երկրին. վասն զի երբոր Յոյները կը լսէին Թէ Հայերը Հագարացւոց հպատակեր են՝ զօրքով Հայաստանի վայ վազելով վրէժխնդիր կ'ըլլային. նոյնպէս երբոր Հագարացիք կ'իմանային Թէ Յունաց հետ վերաբերութիւն մը ունեցեր են, ձեռքերնին ու մրսաքերնին տնցած չարիքը կ'ընկնէին Հայոց: Այս բանս քառասուն տարի չափ տեւեց:

Ան քառասուն տարուան մէջ Սմբատին տեղը կիւրապաղատ դրուեցաւ Համազասպ Մամիկոնեան, որ հինգ տարի կիւրապաղատութիւն ը-

3. Յոյնք ինչու Հայոց վայ սկսան արշաւել.

բաւ, անդը անցաւ Գրիգոր, որ քսանուչորս տարի իշխելէն ետքը պատերազմի մէջ մեռաւ (682):

4. Աբջի Հոգարացի ասիկանը եղաւ Աբգլա անունով մէկը, որ Հայերը որսալու համար նախ սկսաւ քաղցրութեամբ վարուիլ հետերնին, ու վերջը գրեթէ բոլորը նախարարները և Սահակ կաթուղիկոսը բռնեց ու շղթայակապ Դամասկոս խրկեց: Նախարարներուն մէջէն փախաւ Սմբատ Բիւրատեան Բագրատունին, և Յուստինիանոս կայսրէն օգնութիւն առնելով, ուրիշ մնացած նախարարներն ալ ժողվելով Աբգլային վրայ պատերազմի ելաւ, և անանկ սաստիկ չարդ տուաւ որ հազիւ թէ Աբգլան միայն կրցաւ ազատիլ: Իսկ Սմբատ կիւրապաղատութեան պատիւ առնելով վեց տարիի չափ հանդարտութեամբ ազգը կառավարեց, ինչպէս որ Մովսէս անունով զօրավարը եկաւ ու սկսաւ նորէն ձիւանիթը հայցընել Հայասանէն. ան տաճն Սմբատայ հետ միացաւ Ներսէս Կամսարականը, ու մեկտեղ յանկարծակի Մովսէսին վրայ վազելով փախուցին զինքը:

5. Մովսէս յաղթութեան վրայ սաստիկ բարկացած երբոր չաւ զօրքով նորէն Հայաստանի վրայ կուգար որ տակինուվայր ընէ երկիրը, Սահակ կաթուղիկոս՝ որ Դամասկոս գերութեան մէջ էր ու միանգամայն Մովսէսին սիրելի բարեկամ, սա բանս լսելուն պէս խնդրեց որ Մովսէսին հետ տեսնուի: Բայց Ջամբան գալու տեղը մեռաւ, ու չկրցաւ հետը տեսնուիլ. Թէոդոս մը գրեց Մովսէսին. Մովսէս երբոր խմացաւ Սահակայ մահը, հրամայեց որ չթաղեն զսուրբը ինչպէս որ ինքը

4. Աբգլա ինչ բռնութիւն ըրաւ Հայոց դէմ ու ինչպէս վնասուեցաւ Հայաստանէն.

5. Հայաստան ինչպէս հրաշքով խալըսեցաւ Մովսէսին բարկութենէն.

պայ տեսնէ: Երբոր Մովսէս մեռնելին խօսքը մնաւ ու բարև տուաւ սուրբին, ան ալ բարեւը առնելով երկնցուց ձեռքը ու թաղեցը տուաւ Մովսէսին իբրև թէ կենդանի ըլլար: Կարգաց Մովսէս սրբոյն խնդիրքը, ու ըսաւ, «Կատարուի խնդիրքդ ո՛ այրդ Աստուծոյ»: Ան հրաշքէն չարժած՝ անենեւին ձեռս մը չբրաւ Հայոց, և ամիրապետին միջնորդութիւն ընելով ազատեւ տուաւ Դամասկոս եղած բոլոր Հայոց գերիները:

6. Ինչ մը տաեն խաղաղութեամբ երթալէն ետքը՝ Հայաստանի ասիկան իշխուեցաւ Կաշմ, որ խաբէութեամբ բոլոր նախարարները Նախջաւանայ եկեղեցւոյն մէջ ժողվելով այրել տուաւ: Կաշմէն ետքը անզգամութեան կողմանէ անուանի եղաւ Եզիտ ասիկանը, որ ծանր տուրքերով և տապալութիւններով տասիկ նեղեց Հայերը: Երկու տարիէն ետ կանչուելով իրեն տեղը Պատրիկ անուանեց Սահակ Բագրատունի բարեպաշտ մարդը որ խաղաղութեամբ կառավարեց ազգը խելմէ տաեն: Սահակէն վերջը գրուած ասիկանները մէջ ամենէն առելի Հայերը տանջողը եղաւ Հասան ասիկանը, որուն տաենը Հայերը Մուշեղ Մամիկոնեանին առաջնորդութեամբ մեկ քանի կոտորածներ ըրին Հագարացւոց. տա պատճառաւ ասիկան գրուեցաւ Եզիտ Բ. և ասիկայ զՀայերը անանկ չարչարեց որ նմանը ամենեւին չէր եղած:

Կաշմէն ինչուան Եզիտ Բ. որ գրեթէ հարիւր տարուան միջոց է, ասիկան գրուեցան տասնք. Վլիտ, տասը տարի. Մահմատ, հինգ. Աբգլաղիզ, տասը. Մրուան, մեկ. Աչտա Բագրատունի, տասնուհինգ. Եզիտ Ա. երկու. Սահակ Բագրատունի Պատրիկ, վեց. Սիւլէյման, իրեք. Պէքիր,

6. Կաշմ ու իրեն յաջորդ ասիկանները ինչպէս չարչարեցին զՀայերը.

ինը. Հասան, իրիք. Հայ իշխաններ, հինգ: Ե. զևս Ե. տասուերիու (797):

7. Եզիտին տեղը ոտիկան գրուեցաւ Խուզիմայ անունով Հպատարացին, որ հանդարտ խաղաղասէր և լաւ մարդ ըլլալով քանի տարի ոտիկանութիւն ըրաւ ու ազգը հանգչեցուց. երբոր ինքը մեռաւ, տեղը անցաւ Հոլ անունով մէկը, որ նոյնպէս խաղաղասէր ըլլալով խաղաղութեամբ կառավարեց ազգը տասնուեօթը տարի: Երբոր Հոլ ևս կանչուեցաւ՝ նախարարներուն ազատնքովը Պատրիկ գրուեցաւ Բագարատ Բագրատունին, որ տասնուչորս տարի իշխելէն վերջը չանցաւոր գանուելով աերութեան բաներուն մէջ երեսէ ընկաւ, ու տեղը խաւրուեցաւ Ապուսէթ ոտիկանը, որուն ապստրեր էր ամիրապետը որ վարպետութեամբ բռնէ Բագարատը ու իրեն խաւրէ. ան ալ խարդախութեամբ բռնեց զինքը ու ամիրապետին խաւրեց, ուր Բագարատ մահուընէ ազատեցաւ համար՝ առ երես հաւատքը ուրացաւ: Երբոր Սահակ Բագրատունի իմացան Բագարատայ բռնուիլը, տասը հատած Պասսեթին վրայ վազեցին, զինքը սպաննեցին և բոլոր զօրքը յրուեցին: Ամիրապետը խմանալով եղած գործողութիւնները՝ անհամար զօրքով խաւրեց Բուղա ոտիկանը, որ բոլոր նախարարները բռնելով իրեն խաւրէ. իսկ հասարակ մարդկանց մէջէն սեպով, քաջ ու բանի և կող մարդիկները տաճկըցնէ ու իր քովը պահէ, մեկալնոնք առանց խնայելու սպաննէ:

8. Բուղա ամեն չարիք ընելով բոլոր Հայաստանը արևնելքայ ըրաւ, ոչ աղաչանայ, ոչ խեղ-

7. Եզիտէն ետև եղող ոտիկաններուն ինչպէս վարուեցան Հայոց հետ.

8. Բուղա ինչ անգթութիւններ ըրաւ ու ովկ ե Սմբատ Խոստովանող.

ճութեան և ոչ ընծայից կը նայէր, այլ ամենքը անխտիր կը մեռցընէր: Այս բաներու սեւնալով Սմբատ Բագրատունին ուզեց որ ուրիշներուն վնասովը ինքը ան թշնամութիւնեն ազատի. ուստի չատ ընծաներով Բուղային գնաց, ու ամեն բանի մէջ անոր չարութեանցը խորհրդակից կ'ըլլար և առաջնորդ Հայաստան մտնալու: Բայց ինչպէս որ սովրաբար կ'ըլլայ մտանիչներու, ինքն ալ վախճանին չհասաւ. վասն զի Բուղան Հայաստանեն երթալու աեն ուրիշ կալանաւորայ հետ մեկտեղ զինքն ալ Պաղտատ տարաւ, ու իր տեղը ոստիան գրաւ Շեխն անունով Պարսիկ մը:

Ամիրապետը բոլոր նախարարները բանտ դնել տուաւ, Սմբատն ալ հետերնին, ու սկսաւ ստիպել որ հաւատքնին ուրանան: Ոմանք հաւատքնին ուրացան, և ոմանք նահատակեցան. Սմբատ ալ զրկալով ըրած չարութեանցը վրայ, հաւատքին վրայ հաստատուն կենալով բանտին մէջ մեռաւ, ու անով Խոստովանող ըսուեցաւ: Այս թշնամութիւններէս ետրս հինգ տարի վերջը սկսաւ Բագրատունեաց Թագաւորութիւնը:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԴԱՍ ԻԵ.

Բագրատունեաց թագաւորաբևան սկիզբը։

1. Երբոր մեր ազգին գառն գերութեան 431 տարին լրացաւ, ուզելով Աստուած իր ողորմութեամբը մխիթարել ազգը և առջի փառքը կերպով մը նորոգել, Աշոտ անունով Բագրատունի նախարարը հանեց, որ իրեն ազգասէր, այլևիւ և խոհեմութեան բնութեամբը ամենուն սիրելի լլլալով կանգնեց թագաւորութիւնը և ազգը գերութենէ ազատեց։

Ա. Աշոտը Սմբատ Խոստովանողին որդին էր. երբոր Շեխին Հայաստանի վրայ ոտիկան գրուած էր՝ Աշոտ շատ արդիւնք ցոյց անոր առջևը՝ իր ազգակիցներուն վրայ գութ ունենալով, Հայաստանի աւերակ գարձած տեղերը նորոգելով և տերութեան ամեն բաներու մէջ Հաւատարիմ գլլալնուելով զամենքը կը յորդորէր որ իրեն պէս Հաւատարիմ լլլան և խռովութիւն չհանեն։

1. Բագրատունեաց թագաւորութիւնը որո՞ն ձեռքովը սկսաւ ու ինչպէս։

Երբոր Շեխին հոս կանչուեցաւ, ամիրապետը շատերէն լսած լլլալով Աշոտին Հաւատարմութեան ու լաւութեան անունը՝ ուզեց փոխարէնը մը ընել Աշոտին. ուստի շատ ընծաներով և թագաւորական զգեստներով Ալի Երմէնի անունով ուրիշ Հայ նախարարը խաբեց որ գայ Աշոտը բոլոր Հայաստանի վերակացու դնէ, և ան եղաւ 839ին։ Աշոտ երբոր առաւ ան իշխանութիւնը, Հաւատարմութիւնը աւելցնելով զօրքերը շատցուց, սկսաւ բարեկարգութիւններ ընել ամեն բանի մէջ, իր Աբաս քաջ եղբայրը ապարտպետ դրաւ, և անոր հետ մեկտեղ Հայաստանի Թշնամիները վանեց, և անանց յաղթութեան ձայնը բոլոր չորս կողմերը տարածուելով ամենուն սիրտը վախ ձգեց ու ալ անկէց ետքը գադրեցան Հայաստան արշաւելէն։

2. Ան միջոցին որ Աշոտ Հայաստանը բարեկարգելու հետ էր, Պաղտատի մէջ նոր ամիրապետ նստելով, Բուղային առանը գերի գնացած նախարարները խնդրեցին նոր ամիրապետէն որ գերութենէ ազատին, ու երբոր կատարուեցաւ խնդիրքնին՝ մեծ ուրախութեամբ Հայաստան եկան, և իրենց ուրացութեանը վրայ զղջալով Աշոտին հետ միաբան սկսան կարգի դնել Հայաստանը։ Նախարարները ամեն կերպով խմանալով Աշոտայ կատարելութիւնները, խնդրեցին ամիրապետէն որ Թագաւորեցնէ վրանին Աշոտը՝ խոստանալով որ Հաւատարիմ կը կենան իրենց հպատակութեանը մէջ։ Ամիրապետը Հաւանեցաւ նախարարներուն աղաչանացը. ու Թագ և Թագաւորական ծիրանի խաբեց Աշոտին։ Աշոտին փառաւորութիւնը լսելով Յու-

2. Նախարարները ինչպէս գերութենէ ազատեցան ու Աշոտ ինչպէս Թագաւորեց.

նաց Վասիլ կայսրը որ ազգաւ Հայ ու Աբշահու-
նեաց ցեղէն էր, Թագ մ՚ալ ինքը խաւրեց (885):

3. Աշոտ Թագաւորելէն վերջը սաքի Թագաւո-
րական կարգերը նորոգեց, աւերուած տեղերը նո-
րէն շինեց, երկրագործութիւնը սկսաւ ծաղկեցը-
նել, Թագաւորանիստ քաղաքն ալ Բագարանը ը-
րաւ: Կամաց կամաց սկսաւ նուաճել Հիւսիսային
ազգերը, որոնք առենով Հայոց ձեռքին տակն էին,
նոյնպէս նաև Գուրգաթներն և Աւասկայներուն,
որոնց կարգ կանոն դնելով խոհեմ առաջնորդներ
ու իշխաններ դրաւ անոնց վրայ: Այս գործոցը-
թիւններէն վերջը Աշոտ Պօղոս Վահն կայսեր տե-
սութեան գացած ըլլալով, պատուով ետ դառնա-
լու առենը երբոր Շիրակ հասաւ, ծանր հիւան-
դացաւ, ու տեսնալով որ մեռնելու մօտ է կանչեց
կաթողիկոսը, եպոլոր հոգևոր պատրաստութիւն-
ները ընելէն վերջը եօթանասունհոգիէ տարեկան
մեռաւ. քահանութեան տարի իշխանութիւն ընելէն և
հինգ տարի Թագաւորելէն վերջը: Աշոտ խելքով
ու խոհեմութեամբ առաւ Թագաւորութիւնը,
քաջութեամբ պահեց, բարեպաշտութեամբ ան-
ցուց կեանքը և ամենուն իրաւցընէ փրկիչ և սի-
րելի Հայր հասարակաց եղաւ:

3. Աշոտ ինչ կարգաւորութիւններ ըրաւ ու
ինչպէս մեռաւ.

ԴԱՍ ԻԶ.

Սմբատ Ա. իր առաջին խոովութիւններն ու մահը:

1. Սմբատ Աշոտոյ որդին և յաջորդը Գուրգ-
ենոյ աշխարհքին էր երբոր լսեց իր հօրը մահը, ու-
սուի շուտ մը եկաւ որ Թագաւորութիւնը առնէ, և
բոլոր ազգին հաւանութեամբը Թագաւոր եղաւ:
Այս բանս լսելով Աշոտին Աբաս եղբայրը, ուզեց
որ ինքը Թագաւորէ, և պատերազմ բացաւ Սմբա-
տին հետ. բայց Գէորգ կաթուղիկոս արգիլեց զին-
քը՝ երդում առնելով Աբասէն որ նորէն չապըս-
տամբի. Թէպէտ անիկայ երդմանը վրայ հաստա-
տուն չմնալով նորէն ապստամբեցաւ ու յաղ-
թուեցաւ Սմբատէն:

2. Սմբատ Աբասին յաղթելէն վերջը եղած գոր-
ծոցութիւնները և ան առենի հանգստութիւնը
խնացընելով ամրապահեցին, արքայական Թագ ըն-
դունեցաւ անկէց, նոյնպէս նաև Վահն կայսրէն
շատ պատիւներ առաւ: Սմբատայ առ փառաւո-
րութեանցը նախանձելով Ափշին Պարսից ոստի-
կանը՝ վրան պատերազմի եկաւ. Սմբատ ալ երե-
սուն հազար զօրքով անոր դէմ պատերազմի ե-
լաւ, բայց առանց արիւնհեղութեան քաղցրու-
թեամբ սիրտը առաւ ու իր տեղը դարձուց: Եր.

1. Սմբատ ինչպէս Թագաւոր եղաւ ու ինչ
կռիւ ունեցաւ իր Աբաս հօրեղբօրը հետ.

2. Ինչու Ափշին պատերազմ բացաւ Սմբատայ
դէմ ու ինչպէս յաղթուեցաւ.

կու տարին վերջը Ափշին զրկելով ըրած հաշտութեանը վրայ, ուզեց Հայաստանը նուաճել. ուստի շատ զօրքով եկաւ սուտ ձայն մը հանելով թէ Հայաստանէն պիտի անցնի երթայ. բայց երբոր իմացուեցաւ խարդախութիւնը, մեկէն Սմբատ հրամայեց խաւրել նախարարներուն որ իրենց զօրքերը գան Ժողովուրդի. և անոնց հետ միասին վազեց Ափշինին վրայ, շարաչար յաղթեց անոր և փախուց զինքը:

3. Ան միջոցին Աշմատ Միջագետաց սահիկանը տպատամբելով ամիրապետին Հայաստանի վրայ վազեց. քանի մը տիրապետներ նախարարներ Թագաւորին հետ միաբանելով, վանքասէն հազար զօրքով Աշմատին դէմ պատերազմի պատրաստուեցան: Բայց ինչպէս շատ անգամ կը հանդիպի որ նաև քաջերուն բազմութեանը մէջ վատեր գտնուին, սահակ ալ սա դիպուածին մէջ Գագիկ Սմբատայ անունը փառասիրութեամբ ուզելով Թագաւորութիւնը ինքը առնել՝ ծածուկ Աշմատին հետ միաբանեցաւ, ու Սմբատայ շար խորհուրդներ տալով և գէշ ճամբաներէ առաջնորդելով անոր զօրացը՝ ի՛ուզէր որ յաղթուի. բայց Հայերը քաջութեամբ պատերազմելով յաղթեցին Աշմատին ու Գագկայ անխելք յոյսն ալ պարապը հանեցին: Գագիկ իրեն արժանաւոր պատիժը գտնելով Սմբատին քեռորդիին սպանուեցաւ:

4. Ափշին երբոր լսեց Թէ նախարարները պատերազմին լծնալուն պատճառաւ ցրուեր են՝ նորէն վազեց Հայաստանի վրայ. բայց ան անգամ

3. Հայերը ինչպէս Աշմատին ալ յաղթեցին ու մի՛ և Գագիկ Սմբատայ անունը.

4. Սմբատ Ափշինին կատաղութենէն ինչպէս խալըսեցաւ ու ինչ հանդիպեցաւ Յուսուփայ և իրեն մէջ.

նախարարները Թագաւորին հրամանին չհնազանդելով օգնութեան չեկան. ատով հարկադրուեցաւ Սմբատ հաշտութիւն խօսելու պատանդ տալով իր որդին և մեկ եղբօրորդին: Ափշին երբոր ան բաներով գոհ ջրլալով ի՛ուզեր ուրիշ չարիքներ ալ հասցընել, ինքը չարաչար սատկեցաւ, պատանդներն ալ ազատեցան: Տեղը անցաւ իր եղբայրը Յուսուփ. երբոր ան բանս լսեց Սմբատ, գինովցով Յուսուփին խարդախ և անգութ բնաւորութիւնը աղաչեց ամիրապետին որ սակէց վերջը Հայաստանին հարկը ուզելի Թագաւորը խաւրէ ամիրապետին ու սահիկանները ամենևին չհաւնեն, որովհետև սահիկ կը նեղէին զՀայերը: Ամիրապետը կատարեց Սմբատայ խնդիրքը, և Թագաւորական Թագ և ուրիշ շատ ընծաներ ալ խաւրեց Սմբատայ: Ան բանիս Յուսուփ սահիկ նեղանալով մեկէն զօրք ժողվեց ու սկսաւ Հայաստանի վրայ վազել. Սմբատ ալ իր զօրքերուն գլուխը ելաւ. բայց դեռ պատերազմ չբրած՝ երկու կողմէն ալ ուզեցին հաշտութիւն ընել և բարեկամութեան նշան՝ Յուսուփ սակիւ Թագ խաւրեց Սմբատայ:

5. Հաղիւ Թէ քիչ մը հանգստութիւն գտաւ Սմբատ Թէնամեայ ձեռքէն, Եգերացւոց Կասանդին Թագաւորը սահմանի պատճառի պատերազմ բացաւ Սմբատայ հետ. անոր դէմ գնաց Սմբատ Վրաց Աբուխասրէ Թագաւորին հետ. սոյնիք յաղթեցին Կասանդիկին, և Աբուխասրէ Կասանդիկին հետ հաշտութիւն խօսելու սանիք՝ խաբէութեամբ բանից զինքը ու Թագաւորին բերաւ: Սըմբատ չորս ամիս Անիի բերդին մէջ պատուով պա-

5. Սմբատ ինչպէս յաղթեց Կասանդիկին, ինչպէս Աբուխասրէն ու իրեն դաշակիցները պատժեց ու Գագիկ ինչպէս Թագաւորեց.

հիւղին հաքը գԹացաւ Կոստանդնի վրայ ու ազա-
տեց զինքը· ան քանի Աթրնեսեհ իրեն անար-
գանք սեպելով ուրիշ քանի մը նախարարաց հետ
խօսք դրաւ որ Սմբատը սպաննէ: Եւ որովհետև
նոյն միջոցին Թագաւորը Տաչրաց գաւառները, ա-
պըստամբ նախարարները միջերնին միկը որոշե-
ցին որ երկայ Թագաւորին հետ բարեկամութիւն
ձեւացընելով զինքը սպաննէ: Ան քանիս վրայ ա-
պահովելով իրենք վազեցին Անին առն, մերջը
Երազգաւորս գացին, ու Թագաւորին պալատը
մտնելով ժամէ 'ի ժամ ի'սպառէին որ Սմբատին
սպաննուիլը լսեն· բայց բարեբաղդութեամբ իմա-
ցաւ Թագաւորը անոնց դաւը, ու մէկէն իր զօր-
քերը ժողվեց որ ապստամբները նուաճէ: Պատե-
րազմի առեն Թագաւորին զօրքերը իրենց թիրոջը
սիրոջը վառուած, այնպէսի սաստիկ կռիւ տա-
ւին ապստամբներուն, որ Սմբատայ սիրոջ չդի-
մանալով ի'պաշէր որ ինայեն ապստամբներուն:
Աթրնեսեհ տեսնելով եղած կարգը, եկաւ Թա-
գաւորին ոտքը ենկաւ ու Թողութիւն խնդրեց իր
ապերախտութեանը· Սմբատ ներեց անոր յան-
ցանացը, և մէկալ նախարարներուն աչքերը փո-
րել տուաւ: Բայց անանկով ալ խաղաղութիւն
չգտաւ· վասն զի իր քեռորդին Գագիկ Արծրունի
Թեթև պատճառի մը համար ապրուեցաւ Թագա-
ւորին հետ, գնաց Յուսուփին հետ միաբանեցաւ
ու Սմբատայ վրայ մեծամեծ ամբաստանութիւն-
ներ ըրաւ անոր· Յուսուփ ալ Հայոց մէջը երկպա-
ռակութիւն ձգելու մտքով Գագիկայ Թագ դրաւ
ու իր Վասպուրականի աշխարհքը խաբեց· անի-
կայ ալ շատ նախարարներ իր կողմը ուրացով
յայտնի սկսաւ Թագաւորել (908):

6. Երբոր լսեց Սմբատ Գագիկայ Թագաւորելը

մէկէն Յովհաննէս կաթողիկոսը շատ ընծաներով
Յուսուփին խաբեց որ երկայ Յուսուփին սիրոջ
ղրկելուն ու խաղաղութիւն ընել ասյ· բայց ասոի-
կանը փոխանակ զինանելու կաթողիկոսին ազա-
չանացը՝ բանս դրաւ զինքը, ու սկսաւ պատերազ-
մի պատրաստութիւն տեսնել: Գարնան սկիզբնե-
րը Գագիկայ առաջորդութեամբը սկսաւ Հայաս-
տանի նեբաերը վազել ու մեծամեծ կոտորածներ
ըրաւ, որով նախարարներէն ոմանք յուսահատե-
լով՝ գնացին անձնատուր եղան Յուսուփին: Սմբ-
բատ իր ունեցած քիչ զօրքովը որչափ որ կրնար
դէմ կը գներ, բայց ձորը հասնելով Թուգարա-
յոց երկիրը փախաւ· ան քանս որ իմացաւ Յու-
սուփ՝ սեւելի ազատութեամբ սկսաւ Հայաստանը
քանդել ապականել, ինչուան Սմբատ տեսնելով
եղած չարիքները՝ ելաւ Թուգարայոց աշխարհ-
քին ու սկսաւ նոյն ալ պատերազմի պատրաս-
տութիւն Յուսուփը վանելու համար· բոլոր ոտնե-
ցած զօրքերը ժողվելով իր երկու որդուցը ղրա-
ւաւ· անոնք մեծամեծ քաջութիւններ ընելով եր-
բոր Թշնամւոց պիտի յաղթէին՝ Աւորդիները Թշ-
նամւոց կողմը անցան· անով Սմբատայ զօրքերը
հարկադրուեցան փախչելու, և բոլորովին յաղ-
Թուեցան: Ան քանս երբոր տեսան ուրիշ շատ նախ-
արարներ, փոխանակ իրենց Թագաւորին օգնե-
լու՝ գնացին Յուսուփին անձնատուր եղան, որ-
պէս զի բաներնին ապահովցընեն· բայց Յուսուփ
տեսնելով նախարարներուն բազմանալը վախցաւ,
ու սուտ մտածութեամբ շատը յայտնի ըս-
պանին, շատը ծածուկ խղդեց, ոմանց ալ Թոյն
տուաւ, որով քանի մը մեծ նախարարներ
միայն մնացին:

Ինչ ըրաւ ու Յուսուփ ինչպէս տիրապետեց Հայ-
աստանի.

7. Տեսաւ Մմբատ որ բոլոր նախարարներըքա-
վէն հեռացեր էն, ու ինքը չկրնար գէմ դնել Յու-
սուփին, ուստի իր մարդիկներովը քաշուեցաւ Կա-
պոյտ քերդը, որ անառիկ էր: Յուսուփ եկաւ պա-
շարեց բերդը ու Հայոց զօրքերը դրաւ որ բերդա-
պահներուն հետ պատերազմին: Սմբատայ սիրտը
չդիմացաւ երկար կռուին եղած ջարդերուն որ ե-
ղին համար էին, և վհատձնութեամբ յանձն ա-
ռաւ աւելի իր թշուառութիւնը քան թէ տեսնել
իր ազգակիցներուն մահը, ու ինք զինքը Յուսու-
փին ձեռքը տուաւ, երդմունք առնելով անկէ որ
իրեն անձին վնաս մը չընէ: Յուսուփ առնի բերա-
նը պատռով պահեց զինքն ու եաքը թողուց որ
Շիրակ երթայ. բայց երբոր Գագիկը քովէն վար-
խաւ, Յուսուփ բարկանալով խարէութեամբ կան-
չեց Սմբատը ու շղթայի զարկած Գուէին տարաւ.
հոն տարի մը մնաց բանտի մէջ պահեց հողի վրայ
պառկեցընելով միայն հոյ և ջուր տալով. վեր-
ջը երբոր լսեց որ Երնջակ բերդին մէջ շատ մը նախ-
արարներ ապստամբեր էն՝ գնաց ան բերդը տա-
նելու, ու երբոր պատերազմով չկրցաւ յաղթել,
հրաման տուաւ որ Սմբատը բերդին պարսպը տա-
նին ծեծեն ու նախատեն: Գահավէժները սկսան
տանջանքը աւելցընել որ հաւատքը ուրանայ. նախ
թաշկինակով բերանը գոցեցին որ շունչ չկարե-
նայ առնել. վերջը գետարանով վիզը ձգեցին, ու
գլխուն վրայ ծանր բեռներ դնելով՝ ատոր հոգի
վրան կ'ինդային որ նեղութիւնը սաստկացնեն:
Այս ամէն անպիտանութիւններս ընելէն վերջը, քանի
որ դեռ ողջ էր մորթը հանեցին ու Գուէին տանե-
լով խաչեցին երանելի Թադեւոսը, որուն վրայ
լոյս ծագեց և շատ հրաշքներ ալ եղան: Այս բա-

7. Սմբատ ինչ գործ ուներ ասպատակելի մահ ու-
նեցաւ.

նիս մէջ մեր նախարարաց ըրածը այնպիսի գոր-
ծոցութիւն մըն է որ մեզը յաւիտի կը տեսնուի
նախանձոտ և տեսլութեան կիրք, քաղաքականու-
թեան պակասութիւն, անձնասիրութիւն, սիրա-
տեղութիւն, և գահավէժ խորհուրդ, որ ատոնք
ամէնն ալ մեծամեծ ու անասելի աղբիւրներ էն
անմիաբանութեան, ազգատեղութեան և կրօնից
ու մարդկութեան պակասըն, որով գազանային
բնութիւն մը անոնց տեղը կը տիրէ, ինչպէս որ
տեսանք առ բանիս մէջ ու պիտի տեսնենք բոլոր
Բագրատունեաց և Ռուբինեանց պատմութեան
մէջ շատ տեղ: Թէ որ Թագաւորը գէշ ըլլար (ինչ-
պէս էր Աբասացիր Աբշահունեաց վերջի Թագա-
ւորը), ան տան քիչ մը իրաւունք կրնային ու-
նենալ նախարարները. բայց ոչ երեմեր Սմբա-
տայ աքանչելի առաքինութիւնները, այսինքն հայ-
բնեռասիրութիւնը, խաղաղասիրութիւնը, ներո-
ղամտութիւնը, հայրադութի խնամքը, արդարու-
թիւնը և իրեն ուրիշ շատ հատարելութիւնները.
որով մեկէն յայտնի կ'ըլլայ իր Թշնամեաց ըրածին
վերջի սասիկանի չարութիւնը (914):

ԴԱՍ ԻԷ.

Աշոտ Բ. Երկար, ու իր թաչուբիւնները։

1. Աշոտ Բ. երբոր լսեց հօրը մահը, իր ունեցած քէչ մը զօրքը կարգի դրաւ ու անոնց հետ մեկտեղ վազեց Հայաստանի ան քաղաքներուն վրայ՝ որոնց մէջ բռնացեր էին Յաւսուփին զօրքերը։ Մեծ յամրոզութեամբ ու քաջութեամբ թշնամիները վանեց, այլ և այլ տեղեր սաստիկ ջարդ տալով թշնամեաց սիրտը վախ ձգեց ու աս իրեն քաջութիւններուն համար Երկաթ ըսուեցաւ։ Նախարարներն ալ սիրտ առին, եկան միացան հետը ու զինքը Թագաւոր օծեցին. բայց հպարտ Թէ խաղաղութեան ձայնը սկսաւ տարածուիլ Հայաստանի մէջ, նորէն խռովութէ ձայները հալածեցին խաղաղութիւնը։ Ուստի զի նախարարներէն ոմանք նորէն սկսան մէջերնին կռիւ ընել փառասիրութեամբ և առելութեամբ. ոմանք ալ Թագաւորին դէմ ելլալով սկսան պատերազմիլ, ու ցաւալի Հայաստանը տակն ու վրայ ըրին։ Յուսափ ալ առիթ գտնալով վազեց Հայաստանի վրայ ու ինքն ալ սկսաւ քանդել ապականել առջևնէն ուներն։ Ամբողջ գեղեր քաղաքներ անապատ գարձուց։ Բնակիչները ջարդել կոտորտ, մանաւանդ ծերերն ու տկարները, մանր ազաք ու անկարող մարդիկը. միայն ծներն կամ կը տանձկըցը-

1. Աշոտ Բ. ինչպէս վանեց զՅաւսուփ ու Հայաստան ինչպէս նորէն իր իշխանութիւնը կոչնչացուց.

նէր և կամ կը նահատակէր։ Ետքն բանակը սկսան ընել նաև ուրիշ բարբարոս ազգերն ալ։

2. Կոստանդին Պերփեռուժէն կայսրը ուզեց օգնել Հայոց. և Թղթով խնացուց իր կամքը Յովհաննէս կաթուղիկոսին. ան բանիս վրայ մեծապէս ուրախանալով ազգասէր կաթուղիկոսը, շատ եռանդ եղաւ որ նախարարները միաբանէ, որպէս զի հաւանութեամբ Թուղթ գրէն Կայսեր՝ օգնութիւն խնդրելով իրմէ, բայց անօգուտ. ան պատճառաւ խելքին ճարը հասնելով ինքը առանձին պատասխան մը գրեց Կայսեր, Հայոց խեղճութիւնները ու Թշնամութիւնները պատմեց, ու միանգամայն օգնութիւն խնդրեց. ան Թղթէն այն պէս շարժեցաւ Կայսեր գութը Հայոց վրայ որ մէկէն Թէոգորոս անունով իշխան մը խաբրեց Հայաստան որ գայ Թագաւորն ու կաթուղիկոսը Կոստանդնուպօլիս տանի։ Գնաց Աշոտ, ու շատ մեծ պատիւ և ընդունելութիւն գտաւ Կայսերէն, նորէն Թագաւոր պսակուեցաւ, ու մեծամեծ պարգևներով ու շատ զօրքով Հայաստան դարձաւ։ Յուսափ վախնալով որ Աշոտ Յունաց օգնութեամբը կրնայ իրեն վրնասել՝ բարեկամութիւն ձևացուց. բայց ուզելով Հայոց մէջ երիպառակութիւն ձգել՝ որ զիրենք ակարացնէ առջևնէն պէս, Աշոտ Երկաթին հօր եղբօր որդին Աշոտը Թագաւոր գրաւ՝ որ Աշոտ Բռնաւոր ըսուեցաւ։ Ա՛ս Աշոտ Բռնաւորը մեկէն սկսաւ Աշոտ Երկաթին հետ պատերազմ ընել որ Թագաւորութիւնը առնէ. նախարարներէն ոմանք Թագաւորին կողմն էին, ոմանք ալ բռնաւորին. ան պատճառաւ շատ անգամ մէջերնին սաստիկ պատերազմներ եղան,

2. Կոստանդին Պերփեռուժէն ինչ օգնութիւն ըրաւ ու ինչպէս պատուեց զԱշոտ ու Յովհ. կաթողիկոսը ու մանաւ և Աշոտ Բռնաւորը.

ու ամէն անգամ Յովհաննէս կաթուղիկոս մէջ մտնելով կը խաղացընէր։

3. Թագաւորին եղբայրը Աբսա՝ տեսնելով Սահուոյ առաջ երթալը նախանձեցաւ, ուստի Ափխազաց Գուրգէն իշխանին հետ միանալով տալատամբեցաւ Աշոտէն ու եւս ևս աւելի մեծցընելու. բայց Աշոտ առաջուց խմանալով եղբօրը գաւաճանութիւնը, իր ընտանիքովը ծածուկ Ուատի աշխարհը փախաւ. հոն զօրք ժողվեց, եղբօրը դէմ պատերազմի ելլու ու միշտ յաղթող գտնուեցաւ. բայց վերջէն ուրիշներու մէջ մտան ու դրսուանց հաշտեցուցին զիրենք։

4. Անգամ մը երբոր Աշոտ առանց գիտնալու Ուտէացւոց աշխարհը կ'երթար քանի մը հոգով զուարճութեան համար, մէյ մ'ալ լուր առաւ որ Յլիկ Ամրամ Ուտէացւոց իշխանը ապստամբեր է իրմէ ու շատ զօրքով պատերազմի կը պատրաստուի։ Աշոտ մեկնելէն Եգերացւոց Թագաւորին քովը գնաց, ու անկէ օգնութիւն խնդրեց՝ գիտնալով անոր Ճշմարիտ սէրն ու բարեկամութիւնը. և ինչպէս որ կը յուսար իր կարծածէն աւելի օգնութիւն գտաւ անկէ, ու սկսաւ Ուտէացւոց աշխարհը վազել։ Ամրամ իր զօրքերը անտառին մէջը գտան դրաւ՝ որպէս զի յանկարծակի վազէ Աշոտին վրայ. բայց Աշոտ ծածուկ ճամբաներէ անցնելով գնաց ամուր բերդ մը քաշուեցաւ իրեններովը. Յլիկ Ամրամ ալ եկաւ պաշարեց բերդը։ Աշոտին զօրքերը յուսահատեցան և խօսք դրին թշնամիներուն հետ որ Աշոտը բռնեն կապեն ու իրենց ձեռքը մատնեն։ Աշոտ խմանա-

3. Աշոտ ինչպէս իր Աբսա եղբօրը գաւաճանութենէն ապրեցաւ.

4. Աշոտ երբոր լսեց Յլիկ Ամրամին իրմէ ապստամբելը ինչ ըրաւ.

լով անոնց միտքը՝ նոյն գիշեր որ առաւօտը վնիքը պիտի մատնէին՝ առանց ուրիշի բան մը ըսելու հեծաւ իրեն աշխոյժ ձիուն վրայ ու թշնամեաց մէջէն անցնելով փախաւ գնաց, ու Հարիւր հոգի հետը առած՝ Սևան կղզին առանձնացաւ։

5. Ան միջոցին Յուսուփ նորէն ընդհանուր ոստիկան գրուելով ամիրապետէն, Հայաստանի վրայ առանձին ոստիկան գրաւ Նըսը անուանով մէկը, որ անտէր գտնալով Հայաստանը՝ շատ չարչարեց Հայոց. բայց քանի որ աւելի մեծ չարութեան մը ձեռքէր զարկած՝ եա կանչուեցաւ Յուսուփէն, ու իր տեղը եկաւ Բըշը ոստիկանը։ Ասիկայ լսելով որ Աշոտ Սևան կղզին է քաշուեր՝ գիտցայ ծովուն քովը իր անթիւ զօրքերը չարեց։ Աշոտ իր մարդիկներէն եօթանասունն հոգի ընտրեց ու տասը նաւով սկսաւ ցամաքիններուն հետ պատերազմիլ, այնչափ որ թշնամիները բանակներն թողուցած փախան։ Բըշը հոնկից փախչելու աւեն գնաց ուրիշ բերդի մը վրայ, ուր աւելի մեծ չարդ կերաւ Գեորգ Մարզպետունիէն, որ թեսկա և քիչ՝ բայց անպարտելի զօրքովը մեծամեծ հնարներ հասուցեր էր թշնամեաց ուրիշ անգամներ ալ։

6. Բըշըին տեղը նորէն եկաւ Նըսը, բայց սկսաւ քաղցրութեամբ նայիլ Հայոց վրայ ու գութ ցուցընել. Աշոտ ալ սիրտ առնելով եկաւ իր թագաւորութիւնը առաւ ու սկսաւ բարեկարգել. իր Աբսա եղբօրը հետ ալ հաշտուեցաւ. բայց տիտա որ թագաւորութեան խաղաղիլը չկրցաւ վայելել, ու չհանգչանալով մեռաւ. քանըչորս տարի նե-

5. Ո՞վ է Նըսը, ու Բըշը ինչպէս Աշոտէն ու Գէորգ Մարզպետունիէն յաղթուեցաւ.

6. Ո՞ր և ինչպէս մեռաւ Աշոտ Երկաթ ու ո՞ր ժամանակ են իրեն յաջորդութիւնները.

ղուխամբ Թագաւորելէն վերջը։ Քաջ էր և միանդամայն խոհեմ, խաղաղասէր, ու ներողամիտ. բայց ժամանակը և նախաթարաց անկարգութիւնը պրեխէ անպատուղ ըրին իր առաքինութիւնները ու չկրցուցին որ Թէ ինքը ու Թէ Հայաստան վայելէին անոնց արդիւնքը։

7. Աբաս Աշոտոյ եղբայրը նախաթարնէրուն հաւանութեամբ Թագաւոր ընտրուեցաւ ու աթոռը Կարս քաղաքը դրաւ. շատ շինութիւններ ըրաւ, ու այլ և այլ պատերազմներով Հայաստանը խաղաղցուց։ Մերձակայ ազգերը լսելով Աբասայ վարուածոյին ու ըրած բարեկարգութիւնները՝ սկսան վրան նախանձիլ. մանաւորապէս Ափխազներուն Բէր Թագաւորը, որ նաև շատ զօրքով վրան պատերազմի եկաւ, ու յոխորտանօք պատգամ խրկեց Թէ եկէք եմ Կարսի Նոր շինած մայր եկեղեցին Վրաց ծխով օծելու։ Աբաս զօրքերը Ժողվեց ու պատերազմի պատրաստուեցաւ. յաղթեց Բերայ, բանեց գինքը տարաւ մայր եկեղեցին ու ըսաւ. « Ահա սա է ան եկեղեցին որ ի՛ուզէիր օրհնել Վրաց ծխով. լաւ նայէ, որովհետև ալ պիտի չտեսնես ». սա լսելով աչքերը փորել տուաւ. իսկ Ափխազները շատ ընծաներով ու աղաչանքով ազատեցին Բէրը դերութենէ։ Աբաս քսաներչորս տարի Թագաւորելէն ետքը խաղաղութեամբ մեռաւ. և ըրած շինութիւններն ու բարեկարգութիւնները իրենց մէյմէկ արձան իր անունը յիշատակ կանգնեց Հայաստանի ամեն կողմերը (951)։

8. Աբասէն շատ աւելի լաւ, առաքինի ու ազ-

7. Աբաս թ՛ինչպէս Թագաւորեց ու թ՛ինչպէս յաղթեց Բէր Ափխազաց Թագաւորին.

8. Ո՛վ է Աշոտ Ողորմած, թ՛ինչպէս Թագաւոր օծուեցաւ ու թ՛ինչ պատերազմ ունեցաւ Հազարացւոց Համուռն զօրավարին հետ։

գասէր եղաւ իր յաջորդը որով ազգը երջանկացուց. ասիկայ էր Աշոտ իր որդին, որ իր բարեգործութիւններուն համար Աշոտ Ողորմած ըսուեցաւ։ Ասիկայ հօրը մեռնելէն ետքը ութսուն հազարի չափ զօրք Ժողվեց, Գէորգ Մարզպետուհիին Գոռ որդւոյն հետ միացաւ ու թշնամիները վռնտեց Հայաստանէն մեծամեծ քաջութիւններ ընելով. ինը տարի աս կերպով Հայաստանը խաղաղ պահեց, ինչուան որ նախաթարնէրը տեսնելով իրեն քաջութիւնները, ազգասիրութիւնը ու բարեպաշտութեան հոգին, ժողովք ըրին ու Թագաւոր օծեցին զինքը բոլոր ազգին վրայ։ Երբոր Աշոտ ընդհանուր ազգին Թագաւոր օծուեցաւ, իրեն Մուշեղ եղբայրն ալ քանի մը նախաթարնէրու գլուխ կենալով Կարսի մէջ Թագաւորեց. բայց որովհետև միշտ Աշոտին կը հպատակէր և ի՛օգնէր անոր, ան պատճառաւ ձայն չհանեց Աշոտ ու Թագաւորց որ Թագաւորէ։ Աշոտոյ այսպէս ամեն կողմանէ խաղաղութեամբ և հայրաբար ազգը կառավարած տեսնը՝ Հպատակացւոց Համուռն սպարապետը տպատամբելով ամիրապետէն Հայաստանի վրայ վազեց. Աշոտ բազմութեամբ զօրաց դիմացը ելաւ, յաղթեց Թշնամւոյն ու բռնեց սպանեց զինքը. ամիրապետը ուրախանալով և հաւնելով Աշոտին ըրած քաջութեանը՝ կրկին Թագաւորական Թագ ու շատ մեծագին պարգեւներ խրկեց անոր։

9. Աշոտ քաջութեան հետ մէկտեղ բարեպաշտութեամբ և ողորմածութեամբ զարդարուած՝ բոլոր ունեցածը աղքատաց կը բաժնէր, որով մեռնելէն ետքը գանձատունը մէջ ստակ չգտնուեցաւ. շատ հիւանդանոցներ ու աղքատանոցներ շինել

9. Աշոտ իր քաջութենէն դուրս ի՛նչ քրիստոնէական առաքինութիւններ ալ ունէր.

տուաւ, որոնց մէջ մտած շատ անգամ ինքն ալ անձամբ կ'աշխատէր ու կը ծառայէր հիւանդաց. շատ անգամ ալ աղքատներն ու ցաւագարներուը իրեն սեղանակից կ'ընէր. եկեղեցիներ, վանքեր ուսումնարաններ և ուրիշ բարեպաշտական տեղեր շինել տուաւ: Իրեն պէս բարեպաշտ ու ողորմած էր իր Խոսրովանոյշ Թագուհին ալ, որ շատ բարեգործութիւններէ զատ՝ վանքեր, եկեղեցիներ ու հիւանդանոցներ շինել տուաւ:

ԴԱՍ ԻԲ.

Սմբատ երկրորդին ինչուան Բագրատունեաց վերչանալը:

1. Աշտարին իրէք որգւոյը մէջէն, որ էին Սմբատ, Գագիկ ու Գուրգէն, Սմբատը Թագաւորեց, որ իրեն ըրած քաջութիւններուն համար Շահնշահ (Թագաւորաց Թագաւոր) և Տիեզերակալ ըսուեցաւ: Սակայն շատ զարգարեց Անի քաղաքը՝ հարիւրաւոր եկեղեցիներ վանքեր ու խել մը պալատներ շինելով. բայց ամէնէն մեծ ու յիշատակի արժանի շինուածքն է Անիին շրջապատը քաշած պարիսպը՝ որուն համար ուրիշ տարի հազարաւոր հոգի աշխատեցան. խակ քաղաքին բոլոր եկեղեցեաց Թիւը կ'ըսեն Թէ հազար ու մէկ էր, և ասկից սովորութիւն մտած էր ռամկաց մէջ Անիին հազար ու մէկ եկեղեցեաց վրայ երդում ընել: Սմբատ երկրորդ, տասուիրէք տարի Թագաւորեց

1. Սմբատ Բ. իր մեծագործութիւնը հետ ինչ անիրաւութիւններ ալ ըրաւ.

ու մեռաւ, խաղաղասէր ու աշխարհաշէն Թագաւորի անուն ժառանգելով. բայց բարեպաշտութեան կողմանէ Թագաւորութեան վերջին տարիները եկեղեցական օրինաց դէմ բաներ ընելով անունը արատաւորեց: Իակ ըրած գործողութիւնները ասոնք են. նախ իրեն քրոջը աղջիկը կին առաւ՝ որուն շատ դէմ կեցան եկեղեցականք բայց անսասոնց. Թէպէտ և քիչ առնէն կինը մեռաւ, որով և ինքն ալ մեծ սուգի ու արտմութեան մէջ ընկաւ: Ասկէ զատ ուրիշ անգթութեան ու անիրաւութեան գործողութիւն մ՝ ալ ըրաւ՝ որ իրեն մեծանձնութեանը չէր վայլեր: Անգամ մը Թագաւորական խոսի ու յարգի համբարանոցները այրեցան, որուն գործագիրը գտնելու համար շատ եռանդ եղաւ Սմբատ, բայց որոշ չկրցաւ իմանալ: Օր մը երբոր ժողովուրդը բազմութեամբ եկեղեցին ժողվուած հոգևոր խորհրդներուն կայր, յանկարծ խնդիր մարդ մը վազեց խորանը ու բռնաւրէն կրակարանը առնելով ժամին դուրս սկսաւ փախչիլ. ժողովուրդը առ նորատանիլ գործողութեան պատճառը հարցուց. անիկայ ալ սկսաւ պոռալով ըսել Թէ կ'երթամ Սմբատայ համբարանոցները այրելու. առ խօսքս Թագաւորին ականջը հասնելով քունէ առաւ ան մարդը ու առանց քննելու ինչ տեսակ մարդ ըլլալը հրամայեց որ նախ աչքերը փորեն ու վերջը եղեգով պատեր տալով այրեց, և խաւիւ արդիւնց որ չէ թաղեն. վասկայ քանի մը կրօնաւորներ տեսնելով, որոնք և ոչ Թագաւորին հրամանը գիտեին, վերուցին մարմինն ու Թաղեցին քրիստոնէական ամէն պատրաստութիւնները կատարելով: Երբոր լսեց առ եղած գործողութիւնը Սմբատ շատ նեղացաւ և նորէն հրամայեց որ մարմինը հանեն ու դաշտի մէջ ձգեն. առ բանիս բարկացան ան կրօնաւորներն ու ըսին «Սմբատայ մարմինն ալ իր գերեզմանին մէջը պի-

ան չձեայ »։ Ըսած ձեին կատարուեցաւ Սմբատայ մեռնելէն քիչ մը առեն եաքը (988)։

2. Գագիկ Ա. եղբօրը տեղը յաջորդելով իր հօրը Աշոտին ու նախորդներուն քաջութեանցն ու առաքինութեանցը հետևող եղաւ, և քան զանոնք ալ երևելի ըլլալով մեծագործութեանց կոչմանէ, Բագրատունեաց թագաւորութեանը պարծանք եղաւ. նոյնպես նաև իր Կատրամիտէ Թագուհին որ ըմբնցուց Սմբատին սկսած Անւոյ մայր եկեղեցին։ Գագիկ Թագաւորելուն պէս՝ խնդիր կենդանի մը պատճառաւ խռովութիւն ընկաւ զօրայ մէջ. վասն զի աս կինս կը քարոզէը ամենուն Թէ Սմբատ Թագաւորը տեսիլքով իրեն երևցեր ու ըսեր է Թէ ինքը դերեզմանին մէջը դեռ ողջ է. Գագիկ աս խնդիրս տուութիւնը ցուցընելու և ժողովուրդը հանդարտեցընելու համար՝ Սմբատին մարմինը գերեզմանէն հանել տուաւ որ ամենքը տեսնան. ասով խռովութիւնը ինկաւ ու ամենքն ալ խաղաղացան։ Գագիկ երեսուն տարի Թագաւորեց միշտ քաջութեամբ, բարեկարգութեամբ ու բարեպաշտութեամբ (1019)։

3. Գագիկայ առենը անուանի եղաւ Դաւիթ կիւրապաղատ, որ Տայոց գաւառին իշխանն էր. Դաւիթ ծերութեան վերջին տարիները Աստպատականի ամիրապետը Մամլուն հարիւր հազար զօրքով Հայաստանի վրայ վազեց. Դաւիթ օգնութիւն ուզեց Գագիկէն և Վրաց Գուրգէն Թագաւորէն, անոնք ալ տասնհինգ հազարի չափ զօրք խաբեցին, որ Դաւիթայ զօրացը հետ միանալով քան

2. Գագիկ Ա. ինչպէս ըրաւ իր Թագաւորութիւնը ու ինչ գիտեվիք կայ Կատրամիտէ Թագուհոյն վրայ.

3. Ո՞վ է Դաւիթ կիւրապաղատ ու ինչ նշանաւոր մահ ունեցաւ.

հաղար եղան։ Հայերն ու Վրացիք առնալով իրենց քաջութիւնը, առջի թերանը ետին դարձ կեին. մեյ մ՝ալ զօրացան հաւաքով և զԱստուած օգնութիւն կանչելով Թշնամեաց վրայ վազեցին, ու մեծ ջարդ տալով տաճկներուն, միացածները ցիրուցան ըրին ու իրենցմէ հինգ վեց Վրացի միայն մեռան։ Տայոց ուրիշ իշխանները առնալով Դաւթի այնչափ փառաւորութիւնը աս յաղթութեանս համար, սարսափելի անօրէնութեամբ մը հաղորդութեան սուրբ խորհրդին մէջ Թոյն խառնեցին։ Դաւիթ իմացաւ ըրած անզգամութիւնին, ներեց ամենուն ու մեռաւ սրբութեամբ, յանձնելով իր երկրին իշխանութիւնը Յուհաց կայսեր, որովհետև ինքը մերձաւոր ազգական չունէր։

4. Յովհաննէս Սմբատ, որ Գագկայ անդրանիկ որդին էր, հօրը տեղը Թագաւորեց. հանգարտասարոյ, խոհեմ, գիտուն էր, բայց միանգամայն դանդաղամիտ, վախկոտ և անդործունեայ. աս իրեն պակասութիւնները մեծամեծ խռովութեանց պատճառ եղան ոչ միայն իր կենդանութեան առենը, այլ և մեռնելէն ետքն ալ որով և Թագաւորութիւնն ալ վերջացաւ։ Երբոր Յովհաննէս Սմբատ Թագաւորեց, իր ազգին եղբայրը Աշոտ որ քաջ, աշխոյժ, արագամիտ ու գեղեցկատեսիլ երիտասարդ մըն էր, շատ նախարարներ իր կողմը դրաւով կ՝ուզէր եղբօրը տեղ Թագաւորել։ Վրաց Գորգի Թագաւորը ուզելով իմացընել Թէ ինքը զՍմբատ օրինաւոր Թագաւոր կը ճանչնայ Հայոց՝ ընծաներ ու Թագաւորական պատկ խաբեց Սըմբատայ. աս բանիս վրայ Աշոտ կրակ գործաւ և յայտնի ապստամբելով գնայ Վասպուրականի

4. Ի՞նչ բնութեան տէր էր Յովհ. Սմբատ ու ինչ պատերազմ ունեցաւ իր Աշոտ եղբօրը հետ.

Սենեքերիմ Թագաւորէն չատ զօրք օգնութիւն առաւ: Յովհաննէս, որուն կողմն էին բոլոր Ժողովուրդը և նախարարներուն մեծ մասը, վճռուն հպարտի չափ զօրք Ժողված՝ Աշտոին գիմացը եղաւ. բայց որովհետև վախկոտ և պատերազմական բաներու մէջ վարժ չէր, Աշտոին ու անոր քիչ զօրաց քաջութիւնը տեսնալովնկատ յուսահատել. վասն զի Աշտոն ինքը անձամբ շատ քաջութիւններ ընելով՝ զօրքերը խրախուսեց ու թշնամւոյն մեծ ջարդ տալով հալածեց գիրենք, ինչպէս եկաւ Անոնի ալ պաշարեց. քանի մը մեծ նախարարներ, Վրաց Թագաւորը և Պետրոս կաթուղիկոս՝ Յովհաննեսի ցաւալի վիճակին վրայ խղճայնին ու մէջ մտնալով խաղաղացուցին երկուքն ալ, և պայման դրին որ Յովհաննէս նոյնպէս Թագաւորէ, և Աշտոն իրեն անոր երկրորդը՝ ուրիշ տերութիւնէ: Յովհաննէս իր վատասրտութեամբը շատ նախարարներուն երեսէն ընկաւ, որ գինքը Թողուցին ու Աշտոին կողմն անցան:

5. Քիչ մը առենէն Աշտո զղջալով եղած գաշնագրութեանը վրայ՝ ուղից նորէն Յովհաննեսին տեղը ընդ հանուր ազգին Թագաւոր ըլլալ, բայց որպէս զի խռովութիւն չըլլայ՝ այսպիսի վարպետութիւն մը բանեցուց. ծանր հիւանդ ձևացաւ ու անկողնոյն քովը որոգայթաւոր մէկ նայ մը դընել տուաւ. երբոր Յովհաննէս գինքը տեսնելու եկաւ՝ որոգայթին մէջ բռնուելով սկսաւ աղաչել որ կենացը խնայէ. ան առեն Աթերատ խշմանը եկաւ կապեց գՅովհաննէս ու ձեացուց որ մեռցընելու կը տանի. բայց ընդ հակառակն տարաւ նորէն Թագաւորեցուց, ըսելով Թէ «Լաւ է խո-

5. Աշտո ինչ վարպետութիւն բանեցուց գարձեալ գՄմբատ իր Թագաւորութենէն ձգելու ու ետքը ինչ վերջ ունեցաւ.

հեմ գԹագ ու վախկոտ Թագաւոր մը ունենանք՝ քան Թէ անիրաւ ու անգութ բռնաւոր մը՝ Թէպետև քաջ»: Աշտոին գործողութեանը վայ պժգալ նախարարները՝ ամէնքն ալ անօգնական ձգեցին գինքը ու հեռացան քովէն. ինքն ալ Կատանդ նաւապետ գնաց, Վասիլ կայսեր օգնութեամբը շատ զօրքով եկաւ նախարարները դառձեց, ու շատ քաջութիւններ ընելով այլ և այլ տերերու տիրեց. բայց վերջը քաջութիւնը մեկդի ձգած՝ զվնասութեանց եաեէ եղաւ ինչպէս իր մահը:

6. Հայաստան որ արդէն անգագար նեղքին և արտաքին Թշնամիներու ձեռքէն ասկալի ավերմից տեսարան մը եղած էր, ան միջոցներուն ոտնակոխ եղաւ գազանացեալ և արեան ծարաւի նոր ազգ մըն ալ, որ էին Սկիւթացիք, և երբեմն երբեմն անթիւ բազմութեամբ յարձակելով կ՚ոչընչին առնամբ Հայաստանը: Ասոնք նախ վազեցին Վասպուրականի աշխարհը ու շատ տեղ հասցընելով անցան գնացին: Վասպուրականի Սենեքերիմ Թագաւորը կանխատես ըլլալով Սկիւթացւոց ընելիք չարութիւնը՝ Թուղթ գրեց Վասիլ կայսեր, աղաչելով որ Սեբաստիոյ գաւառը կայսրը իրեն ապ ու ինքը Վասպուրականի աշխարհը առնէ. կայսրը հաձեցաւ ու Սենեքերիմին խնդիրքը մեկնելով երդմունքով հաստատեցին. այսպէսով Սենեքերիմ Սեբաստիա գնաց՝ հետը առնելով չորս հարիւր հազար հոգի, ու Վասպուրականի աշխարհը Յունաց անցաւ. Սկիւթացիք Վասպուրականէն վազեցին Նիփ գաւառին վրայ, որմէ դեմ եաեէ Վասակ Պահլաւունի՝ Գրիգոր Մագիստրոսին հայրը, ու

6. Ա՛ս միջոցիս ինչ նոր արտաքին Թշնամի մըն ալ ունեցաւ Հայաստան ու ինչ գիտենք կայ Գրիգոր Պահլաւունիին վրայ.

մեծ կատարած ընելով գրուելոց զիրենք. բայց երբոր ինքն ալ առանձնացած աղօթք կ'ընէր Աստուծոյ, քանի մը Սկիւթացիք հոն տեղը պատհուրտած ըլ-լալով քար մը զարկին գլխուն ու ապտնեցին պա-տուհան ծերունին: Ան բաներս տեսնելով Յով-հաննէս Թագաւորը, և բնական երկիւղածութեամբն ալ վախնալով որ պիտի չկարենայ գէմ դնել Սկիւ-թացոց յարձակմանը, դալնիք դրաւ Վասիլ կայ-սեր հետ որ մեռնելէն երբը Անին կայսեր անցնի, միայն թէ Յոյները օգնեն Հայոց (1024):

7. Ան միջոցներուն ասոկալի հարուածներ եղան Հայաստանի մէջ. այսինքն երկրաշարժ, սով, ու արեւու խաւարումներնեը, որով ամենքն ալ սկսան վախնալ. մանաւանդ որ անոնցմէ մէկը եղած պոռալով քաղաքէ քաղաք կը պարաեր ու կ'ըսէր. «Վայ ինձ, եղուկ ինձ». և որովհետև երևելի էր ան առիւնները սրբութեամբ ու խնամութեամբ Յովհաննէս Կողեան ըսուած վարդապետը, Թա-գաւորը մարդ խրկեց ու ան երևոյթներուն մեկ-նութիւնը հարցուց. ինքն ալ զիրենք իրատեց՝ յայտնի ցուցընելով Աստուծոյ բարկութեան նը-շանները:

8. Յովհաննէսին մեռնելէն ասոր տարիի ջոփ առաջ Վասիլ կայսեր եղբայրը Կոստանդին մե-ռաւ. ասկայ մեռնելու առենը յիշելով Անիին համար եղած անիրաւ և ապօրինաւոր գաղնագրու-թիւնը, Կիրակոս անուանով հայ քահանայ մը կան-չել տուաւ ու գաղնիքին թուղթը յանձնեց անոր որ տանի Յովհաննէս Թագաւորին ասյ: Իսկ ան արձաքթասեր քահանան պահէց թուղթը, ու եր-բոր Միքայէլ կայսրը Թագաւորեց՝ տարաւ կայ-

7. Ո՞վ է Յովհաննէս Կողեան.

8. Կիրակոս քահանային ըրած մոռնութիւնը ո՞րն է.

սեր տուաւ, և ինքը անոր փոխարէն շատ տասկ առաւ. Միքայէլ կայսրն ալ օրէ օր կ'ապատեր Յով-հաննէսին մեռնելուն որ Անին պահանջէ: Պատ-մութեանց մէջէն անհետ ընելու դէպք և անիծից արժանի մոռնութիւն:

9. Ան միջոցներուն Յովհաննէս Թագաւորին հօրեղբօրորդին որ Դաւիթ Անհողին կը կոչուեր՝ անուանի եղաւ իրեն խելքովը և ինքնագլուխ Թա-գաւորելէ Գուգարաց աշխարհը. սա բանիս վրայ նախանձելով Գրշնայ Սպասալար ամիրան՝ Պար-սից Տուղրիլ Թագաւորը զրգռեց, ու երկուքը միասին անթիւ բազմութեամբ Դաւիթայ վրայ ե-կան: Դաւիթ օգնութիւն ուղեց Հայոց և Աբխա-զաց Թագաւորներէն. երբոր ամենքը միասին միա-ցան ու պատերազմ սկսան տալ, հարիւրաւոր քահանաներ ու շատ եպիսկոպոսներ միաբերան սկսան աղաղակել «Աբխ Տէր օգնեա մեզ, և փըր-կեա զմեզ վասն անուան քո սրբոյ»: Ան ձայնէս բոլոր քրիստոնեաները սիրտ առած՝ վազեցին Թըշ-նամւոյ վրայ, մեծ չփոթութիւն ձգեցին մէջերնին ու սասկի ջարդ մը տալէն երբը՝ հարուստ աւարով ամենքն ալ իրենց տեղը գարձան:

10. Ան փառաւոր յաղթութեան վրայ եղած ուրախութիւնը Բերկրի գառանին մէջ հանգիստ անգթութեամբը գառնացաւ. Բերկրին Սենեքե-րիմայ Յովնաց տուած քաղաքներէն մէկն էր, Պար-սիկ տիրեր էին անոր, ու Թաթիկ անուամբ ան-գութ մարդ մը քաղաքապետ դրեր էին: Յոյներն ու Հայերը միացած վազեցին Բերկրիին վրայ, ու

9. Հայերը Դաւիթ Անհողինին հետ ինչ փա-ռաւոր յաղթութիւն մը ըրին Պարսից և Աստուս-վար՝ ամիրային դէմ.

10 Թաթիկ ո՞վ է ու ինչ գազանային անգթու-թիւն մը կը պատմուի վրան.

քազաքը առնելով Խորիկը բանտ դրին. ասկէ երթալ խնդացան մօտ առվերուն ամիրաներուն՝ եկան նորէն առին Բերկրին ու Խորիկը ազատելին բանտէն. ասկէ բանիս չդիմացաւ Գանձի անուամբ իշխանը, շատ զօրքով վազեց Տաճիկներուն վրայ, զօրքերնին ցրուեց, Խորիկն ալ Բերկրին միջնաբերդը փախուց, և վերջը անհոգացած սկսաւ իրենիներովը կերսխուժի եռակ ըլլալ: Ան առն քանի մը ամիրաներ նորէն միացան, վազեցին Գանձիին վրայ, զինքը սպանեցին, զօրքը ցիրուցան ըրին. Խորիկն ալ ազատելով առջի իշխանութեանը հասուցին: Խորիկ իր գազանային վրէժը առնելու համար՝ մարդասպի խորութեամբ փոս մը փորել տուաւ, ձեռքը ինկած մարդիկը մորթել տալով՝ արիւնով լեցուց փոսը, ու եաթը մէջը ժանալով լուացուեցաւ:

11. Ան առիւծները մեռաւ Յովհաննէս, քան տարի Թագաւորելէն եաթը և որդի չթողուց. իր զգուշաւորութիւը անխոհեմութեան և երկչոտութեան փոխուելուս, որով վէսա Սարգիս ըսուած մարդուն ան որ նահանգը երես առաւ: Ման ալ վէսան Սարգիս Սիւնեաց փառամոլու ազգասէրս իշխանը՝ ինքը ուզելով Թագաւորել՝ եաւէ եղաւ որ օրինաւոր յաջորդը չթագաւորէ. ասոր բանիս համար ամէն բանի մէջ սկսաւ Յուհաննց ձեռնառու ըլլալ, որպէս զի անոնց առջևը արգիլիք մը գտնելով իր վախճանին հասնի. և որովհետև Միքայէլ Յուհաննց կայսրը լսեր էր ան միջոցներուն Յովհաննէսի մասին, մեկէն դեսպան խրկեց նախարարներուն որ Անին ասն. երբոր նախարարները յանձն չառին, կայսրն ալ չտրս անգամ զօրք խաբեց Հայոց վրայ

11. Յովհաննէսին մեռնելէն եաթը ծվ գրգռեց զՅոյները Հայոց դէմ ու Գագիկ Բ. ի՞նչպէս Թագաւորեց.

որ երթան բռնութեամբ տիրեն Անիին. և որով հետև բոլոր նախարարները միաբանած չէին՝ անոր համար Յոյները շատ չարիք հասուցին Հայոց՝ գոռոզ Սարգսին օգնութեամբը: Երկու տարի այսպէսով անցնելէն եաթը՝ նախարարները միաբանեցան, ու Վահրամ Պահլաւունին Վասակայ եղբայրը որ կարճ ու տաքսիկ էր՝ իրենց գլուխ դրին. յիսուն հազարի չափ զօրք Ժողվելով՝ քաջութեամբ յարձակեցան Յունաց վրայ, ու անանկ սոսկալի ջարդ տուին որ Ախաբեան գեղը սրտմտութեամբ ներկուեցաւ կ'ըսէ Ժամանակակից պատմիչներէն մեկը: Ան յաղթութենէն վերջը Գագիկ երկրորդը կանչեցին ու Թագաւոր օծեցին, որ Յովհաննէս Թագաւորին Աչոտ եղբօրը որդին էր, ու վէսա Սարգսին բռնութիւններէն փախչելով Թափառական կը պարտէր:

Գագիկ Բ. երբոր Թագաւորեց՝ առնրվից տարեկան էր. բայց իր կրթութեամբը, խնամատարութեամբը, զգուշաւորութեամբը և խոհական ընթացքովը մեր երեխի Թագաւորներէն մեկին եղաւ (1042):

12. Վէսան Սարգիս երբոր խնդացաւ նախարարաց միաբանութիւնը և Գագիկայ Թագաւորելը, փախաւ գնաց Անիին միջնաբերդը պահպանելու. Գագիկ եկաւ մինակ քովը գնաց, ու խելացի խօսքերով յորդորեց ու սիրեց զինքը որ միջնաբերդէն ելլէ. Սարգիս գնաց Սեբաստիա բերդը քաշուեցաւ, ու երբոր հոն ալ սկսաւ իր անհնազարտ բնաւորութեամբը տպատահութիւններ ընել՝ Գագիկ նեղացած զօրք Ժողվեց, վրան գնաց բռնեց զինքը ու բանտ դրաւ. բայց վերջը ուրիշ նախարարաց պատճառքին զինքն ելլով և անոր կեղծաւորութիւն-

12. Վէսա Սարգիս երբոր Գագիկայ Թագաւորելը լսեց ի՞նչ ըրաւ.

նեբէն խաբուելով բանտէն ազատեց ու Նոբէն սկըսաւ հետը բարեկամութեամբ վարուիլ:

13. Գագիկ Թագաւորութեան բանները հոգեւոր քիչ մը կարգի գրեր էր՝ Սկիւթացիք անհամոզելով զրպով Հայաստանի վրայ վազեցին. Գագիկ տատնքվեց հազար զրպով կարճութեամբ պատերազմելով տասիկ ջարդ տուաւ Թշնամեաց, բոլոր բանակնին ցրուեց, ու յաղթութեամբ գարձաւ իր աթոռը: Բայց գեռ հանգստութիւն չտասծ՝ Նոբէն իր Թագաւորութիւնը տակն ու վրայ եղաւ Վէտա Սարգսի ու Մոնոմախոս կայսեր պատճառաւ: Վասն զի երբոր Միքայէլ կայսեր տեղը Մոնոմախոսը յաջորդեց, դիպուածով ձեռքը ընկաւ Յովհաննէսին Վասիլ կայսեր հետ ըրած գաշինքը. գեսպան խրկեց Գագիկայ որ Անին տայ. Գագիկ սիրով ընդունեցաւ գեսպանները, ու խմայուց Թէ ինքը առանց ընդհանուր ազգին հաւանութեանը չկրնար Անին տալ: Կայսրը նեղացած Գագիկայ ատ կերպով իր խօսքը մերժելուն վրայ, Անիս զօրավարին ձեռքովը շատ զրպ խաբեց Թագաւորին վրայ և Պրունայ Ատուսլոր ամիրան ալ Գագիկայ դէմ պատերազմի գրգռեց. բայց բոլոր յոյսը պարապ ելաւ. վասն զի Յունաց զօրքը շատ յաղթուելցան, Պրունայ ամիրան ալ Գագիկայ ընծանեբովը հետը բարեկամացաւ: Իմանալով Գագիկ որ Մոնոմախոսը գրգռողը Սարգիսն է՝ կ'ուզեր սպանել զինքը. բայց անիկայ յանցանքը Բրիգոր Մագիստրոսին վրայ ձգելով Թագաւորին աչքէն հանեց զինքը՝ որ ամենևին ատ բանեբուս մէջ ձեռք չունէր: Իսկ Բրիգոր տեսնելով որ իր կենացը վտանգ կայ՝ եկաւ Կոստանդնուպոլիս.

13. Գագիկ ինչպէս յաղթեց Սկիւթացւոց ու Մոնոմախոսին զօրացը, ու ինչ գիտելիք կայ Բրիգորի Մագիստրոսին վրայ.

Գիտ գնայ, և հոն իր կատարելութիւններուն համար կայսրին Մագիստրոսութեան պատիւ գտաւ. ատով Գագիկայ միտքը աւելի հաստատուեցաւ Թէ Բրիգոր Մագիստրոս կայսեր հետ համախոհ է, Վէտա Սարգիսի ալ արգարացաւ:

14. Երբոր կայսրը յաւատացաւեր էր Անին առնելէն, Վէտան Սարգիս ու իր կուսակիցները շատ գաւաճանութեան խորհուրդ մը տուին կայսեր որ Անին Գագիկայ ձեռքէն յափշտակէ, այսինքն գոն զ'Գագիկ Կոստանդնուպոլիս հրաւիրէ, ըսին, բարեկամութեան համար, ու մինչ ան միջոցին Անին կը մատնենք: Մոնոմախոս ուրախացաւ անանց տուած խորհրդին վրայ, և Թուղթ գրեց Գագիկայ՝ Կոստանդնուպոլիս հրաւիրելով զինքը: Բարակամիտ և հեռատես Թագաւորը խմացաւ գաւաճանութիւնը, ու չանձն չառաւ կայսեր հրաւերքը, բայց Վէտան Սարգիս և ուրիշները շատ յորդորեցին խոստանալով որ իրենք Անին կը պաշտպանեն. երբոր տեսան Թէ չեն կրնար համոզել զԹագաւորը, պատարագի առեն երգում ըրին հաւատարիմ մնալու Թագաւորին, ու նամակով մը կաթուղիկոսին չանձնեցին: Գագիկ գիտնալով նախարարաց չարութիւնը՝ չանձն չէր ուզեր առնել. բայց վերջապես ձորը հատած՝ եկաւ կայսեր գնաց, և Անիին վերակացու գրաւ Աղիրատ իշխանը, որ իրեն շատ սիրելի ու հաւատարիմ էր, արքունական ընտանիքն ալ չանձնեց Վէտա Սարգսին:

14. Ինչ գաւաճանութեամբ Վէտա Սարգիս ու նախարարները զԱնի Մոնոմախոսին մատնեցին ու Գագիկ ինչպէս իր Թագաւորութենէն ինկաւ.

15. Գագիկ մեծ պատիւ գտաւ Մանուճախոսէն, և իրէն գիմացը էլան Յունաց բոլոր մեծերը։ Բայց քանի մը օրէն սկսաւ կայսրը Անին ուզել. երբոր Գագիկ կ'ընդդիմանար անիրաւ պահանջմանը խելացի և իրաւացի պատճառներով, կայսրը զինքը բանտ դրաւ որ Թեոփաս անով կարենայ խնամարկեղը ընել գԳագիկը։ Բանի որ դէտ աս գործադրութիւնն իրաւ չէ եղեր, մէկ մ'ալ Մանուճախոս Գագիկ գիմացը հանեց Անիին ու իր արքունեաց բանալիները՝ նախապարագ միաբան հաւանութեան Թզնաւը։ Ապահեցաւ Գագիկ, նախքան կորմնցուց և չէր գիտեր ինչ ընելիքը։ Խնդացաւ որ իր արգարութիւնը, իրաւունք գիտալը և գԹագաւորութիւնը յաղթուեցան. մանաւանգ Թէ արհամարհուեցան անօրէնութիւնն, անիրաւութիւնն, փառասիրութիւնն և ագահութիւնն, որով և ասիսլուեցաւ Թագաւորութիւնը ձգել, Հայրենիքը Թողուլ հեռանալ ու ասանդական կեանք մը անցընելով Հայաստանի ու Անիի աւերակներուն տակը Թաղել իր անունը (1045)։

Մանուճախոս Հայաստանի տիրելէն ետքը Գագիկ տուաւ Պիզու քաղաքը Կատալոնիայի մէջ, և պարտ մը Կոստանդնուպոլսոյ մէջ. Թագաւորական գանձէն ալ եկամուտ կապեց իրեն։ Գագիկ քիչ մը առեն Կոստանդնուպոլիս կենալէն ետքը՝ հրաման խնդրեց կայսրէն՝ ու Պիզու իր քաղաքը գնաց, ուր սիրալ կը հաշէր ու կը մաշէր տեսնելով ոչ այնչափ իր Թշուառութիւնը՝ որչափ ազգին ողբմալի ու աւարտէլի վիճակը, որուն պատճառ եղաւ իր մահնիչներուն սոսկալի չարութիւնը, որով իրենց շահուն համար բնաւութեան և ազ-

15. Գագիկ Թագաւորութիւնը կորնչցնելէն ետքը ինչ վիճակ ունեցաւ ու Բագրատունեաց Թագաւորութիւնը երբ վերջացաւ.

գայ օրէնքը ոտքի տակ առնն ու խեղճ ազգը Թըշուառութեան ու գերութեան մէջ ձգեցին։ Ան կերպով վերջացաւ Բագրատունեաց Թագաւորութիւնը 1045ին, մօտ երկու հարիւր տարիի չափ քաշելէն ետքը։

16. Բագրատունեաց Թագաւորութեան կործանելէն քիչ մը ետքը սկսան տեսնուիլ գլուխ ու Թագաւոր ընտնեալուն ազգասալի հետևանքները. վասն զի ամէն կողմանէ սկսան Հայաստանի վայ կատաղաբար յարձակիլ արեան ծարաւի գայլերու պէս բիւրաւոր Թշնամիք, ու իրենց գեմ եղող մը չգտնելով ամենայն չարիք հասուցին Հայոց։ Առաջ առջինը եղաւ Տուղրիլ Պարսից Թագաւորը, որ իրեք անգամ անհամար բազմութիւն խաբելով խիստ շատ մարդ Թրէ անցուց, եկեղեցիներ ու վանքեր փլցընել տուաւ ու շատ մարդ ալ գերի ըրաւ. միայն Արծն քաղքին մէջի ըրած կոտորածէն կրնայ խմացուիլ մեկնիսին ալ։ Ան քաղքիս մէջ իրեք հարիւր հազար բնակիչ կար ու հարիւրաւոր եկեղեցիներ. Տուղրիլին պաշարմանը՝ մէջինները դէմ կեցան ու չէին ուզեր անձնատուր ըլլալ. բայց վերջապես յաղթուեցան ու Թշնամիները կատաղաբար ներս լեցուեցան. հարիւր քառասուն հազար մարդ կոտրեցին, մնացածները գերի տարին, քաղաքն ալ այրեցին, որուն աղետալի աւերակները ինչուան հիմա կեցած են։ Վաթսուն հազարի չափ Յոյն զօրք կային Հայաստանի մէջ ան միջոցին, բայց փոխանակ օգնելու Հայոց՝ իրենք ալ ձեռքերնին եկած չարիքը կը հասցնէին։ Այսպիսի գործողութեանց մէջ նշանաւոր է Հարպիկ անունով իշխանին դիպուածը։ Երբոր Յոյնք Զօրթորգ Հայոց բնակիչները պատերազմով ու հար-

16. Ո՞վ է Տուղրիլ ու ինչ գիտելիք կայ Հարպիկ իշխանին վրայ.

կահանուլեամբ կը նեղէին, Հարպիկ Երեն պղտիկ գեղովը բերդ մը քաշուած՝ Ցուխաց մեծաւոր կը հաղցընէր. Պեռոս Ցուխաց զօրավարը տեսնելով որ չկրնար բերդին տիրել՝ մօտ գալով սկսաւ ըսել. Ով որ Հարպիկին գլուխը ինծի բերէ՝ բերդը անոր կը պարգեւեմ: Ա՛ս առակալ ձայնէս խեղճին քունը աչքէն հեռացաւ, և արծաթասէր մտածութիւնէ վախնալով՝ չորս հինգ օր ամենևին չքնացաւ: Քովի հաւատարիմ կարծուած մարդիկը շատ յորդորեցին որ քիչ մը քուն ըլլայ հանդչի. և հաղիւ թէ երկիւղալից ու վայրկենական քունը կոխեց վրան ու աչքերը գոցեց, մէյ մ՚ալ քովինները վազեցին վրան ու անողորմաբար մորթելով, մահուան խոր քունին մէջ թաղեցին: Բերդին մէջինները իրենց արժանաւոր պատիժը գտնելով, շղթայակապ Պօլիս տարուեցան, Մոնոմախոսն ալ մէկէն քշել տուաւ զնրինք: Ահա այսպէս միշտ մտածութիւնները մտնուռղէն շատ աւելի դառն և ահաւոր պատիժ ունենալ են:

17. Տուղրիլ Ասծն քաղաքը հինոյատակ ընելէն եաքը՝ երկրորդ տարին շատ զօրքով Բասէն գաւառին վրայ յարձակելով մեծամեծ ջնաններ հասուց ան տեղերուն ալ. Գագիկ Աբասեան, որ ինչուան ան տեղերը կը թագաւորեր Կարսի մէջ, զօրք ժողվեց Թաթուլ քաջ սպարապետին ձեռքը տուաւ, ու Թշնամւոյ դէմ խաւրեց: Որչափ որ զօրքը քիչ էր՝ քաջութիւնը այնչափ մեծ եղաւ Հայոց կողմանէ, մանաւանդ Թաթուլին ըրածները: Բայց երկար տեն Թշնամւոյն ընդդիմանալէն եաքը յաղթուեցան Հայերը ու Թաթուլ բռնուեցաւ. երբոր Տուղրիլին գիմացը եկաւ քաջ սպարապետը, ըսաւ Տուղրիլ. « Թէ որ Աստուած

17. Տուղրիլ Բասէն գաւառը ինչ ըրաւ ու ինչ կը պատմուի Թաթուլին վրայ.

իշխանին որդին մահուընէ խալըսի՝ զքեզ կ՚ազատեմ, ապա թէ ոչ՝ պիտի մեռնիս ». պատասխան տուաւ Թաթուլ. « Թէ որ հարուածը խմէ՝ չապրիմ. հիմակուընէ սպանէ զիս »: Մեռաւ ապան, ու Թաթուլ սպանուեցաւ: Տուղրիլ անկէ գնաց Մանազկերտի վրայ, որուն քաղաքապետը Վասիլ անունով յոյն մըն էր. ասոր քովը հնազանդիլ ու խելացի հայ քահանայ մը կար որ Թշնամւոյ ամեն հնազանդները պարապը կը հանէր իրեն դիւտեղովը, այնչափ որ Տուղրիլ յուսահատելով բարկութեամբ Թողուց գնաց, շատ մարդ ու երեւելի անձինք կոտնկընկէզեն եաքը: Գաղղիացի մըն ալ դիւրաւառ նետ մը գտաւ, ու անով այրեց Պարսից ահագին բաբանը՝ որ չորս հարիւր հոգի հազիւ կրնային շարժել:

18. Յաջորդ տարին մեռաւ Տուղրիլ, ու տեղը յաջորդեց իր եղբօրորդին Ալփասլան, որ գիտնալով Հայաստանի անառիկ ըլլալը՝ անթիւ բազմութեամբ Հայոց վրայ եկաւ ու Անին պաշարեց: Տեսնելով Անիին պարսպանեղբուն ամրութիւնը, առջի բերանը յուսահատեցաւ. բայց վերջը խմնալով պարսպին մէկ կողմին տկարութիւնը՝ բոլոր ուժը հոն թափեց, ու բաւանով անգադար զարնելով քիչ մը տեղ փլուց: Պարսիկները երթոր սկսան ան պատառուածքէն ներս մտնել՝ քաղաքացիք քաջութեամբ դէմ դրին ու շատ չարդ ըրին իրենցմէ: Ալփասլան քանի մը անգամ ալ փորձ ընելէն եաքը յուսահատեցաւ ու սկսաւ քաղքէն հեռանալ: Բագարատ և Գրիգոր քաղքին վերակացուները չխմանալով Ալփասլանին հեռանալը՝ մտքերնին դրին որ պիտի չկարենան ինչուան վերջը Պարսից դէմ դնել. ուստի յուսա-

18. Ալփասլան Անին ինչպէս առաւ ու ինչ ըրաւ հասուց Հայոց.

հատած՝ իրենց զօրքովը միջնաբերդը քաշուելուն։ Քաղաքացիք որոշ չգիտնալով Թշնամւոյ հեռանալը, սկսան վախենալ կանչուըտուել, լալ ու ողբալ. ասոնց ձայնէն ետ դարձաւ Ալփասլան, ու տեսնելով որ ամենքը չիմաստութեան մէջ են՝ կատաղաբար կարգել տուաւ բիւրաւորը մարդկի, քաղքին մէջէն ալ քանի մը հազար մարդ Թողուց որ տեղ բանիները նորէն շինեն։

19. Երբոր Ալփասլան դեսպան խրկեց Գագիկ Աբասեանին որ իրեն հնազանդի, առաջուց խմանալով Գագիկ դեսպանին գալը՝ սուպ զգեստ հագաւ, ու մոխրի վրայ նստած սկսաւ ողբ ու լոյց ձեացընել. երբոր հարցուց դեսպանը պատճառը, ըսաւ Գագիկ. « Ի՞նչ սրտով կրնամ ուրախ ըլլալ երբոր իմ սիրելի բարեկամս Տուղրիլ մեռաւ »։ Այս բանիս վրայ Ալփասլանին գութը շարժեցաւ, եկաւ հետը սիրով պագաուեցաւ ու շատ պատիւ ըրաւ անոր։ Բայց Գագիկ գուշակելով որ անկէց վերջը հանգստութիւն պիտի չկարենայ գտնել Պարսից ձեռքէն, իր երկիրը կայսեր տուաւ, ու տեղը առաւ իրեք քաղաք, Ծամնդաւ բերդը, Հաբիւր ալ գեղ (1065)։

20. Այս միջոցներուս Յունաց՝ Հայոց դէմ ունեցած տեսլութիւնը նորէն սաստկանալով շատ չարիք հասուցին Հայ իշխաններուն, և ամեն տեսակ նախատինք կ՚ընէին ազգին. ատ պատճառաւ Գագիկ, Բագրատունեաց վերջի Թագաւորը, կեսարիոյ յոյն մեարապօլիտը սպանեց. Թէպէտ և ինքն ալ սպանուեցաւ։ Այս Մարիոս անունով մեարապօլիտը ուզելով զՀայերը նախատել՝ իր շա-

19. Գագիկ Աբասեան ինչ հնարքով բարեկամացաւ Ալփասլանի հետ.

20. Գագիկ ինչ կերպով Մարիոս Յունաց մեարապօլիտէն ազդեցուս ըրած վրէժը առաւ.

նը անունը Աբրմէն դրած էր. ատ բանս լսած ըլլալով Գագիկ՝ առթի մը կ՚սպասէր ատ նախատանաց վրէժը հանելու, ուստի օր մը քանի մը ծառանելով մեարապօլին գնաց, և երբոր դեռ սեղանի վրայ էին՝ սպաչէց Գագիկ մեարապօլին որ շունը կանչէ։ Երբոր անիկայ նեղը մնալով շունը կանչէց Աբրմէն անուանելով, հարցուց Գագիկ ատ անուանագրութեան պատճառը. մեարապօլիտն ալ ըսաւ. « Որովհետև դեռ պզտիկ է՝ անոր համար Աբրմէն կ՚ըսեն »։ Մէկէն աչք ըրաւ Գագիկ ծառաներուն. շունը և մեարապօլիտն ալ բռնեցին՝ պարկի մը մէջ գրին և սկսան շունը ծեծել. ան ալ կատաղութենէն զաերը կը խածնէր, որով երկուքն ալ մեռան պարկին մէջ. իսկ Գագիկ եղաւ գնաց անկէ։ Յետը Մարիոսին տա տեսակ նախատական մահուանը վրայ երաւամբ կատաղած՝ սասակ ոմ կապեցին Գագիկ վրայ ու եանէ էն զինքը սպանելու։ Իրաւ, հայրենասէր մարդու մը համար ծանր բան է իր ազգին նախատանացը դիմանալ, բայց Գագիկ հայրենասիրութիւնը արդար վրէժխնդրութեան չափը անցուց, և ըրած անգթութիւնը ոչ երբեք կ՚արդարանայ։

21. Անգամ մը Գագիկ Տարսոնի կողմերէն իր քաղաքը Պիզու դառնալով, երբոր Ճամշան Ակիսիատա բերդին կողմերը հասաւ, քովի մարդիկը հեռուն ձգեց ու ինքը իրեք հոգւով դէպ՝ի ամրոցին կողմերը գնաց զբօսանքի համար։ Բերդին տէրերը որ որդիք Մանուէլեայ կ՚ըսուէին՝ շատ մը մարդիկ գարանի դրին, իրենք եկան Գագիկայ երկրպագութիւն ըրին, ու մեծ յարգութեամբ ընդունեցան զինքը. ան միջոցին դարանամուտները

21. Գագիկ ինչպես բռնուեցաւ ու սպանուեցաւ ու ինչ գիտելիք կայ Գագիկ Աբասեանին ու Արծրունեայ Թագաւորական ցեղին վրայ.

գուրս վազելով բռնեցին զԳագիկը ու չգթայի զարկած բերդը տարին. խակ քովի իրեք հոգին սաեն գանելով փախան գնացին ուրիշ Հայ իշխաններու մօտ. անոնք ալ եկան ու սկսան բերդին հետ պատերազմիլ. բայց չկրնալով ձեռս մը հասցընել անառիկ ըլլալուն համար՝ յուսահատած եկան գնացին: Ան սաեն Մանտալեայ որ. դեքը զԳագիկը սաստիկ չարչարելով սպաննեցին, ու մարմինը պարսպին վրայ կախեցին որ Հայերը սեսնեն: Զորս հինգ ամիս ետքը Բանիկ անուշով Հայ մը գնաց գիշերանց գերեզմանէն ոսկորները հանեց, որ բերդին պարսպին տակը Թաղուած էին, ու տարաւ Պիզու Գագիկին շինել տուած վանքին մէջը Թաղեց: Ահա այսպէս մեռաւ այն Թագաւորը որ աշխարհքիս անուանի Թագաւորներէն մէկը պիտի ըլլար, և իր անմահական արդեամբքն յաւիտենական յիշատակներ պիտի ունենար. և հիմա անունը հազիւ Թագաւորաց մէջը յիշատակուեցաւ: Մէկ վէտա Սարգիս մը և իրեն պէս քանի մը փառամոլ և ախտալից մարդիկ այսպիսի չարեաց պատճառ եղան, և Թողուցին մեզի իրենց ահաւոր մատնութեան պատուէրը՝ ի խրատ և ի յանդիմանութիւն:

Ան սաեններէն վերջացան նաև Գագիկ Աբասեանին, ու Արծրունեաց Թագաւորութեան ձիւղերը, որով բոլորովին ջնջուեցաւ Հայաստանի մէջէն Թագաւորութեան անունը (1070):

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ռ Ո Ւ Բ Ի Ն Ե Ա Ն Ց

ԴԱՍ ԻԹ.

Ռաբինեանց թագաւորութեան սկիզբը: Թոռոս Ա. իշխանին թագաւորելը:

1. Բագրատունեաց կնալէն վերջը երեսուն տարի անիշխանութիւն ըլլալով այնպիսի ազետալի խեղճութեան մէջ մնաց Հայաստան որ հայրենասէր մարդուն աչքէն արտասուքը չգադրիր հնչուան որ սեսնէ զերի Ռուբինեանց իշխանութեան կանգնուիլը, որ Թէպէտ և ընդարձակութեանն ու զօրութեանը նայելով պզտիկ էր, բայց ըստ քաջութեան, ըստ բարեպաշտութեան և ըստ խոհեմութեան մեծ էր, մանաւանդ այնպիսի գարերու մէջ որ ամեն կողմանէ Թշնամիք զօրացած, ու ազգին նեղքին և արտաքին ուժը սկսրացած էին (1080):

2. Ռուբէն Ա. Գագիկայ ազգականներէն մէկը,

---

1. Բագրատունեաց Թագաւորութեան կնալէն ետքը ազգերնիս ինչ վիճակ ունեցաւ.

2. Ո՞վ էն Ռուբէն Ա. ու Գազ Վասիլ ու ինչ պատճառիք կայ Մեզիք Շահին վրայ.

որ անոր բանաւելու առնելը քոնի էր, Կիլիկիա փախչելով, հոն գահուած Հայոց իր կառավարելութիւնները ու քաղաքականութիւնը սկսելի եղաւ. քանի կարճ ձեռը շատցուց ու սկսաւ քանի մը պզտիկ քաղաքներու ու բերդերու տիրել. շատ անդամ Յունաց ալ յաղթեց, ու Կիլիկիոյ մէջ գլխաւոր Հայոց իշխեց: Ռուբինին օգնական ու զօրաւոր եղաւ Վասիլ անուամբ քաջ ու հնարագէտ իշխանը որ յանկարծ յանկարծ թշնամւոց վրայ յարձակելով շատ ջնաս կը հասցնէր անոնց. ան պատճառաւ անունն ալ Գող Վասիլ դրեր էին: Կիլիկիոյ Հայերը թէպէտ և իրենց ազգասէր իշխանին առաջնորդութեամբը հանդիսա ու գոհ էին, բայց բուն Հայաստանի բնակիչները շատ նեղութիւն կը քաշէին Պարսից գործակալներուն ձեռքէն, ինչուան որ Մելիք Շահ զՅոյնները վռնտեց Հայաստանէն ու ինքը տիրեց. և լսելով որ Պարսից գործակալները զՀայերը կը նեղեն՝ առաքիկ հրաման հանեց որ քաղցրութեամբ վարուին Հայոց հետ. ասով խաղաղ մնաց Հայաստան ինչուան անոր մահը:

3. Ան միջոցներուն մեռաւ Ռուբէնի Ա. առանը. հինգ տարի խելքով, արթնութեամբ, հայրաբար ու քաջութեամբ ազգը կառավարեցին եղբը: Կոստանդին Ա. իր հօրը տեղը յաջորդելով նոյնպէս անուանի եղաւ ընթր բարեմտութիւններովը, մնաւանդ զգուշաւորութեամբը, մեծանձնութեամբը և պատերազմական հմտութեամբը. որով Յոյներէն պատերազմով շատ տեղեր առաւ ու տէրութիւնը ընդարձակեց: Աւոր առնէր Լատինացիք հանեցին առաջին խաչակիրը զբրքը Կոստաբատնին առաջնորդութեամբը. ասոնք երբոր

3. Ո՛վ յաջորդեց Ռուբէնի Ա.ին ու Կոստանդին ինչ օգնութիւն ըրաւ Խաչակրաց.

Անտիոքը պաշարեր էին պաշարմին ընթացքու ատենը քաղաքին մէջ. Կոստանդին ուրիշ Հայ իշխաններու հետ մեկտեղ առատ պաշար խրեցեց անոնց, որով զօրացած՝ Անտիոքը առին ու Կոստանդին շատ ազնիւ ընծաներով տպատուեցաւ պատիւ խրեցին: Կոստանդին տասնիկ լաւ հերոսով հինգ տարի իշխեցին եղբը մեռաւ, և իրեն յաջորդեց Թորոս որդին (1099):

4. Թորոս շատ քաջութիւններով ու բարեկարգութիւններով իր անունը պայծառացուց, շատ անգամ Յունաց յաղթեց ու Անտիոքցիք քաղաքն ալ առաւ: Աւոր առնէր Պաբսիկ անհամար բազմութեամբ Կիլիկիոյ վրայ եկան, ու շատ չարիք հասցընելէն եղբը Թորոսէն վռնտուեցան. նոյնպէս նաև Գող Վասիլ, որ գեռ կ'ապրէր, երկար անգամ Պարսից դէմ մեծ յաղթութիւն ըրաւ: Հաղիւ թէ Պարսիկք Կիլիկիայէն հալածուեցան՝ անթիւ զօրքով Սկիւթացիք լեցուեցան հոն: Թորոս տեսնելով որ չկրնար մինակ դէմ դնել, օգնութիւն կանչեց Տիգրան և Աղբատաց Հայ իշխաններէն: Պատերազմէ խիստ տատեղ ըլլալով, քաջութեամբ պատերազմելու առեն երկուքն ալ մեռան. ան առեն Լեւոն Թորոսին եղբայրը երկար խաչակիրեց ու զԱտուած օգնութիւն կանչելով մնաւ թշնամւոց մէջ, ու այնպէս քաջութեամբ սկսաւ կռուիլ որ հազարաւոր մարդ սպաննեց ու թշնամիները հալածեց:

5. Ան միջոցներուն Թորոսի ու Մանուէլայ իրենք որդւոցը մէջ թշնամութիւն մը ծագեցաւ. ուստի Թորոս զբրք ժողվեց, վռնտին պատերազմի ե-

4. Թորոս ինչպէս Պաբսից յաղթեց ու Սկիւթացիքը Հայաստանէն հալածեց.

5. Թորոս ինչպէս վարպետութեամբ Մանուէլայ որդիքը բռնեց ու բերդերնուն ալ տիրեց.

լաւ. բայց տեսնելով որ անառիկ է բերդերին, անոր համար դիշեր ատեն գարանի գրաւ շատ մը կարիճ մարդիկ բերդին քովերը, ու ինքը հեռացաւ գնաց: Առաւօտուն տեսան Մանուէլայ որդիները որ Թորոս հոն չէ, կարծեցին թէ յուսահատած եկեր գնացեր է. ուստի բերդին դռները բացին ու սկսան համարձակ դուրս ելլել ու եկնել. և ահա յանկարծ Թորոսին գարան գրած մարդիկը վրանին վազելով բոլոր հոն գտածներին թրէ անցուցին, Թորոս ալ իր զօրքերովը վրայ հասաւ ու բերդին տիրեց. վերջը Մանուէլայ իրեք տղաքը բռնեց ու հրամայեց որ Գագիկայ Թուրին ու հազուստները բերեն: Ան միջոցին իրեք եղբայրներէն մեկը գնաց ինք զինքը բերդին վար նետեց ու մեռաւ. Թորոս անոնցմէ մեկը սպաննեց ձեռքը լով, մեկալն ալ շղթայի զարկած հեռը տարաւ. և քանի մը տարի ալ տպրելէն ետքը մեռաւ՝ քառասունհրեք տարի տղքը կառավարելէն ետքը (1122):

6. Որովհետև Թորոս որդի չունէր, տեղը անցաւ Լեւոն Ա. կարիճ ու առաքինի եղբայրը. ասիկայ, ինչպէս որ պատմեցինք, արդէն եղբօրը առաջնեն ալ մեծ քաջութիւններ ըրած էր Սկիւթացւոց դէմ, ու տղային կառավարութիւնը ձեռք առնելով քաջութիւնն ու խնամքը աւելցուց. Մահտիա քաղաքը առաւ, և ուրիշ շատ քաղաքներ, որոնք Յոյները Թորոսի ձեռքէն յափշտակեր էին. այնչափ անունը մեծցաւ որ ամենքը կը դողային երմէ, և նոր Աժդահակ կ'ըսէին: Անտիոքայ կոմսը նախանձելով վրան, ու միանգամայն գիտնալով որ չկրնար բռնութեամբ յաղթել Լեւոնին՝ սկսաւ բարեկամութիւն ձեւացընել. օր մը զինքը կոչեց

6. Լեւոն Ա. ինչ քաջութիւններ ըրաւ Յունաց դէմ ու ինչպես Անտիոքայ կոմսին ձեռքէն խալսեցաւ.

քի հրաւիրեց ու վերջը բռնեց բանտ դրաւ. Լեւոն նեղը մնած՝ շատ սատկ, երիտ. քաղաք, իր որդիներէն մէկն ալ պատանդ տալով ազատեցաւ. ու բանտէն ելլելուն պէս նորէն զօրք ժողվեց ու տուած քաղաքներուն վրայ վազելով բոլորն ալ էտ առաւ. այնչափ նեղը խոթեց Յաւինացւոց իշխանները, ու մանաւանդ կերպով Անտիոքայ կոմսը, որ միաբանեցան ու շատ պատանդներ և ընծաներ տուին, էտ գործընկերով իրեն պատանդ տուած որդին:

7. Լեւոնին քաջութեան համբաւը հասնելով Կոստանդին Պերփիւժենկայսեր ականջը, ուղեց որ ինքը անձամբ ելլէ ու Լեւոնը ընկճէ: Լեւոն երբոր իմացաւ Յունաց մեծամեծ պատրաստութիւնները, ազգին կառավարութիւնը ձգեց ու գնաց ամուր և գժուարամատոյց լեռները պահպանեցաւ. իր ընտանիքովը: Կայսրը Լեւոնին եւեին մարդ խաբրեց որ երեմն զինքը պաշարեն, ու ան միջոցին ինքը այլեւայլ քաղաքներու տիրեց. ասոնց մէջ Անարզաբան առնելու համար շատ նեղութիւն քաշեց ու անբաւ մարդ կորնցուց. վասն զի քաղաքացիք, որ ըստ մեծի մասին Հայ էին, պատերազմցան պաշարողաց հետ ու Յունաց բանակը ցրուեցին: Կայսրը աւելի մեծ պատրաստութեամբ նորէն պաշարեց, բայց քաղաքացիքն եռանդն ամենայն հնարք կ'ընէին անոնց մեքենաները այրելու ու զինք ելեասելու: Երեսունհեօթը օր պաշարեցին եառքը վերջապէս պարսպին մէկ կողմը փլուցին, ու Յոյնք կառաղաբար սկսան ներս վազել, բայց քաղաքացիք աւելի կատղելով սոսկալի արագութեամբ ու բազութեամբ կը պատերազմէին, որով

7. Լեւոն ինչու Հայաստանէն փախաւ, ու Անարզաբայի բնակիչքը ինչ քաջութիւններ ըրին Յունաց զօրաց դէմ.

բնութաւոր մարդիկ մեռուցին Յոյներէն. ինչուան նաև կանայք ալ ամէն տեսակ կարասի և այրելու նիւթեր կը նետէին պատուհաններէն, որով շատ մարդ սպաննուեցին: Ատոնք ընկերէն վերջը՝ Յուներոյ բազմութիւնը ձգտեցին, ուր քաղաքը կայսեր թողլով իրենք ելան գնացին: Նիճէ Սրբակռնեաց աբբութեան խնամքէն ինչուան վերջը տեսնուած ըլլար մէր ազգին մէջ սա միաբանական հոգին, սա ամենահարկաւոր առաքինութիւնը, տարակոյս չկայ որ միշտ կանգուն ու զօրաւոր կը մնար:

8. Պերփեռուժէն Աֆարզաբան առնելէն ետև գնաց Վահկայ ամրոցին վրայ որ ան ատենը Ռուբինեանց մայրաքաղաքն էր. սասը քաղաքապետան էր Ռուբինեանց ցեղէն Կոստանդին անուանով կրտսերմ մը, որ նոյնպէս շատ մարդ ջարդեց ու նեղը խոթեց Յոյները. բայց վերջը երբոր ամրոցը առնուեցաւ, վենքն ալ բռնեց կայսրը ու շղթայի զարկած Կոստանդնուպոլիս խուրձը: Ճամբան նուաղ երթալուս առեն՝ գիշեր մը շղթաները կտրեց, բոլոր պահապանները ջարդեց, ինքն ալ ցամաքը ելաւ. բայց հաքը քանի մը մարդկանց մատնութեամբ նորէն բռնուեցաւ: Կայսրը բոլոր Սիլնկոյ սիրելէն հաքը՝ Լևոն ալ իր ընտանիքովը բռնեց ու շղթայի զարկած Կոստանդնուպոլիս տարաւ ու բանտը գրաւ. ուր տարի մը ձգելէն հաքը՝ ուրիշներու ազատանքովը բանտէն հանեց ու հանգիստ կը պահէր:

9. Աստեն անցնելէն հաքը օր մը Թագաւորը բազնիք գնացեր էր. Թուբէն Լևոնի օրդին հոն տեղ

8. Պերփեռուժէն Վահկայ ամրոցը ինչպէս առաւ, ու զԼևոն ինչպէս բռնեց.

9. Կոստանդնուպոլիս ինչ դէպքեր անցան Լևոնի գլխին. ինչ է Թորոսին տեսած երազը ու Լևոն ինչպէս մեռաւ.

քարէ աւազանը չկամ լեցուն՝ թէ թէ բանի մը պէս բռնած՝ մէկ ընչով Թագաւորին առջի ը բերաւ. ամենքը զարմացան սա բանիս վրայ ու սկսան գովել Ռուբենին ուժը, բայց վերջը ամենք վրան նախանձելով Թագաւորը յորդորեցին որ խղճին աչքերը կուրցնէ, որն որ ցաւին չդիմանալով՝ քիչ առենէն մեռաւ: Կայսրը նորէն բանտ դրաւ Լևոնը որդւոյն հետ. հոն Թորոս երազ մը տեսաւ, ուր քիչ մը մխիթարուհեան երկաբեր ալ, և երազը սա էր. փառաւոր մարդ մը տեսաւ որ եկեր իրեն հայց մը կուտար՝ վրան ձուկ դրած. Թորոս առաւ ան հացը՝ հօրը տուաւ, բայց անիկայ չկերաւ: Երբոր առաւօտ եղաւ՝ պատմեց հօրը տեսած երազը, ան ալ ըսաւ. «Հացը կամ նկատակը կը նշանակէ Թէ նորէն պիտի սիրես գուն բոլորը մեր կորնցուցած երկիրները. իսկ ձուկը կը նշանակէ Թէ ծովուս ալ պիտի սիրես. սանիք պիտի ըլլան, բայց ես պիտի չտեսնեմ»: Երկրորդ անգամ բանտ գրուելէն ետքը՝ Լևոն տարիի մը չափ ապրեցաւ ու մեռաւ. եաքը կայսրն ալ Թորոսը բանտէն ազատեց ու լաւ աչքով կը նայէր վրան: Լևոնին առջի քաջութեան գործքերը որչափ որ գովելի ու զարմանալի են, մեղադրութենէ աղատ չէ վերջի գործքը՝ որ տարկաւոր ժամանակ՝ հաւատարմութիւնը ու ապը ձգեց քաշուելացաւ. որ եթէ ինքը բոլոր ուժովը դիմադրեալ ըլլար Թշնամւոյն՝ չէր կրնար Թշնամին այնչափ ձեռս հասցընել աշխարհքին. պարտական էր նաև իրեն հայր հաստատուց իր կեանքը զոհելով՝ ժողովրդեան փրկութիւնը հոգալ և տէրութեան վճռակը ապահովցընել (1142):

ԴԱՍ Լ.

Թորոս Բ. իշխանին քաչոբիւնները. Մլեհ ոռ Ռոբեհ Բ:

1. Յովհաննէս Պերիեռուժէն կայսեր առնը առնուն սիրելի ըլլալով Թորոս իր զարմանալի կատարելութիւններովը, երբոր Կիւ Մանուէլ Յովհաննեսին տեղը յաջորդեց, Թորոս միտքը դրաւ որ Կոստանդնուպոլսէն փախչի ու գայ ազգը դերութեհնէն ազատէ. ուստի ծածուկ իրեն վճռական եղաւ Պօլսէն Անտիոք երթալու համար ու անկէ փախաւ Կիլիկիա. հոն ինքզինքը քահանայի մը յայտնեց՝ թէ Լեւոնի որդին է. քահանան երբոր ուրիշներէ ալ առաջուց այդ բանս՝ ուրախութեամբ առաւ զինքը իր տունը տարաւ, ու հոն ամենայն պատուով կը նայէր, միանգամայն իմացուց Հայոց մեծամեծներուն, որ Յունաց բռնութիւններէն ձանձրացած՝ կ'ուզէին առջի ազատութիւնին ձեռք ձգել: Կամաց կամաց Թորոսին գալը ամէն տեղ իմացուելով՝ տասը հազարի չափ մարդիկ քովը ժողովեցան, ու իրեն առաջնորդութեամբը վազեցին Անարզաբա, Սամոսատ ու Վահկայ բերդին վրայ, և ամենուն ալ տիրեցին՝ Յոյները վռնտելով. ասանկ Թորոս Կիլիկիոյ Հայոց հաւանութեամբը իշխեց ազգին վրայ, ու գրեթէ բոլոր Յոյները հալածեց իր տերութենէն:

1. Թորոս ինչպէս Պօլսեն փախաւ ու ինչպէս սկսաւ նորէն Հայոց տէրութիւն մը ձեւացնել.

2. Կիւ Մանուէլ կայսրը Թորոսին ըրածները վռայ նեղացած՝ մէկէն հրաման առաւ Անդրոնիկոս զօրավարին որ շատ զօրքով Կիլիկիա երթայ, Թորոսը բռնէ ու երկրին բոլոր բնակիչները թրէ անցընէ: Իսկ Թորոս իր բնականաւանութեամբը ու գիտնալով միանգամայն պատերազմին դէշ հետեւանքները, դեսպան զրկեց Անդրոնիկոսին՝ իմացընելով թէ ինքը կայսեր հրամանին և կամացը յօժարութեամբ կը հնազանդի՝ եթէ կայսրը արդարութեամբ կառավարէ երկիրը: Անդրոնիկոս գոռոզութեամբ պատասխան առաւ. « Կայսեր հրամանը և արդարութիւնը ան է որ զքեզ ան շղթայով կապին ու Պօլիս տանին՝ որով քու հայրդ Լեւոն կապուեցաւ »: Թորոս հնարագիտ ու բանաւոր ըլլալով ձայն չհանեց, ունեցած հետեւակ զօրքը տարաւ կիրճերուն մէջ գարանի գրաւ, ուսկից որ Յոյները սահպուած էին անցնելու, և ինքը ձիաւոր զօրքով ուրիշ ճամբով մը Յունաց հոսին անցաւ: Երբոր Հայք զՅոյները ամէն կողմանէ պաշարեցին՝ մեծ ջարդ մը տալէն հեռը Յունաց իշխաններէն շատ մարդ գերի բռնեցին: Կայսրը տասակի արտուեցաւ այդչափ իշխանաց գերի բռնուելուն վռայ. հրաման խրկեց Անդրոնիկոսին որ տասակով գինի գերի իշխանները. երբոր դեսպանները իմացուցին Թորոսին կայսեր կամքը, պատասխան առաւ. « Կը զարմանամ որ այդչափ յարդի են եղեր կայսեր գիմացը իմ գերիներս, որ հո առանց արեան ու տախտ աշխատութեամբ բռնեցի. իմ առջի տասի մ'ալ չեն արժեր. բայց երբոր կայսեր պիտանի են՝ թող ինչ որ կ'ուզէ վճարէ ու առնէ »: Դեսպանները գերիներուն նա-

2. Թորոս ինչպէս իր հնարագիտութեամբը Անդրոնիկոսին յաղթեց ու ինչ կերպով Յունաց-մէ բռնած գերի իշխանները հո դարձուց.

խաղալիք չընելու համար խիստ շատ սուակ տուին ու եւս տալին. բայց Թորոս վհատձնուելեամբ ան առած սուակը զօրքերուն բաժնեց գեսպանաց առջեւը. երբոր անոնք զարմացան՝ ըսաւ Թորոս. « Կամաւ ըրի որ նորէն ձեր իշխանները քաջուելեամբ բանեցով իմ առջեւս բերեն »: Եւ յիրաւի, քանի մը տարի եաքը նորէն պատերազմ բացուելով Թորոսի եւ Յունաց մէջ, առջինին պէս Յոյներէն շատ իշխաններ գերի ընկան, և Թորոս առջինին պէս ծախեց զերիները, որով առժամանակ մի հաշտութիւն եղաւ Հայոց և Յունաց մէջ:

3. Ինչ մը տարիէն նորէն թշնամութիւն ծագեցաւ՝ Թորոսին Սահակ եպիսկոպոսը պատճառաւ. վասն զի տեսակ տեսակ ամբաստանելով Թորոսէն՝ ինքնագլուխ սկսաւ իշխել, և շատ մը սրճկանները գլուխը ժողվելով Յունաց մեծամեծ ընծաներ հասուց. անոնք հետը թշնամանալով գարնան մտան, բանեցին զինքն ու եաւկաւ Ջրի մէջ սպաննեցին: Սահակ արամեցաւ Թորոս, ու սուտ մտաւ եղբօրը մահուանը համար. բայց վերջը ուզելով Յոյներէն վրէժը առնել՝ շատ չարիք հասուց անոնց, և ձեռքը ընկածնեբուն քիթը ու ականջնին կտրելով Կոստանդնուպոլիս կը խաբեր, ինչպէս որ ան առաջնորդը սովորական անպիտանութիւն էր շատ տեղ սա պատիճս տալ գերիներու ու չարագործ մարդկանց: ԵՒթե Մանուէլ կայսրը անձամբ և ահեղ պատրաստութեամբ Թորոսին վրայ ելաւ. Թորոս տեսնելով որ դէմ պիտի չկարենայ դնել անոր զօրաց բազմութեանը, հաշտութիւն խոսեցաւ կայսեր հետ ու բարեկամութեամբ քովը գնաց, ու շատ սիրով իրարու հետ տեսնուեցան: Ա յսպէս

3. Թորոս իրեն Սահմանք եղբօրը մահուան վրէժը առնելու համար ինչ ըրաւ ու ինչպէս մեռաւ.

Թորոս իշխանը խելքով քաջուելեամբ և հայրաբար քանիը չորս տարի ազգը կառավարեցին եաքը մեռաւ (1167):

4. Թորոսին մեռնելէն անմիջապէս եաքը ազգին մէջ խռովութիւն ընկաւ՝ անոր Մլեհ եղբօրը պատճառաւ. վասն զի Թորոս պզտի տղայ մը ունէր՝ որուն խնամակալ գրեր էր մեռնելու տաեւը Թովմա Պայլ անուանով իր անեղբը. սա բանս խնամալով Մլեհ, որ արդէն ապստամբած էր, Բերիոյ ամիրայէն շատ զօրք առած եկաւ Ակնկիոյ վրայ. առջի անգամուն Ակնկիոյ մէջ ամէն տեղ խռովութիւն ձգելէն եաքը՝ գործողութիւն մը չկրցաւ ընել. ուստի գնաց Բերիոյ ամիրայէն նորէն շատ մը զօրք առաւ ու եկաւ Թովմա Պայլին վրայ: Իշխանները տեսնելով որ սա գործողութեան ծայրը գէշ պիտի երթայ, միաբանեցան և կանչեցին Մլեհը իրենց իշխան գրին Թորոսին տեղը. բայց անիկայ մեկին ինքզինքը զեղծութեան ու անկարգութեան տուաւ, որով զօրքն ալ ձանձրացան ու սպաննեցին զինքը՝ հինգ տարի իշխելէն եաւ: Ո՛վ հետ Մլեհ որդի չունէր, անոր համար Ռուբէնը կանչեցին, որ Սահմանքին որդին էր: Ասկայ իր քաջութ բնաւորութեամբը ամենուն սիրելի եղաւ ու բոլոր մերձակայ և օտար ազգաց առջեւ մեծ անուն հանեց (1173):

5. Փուռ պատճառի մը համար մեծ թշնամութիւն ծագեցաւ Ռուբէնին երկրորդին ու Լամբրոնի Հեթում իշխանին հետ. վասն զի Մանուէլ կայսեր մեռնելէն եաքը նորէն թշնամացան Յոյներուը

4. Մլեհ ինչպէս իշխան եղաւ Ակնկիոյ ու ինչ պատճառք կայ Ռուբէն Սահմանքին որդւոյն վրայ.

5. Ի՞նչէն թշնամութիւն ծագեցաւ Ռուբէն Ե. ին ու Լամբրոնի Հեթում իշխանին մէջ ու ինչ վերջ ունեցաւ.

Հայոց հետ. Ռուբէն ալ Տարսոնի վրայ յարձակելով, որ Յունաց ձեռքն էր, առաւ: Հռոմէական բանակ իրեն մեծ նախատինք սեպից, որովհետեւ Յունաց բարեկամէր, կայսրն ալ իրեն յանձնած էր Տարսոն գաւառին պահպանութիւնը: Երբոր երկու կողմէն ալ պատերազմ բացուեցաւ, Հռոմէական դեղը մնալով օգնութիւն կանչեց Անդրոնիկոս Պալմունդ կոմսը. բայց որովհետեւ ան ալ կը վախնար Ռուբէնէն, խորհրդակցութեամբ բարեկամաբար կոչնչի հրաւիրեց զՌուբէնը, և բռնեց բանտ դրաւ: Ռուբէնին եղբայրը Լեւոն մեկնեց զօրք ժողվեց ու Լամբրոն բերդին վրայ երթալով, սաստիկ նեղը ձգեց Հռոմէացիները, որ Ճարը հատած հաշտութիւն խօսեցաւ. վերջը Լեւոն շատ ընծաներ տալով Պալմունդին՝ Ռուբէնին ալ ազատեց ու բերաւ նորէն աթոռը նստեցուց: Այս դէպքերուն և նախանձելի յաջողութիւնները Լեւոնին վրայ սեւնուելով, անոնցմէն չատ մը տուին որ սեւնով ազգին ուրիշ մեծամեծ բարիք ալ պիտի ընէ: Ռուբէն Բ. գովելի կերպով սահմանեց տարի ազգը կառավարելէն ետքը՝ Դրազարկ վանքը քաշուեցաւ, ու հոն քիչ մը տանեն սրբութեամբ մեռաւ, իրեն յաջորդ թողուլ Լեւոն եղբայրը (1184):

ԴԱՍ Լ.

Լեւոն Բ. իշխանին քաղաքականներն ու թագաւորելը, և հիւռական Հերուսի:

1. Լեւոն Բ. ազգին կառավարութիւնը ձեռք առնելով՝ սկսաւ ցուցընել իր քաջութեան ոգին ու բարեպաշտութիւնը: Իրեն առջի յաղթութիւնը եղաւ Իկոնիոյ Ռոսատմ ամիրային դէմ, որ Լեւոնին քաջութեանը նախանձելով՝ զան պատերազմի ելեր էր. բայց դեռ պատերազմը չսկսած՝ յանկարծակի մեռաւ Ռոսատմ, որով զօրքն ալ շփոթած սկսան փախչիլ: Լեւոն բոլորովին հալածեց զերեզնք իր երկրէն, ու շատ հարստութիւն ժողվեց անոնց բանակէն:

Եաքը վազեց ուրիշ տեղերու վրայ, եօթանասունհարիւր բերդի տիրեց. Սկս քաղաքը գրեթէ բոլորովին նորոգեց, հիւանդանոցներ՝ ուրիշ շատ հիմնարկութիւններ ալ ըրաւ: Գրծնական պաշտամունք ալ շատ ջերմեռանդ էր, մանաւանդ սուրբ Աստուածածնայ. որով Աստուած ալ իր ամեն բանը կը յաջողեր:

2. Լեւոնին իշխանութեան երկրորդ տարին Նուսէփ Ամալահատաին սաստիկ զօրանալով՝ Երուսաղէմը առաւ Լատինացւոց ձեռքէն՝ երկայն ու արիւնահեղ պատերազմներ ընելէն ետքը: Երբոր սա բանս խմացուեցաւ Եւրոպայ Փրեդերիկոս Գերմանիոյ կայսրը, Լեւոնին դեսպաններ ղրկեց, որ Ճամբայ մը բանան իրեն Երուսաղէմ երթալու համար: Լեւոն ալ հրամայեց որ Կոստանդնուպոլսոյ մէջ եղած Գերմանացի վաճառականները բռնուին, ու անոնց ստակները առնուին: Ասոնք ալ Գերմանիա դառնալով՝ կայսրը ամենքէն աւելի բարկացուցին Լեւոնին վրայ: Ասոր վրայ Փրեդերիկոս Գերմանիոյ կայսրը, Լեւոնին դեսպաններ ղրկեց, որ Ճամբայ մը բանան իրեն Երուսաղէմ երթալու համար: Լեւոն ալ հրամայեց որ Կոստանդնուպոլսոյ մէջ եղած Գերմանացի վաճառականները բռնուին, ու անոնց ստակները առնուին: Ասոնք ալ Գերմանիա դառնալով՝ կայսրը ամենքէն աւելի բարկացուցին Լեւոնին վրայ:

1. Լեւոն Բ. ինչ քաջութիւններ ու բարեկարգութիւններ ըրաւ Հայաստանի մէջ.
2. Լեւոն ինչ օգնութիւն ըրաւ Փրեդերիկոսին:

մանաւանդ կայսրը և ուրիշ շատ ազգուհիներ միացած՝ անհամար զօրքով նորին վազելին Երուսաղէմայ վրայ, և Բերկոյ տիրեցին. բայց պաշարեին լինցած ըլլալով Փրեդերիկոս Թուղմէ գրեց Լևոնին ու խնդրեց որ իրենց օգնէ. Լևոն ոչ միայն առատ պաշար խոստացաւ իրենց, հապա նաև շատ աղնիւ ընծաներ, ու առանձին թղթով մըն ալ կ'իմացընէր իր պատրաստակամութիւնը ամէն տեսակ օգնութիւն ընելու, նաև զիրենք ընդունելու յօժարութիւնը: Փրեդերիկոս շատ հաճեցաւ Հայոց առ առաքինանի հիւրասիրութեանը վրայ և խոստացաւ որ Լևոնը Թագաւորեցընէ երբոր ինքը Երուսաղէմ դառնայ: Բայց դժբաղդաբար երբոր Սիլեզիոյ գետէն կ'անցնէր՝ խղդուեցաւ. միացած Երուսաղէմ ալ առանց զօրագլխի մնալով չկրցան յաղթել Սալահատինին, ու սրտերնին կոտրած գարձան Երուսաղէմ:

3. Լևոն տեսնելով իրեն գործոց յաջողութիւնը՝ դեսպան իրկեց Հռոմ Կեղեստինոս պապին և Հենրիկոս Զ. Գերմանացւոց Կայսեր, յիշեցընելով Փրեդերիկոսի խոստումնըը: Կայսրը և պապը սիրով ընդունեցան դեսպաններըը ու Փրեդերիկոսին խոստումնըը կատարեցին. պապը փառաւոր Թագ մը խրկեց Մոդունեցոյ Կոնրատոս արքեպիսկոպոսին ձեռքովը, Հենրիկոս ալ փառաւոր դրօշ մը խրկեց՝ վրան տաճկ նկարած: Երբոր հասաւ եպիսկոպոսը Կիլիկիա, Թագաւորն ու կաթողիկոսը հրաման հանեցին ամէն տեղ որ գան ազգին մեծերը Սիս ժողովելին, եպիսկոպոսներ, վանահայրեր, իշխաններ, զօրավարներ և ուրիշ շատ երևելի մարդիկ. և փառաւոր հանդիսով կա-

3. Լևոն ինչ պարգև ընդունեցաւ Կեղեստինոս պապէն ու Հենրիկոս Զ.էն, ու իրեն Թագադրութիւնը ինչ հանդէս եղաւ.

տարուեցաւ Թագադրութիւնը Դրիգոր Ապիրատ ըսուած կաթուղիկոսին ձեռքովը՝ Սոյ տարբ Սափիա եկեղեցւոյն մէջ (1198):

4. Հպատարացաւ ամիրապետը և ցուցաց Աւէքս կայսրը լսելով Լևոնին Թագաւորելը՝ ուրախացան, և իրենց ուրախութեան նշան, ամիրապետը շատ ընծաներով դեսպան իրկեց, Աւէքս ալ մեծագին Թագ մը: Լևոն սա ամէն յաջողութիւններս տեսնելով ամենեին իրեն քրիստոնէական ու Թագաւորական պարտքերէն չմոռցաւ, հապա մնաւանդ շատ բարեպաշտական գործքեր ալ ըրաւ. զամինքը արդարութեամբ, քաղցրութեամբ ու զղջմածութեամբ կը խնամէր. իսկ օտար Թշնամիները օր օր նահանջնին կ'աւելցընէին և կ'ուզէին իրեն ձեռս հասցընել: Առանց գլխաւորներէն մէկը եղաւ Իկոնիոյ Քայքաւուզ ամիրան, որ լսելով Լևոն Լաւոնացւոց հետ բարեկամութիւն ըրեր է, ու ամենէն պատիւ գաեր է, շատ զօրքով Լևոնին վրայ վազեց: Լևոնի զօրաց մէկ մասը իրենց յանդգնութեանը համար յաղթուեցան. բայց Լևոն փոխանակ չփոթելու մէկէն միացած զօրքովը վազեց ամիրային երկիրները ու սկսաւ տակն ու վրայ ընել. Քայքաւուզ իսկոյն ձգեց Կիլիկիան ու Իկոնիա գարձաւ, և եաժին վրայ սաստիկ ցաւելով՝ հաշտութիւն խօսեցաւ Լևոնին հետ, և առած երկիրներն ու գերիները ետ տուաւ, ինչպէս նաև Լևոն իր առածները:

5. Լևոնին երկրորդ նախանձողը եղաւ Բերքոյ ամիրան, որ անհամար զօրքով Կիլիկիոյ սահմանը

4. Լևոն ուրիշ ինչ յաջողութիւններ ունեցաւ ու Քայքաւուզի հետ ըրած պատերազմը որն է.

5. Լևոն ինչ յաղթութիւն ըրաւ նաև Բերքոյ ամիրային դէմ ու անոր դեսպաններուն հետ ինչպէս վարուեցաւ.

նեը գալով զաակի միջոցները ; սպառնալիօք դեսպան խրկեց որ գայ իրեն հնազանդի , ապա թէ ոչ արիւնով կը լուսմ , ըսաւ , երկիրդ , և ուրախութեան ծուխերդ արտմութեան կը դարձընեմ : Լևոն առաջուց խնամալով դեսպաններուն գալը , քանի մը իշխան խաբեց որ այլ և այլ ճամբաներէ ապաշնորհելով ուշացընեն անոնց գալը , և ինքը շատ զօրքով յանկարծակի ամիրային զօրացը վրայ յարձակեցաւ . անոնք ալ անպատրաստ ըլլալով՝ չարաչար յաղթուեցան ու բոլոր բանակին ձգելին վրանան : Լևոն դարձաւ Կիլիկիա հարուստ աւարնեբով , շատ վանքեր ու դրօշներ ձեռք ձգած , ամենն ալ կարգով բանակի ձևով շարեց և իւրաքանչիւր վանքին դիմացը դրօշները անկեց : Երբոր ամեն բան պատրաստուեցաւ , դեսպաններն ալ հասան , ու ան բաները տեսնելով Լևոնին ոտքը ընկան որ գէթ կեանքերնուն խնայէ . Լևոն շատ պատուով վարուեցաւ հետերնին ու ետ ղամբեց գերունք , ըսելով որ հիմա ես կը պահանջեմ ամիրային ան հարկը որ ամիրան ինծմէ կը պահանջէր :

6 . Լևոնին Թագաւորութեան վերջի տարիները մեծ թշնամութիւն ընկաւ Հայոց և Լատինացւոց մէջ՝ Անտիոքայ իշխանին պատճառաւ : Վասն զի Անտիոքայ Պեմոնդ կոմսը մեռնելէն շատ առաջ իրեն յաջորդ որոշեր էր Պալտին իր որդին , որ Լևոնին Ռուբէն եղբօրը աղջիկը առած էր . բայց Պալտին կանուխ մեռնելով հայրը իրեն ժառանգ որոշեց Պալտինին Ռուբէն անունով սրտյն որդին , և ան բանիս համար երդում առաւ Անտիոքայ եպիսկոպոսներէն ու իշխաններէն : Երբոր Պեմոնդ մեռաւ , Ռուբէն իր Թոռը յաջորդեց աոնոր . ան բանիս վրայ նախանձելով Ձիւան Տրա-

6 . Հայերը լատինացւոց հետ ինչպէս Թշնամացան . ու Լևոն ինչպէս մեռաւ .

պօլսոյ իշխանը՝ շատ զօրքով Անտիոքայ վրայ եկաւ , Ռուբէնը հալածեց ու Լատին իշխան մը դրաւ քաղաքապետ , որուն ձեռնտու եղան իշխաններն ու եպիսկոպոսները : Լևոն ան բանիս սաստիկ նեղացաւ , բայց ջուղեց պատերազմով առաջ տանիլ իր կամքը , հապա Ինոսվկենտիոս պապին Թուղթ գրեց որ ան բանս արդարութեամբ որոշէ . պապն ալ դատաւոր և իրաւարար գրաւ ան բանիս Պետրոս անունով կարդինալ մը որ արդէն ուրիշ անգամ Կիլիկիոյ կողմերը եկած ըլլալով գիտէր ան տեղի բաները . բայց կարդինալը Լատինացւոց կողմը բռնեց , որով անոնք ալ Հայոց դէմ դարձան . ան բանիս նեղանալով Լևոն՝ բոլոր Կիլիկիոյ մէջ եղած Լատին իշխանները իրենց քահանաներովը վռնտեց հանեց Կիլիկիայէն , մեկ քանին ալ բանտելով բանտ գրաւ : Անտիոքայ եպիսկոպոսները սակայն իշխանները որ նորէն Ռուբէնը ընդունին , անով հաշտութիւն եղաւ Լևոնի ու Տրապօլսոյ Ձիւան իշխանին հետ : Իսկ Լևոն երեսուներիք տարի Թագաւորելէն եաքը՝ գովէլի մահտամբ մեռաւ , իրեն յաջորդ Թողալ իր Զապել աղջիկը , որովհետև մնաց զաւակ չունէր (1218) :

7 . Զապել Թագուհին տասնըվեց տարեկան ըլլալով՝ հնամակալ գրուեցաւ իրեն Կոստանդին իշխանը : Ռուբէն , որ նորէն Անտիոքին հալածուեր էր , շատ մը մարգիկ գլուխը ժողվելով գնաց Զապելին քանի մը քաղաքներուն տիրեց : Կոստանդին դէմն ելաւ , բռնեց զինքը իրեն հնազանդեցուցեր մեկտեղ բանտ գրաւ , և հոն մեռաւ : Իսկ Զապելը կարգեցին Անտիոքայ կոմսին՝ Փիլիպպոս անունով որդւոյն հետ , և զինքը Թագաւոր օծեցին

7 . Զապելին Թագուհի եղած միջոցը ինչ պատերազմ հանդիպեցաւ . Փիլիպպոս ինչպէս ըրաւ իր Թագաւորութիւնը ու ինչ եղաւ հետոյ .

Հայոց, երգում առնելով առաջուց որ ազգային ծէսերու և սովորութեանց չխոտնուի: Բայց Փիլիպպոս երկու տարիէն սկսաւ երդմանը դէմ ընել. անով ալ գոհ չըլլալով սկսաւ պալատին ազնիւ զարդերը Աշոխըք կրել: Իշխաններէն սա բանէն դանդաղելով՝ բանեցին բանտ դրին զինքը և սպիպեցին որ խաւրած բաները ետ դարձնէ. ինքն ալ տարի մը բանտը կենալէն ետքը՝ սրտին ցաւէն մեռաւ: Եղբը Զապէլ ուրիշներուն յորդորելովը Կոստանդինին Լեւթում որդւոյն հետ կարգուեցաւ, և անիկայ օծուելեայ թագաւոր, որ Աւրշակունեաց ցեղէն կարեւոր մըն էր, և Ռուբինեանց հետ ազգակցութիւն ընելով թագաւորական ցեղ կը սեպուէր:

8. Լեւթում ցեղին ազնուականութեանը հետ նաև անարատ բարք և շատ գեղեցիկ յատկութիւններ ալ ունէր, որով Ռուբինեանց երեւելի թագաւորներէն մէկը եղաւ, օտար ազգաց ալ շատ սիրելի: Լեւթմոյ թագաւորութեան առջի տարիները՝ շատ խաղաղ էր Կիլիկիա, և Կոստանդին իր հայրը շատ բարեկարգութիւններ ըրաւ, թէպէտ և Հայաստան այլ և այլ օտար թշնամիներէ կը ջարջարուէր: Նշանաւոր եղան Ձէլալէտտինի բռնութիւնը, ու Թամթարայ Զարմանդի զօրավարը, որ Անին առնելով մեծ ջարդ ըրաւ մեր ազգին: Զարմանդ երբոր մեռաւ, իրեն յաջորդեց զօրավարութեան մէջ Բաչու, որ նոյնպէս շատ վնաս հասուց Հայոց: Լեւթում տեսնելով որ Բաչու շատ կոտորածներ ընելով դէպ ի Կիլիկիոյ վայ կուգայ, շատ ընծաներով մարդ խաւրեց ու անոր հրպատակեցաւ. Բաչու երդմունքով գաշինք դրաւ Լեւթմոյ հետ որ ետքս մը չհասցընէ իրեն. այն-

8. Լեւթում ինչպէս ըրաւ իր թագաւորութիւնը, ու Բաչուին կատաղութիւնը ինչպէս խըճճուց.

պէսով եղաւ գնաց: Երբոր Թամթարաց Ուխտանգ խանը մեռաւ, Լեւթում անոր յաջորդին Գիւուկ խանին հետ ալ նոյն գաշինքը նորոգելով հաստատեց, անով Կիլիկիա նեղութիւն մը չքաշեց Թամթարներէն:

9. Երբոր Լեւթում աս բաներուս զբաղած էր, իր քեռին Կոստանդին Լամբրոնի իշխանը ապըստամբեցաւ իրմէ, ու գնաց Իկոնիոյ ամիրային հետ միացաւ, որ Լեւթումին դէմ թշնամացած էր. Լեւթում զօրք ժողվեց ու գնաց Կոստանդինին երկիրը նեղուն սիրեց. Կոստանդին նեղը մնալով իրեք չորս անգամ դեսպան խաւրեց Լեւթումին՝ հնազանդութիւն խոստանալով. բայց Լեւթում յանձն չառաւ պիտալով Կոստանդինին խարդախութիւնը: Կոստանդին նորէն խիաթաութիւնին քովը փախչելով՝ շատ զօրք օգնութիւն առած յանկարծակի Լեւթումին վրայ վազեց ու շատ կոտորած ըրաւ. բայց Լեւթում իրեն ցրուած զօրքերը ժողվելէն ետք՝ ուրիշ զօրքեր ալ բերել տալով նորէն Կոստանդինը Լամբրոն փախուց, ուր որ մեռաւ քէչ առնէն ետքը:

10. Նոյն տարիները Գիւուկ խանը մեռաւ ու տեղը անցաւ Մանգոյ, որ սկսաւ ղՀայերը նեղել իր հարկապահանջներուն ձեռքովը. Լեւթում չդիմանալով ազգին խեղճութեանը՝ ելաւ անձամբ Մանգոյ խանին գնաց, ու շատ ընծաներով անոր սիրտը վաստրկեցաւ, շատ պատիւ գտաւ անկէ և խօսք առաւ Մանգոյէն որ արգիլէ Հայերը նեղելէն՝ ինչպէս որ ալ ըրաւ: Լեւթումին վարուածը

9. Կոստանդին Լեւթումի քեռին ինչպէս ապըստամբեցաւ ու ինչպէս մեռաւ.

10. Լեւթում ինչպէս հաշտեցաւ զՄանգոյ խանը ու ինչ պատերազմ ունեցաւ Փիռուխասար և զԱլպասղի ամիրային հետ.

ուելուն ձայնը Եգիպտոսի Փհուռխատար ամիրային ականջը հասնելով նախանձը գրգռեց որ Հեթումին չարիք մը հասցընէ, և իմանալով որ Հայերը սիրած են քանի մը քաղաքներու որ առնուով Եգիպտացւոց ձեռքն էին, դեսպան զրկեց որ եթող ան քաղաքները: Հեթում օրինաւոր պատճառներով ցըցուց թէ անոնք արդէն Հայոցն էին ու Եգիպտացիք անիրաւութեամբ յափշտակեր էին: Ամիրան կատղեցաւ ան բանիս, և առանց ձայն հանելու զօրք խաբեբայ Կիլիկիոյ վրայ, որ անպատրաստ գտնելով Հայերը՝ շատ աւերմունքներ ու արիւնհեղութիւններ ըրին: Հեթում մեկէն ժողվեց զօրքը երկու դէմդ բաժնեց, մէկը Լեւոն՝ մէկալը Թորոս որդւոցը տուաւ, և ինքը Սանգոյ խանէն օգնութիւն առնելու գնաց: Այն միջոցին Լեւոն և Թորոս քաջութեամբ քանի մը պատերազմներ ըրին, ու թշնամիներէն շատ մարդ ջարդեցին. բայց անդամ մ'ալ Թորոս քաջութեամբ պատերազմելու առին զարնուեցաւ մեռաւ, Լեւոն ալ գերի ընկաւ. ասով Եգիպտացիք բոլոր Կիլիկիոյ տիրեցին բայց 'ի բերդերէն. վերջը Լեւոնն ալ Փհուռխատարին առջևը տարին, որ խիստ ախորժելով Լեւոնին ազնիւ սրտին ու կերպին՝ հեղնչ ղինքը, ընդ հակառակն խօսք տուաւ որ Կիլիկիա դարձընէ. բայց իշխանները թոյլ չտուին:

11. Հեթում երբոր Թաւթար վարձուոր զօրքով դարձած՝ տեսաւ եղած ձախորդութիւնները՝ շատ վշտացաւ, ու շատ անգամ առանձին քաշուած կ'ողբար իր որդիքը: Օր մը բոլոր իշխանները քովը ժողովուեր էին, ուղիղով Հեթում ամենուն սիրտը շարժել իր խեղճ վիճակին վրայ, հարցուց իշխաններուն. «Ո՞ւր են ամենքը», երբոր անոնք

11. Լեւոն Հեթումին եղբայրը Ինչպէս գերութենէ ազատեցաւ ու Հեթում ինչ մահ ունեցաւ:

պատասխան տուին միաբերան թէ՝ Այո, պատասխանեց Թագաւորը ցաւած սրտով ու արցունքով. «Հապա ո՞ւր է Թորոս, ո՞ւր է Լեւոն, որոնցմէ միկը գերեզմանը անյիշատակ Թագուած, մեկալը գերութեան տառապանաց մէջ է»: Իշխանները շարժեցան Թագաւորին ան խօսքերէն, միաբանեցան մէջերնին ու շատ սաստկ ժողվելով ամիրային խաբեցին. ան ալ Հեթումէն խնդրեց որ իր Սղուբ անուանով ազգականը՝ որ Սկիւթացւոց ձեռքը գերի ընկած էր՝ ազատէ. երբոր յաջողեցաւ ան բանս Հեթումին ձեռքովը, ինքն ալ իր խոստմունքը կատարելով ազատեց Լեւոնը, որ ազգին մեծ ուրախութեան պատճառ եղաւ: Հեթում մեռնելէն քիչ մը առաջ իր տեղը Թագաւոր դրաւ Լեւոնը, և ինքը Դրազարկ վանքը քաշուելով կրօնաւոր եղաւ, ուր քանի մը ամիս ալ ապրեցաւ ու մեռաւ, քառասունհինգ տարի Թագաւորելէն ետքը: Ին. ըն մեծ ու յաւերժական պարծանք է ազգին սիրոյն համար քաջած անհամար նեղութիւններն ու վիշտերը (1268):

ԴԱՍ ԼԲ.

Լևոն Գ. ու Հերակ Բ։

1. Լևոն երրորդ սասակիկ տրամելով հօրը մահուանը վրայ, իրեք չորս ամիսի չափ սուգին մէջ էր, այնչափ որ սրտին ցաւէն ծանր հիւանդացաւ։ Եգիպտոսի և ուրիշ տէրերու ամիրաները լսելով սա բաներս՝ գեսպաններ զրկեցին զինքը մխիթարելու համար, և յորդորեցին որ հօրը տեղը ազգին կառավարութիւնը ձեռք առնէ։ Սա բաներէս յորդորուած՝ Լևոն Թագաւոր օծուեցաւ, ու սկըսաւ իսկոյն բարեկարգութիւններ ընել, ողբմածութեան գործքերը աւելցնել ու շատ չինութիւններ ընել. ուսման եւս ալ ըլլալով՝ դպրոցներ հաստատեց, խանգարած հին գրքերը նորոգել տալով վանքերուն մէջը պահել տուաւ ու եւս ալ եղաւ որ պիտանի գրքեր գրուին։

2. Երբոր Լևոն սա կերպերովս ազգին բարիք ընելու կ'աշխատէր, իր ազգականներէն ոմանք նախանձելով վրան, գնացին Փոռուխտար Եգիպտոսի ամիրան Լևոնի դէմ գրգռեցին. ան ալ Աբաբացւոց ու Թիւրքմէններուն հետ միացած՝ Կիլիկիոյ վրայ վազեց, իրեն երդմնեալը ոտքն տակ առնելով։ Լևոն յանկարծակիի եկաւ, և տեսնելով

1. Լևոն Գ. ինչպէս Թագաւորեց ու ինչ բարեկարգութիւններ ըրաւ.

2. Փոռուխտար Եգիպտոսի ամիրան ինչպէս տիրեց Կիլիկիոյ ու ինչ վնասներ հասուց ու հարքը ինչպէս յաղթուեցաւ Շայոցմէ.

իշխանաց անմիաբանութիւնն ու պաղութիւնը, ամուր տեղուանք պահռւրտեցաւ. ան պատճառաւ ամիրային զօրքն ալ առանց արգելքի Կիլիկիա մտան ու շատ վնաս հասուցին ամէն տէղ, մանաւանդ Տարսոն, ուր Թագաւորական գանձն և ուրիշ շատ հարստութիւններ ալ կային։ Սակը ընդհէնն վերջը Փոռուխտար անբաւ հարստութեամբ և շատ գերիներով Եգիպտոս դարձաւ. բայց քիչ առնէն առջինէն աւելի զօրք ժողվելով սիսաւորէն Կիլիկիոյ վրայ գալ։ Լևոն տեսաւ որ պահռւրտելը օգուտ մը չըլլար, որչափ որ կրցաւ զօրք ժողվեց՝ ամենքն ալ յորդորեց քաջալերեց, և վեց գունդ բաժնելով՝ այլ և այլ տեղեր խաբեց. մէկ գունդը տուաւ իր հօրեղբօրը Սմբատ սպարապետին ձեռքը ու խաբեց Եգիպտացւոց դէմ. երկրորդը ինքը առաւ և ուրիշ ճամբով մը Եգիպտացւոց հետը անցաւ։ Երբոր Եգիպտացիք Սմբատին քանակը տեսան, անոնց քիչ զօրութեանը նայելով անհոգ եղան. բայց Սմբատ յանկարծակի վրանին վազեց ու մէջերնին շփոթութիւն ձգեց. ան միջոցին Լևոն ալ եռանդնէն յարձակելով՝ մեծ ջարդ տալին երկուքը մեկէն ու բոլոր Եգիպտացւոց բանակը ցրուեցին։ Ան հարուածին վրայ Փոռուխտար հաշտութիւն ըրաւ Լևոնին հետ։

3. Լևոն հաշտութենէն վերջը Թաթարաց Ապաղա խանին գնաց, ու շատ սէր և պատիւ գտաւ անկէ իր հատատմութեանը համար. ուրիշ ամիրաներն ալ բարեխոսութեամբ ու սիրով սկսան վարուիլ Լևոնին հետ՝ ակնածելով իր քաջութենէն։

4. Որչափ որ արտաքին գործոցութիւնները

3. Լևոն հաշտութենէն վերջը ինչ ըրաւ.

4. Լևոն ինչ ձախորդութիւններ ունեցաւ ու ինչպէս մեռաւ.

կարգի գրուեցան ու Լևոնին երկիրը խաղաղացաւ, այնչափ ալ ընտանեկան ձախորդ դիպուածներով փորձուեցաւ իր առաքինութիւնը. քիչ առնի մէջ մեռան իր սիրելի Ներսէս որդին, աղջիկը ու կնիկը. ինքն ալ ծանր հիւանդացաւ, Կիլիկիա ալ փոխադրական հիւանդութիւն մը իյնալով շատ ջարդ ըրաւ. բայց Լևոն ամենուն ալ սիրով համբերելով երկու տարիէն երջանիկ մահուամբ մեռաւ՝ քսան տարի թագաւորելէն ետքը:

5. Լևոն երբորդին որդին Հեթում Բ. հօրը յաջորդեց, բայց խնարհսուութեան համար չուզեց թագաւոր օծուիլ. չէր ուզերնաև կառավարութեան հոգը իր վրան առնել. աւելի կը սիրէր կրօնաւոր, բայց հետ կենակցելով հոգևորականս ղբօսնուլ. ան պատճառաւ քիչ մը առեն ակամայ կառք նշանեցին ետքը՝ հրաժարեցաւ երկուքէն, ու իր Թորոս եղբայրը իր տեղը թագաւոր օծել տուաւ: Թորոս՝ եղբօրը խորհրդոյը կ'անսար, իշխաններն ալ կը յարգէին զՀեթում. բայց Թորոս քիչ մը առենէն եղբօրը վնճակին նախանձելով թագաւորութիւնը նորէն Հեթումին յանձնեց, ու ինքը վանք մը քաշուելով կրօնաւոր եղաւ: Հեթում՝ երկրորդ անգամ թագաւորելով Թաթարաց Ղազան խանին գնաց ողջունելու որ քրիստոնէից դէմ եղած հալածմունքը գադրեցնէ. Ղազան սիրով ընդունեցաւ թէ ողջոյնը և թէ ողջունքն, ու ինդիրքը կատարեց (1295):

6. Երբոր Սիս գարձաւ, քիչ առենէն Թորոս եղբօրը հետ Կոստանդնուպոլիս գնաց. իր Մա-

5. Հեթում Բ. Ինչպէս ըրաւ իր թագաւորութիւնը ու մահ է Թորոս.

6. Սմբատ Ինչպէս թագաւոր օծուեցաւ ու Ինչ անիրաւութիւն ըրաւ Թորոսին ու Հեթումին դէմ.

րիամ քրոջմէն հրաւիրուելով՝ որ կայսեր կինն էր: Սա միջոցին որ իրենք Պոլիս էին Սմբատ եղբայրնին, որուն յանձնած էին տէրութեան հոգը, իշխանները ու կաթուղիկոսը համոզելով թագաւոր օծուեցաւ. վերջը Թաթարաստան Ղազան խանին ալ գնաց ու իր թագաւորութեանը հաստատուելու. Նոյնպէս նաև սրբազան պատին հըպատակութեան թուղթ գրեց ու անկէ օրհնութեան գիր առաւ. այսպէսով ամեն կողմանէ թագաւորութիւնը ապահովցուց, և օրէ օր եղբայրներուն գալատեանը կ'սպասէր: Երբոր Թորոս և Հեթում Կիլիկիա կը դառնային, Սմբատ իր զօրքովը դիմացնին ելաւ ու գիրենք վռնտեց. անոնք ալ սկսան Ղազան խանին երթալ որ անկէ օգնութիւն ուղեն Սմբատին դէմ. բայց Սմբատ եռանդնէն հասնելով երկուքն ալ բռնեց, իշխաններն ոմանց խորհրդովը Թորոսն սպաննեց ու Հեթումն ալ կուրցուց:

7. Ա՛ս անողորմ գործքին վրայ Կոստանդին մեկալ եղբայրը զօրք ժողվեց, ու եղբօրը դէմ պատերազմի ելաւ. երկու կողմէն ալ շատ մեծ ջարդ եղաւ, բայց վերջը Կոստանդին զօրանալով յաղթեց Սմբատին ու բռնեց զինքը բանտ դրաւ, եաքը Հեթումը հանեց բանտէն ու ազնիկ նայելով վիշաերէն ազատեց. իսկ ինքը եղբօրը տեղը թագաւոր նստաւ: Երկու տարի չափ թագաւորեցին եաքը երբոր հրաշքով մը Հեթմոյ աչքերը բացուեցան, ժողովուրդը ուզեց որ ինքը թագաւորէ երրորդ անգամ. ինքը յանձն չառաւ, վանք մը փախաւ ու պահուըտեցաւ, բայց զօրքը զինքը բռնութեամբ վանքէն հանելով բերին թագաւորեցուցին: Կոստանդինին ծանր գալով սա բանս՝

7. Սմբատ Ինչպէս թագաւորութենէն ինկաւ ու Հեթում Ինչպէս նորէն թագաւորեց.

սկսաւ հաւէ ըլլալ որ Հեթումին տեղը ինքը Թագաւորէ. ան պատճառաւ հաւէ եղաւ որ Սմբատը բանտէն հանէ ու անոր հետ մէկտեղ Հեթումը վրանէ. բայց Հեթում չկանալով որ խռովութիւն չըլլայ՝ երկուքն ալ հնարքով մը բռնեց ու Պօլիս կայսեր խաբեց, ուր ինչուան իրենց մահը մնացին (1300):

8. Հեթում երբորդ անգամ որ Թագաւորեց՝ չորս հինգ հեղ պատերազմ ըրաւ Եգիպտացւոց ու Իլխայանացւոց հետ և միշտ յաղթող դառնուեցաւ. վերջը ուզելով բոլորովին հրաժարիլ աշխարհէն, որովհետև ինքը կուսակրօն էր՝ իր եղբօրորդին Լեւոնը որդեգրեց իրեն ու եաքը զանիկայ Թագաւոր օծել տուաւ. իսկ ինքը Թէպա և Թագաւորահայր կ'ըսուէր՝ բայց վանք մը քաշուած կը կենար (1304):

9. Նոյն միջոցներուն Կոռիկոս ըսուած բերդին Հեթում իշխանն ալ հրաժարեցաւ իր իշխանութենէն ու Կիպրոս Լաւինացւոց վանք մը քաշուեցաւ. վերջը Հռոմ երթալով Պաղեստաց պատմութիւն մը գրեց գաղղիարէն, որուն հայերէնով Թարգմանութիւնն ալ ունինք:

10. Լեւոն Դ. Հեթումին խրատներուն ու խորհրդոցը, իրեն ալ բնական ընտիր բարուքը և խոհեմութեամբը շատ լաւ սկսաւ կառավարել աղգը. բայց հաւատոյ խնդիրներու համար եկեղեցականաց ոգիտութենէն մեծամեծ խռովութիւններ ծագեցան Կիլիկիոյ մէջ. վասն զի Գրիգոր Անաւարզեցի կաթուղիկոսը ուզելով քանի մը բարե-

8. Հեթում ինչ պատերազմներ ունեցաւ ու ինչպէ՞ Թագաւորութենէն քաշուեցաւ.

9. Ի՞նչ գիտելիք կայ Հեթում իշխանին վրայ.

10. Լեւոն Դ. ինչպէս սկսաւ իր Թագաւորութիւնը՝ ու Սսոյ ժողովքը ինչպէս եղաւ.

կարգութիւններ ու ազգային մեկ քանի ծխից փոփոխութիւններ ընել, ան բանիս համար ուզեց որ ազգային ժողով մը գումարուի. բայց երբոր տեսաւ որ առաջնորդաց ու եկեղեցականաց մէջ ան բաներուս համար խռովութիւններ ու տարաձայնութիւններ կ'սկսին, Հեթում Թագաւորահօր Թուղթ մը գրեց, յորդորելով որ իր գիտաւորութեանը առաջ երթալուն փոյթ ունենայ, գիտնալով որ ամենքն ալ զինքը կը սիրեն և ըսածը անյապաղ կը կատարեն. գաւանութեան ձևն ալ շարադրեց ու Լեւոնին խաբեց, բայց ինքը ան միջոցին հիւանդանալով մեռաւ: Լեւոն ու Հեթում մէջերնին միաբանած՝ հրաման հանեցին որ Սսոյ մէջ ժողով մը ըլլալ, ուր եկան Կիլիկիոյ ամեն եպիսկոպոսներն ու վանահայրները. հոն Գրիգոր Անաւարզեցիին Թուղթը կարդալով ինք զլսաւորուեկան բան որոշեցին ու Կոստանդին Կաթողիկոս գրին, որ ան որոշմանց ձիշդ պահպանութեանը ջանք ընէ. բայց ընդ հակառակն շատ խռովութիւններ ու սպանութիւններ ալ եղան ան պատճառաւ:

11. Ինը տարիէն նորէն Անտիոքի մէջ ժողով գումարուեցաւ ու անցած ժողովին վճիռները նորէն հաստատուեցան. բայց հակառակաձեր մարդիկ եաքը դէմ կեցան, և իշխաններուն մեծ մասը եկեղեցականներէն գրգռուելով Լեւոն Թագաւորին ու Հեթում Թագաւորահօր հետ թշնամացան. և որովհետև ձեռքերնէն բան չէր գար՝ գնացին Թաթարաց Պիլարղու զօրավարը Լեւոնին և անոր կուսակիցներուն դէմ գրգռեցին, որ հազար հոգւով Անարզաբա կը նստէր Կիլիկիոյ պաշտպա-

11. Լեւոն ու Հեթում Թագաւորահայրը ինչպէս առիւծի եղան եկեղեցւոյ ու իշխաններուն ու Պիլարղու ինչպէս զիրենք սպանեց.

նուիրեան համար։ Պիլարղու տեսնելով իրեն զրպարտ քիչուորութիւնը չհամարձակեցաւ պատերազմի ելլելու. խաբեութեամբ իրեն կանչեց Լեւոնը, Հեթումը և իրենց կուսակից իշխանները. երբոր եկան՝ զամենն ալ թրէ անցընել տուաւ, ու սկսաւ Կիլիկիոյ վրայ գալով տիրել ան տեղերուն (1308)։

ԳԱՍ Լ Գ·

Օշին, ոռ Լեւոն Ե։

1. Հեթումին պզտիկ եղբայրը Օշին լսելով Պիլարղուին ըրած անիրաւ սպանութիւնները, շատ ցաւեցաւ ու մեկին գնաց Սիս քաղաքը, ուրացած իշխաններն ու զօրքերը Ժողվեց, Պիլարղուն Կիլիկիայէն վռնտեց, ու երկիրը անոր բռնութիւններն ազատեց։ Իշխանները միաբան զինքը Թագաւոր օծեցին, և սկսաւ բարեկարգութիւններ ընել. եւեւէ եղաւ որ Սսոյ մէջ որոշուած կանոնները պահպնի. բայց ան պատճառաւորին խռովութիւն ընկաւ ազգս առաջնորդներու ու Ժողովրդեան մէջ թէպէտ և մեծ չարիք մը չհետեւեցաւ։ Օշին Լատինացւոց հետ խնամութիւն ըրաւ, ու Սեկիլիացւոց Թագաւորներուն ցեղէն իրեն կին առաւ. տասը բարեկամացաւ Վերոպացւոց հետ ու անոնցմէ օգնութիւն ուզեց։

2. Ան միջոցներուն Եգիպտոսի Նասր սուլտանը

1. Օշին ծովէ ու Պիլարղուն ինչպէս Կիլիկիայէն վռնտեց.

2. Օշին ինչ նշանաւոր յաղթութիւն մը ըրաւ Նասր սուլտանին դէմ ու ինչպէս մեռաւ.

շատ զօրք խաբեց Կիլիկիոյ վրայ. Օշին յանկարծակի գալով չկրցաւ մեկին զօրք ժողվել, ու հետը ունեցած երկու հարիւր հոգւովը դիմացին ելաւ, բոլորովին Աստուծոյ ապաւինած. երբոր անոնք անհոգութեամբ ու առանց պատրաստութեան կեցեր էին՝ վրանին վազեց, ու բանակին կարգը չխոթելով վեց հազար հոգիի չափ ջարդեց, մնացածները փախուց, ու շատ մ՚ալ գերի բռնեց։ Օշին ան յաղթութենէն ետքը տարի մ՚ալ ապրելով մեռաւ, իր տասնեւերկու տարեկան Լեւոն որդին իշխաններուն յանձնելով, և Թագաւորացայրը դրաւ անոր Օշին պայլ իշխանը (1319)։

3. Օշինին մեռնելէն ետքը տասնիկ շարժ մը եղաւ Հայաստան որ շատ տեղեր աւերակ դարձուց, ինչպէս Անին և ուրիշ քաղաքներ. ան աւերակ դարձած քաղաքներուն բնակիչները Հայաստանէն ելան Թաթարստան գնացին. բայց հոն ալ հանգիստ բնակութիւն չգտնելով անոնցմէ կէսը Ղսիմ անցաւ, կէս մը Լեհաստան, կէս մը Ուլահի երկիրը, ուսկից անոնք ալ այլ և այլ տեղեր ցրուեցան։

4. Լեւոն տասնեւերկու տարեկան էր երբոր Թագաւոր օծուեցաւ Հայոց վրայ, ու քսանըմեկ տարի Թագաւորեց. ափսոս որ ախտամոլ ու անգութ բնաւորութեամբը իր անունը նուաստացուց, տեսնելեան Թշուառութիւնը աւելցուց և ցաւալի Թագաւորութիւն ու մահ ունեցաւ։ Վասն զի Օշին պայլ իր աղջիկը Լեւոնին տուաւ, ու անոր Յովհաննա լատին խորթ մայրը իրեն կին առաւ. Լատինացիք ատ բանիս նեղանալով Հայ իշխանե-

3. Օշինին մեռնելէն ետքը ինչ հանգիստեցաւ ու Հայերը ինչպէս ցրուեցան.

4. Լեւոն ինչպէս ազգերնիս աւելի Թշուառացուց.

բէն մէկ քանին Լևոնին ու Օշինին դէմ՝ գրգռե-
ցին, ու երկպառակութիւն ձգեցին ազգին մէջ։
Լևոն չատ զօրքով վազեց Տիւրոսի վրայ ու յաղ-
թեց Տիւրացւոց որ ատ խռովութեանց պատճառ
եղեր էին։

5. Ան դիպուածներէն և Օշինի թագաւորին մա-
հը լսելով Նասը Եգիպտոսի սուլտանը՝ ուղեց առ-
ջի յաղթուելուն վրէժը առնել, զօրք խաբեց որ
երթան Կիլիկիան աւարի առնուն. բայց այլ և այլ
տեղեր Հայերը յանկարծակի վրանին վազելով Կի-
լիկիային վնասեցին զանոնք, հինգ հազար հոգիի
չափ ալ սպաննեցին։ Ան կոտորածէն վախած Ե-
գիպտացիները՝ օգնութիւն առին այլ և այլ բար-
բարոս ազգերէ, եկան նորէն Կիլիկիոյ վրայ ու
սկսան առին ու վրայ ընել աշխարհը. ատ բանս
լսելով սրբազան պապը՝ յորդորեց Լևոնը որ Ե-
րոպացիներէն օգնութիւն ուղէ, բայց անոնք տե-
ղերնէն չշարժեցան։

6. Լևոնին Եւրոպացւոցմէ օգնութիւն ուզելը
խմանալով Նասը՝ աւելի կատղեցաւ, ու անթիւ
զօրք ժողվելով միսքը դրաւ որ Հայոց ազգը ջնջէ.
իրեն հետ միացաւ Թխմուրդաշ Թաթարաց զօրա-
վարը, որ Հայոց օգնութեան եկեր էր. ուստի իր-
րու բարեկամ մնաւ Կիլիկիա ու սկսաւ աւերշար-
ժել երկիրը։ Հազիւ թէ առջի կոտորածին մեռել-
ները գերեզմաններու մէջ ամփոփուեր էին, վա-
զեցին Թուրքերը Կիլիկիոյ վրայ ու Թաթարաց
պէս ամէն չարիք հասուցին. երբոր ատոնք ալ ա-

5. Հայերը ինչպէս յաղթեցին Նասը սուլտա-
նին զօրքերուն ու Լևոն ինչու Եւրոպացւոցմէ օգ-
նութիւն ուզեց.

6. Նասը ու Թխմուրդաշ ինչպէս Կիլիկիա մը-
տան, Թուրքերէն ինչ վնասներ քաշեց ազգերը-
նիս.

ւարներով ու գերութեամբ կը դառնային՝ վազե-
ցին Եգիպտացիք, ու առջիններուն չքրած չարիք-
ները՝ և գործ դրին։ Ա՛ս խեղճութեան միջոցները
իշխանները փոխանակ միջերնին միաբանելով Թշ-
նամւոյն դէմ ելլելու, իրարու դէմ ունեցած առե-
լութիւնին կը մնուցանէին։

7. Լևոն տեսնելով որ բոլոր Կիլիկիա այսպէ-
սով աւերակ պիտի դառնայ, սրբազան պապին
Թուղթ գրեց և օգնութիւն ուզեց. պապը չատ
ատակ խաբեց աւերակաց չինութեանը համար,
խրատական Թուղթ ալ գրեց՝ յորդորելով որ միա-
բան սիրով վարուին իրարու հետ։ Լևոն նոյնպէս
մարդ խաբեց Թաւթարաց Պուսայիա խանին որ
օգնէ իրեն. ան ալ քանի հազար զօրք հասցուց
Կիլիկիոյ պաշտպանութեանը համար, Եգիպտոսի
ամիրային ալ հրաման ըրաւ որ Հայերը չնեղէ, ու
հետերնին սիրով վարուի. ատով քիչ մը հանգըս-
տացաւ Կիլիկիա։

8. Երբոր արտաքին թշնամիները դադրեցան,
սկսան նորքին խռովութիւններ, որ ուրիշ անգամ-
ներու պէս աւելի վնասակար եղան Հայաստանի
քան թէ արտաքին թշնամիները։ Լևոն՝ Օշինն պայ-
լին հետ ատատիկ թշնամութիւն ունեցաւ. զօրք
խաբեց Աստանայի վրայ ուր էր Օշինն, բռնեց զին-
քը Կոստանդին եղբօրը հետ ու սպաննել տուաւ։
Վերջը իր կինն ալ սպաննել տուաւ՝ որ Օշինն պայ-
լին աղջիկն էր, ու անոր տեղը լատինացի մը ա-
ռաւ. Օշինին գլուխը Նասրին խաբեց, Կոստան-
դինինն ալ Պուսայիային։

7. Ա՛ս հարուածներէն ետքը Լևոն որճան դիմեց
ու Կիլիկիա ինչպէս քիչ մը հանգստացաւ.

8. Լևոն՝ Օշին պայլին հետ ինչ թշնամութիւն
ունեցաւ ու ինչպէս զինքը ուր կինը սպաննեց.

9. Նասր ու Բերիոյ ամիրան նորէն Կիլիկիոյ վրայ սկսան վազել. վասն զի լսելով Լատինացիք խաչակիր զօրք պատի հանելն սուրբ երկիրը ազատեալու համար՝ կարծեցին Թէ Հայերուն դէմ գալու ետեւէն է ան բանս, ուստի մոքերնին դրին որ Հայերը բոլորովին ջնջեն. երկուքը մէկէն վազեցին Կիլիկիա, քաղաքներն ու գեղերը աւերակ դարձուցին, բնակիչները Թրէ անցուցին ու հարստութիւնները Ժողվելով եկան գնացին: Լևոն վախցաւ դիմացնին ելլելու. փախաւ գնաց Կիլիկիոյէն, ինչպէս ըրին նաև իշխաններէն շատ. բայց Եգիպտացիք նորէն եկան ու առջինէն չատ աւելի չարիք հասուցին Հայոց: Լևոն աղաչանաց Թուղթ գրեց Նասրին որ Հայերը ընկերէ ու հաշտութիւն ընեն մէջերնին. սուլդանը յանձն առաւ՝ երդմունք ուզելով Լևոնէն որ մէյմ՝ ալ Եւրոպացւոց հետ Թղթակցութիւն չընէ. ինչն ալ կատարեցնոց առջև աւետարանին վրայ երդմունք ըրաւ. այսպէսով իրեք տարի Կիլիկիա խաղաղացաւ: Վերջը Լևոն նորէն ծածուկ սկսաւ Թղթակցութիւն ընել պապին ու արևմտեան իշխանաց հետ. բայց խնացուելով աս բանս՝ Նասր նորէն չատ զօրք խաւրեց, որ եկան ամեն տեսակ չարիք ըրին ու հարստաւ աւարով ելան գնացին:

10. Ա՛ս խեղճութիւններս տեսնելով ընդհանուր ազգը՝ չատ ետևէ եղաւ որ ալ բարեկամութիւն չընեն Եւրոպացի իշխանաց հետ, մանաւանդ որ օգնութիւն մը չէին տեսած. բայց ոմանք ալ

9. Նասր ու Բերիոյ ամիրան ինչու՞ նորէն Կիլիկիոյ վրայ վազեցին ու Նասր ի՞նչ պայմանաւ հաշտութիւն ըրաւ.

10. Ի՞նչպէս խռովութիւն ծագեցաւ Լևոնին ու Յակոբ կաթուղիկոսին մէջ ու Լևոն երբ մեռաւ.

Թագաւորին հետ միացած՝ կ՛ուզէին անոնցմէ օգնութիւն խնդրել, ու անոնց հետ բարեկամութիւն ընել. ատով մեծ խռովութիւն ծագեցաւ Թագաւորին ու կաթուղիկոսին մէջ, և աս պատճառաւ Յակոբ կաթուղիկոսը պաշտօնէն ձգուեցաւ: Լևոն երկու տարի ալ Թագաւորելէն ետքը մեռաւ՝ առանց քաջութեան յիշատակ մը ձգելու (1341):

ԴԱՍ ԼԴ.

Յովհաննէս Պայլէն Լիւսեան Ռուբինեանց թագաւորութեան վերջանալը:

1. Որովհետև Լևոն որդի կամ եղբայր չունէր, իշխանները Կիպրոսի Թագաւորին եղբօրորդին ընտրեցին որ Յովհաննէս Պայլ կամ Ճիւան կ՛ըսուէր և Թագաւորելով Կոստանդին Գ. ըսուեցաւ. սակայ մօրկողմանէ միայն Հայ էր, ան պատճառաւ ալ Հայոց ազգը կ՛աւելի ու բնութեամբ ալ խռովարար մարդ էր, սկսաւ ազգին բարի սովորութիւններն ալ արհամարհել ու փոխել մանաւանդ արքունեաց բանները, որով ամենուն աչքէն եղաւ. վերջը սկսաւ սպսիկել Հայերը որ ազգային ծէսը փոխեն ու լատինացուցը ընդունին. աս բանիս չհնազանդելով ոչ իշխանները, ոչ Ժողովուրդը և ոչ գործը, վասն զի ապստամբեցին գինքը՝ տարի մը Թագաւորելէն վերջը. և միաբան խորհրդով Յովհաննէսին Գուիտոն եղբայրը կանչեցին ու իրենց Թագաւոր օծեցին:

1. Ո՞վ էր Կոստանդին Գ. ու ինչպէս Հայոց աչքի ընկալով սպանուեցաւ.

2. Գուիտոնի տանը անհիւ բազմութեամբ Կիլիկիոյ վայ վազելին Եգիպտացիք. որոնց դէմ ելլելու վախնալով Գուիտոն, փախաւ բերդի մը մէջ պահուըտեցաւ, որով Եգիպտացիք առանց արգելքի մտան Կիլիկիա ոտնակոխ ըրին. կը տեսնէին տան ամէն չարիքս իշխանները ու անհոգ կը կենային, վասն զի ազգին սէրը մարած էր սրտերնուն մէջ, իրենց վիճակին պատճառները մոռցած էին, տպիտութեան խաւարին մէջ թաղուած. մէկ խօսքով ամենը իրենց ազգին թշնամի՝ միայն իրենց ազանձնական օգուտը կը մտածէին, որ ինչպէս յայտնի է, հասարակայ կործանումն է:

3. Երբոր թշնամիները ելան գնային Կիլիկիայէն՝ Գուիտոն գուբս ելաւ պահուըտած տեղէն, ու սկսաւ եղբօրը պէս անմոռութեամբ եաեւէ ըլլալ որ ազգին ծէսը ու արուեստին սովորութիւնները փոխէ. իշխանները յորդորեցին զինքը որ անանկ փուճ բաներու եաեւէ չըլլայ. բայց երբոր անիկայ արհամարհեց անոնց խրատը, իրենք ալ զինքը սպանանեցին երկու տարի թագաւորելէն ետքը (1344):

4. Գուիտոնին տեղը Կոստանդին չորրորդը թագաւոր դրին, որ Թէկլա և Հօր կողմանէ լատին էր, բայց խելացի ու զգուշաւոր ըլլալով խաղաղութեամբ կառավարեց ազգը: Երբոր ասիկայ սկսաւ լսելնացուոց հետ թղթակցութիւն ընել, եգիպտոսի սուլտանը շատ զօրք խաւբեց Կիլիկիոյ

2. Ինչպէս նորէն Եգիպտացիք տիրեցին Կիլիկիոյ և ազգին ան նեղութիւններուն ու հարուածներուն պատճառը ինչ էր.

3. Գուիտոն ինչո՞ւ սպանուեցաւ.

4. Կոստանդին Դ. ինչպէս Աստուածատուր զօրապետին օգնութեամբ յաղթեց Եգիպտացւոց ու քանի տարի թագաւորեց.

վայ. Կոստանդին առաջուց խմանալով անոնց գալը՝ ինքն ալ իր զօրքերը ժողվեց ու պատերազմի պատրաստուեցաւ. օգնութիւն կան իրեն Կիպրոսի Հուգոն Թագաւորը և Հոռոդացւոց Աստուածատուր զօրապետը. ասոնք ամենքը միացած՝ վազեցին Թշնամւոց վրայ, սոսկալի չարդ տուին իրենց ու բոլորն ալ Կիլիկիայէն վռնտեցին, Թէպէտ և իրենցմէ ալ շատ մարդ մեռաւ: Կոստանդին խաղաղութեամբ քանի մը տարի ալ տպրելով մեռաւ՝ տասնրութը տարի թագաւորելէն ետքը (1364):

5. Կոստանդինին մեռնելէն ետքը իշխանները չկրնալով միջերնին միաբանիլ, քանի մը տարի առանց Թագաւորի մնացին: Ուրբանոս Ե. պապը իշխաններուն յորդորեցաւ Թոզլի մը գրեց որ Թագաւոր դնեն Լեւոն Լուսինեան ըսուած իշխանը՝ որ մօր կողմանէ միայն հայ էր ու Գուիտոնին և Ճիւանինն ազգական. իշխանները միաբանեցան ու հրաւիրեցին Լեւոնը որ Թագաւոր օծեն. ինքն ալ յանձն առաւ՝ պայմանի յորդորանքներէն ստիպուած: Բնութեամբ լաւ և Թագաւորավայելուչ տարեալ Թիւններով զարդարուած էր Լեւոն, բայց ազգին խելքի Թիւնը և ժամանակին պարագաները՝ Ռուբինեան Թագաւորներուն ամենէն ցաւալին ու գժբաղդը ըրին զինքը:

6. Լեւոն Թագաւորելուն պէս՝ Եգիպտացիք անհիւ զօրքով Կիլիկիա տարածուելով սկսան այրել ու աւերշարկել քաղաքները. Լեւոն քիչ զօրքով Թշնամւոց դէմ ելլալ ուզեց, բայց անոնց, բայց ինքն ալ պատերազմի տանն վիրաւորուելով՝ փախաւ գնաց անմատչելի լեռներու մէջ պահուըտելու.

5. Լեւոն Լուսինեան ինչպէս Թագաւորեց.

6. Լեւոն ինչ քաղաքներ ըրաւ Եգիպտացւոց դէմ ու ինչպէս Թագաւորութիւնը նորէն ձեռք առաւ.

տեցաւ, որով և ձայն եկաւ թէ մեռած է պատերազմի առեն։ Իշխանները երկու տարիէն եաթը ուղեցին ՈՒթեն անուանով գուքսը Թագաւոր դնել իրենց՝ պակելով Լևոնին Մարիամ Թագուհիին հետ. երբոր պակին օրերը մօտեցան՝ իմացուեցաւ որ Լևոն ողջ է եղեր, ու քիչ մը առնէն ինքն ալ գալով Թագաւորութիւնը նորէն ձեռք առաւ, որով ազգին մեծ ուրախութիւն եղաւ. բայց ափսոս որ երկար չտևեց։

7. Երկու տարիէն Էշրեֆ Շապան անուանով մէկը Եգիպտացւոց սուլթան ըլլալով, և քրիստոնէութեան սասպիկ թշնամի, շատ զօրք խաբեց Կիլիկիոյ վրայ, որ երեքան հինգհարիւր ընեն քաղաքները ու Թագաւորութիւնը վերցնեն. ասոնք զարհուրելի գեան մը պէս Կիլիկիա տարածուելով արիւնով ողողեցին գաշտերը, որով շատ մարդ փախաւ այլ և այլ օսար Թագաւորութեանց ապաւինեցաւ, շատ ալ լեռներն ու բերդերը պահուըտեցան, ճնացածները թրի բերան գնացին։ Եգիպտացիք ամէն տեղերու տիրեցին ու աւերակ գարձնելէն եաքը, երկու ամիսէ աւել Սիս քաղաքը պաշարելով առին ու աւերակ գարձուցին. Թագաւորաց և իշխանաց գերեզմանները բացին, ու ան պատուական ոսկորները այրեցին. և բոլոր Կիլիկիան, որ մեր վերջին Թագաւորաց խանձարուրն էր, այնպիսի ողորմելի և աւերակ վիճակի մը հասուցին որ սոսկաց Թագաւորական գաւազանը ան աւերակաց վրայ տիրելու։

8. Լևոն տեսնելով որ անկարելի է Թշնամեաց անհամար և կատաղի բազմութեանը առաջը առ-

7. Էշրեֆ Շապան ինչպէս տիրեց Կիլիկիոյ ու ինչ խեղճութեան հասուց ազգերնիս.

8. Լևոն ինչպէս Եգիպտացւոց ձեռքը գերի ինկաւ.

նալը քիչտոր զօրքովին՝ իրեն ընտանիքովը Կապան ամուր բերդին մէջ պահուըտեցաւ. Թշնամիները եկան ու սկսան հետը պատերազմիլ, բայց չկրնալով ինքս մը հասցընել՝ եկան գնացին ու փոքրիկ գունդ մը Թողուցին բերդը պաշարելու համար։ Լևոն ինք ամիս բերդը կենալէն եաքը յուսահատելով դեսպան խաբեց Եգիպտացւոց զօրավարին՝ խոստանալով որ անձնատուր կ'ըլլայ. միայն Թէ երդնուս ինքն ալ ինքս մը չհասցընելու իրենց կենացը։ Երբոր երդում ըրաւ զօրավարը՝ բերդին դռները բացին, Թշնամիք մէջը մտան, զօսած բանեցին յափշտակեցին ու Թագաւորը և իրեն ընտանիքը շղթայի զարկած Եգիպտոս տարին. աս եղաւ 1375ին։

9. Էշրեֆ Շապան եօթը տարի խիստ բանտի մէջ պահեց Թագաւորական ընտանիքը հաւատքնին չուրանալուն համար. վերջը Հռովմայ քահանայապետին և Սպանիացւոց Յովհաննէս Թագաւորին ազաչանքովը ազատեցան ամէնքն ալ բանտէն. ու Յովհաննէս Թագաւորին երաշխաւորելովը հրաման ալ եղաւ որ ուր կ'ուզեն երթան։ Լևոն մեկներ իր ընտանեօքը Երուսաղէմ Քրիստոսի սուրբ Գերեզմանին ուխտի գնաց. հոն Թողուց իր կինն ու աղջիկը իրենց ուզելովը, և ինքը Եւրոպա անցնելով նախ Հռովմ գնաց, ուր շատ պատիւ գաւաւ սրբազան պապէն. անկէ անցաւ Սպանիա, ուր Յովհաննէս Թագաւորը շատ սիրով ընդունեցաւ զինքը և բնակուելէն տեղ տուաւ։ Հոն երկար տաեն կենալէն եաքը Ճամբորդութեան համար Գաղղիա ու Անգղիա գնաց, ու վերջը Փարիզ հասնելով հոն հիւանդացաւ և մեռաւ 1393ին, Նոյեմբերի 22ին վրնջուն տարեկան։ Մեծ հան-

9. Լևոն ինչպէս իր բանտարգելութենէն ազատեցաւ ու ինչպէս մեռաւ.

դիտով Թաղուհեցաւ Կեղեսաւինեանց վանքին եկե-
ղեցւոյն մէջ ուր որ փառաւոր դամբան չինած է
վրան Գաղղիոյ Թագաւորաց ու անուանի զօրա-
վարներուն շարքին մէջ:

10. Միակառուբ սև մարմարիոնէ է դամբանը,
որուն վրայ տարածուած կը կենայ Լևոն Թագա-
ւորին արձանը ձերմակ մարմարիոնէ, Թագաւո-
րական վերարկուով ծածկուած: Գլուխը Թագ,
ոչ ձեռքը Թագաւորական գաւազան ու ձախ
ձեռքն ալ Թաթախան: Իսկ ոտքին կողմը երկու ա-
ռիւծ իրարու հակընդած կը կենան: Տապանագրին
արձանագրին է ասիկայ.

« Ահա է տապան քաջատոհմիկ և ամենապա-
» տիւ իշխանին Լևոնի Լուսինեան հինգերորդի 1
» յաւին արքային Թագաւորութեան Հայոց, որ
» աւանդեաց զհոգին ՚ի ձեռս Աստուծոյ ՚ի Փա-
» րիզ ՚ի 22 Նոյեմբերի յամի փրկութեան մերոյ
» հազարերորդի երեքհարիւրերորդի ինիններոր-
» դի երրորդի »:

10. Լևոնի դամբանը ինչպէս է ու ինչ արձա-
նագիր գրուած է վրան.

1 Ա տապանագրին մէջ Լևոն վեցերորդը հինգերորդ
կոչուէր է, Լևոն երկրորդը Ռուբինեանց առաջին Թագա-
ւորն ըլլալուն համար Լևոն Ա. սեպհուէր:

ԴԱՍ ԼԵ.

Հայոց անիշխանութենէն Յաղանակի
ընդհանուր վիճակը.

1. Ռուբինեանց Թագաւորութեան վերջանա-
լու առենները Ասիոյ մէջ շատ զօրացած էր Լան-
կԹամուր կամ Թիմուրլէնկ Իշպէք Թաթարնե-
րուն Թագաւորը, որ Սմրղանտ կը նստէր: Ասի-
կայ իր Թագաւորութեան երկոտասաներորդ տա-
րին անհամար զօրքով վազեց Պարսկաստան ու
Ասորեստան, և բոլոր ան տեղերը նուաճելով ան-
ցաւ Հայաստան, և հասած տեղերը սոսկալի ան-
դթութիւններ ըրաւ: Օրինակի համար, կը պատ-
մեն Թէ Լանկթամուր Կարս քաղաքը առնելու ա-
ռաւն այապխի գործողութիւն մը ըրաւ. շատ մարդ
ջարդել տալէն ետքը, Թէ տաճիկ և Թէ հայ, հրա-
ման տուաւ որ իրեք հարիւրական հոգւով երիու
խումբ կազմեն, մէկ խումբը տաճիկ՝ մէկալը հայ.
երբոր զատնք դիմացը հանեցին՝ Լանկթամուր ը-
սաւ. Ա երիու խումբէն մէկը կ՚ուզէի ջարդել

1. Լանկթամուր ծնեալ է ու ինչ նշանաւոր գոր-
ծողութիւն մը ըրաւ Կարս քաղքին մէջ.

տալ, որոշելով որ քրիստոնեաները Թրէ անցընեմ։ Հայերը սիրով յանձն առին մեռնիլ քան տաճկանալով ազատիլ։ բայց մէկէնէն երկու հոգի Տաճիկներուն կողմը անցնելով հաւատքնին ուրացան։ ան առեն Թագաւորը հրամայեց որ Հայոց տեղ Տաճիկները սպաննեն։ աս որ տեսան ան երկու ուրացեալները՝ նորէն քրիստոնէից կողմը անցնելով սկսան կանչել։ Մենք քրիստոնեայ ենք ու Քրիստոսի ծառայ։ ան առեն Լանկթամուր յանդիմանելով ան երկուքին անհաւատութիւնն ու չարութիւնը՝ միայն զանոնք սպաննել տուաւ ու մեկալները ազատ Թողուց։

2. Կարսէն գնաց Փոքր Ասիա Սեբաստիոյ վրայ։ երբոր քաղաքացիք ընդդիմացան իրեն՝ դեսպան խաւրեց խաբէութեամբ երդումով ընելով որ եթէ խաղաղութեամբ քաղաքը տան՝ բնակիչները Թրէ չանցընեն։ Խոստմունքը պահելով Թրով չը ջարգեց զնոնք, բայց սոսկալի տանջանքներով սպաննեց։ ամէն տեսակ հասակի և վիճակի մարդկանց զատ տանջանքներ ու մահեր հնարելէն ետքը՝ բոլոր տղաքը Ժողվեց, ու կապած ձեռքով և ոտքով ձգեց գաշտի մը մէջ ու կառուցած ձիերու կոխկրտել տուաւ։ ասով ան գաշտին անունը Սև հողեր կը կոչուի, որ ինչուան հիմայ Հայոց գերեզմանոցն է։ Հաքը զօրքերը բռնեց ու ողջ ողջ Թաղեց, ըսելով Թէ՝ Երդումնդիր եմ Թրով չսպաննելու։ Իսկ քաղքին մէջ գտնուած բոլոր տներն և ուրիշ պահասաւոր մարդիկը խղդել տուաւ ըսելով. Ես ողջերուն չնայեցի, դուք ինչ բանի հարկաւոր էք։ Այ անգթութիւնները ընելէն վերջը շատ մարդ ալ դերելով Խորասան տարաւ։

2. Սեբաստիա ինչ անգթութիւններ ըրաւ Լանկթամուր։

3. Լանկթամուրին Թագաւորութեան վերջին տարիները Սիւնեաց կողմերը կը զբաղար Պեչգէն Ուռպելեան անունով կարեւոր իշխան մը, որ Սիւնեաց աշխարհքին ու Կապանի մեկ մասին կը տիրէր։ իր իշխանութեան տակը վաթսուն հազար ձիավ Հայ ունէր, ու հայրաբար զիրենք կը խնամէր, և փախչողներուն պատսպարան կ'ըլլար։ Տեսնելով Պեչգէնի յառաջադիմութիւնն ու մեծնալը Վրաց Թագաւորը սկսաւ վրան նախանձիլ, ու հաւէք ըլլալ որ սպաննէ զինքը։ աս բանիս համար Ամիրադին անունով անղգամ ու արծաթասէր Հայ մը գտնելով անոր ձեռքովը Թոյն խմցուց Պեչգենի։ մեկին կարևոր գործակիցները ըրին, բայց օգուտ մը չըլլալով մեռաւ Պեչգէն ու մեծ սուգ մէջ Թողուց իր Ժողովուրդը։ իսկ Ամիրադին իրեն արժանաւոր պատիժը գտնելով չարաչար սպանուեցաւ Հայերէն։

4. Ան յայտնութեան շատ զօրացած էր Սուլդան Մհմէտմիա Ջահիհ Օմանցւոց Թագաւորը, որ Կոստանդնուպոլսոյ Յունաց ձեռքէն առաւ։ և ուզելով որ հոն ալ գտնուին Հայերը՝ վաճառականութիւն և ուրիշ արհեստները ծաղկեցընելու համար, Պրուսայէն և այլ և այլ տեղերէ շատ Հայեր բերել տուաւ ու Պօլսոյ գանազան կողմերը բնակեցուց։ ասոնց վրայ Յովակիմ անունով պատրիարք մըն ալ դրաւ իշխանութիւն տալով տերել Փոքր Հայոց և Յունաստանի մէջ գտնուած բոլոր Հայերուն։

5. 1453էն ինչուան 1603 մանաւոր բան մը

3. Պեչգենի վրայ ինչ գիտեցիք կայ։

4. Սուլդան Մհմէտմիա Ջահիհ ինչ բան ըրաւ ազգերնուս։

5. Շահաբաս ինչ աւերմունք ու կոտորած հասուց ազգերնուս։

չպատմուիր Հայոց վրայ. իսկ ա՛ս միջոցներուն Շահ-աբաս Պարսից Թագաւորը Օսմանցւոց ձեռքէն առնելով Հայաստանը՝ խիստ շատ աւերմուիք ու կոտորած ըրաւ հոն. որով և Աստուծոյ բարկութեան վերջին և սաստիկ պատիժը եղաւ մեղ: Երբոր Օսմանցիք իմացան որ Պարսիկք Հայաստանի սիրեր էն, Ճշմարիտ Սիոնի փաշային ձեռքը անհամար զօրք առաքեն ու Հայաստան խաբեցին Պարսից դէմ. Շահ-աբաս բոլոր Հայերը արտորա-նօք իրենց քաղաքներէն ու բնակութիւններէն հա-նել տալով՝ Ա.յրարատայ դաշտին մէջ ժողվել տուաւ, որպէս զի անոնք Պարսկաստան անցնէ. քաղաքներն ու բոլոր արտերը այրել տուաւ, շէն-քերը հիմնայատակ կործանեց, որպէս զի Օսման-ցիք գալով ոչ պաշար գտնեն և ոչ բնակութիւն: Երբոր Օսմանցիք Կարս հասան, Շահ-աբաս հրա-ման տուաւ որ բոլոր ժողված Հայերը Պարսկաս-տան քշեն տանին. և որովհետև Երասխ գետէն կ'անցնէին, բաւական նաւակ ու լաստ չէր լինար՝ ինչպէս ժողովուրդը գետը ձգել որ կրցողը լողա-լով անցնի. ասով հիւանդոտ ու ծեր մարդիկ, կա-նայք, տղաք և ուրիշ լողալ չգիտցող անհամար մարդիկ խղդուեցան: Շահ-աբաս գետին քովը նըս-տած կը տեսնէր ան խնդութիւնները, առանց հոգ ընելու, աւելի կը փութացնէր ժողովրդեան գետէն անցնիլը. հասան եղկելիները ուրիշ անբաւ գժուարութեամբ ու վտանգով Պարսկաստան, և ըստ մեծի մասին Շահ-աբաս զերծնիք Ասպահան քաղաքը բնակեցուց. ամէնքը մէկէն տասնեւերկու հազար տուն էին՝ այնչափ կորսուածներէն զատ: Շահ-աբաս որպէս զի Հայոց սիրտը վատորկի որ սիրով կենան, սկսաւ գթութեամբ վարուիլ հե-տերնին ու հարկերը շատ թեթևցուց. եղբը ուրիշ շատ դաղթականներ ալ բերաւ Շահ-աբաս, որոնցմէ շատը օդին դժուարութենէն մեռան, մեկալ-

նոնք ալ Պարսից մէջ ցրուեցան. իսկ ինչպէս հի-մա մնացածներն են Նոր Ջուղայի բնակիչները, որ իրենք չունեցին ան քաղաքը Հին Ջուղային յե-շատակ:

6. 1722ին տաւնները երբոր Սիւնեաց աշխարհ-քին Հայերը կը նեղուէին երբեմն Օսմանցիներէն ու երբեմն Պարսիկներէն, Դաւիթ Սիւնի կաթի-ճ ու հայրենասէր մարդը քանի մը հոգի ժողվեց գլուխը, շատ խելքով կառավարելով զանոնք՝ Թըշ-նամեաց դէմ ելաւ ու սկսաւ իր ժողովուրդը խնա-մել. կամաց կամաց զօրքը ինչպէս ջրոս հարիւր ըրաւ և անոնց զօրավար դրաւ Մխիթար անուանով իր անպարտելի օգնականը: Տաճիկները լսելով Դաւթին զօրանալը՝ իրենք ալ այլ և այլ տեղերէ զօրք ժողված մեծ պատրաստութեամբ վազեցին Դաւթի վրայ. քովի մարդիկը տեսնելով Թշնամեաց բազմութիւնը՝ ձգեցին փախան, ոմանք ալ Թշնա-մեաց կողմը անցան, այնպէս որ Դաւիթ տասներեօ-թը հոգով մնաց. բայց ան միջոցին եկան հետը միացան Չալիձորայ Մելիք Փարսադան և տէր Աբե-ղիք կաթի՛ պատերազմողները. քանի մը հոգով. ադիէն անդիէն խել մը մարդիկ ալ գալով նորէն ջրոս հարիւր լինաւն հոգի եղան:

7. Դաւիթ յորդորեց ամէնքը հոգևորապէս ալ պատրաստուելու, ուստի ամէնքն ալ խոստովա-նեցան հաղորդեցան, ու քաջութեամբ պատերազ-մի պատրաստուեցան: Թշնամիները եօթանասուն հազարի չափ էին, մեծ մասը Հայ, և ուրիշ շատ հատարակ ժողովուրդ. իսկ Դաւթի իրիք հարիւր հոգի միայն ունէր հետը բերդին մէջ: Պատերազմը

6. Դաւիթ Սիւնիին վրայ ինչ պատճիք կայ.
7. Դաւիթ իրեն կարճ ընկերներով ինչ ջարդ տուաւ Տաճիկներուն ու ինչ կը պատմուի Տէր Աբեղիք ու Մխիթար քաջերուն վրայ.

վեց օր միակերպ տևէր։ Թշնամիներէն գրեթէ ա-
մէն օր 300 հոգիի չափ կը մեռնէին, իսկ Դաւիթի
կողմէն օրը հազիւ մէկ հոգի։ Վասն զի բերդական-
ները գրեթէ եղածները կը տեսնէին ու գրեթէներըը
ղիրենք չէին տեսներ։ Տաճիկները յուսահատե-
ցան ան կերպով բերդը առնելէն, ու սկսան ամէն
կողմանէ մեծամեծ ու բարձր գործիքներ դնելով
պարսպին վեր ելլել։ բերդականները երբոր տե-
սան սա բանս, քահանաները, կանայք ու տղաք
ժամ վազեցին ու Ի՛ աղօթէին որ աս վտանգէն ա-
զատէ զիրենք Աստուած։ իսկ Դաւիթ ու իր քաջ
զօրքերնու զօրավարներըը այնպիսի արագութեամբ
ու զարմանալի յաջողութեամբ կը պատերազմէին
որ մեկու մ՚ալ չէր յուսացին որ բերդին նեղս մտնէ,
ու վեր ելածնեները երթով կամ հրացանով վար կը
գլորէին։ Ան միջոցին Տէր Աւետիք և Մխիթար
երկու հարիւր հոգի առած հետերնին՝ ուրիշ ճամ-
բով մը բերդին դռանս էլան ու թշնամեաց հեռէն
սկսան պատերազմիլ։ տասվ տասսուերեք հազար
մարդ ջարդեցին ան օրը, և մնացածներըը փախու-
ցին, հարիւր քառասուն և ութ գրօշ ու շատ ա-
ւար առած յաղթութեամբ դարձան եկան։ Վեր-
ջը փախչողներուն հետևէն գնացին Աւետիք և Մխի-
թար վաթսուն հոգւով, մեծ ջարդ մ՚ալ տուին
անոնց Մեղրի քաղքին մէջ, ու գարձան Դաւթին
քովը եկան։ Դաւիթ իր հնարագիտութեամբը,
քաջութեամբը ուրիշ շատ յաղթութիւններ ալ
բրաւ, որով թշնամեաց սիրտը վախ ձգեց ու հա-
լածեց զիրենք։ վեց տարի եղաւ իր պղտիկ տե-
րութեանը վրայ գովելի և զարմանալի խելքով ու
կառավարութեամբ, և մեծաւ խաղաղութեամբ
յիսունըչորս տարեկան։

8. Դաւիթ մեռնելէն եաքը իր մարդիկը միաբան

8. Դաւիթ Սիւնիին մեռնելէն եաքը ի՞նչ խառ-
վութիւն ինկաւ Հայոց մէջ։

հաւանութեամբ մեկէն ընտրեցին Մխիթարը ի-
րենց առաջնորդ։ բայց եաքին մէջերնին խռովու-
թիւն յառաջավ ամենք Տէր Աւետիքին կողմը եան,
ամենք ալ ուրիշներուս։ այսպէսով իրենց միու-
թիւնը որով և զօրութիւնը պահպեցաւ։ Իմացան
Տաճիկները բերդականներուն անմիաբանութիւ-
նը, եկան պաշարեցին, ու սկսան նեղը խոթել մե-
ջինները։ բերդին Հայերը Մխիթարին ծածուկ
միաբանեցան որ բերդը մատնեն ու իրենք ազատին
երթան։ ասոնիս համար պատգամաւոր խաբե-
ցին Տէր Աւետիքը։ Տաճիկները երդմամբ յանձն
առին, բայց բերդը մտնելէն եաքը մեծ մասը թրէ
անցուցին, որ իրենց անմիաբանութեանը արժա-
նաւոր պատիժ եղաւ։ իսկ Տէր Աւետիքը ազատ
թողուցին՝ որ ուր կ՚ուզէ երթայ։

9. Մխիթար իրենները մատնութիւնը առա-
ջուց իմանալով փախաւ գնաց, ու քիչ մը տաեն
պահուըտեցաւ եաքը եկաւ նորէն շատ մը մարդ
ժողվեց գլուխը, ու շատ քաջութիւններ ընելով
քանի մը բաղաքներու ու բերդերու տիրեց։ Եր-
բոր Ղշծորեաք ըսուած բերդը պաշարեր էր, օր մը
քնանալու տանը քովի մարդիկը սպանեցին զին-
քը, ու գլուխը Դավիժ նազող բդեշխին տարին.
բդեշխը արդարութեամբ մտածելով պատժեց ա-
նոնց անզգամութիւնն ու անհաւատարմութիւնը
և զամենքն ալ սպանեցնել տուաւ, ըսելով «Դուք
աշխարհս այդպիսի քաջ մարդ մը զրկեցիք, և
ես որ անոր կեանքը անվնաս ու ինքնակար սե-
պեցիք աշխարհի, ուրեմն ձերը ինչ բանի պիտա-
նի պիտի ըլլայ ձեզ անգութ և դաւաճան մարդիկ»։

10. Մխիթարին քովի մարդիկը բոլոր ցրուե-

9. Մխիթար ինչպէս սպանուեցաւ.

10. Ինչ դիտելիք կայ Յովհաննէս էշմանին
վրայ, և թէ անկէ վերջը ինչ վիճակ ունեցաւ մեր
ազգը.

ցան, շատ ալ Յովհաննէս իշխանին քովը գնացին, որ շատ քաջութիւններ ըրած էր Ուսէյնցոց աշխարհքը Տաճկաց գէմ. բայց վերջէն կասկածելով իր մարդիկներուն գաւաճանութենէն, ինքիրմէ Տաճկաց յանձնեց իր քաղաքը, ինքը եկաւ Սմբատ գնաց ու հոն շատ պատիւ գտաւ:

ԳԱՍ ԼԶ.

Հայոց վիճակն Պարսից Նատրր Շահ թագաւորին և անոր յաջորդաց ատեն:

1. Նատրը Շահ որ Թահմազ Ղուլի անուանեցաւ, Պարսից Թահմազ Թագաւորին ծառայութեան մէջ ըլլալուն համար, Աֆղաններու և Օսմանցոց գէմ ըրած յաղթութեամբքն՝ կասկածելի եղաւ իր Թագաւորին. համարձակ գրգռեց իշխանները և զօրքերը և բանտեց զԹահմազ. յետոյ զրպարտութեամբ սպաննելով զանիկայ և անոր գեռահասակ որդին, զոր առաջ Հօրը տեղ Թագաւորեցուցեր էր, անոնց տեղ անցաւ, 1737ին. և նորէն Օսմանեանց գէմ երթալով և յաղթելով Կարս քաղաքին քով, Հայաստանի մէկ մասն ալ առաւ անոնցմէ և Պարսից տէրութեան միացուց: Ցետոյ Մուղնայ անապատին մէջ ժողվեց բանակը և Պարսից ու հպատակաց մեծամեծները. և անոնց միաբան հաւանութեամբը ընտրուեցաւ Պարսից Թագաւոր: Հոն էր մեր Աբրահամ կաթուղիկոսն ալ, զոր Ժողովքին մէջ կանչե-

1. Ո՞վ է Նատրը Շահ:

լով օրհնել տուաւ իր սուրը, և անոր ձեռքովը մէջքը կապեց, իբրև իմացընելու համար որ Հայոց ալ Թագաւոր է:

2. Այն տաեներուն սովորութեան համեմատ եօթնվերակացուներ կը կառավարեին Հայաստանի ամեն մէկ գաւառները կամ նահանգները, և կը կոչուէին Այան. Առնցմէ երեքն Պարսիկ էին, մէկն Խան (նահապետ), մէկալն Ջաղէր (գաւառաւոր), երրորդն Գալանթար (վերակացու ժողովրդեան). իսկ մնացած չորսն Հայոց ազգէն էին, իբրև խորհրդականն և գործակալ: Նատրը Շահ ամեն տարի կը կանչէր զատուկ և իրենց կառավարութեանը վրայ հաշիւը կը պահանջէր. և շատ հեղ փուճ պատճառներով սրդոզելով՝ որը կը սպաննէր, որը կը կուրցընէր, որն ալ ծանր տուգանքով կը պատժէր: Անոր համար Հայոց մեծամեծներն կը զգուշանային իշխանութեան երեսէ ըլլալու, ինչուան որ չկամեցաւ:

3. Նատրը Շահ Նախիջևանի նահապարը և իր գործակալները անիրաւութեամբ սպաննելէն ետքը Շահ Մէհէմմէտ Գուրլի անուամբ գահն և խորամանկ իշխան մը զրկեց ի Հայաստան, որ խմանայ թէ Հայոց քաղաքապետներն և իշխանները ինչ կը մտածեն իր վրայ: Մէհէմմէտ Գուրլի եկաւ Նախիջևան, և պրսուանց շատ պատիւ ցըցուց Հայոց և Պարսից, օր մ՝ալ գաւառին բոլոր մեծամեծները իրեն կանչեց և մեծ ատրութեամբ գէշ խօսեցաւ Նատրը Շահին վրայ. անոնք ալ խաբուելով յայտնեցին որ իրենք ալ ձանձրացեր են անոր բռնութիւններէն և կը փափագին ազատուիլ:

2. Հայաստան ինչպէս կը կառավարուէր Նատրը Շահի տաեն:

3. Ո՞վ է Մէհէմմէտ Գուրլի և ինչ ջարդ ըրած է Հայոց:

Մէհէմմէտ Թուղլի գրել առաւ ամենուն անունը որպէս զի, ըսաւ, գիրքը ձանձնանք և մէջէրնիս օտար մարդ չխմանէ: Ան Հայ իշխաններէն ամենը Նախիջևանցի էին, ամենքալ Ագուլեցի, Աստապացի, Շոռոմեցի, և այլն: Քանի մը օրէն ծածուկ մարդ խաբեց, մէկիկ մէկիկ բռնել տուաւ զանոնք և բանտեց երեսուն և երիք Հայ, ամենքն ալ ազնուական և պատուաւոր անձինք: Յետոյ իմացուց Նաասը Շահին, որ բոլոր կասկածաւոր իշխաններըը բռնած էր. Նաասը Շահ ալ հրաման խրկեց որ զամենն ալ կուրցընէ, և սաացուածքնին իրեն խաբէ: Այսվ խելք իշխաններըը գտատարտուռեցան երկու աչուընին կորսուիցընել. միայն որոնք որ շատ սուկ սուբին՝ Մէհէմմէտ Թուղլի անունց մէկ աչքը կուրացընել տուաւ, մէկալը քիչ մը աւրելով Թողուց, որպէս զի Շահին հրամանը կատարած ըլլայ:

4. Երբ Նաասը Շահի մահուան ձայնը հասաւ Նախիջևանայ կողմը, շատերը սկսան ապստամբիլ Մէհէմմէտ Թուղլի խանէն. ան ալ կրցածին չափ զօրք ժողվելով Լանաց զանոնք նուաճելու: Նախ վազեց Աստապատի վրայ, որուն բնակիչքն դրեթէ ամենն ալ Հայ էին, բայց չկրցաւ ինտա մը հասցընել, ու ամեհաւոյ դարձաւ: Ան տեղն Եաան Մուհամմէտ Սուլթան անունով անզգամ Պարսիկ մը՝ որ Աստապատ ապաւիներ էր իբրև ամուր տեղ մը, և Հայոց Թշնամի էր, Մէհէմմէտ Թուղլիին ծածուկ խմացուց Աստապատի գաղտնի ձամբաներըը, ու զգուշեց որ դարձեալ գայ: Հայերըն իմանալով սկսան մտանիչը փնտռել. ան ալ գիշերանց ձի հեծած փախաւ. բայց քաղաքին իշխանը՝ որ կըսուէր Կարապետ Աստուածատուրեան

4. Նաասը Շահի մեռնելէն ետքը Մէհէմմէտ Թուղլի ինչպես վարուեցաւ Հայոց հետ.

եաևէն հասաւ ու ապաննեց. Մէհէմմէտ Թուղլի ալ օրէ օր աւելի ահարանալով փախաւ անծանօթ տեղուանք:

5. Նաասըի մեռնելէն ետքը իր Շահ Ռուհ Թուռը Թագաւորեց Մեշհէտի մէջ. իր եղբօրորդին ալ Աբդուսամանի վրայ Թագաւորեց և Հայաստ Թուղլի անուամբ խան մը Նախիջևանին խարար դրաւ: Այսիկայ առաջ հանդիսաւ Թողուց Հայերը և շատ մեր ցուցուց երկնց. բայց քիչ առենէն հետերնին Թշնամանալով շատ նեղուեցան առաւ Հայոց մեծամեծներուն Նախիջևանի և Գողթն գաւառներուն մէջ ու ուրիշ տեղեր: Ասոր համար տեղւոյն բնակիչներէն մեծ մասը այլ և այլ գիղեր փախան, ոմանք ալ Երևան գացին, ուր կրնային աւելի հանգիսաւ անցընել: Այն առեններըը Աստահանի մարզպանն Մխրճէ Խարաշիմ՝ որ Աբդուսամանի Թագաւորին եղբօրն էր, ապստամբելով անկէ պատերազմի ելաւ, բանեց և կուրցուց զանիկայ, և ինքը Թագաւորեց Գանձակ քաղաքին մէջ: Նախիջևանի, Շահկայ և Գողթան Հայերն զայս լսելով մէջերնէն մեծամեծները անոր խուրեցին Հայաստ Թուղլի խանը ամբաստանելու. Խարաշիմ Շահ ալ իրաւունք տալով երկնց՝ Հայաստը ձգեց իշխանուԹենէ ու անոր տեղ գրաւ երբև փոխանորդ անոր եղբօրորդին Ալի Թուղլի Պէյը:

6. Խարաշիմ Շահ՝ բոլոր Պարսից Թագաւորութենէն տիրելու համար պատերազմի ելլելով, իր տերութեան ամէն գաւառներըը և մանաւանդ Հայաստան՝ Ժանտ հանկհանները խաբեց, որ պատերազմի ծախուց համար տուրք Ժողվեն:

5. Ո՞վ է Հայաստը Թուղլի խան.

6. Հայաստը ինչպես վրէժ առաւ Հայոց մեծամեծներէն:

Երբոր հարկահաններըը Դավրեժէն Ջամբազկլեալ վրայ էին Հայոցսահմանի երթալու, Հայոց խորհուրդ առաւ՝ որ Դավրիժոս Հայոց գլխաւորներըը մէկ տեղ տանին և անոնց ձեռքով դրամը ժողվին: Ա. յս որ իմացան Հայոց իշխաններըը՝ չըը վախաս, չըը պահուըտեցաւ. իսկ շատերը հարկահաններըուն ձեռքը ինկալով տախտակեան մէկտեղ Նախիջևան երթալ, ուր թէ իրենք և թէ ուրիշ շատ Հայեր սատակի նեղուեցան. վասն զի չկարենալով վճարել անողորմ հարկահաններուն պահանջած չափազանց գումարները, ոմանք ծեծի տակ մեռան, ոմանք ձեռքէ կամ ոտքէ կաթուեցան, ոմանք ալ ցաւերնէն մեռան:

7. Քիչ տաեներն Հայոց խորամանկութենէ նորէն գինըը Նախիջևանի կուսակալ անուանել տուաւ, և առջի կուսակալը՝ որ վասն որ էր Պէհնամ Խան անուամբ մերժելով, անոր հրամանաւ Ողուստան քաղքին տպստամբաց վրայ գացող Հայ զօրաց վրայ գնաց և ցրուեց, գլխաւորներէն մէկ քանին ալ սպանեց: Ա. յս գինուորեալ Հայերը մեծ մասամբ Նախիջևանի սահմանին մէջ Շահկերտ անուանի բնակիչներէն էին, որոց իշխան էր Յովհաննէս Խնգամիրեան կարճ մը. որ եղածներըը լսելով ակար բնակիչներըը աւանին քովի լերան վրայ բերդը խաւրեց և չորս գին ամրացուց. զօրաւորներն ալ 800 հոգի գինեց ընդդէմ Հայոտարայ. որք երկար տաեն դէմ դրին Խանին բազմաթիւ զօրաց, և շատ մարդ Ջարդերին: Հայոտար տեսնելով որ կամ պիտի չկարենայ առնել բերդը, կամ խիստ շատ մարդ պիտի կորսուցրնէ, սկսաւ հաշտութեան հրաւէրը խաւրել: Յովհաննէս կասկածելով անոր խաբէութեանը՝ յանձն չառաւ. և երբ

7. Ի՞նչ քաջութիւն ցուցին Շահկերտցի Հայք, և ի՞նչ նեղութիւն քաշեցին ի Հայոտարայ:

տեսաւ որ իր ընկերներն կը դժուարին այս բանիս, և կ՚ուզէն խաղաղութեամբ վերջացընել գործը, հաւանեցաւ կռիւը դադրեցընելու, բայց այս պայմանաւ որ ազատ ըլլայ ինքն երեսնալուս Հայոտարայ, այլ միայն իր ընտանիքն երթան ի Նախիջևան: Սակայն յետոյ Հայոտարայ տեսնելով հրաւիրանքէն և ընտանեաց կարօտէն չարժած՝ եկաւ քաղաքը. Հայոտար պատուով ընդունեցաւ զինքը. և օր մ՚ալ մեծամեծաց հետ տեղւոյն հրաւիրելով զնա՝ կերակրին մէջ թոյն խառնելով վատաբար մեռուց կարիճը: Ա. յէկ կասկածելով ուրիշ կարիճներն՝ քիչ քիչ հեռացան և Վաթանու կողմերը գացին, որ է հին Սիւնեաց աշխարհն: Հոս ուրիշ բնիկ Հայ իշխաններ ալ կային, որք ինչանայս (ԺԹ) դարուս սկիզբներն ալ իրենց նախնեաց աշխատութեան և քաջութեան օրէն պահելով երբեմն ալ ցուցին, ընդդէմ Պարսից անուամբ եկած Խաներուն. այս իշխաններս արաբացի բառով Մէլիք կ՚ըսուէին, և գեռ հիմայ ալ գաւառներնոյն պատուանուամբ իշխանազունք, Խուասց կայսերութեան տակ. վասն զի այս գարուս սատնք առին այն կողմերը Պարսից ձեռքէն. և մեր Հայաստան աշխարհն իրեք տէրութեան մէջ բաժնուեցաւ, որ են Օսմանեանք, Պարսք և Ռուսք:

ԴԱՍ Լ Է·

Հայաստանի թաժանուիլն երկու տէրութիւնաց մէջ, և Հայոց սխրի՛ն Թագաւորն։

1. Հայաստան ԺԶ դարէն՝ի վեր բաժնուած էր Օսմանեանց և Պարսից մէջ, որոնք մեր Հայրենեաց արգէն արիւնաներկ հողը կրկին կրկին պատերազմներով իւրարու ձեռքէ յափշտակելէն վերջը, հաւսկ ուրեմն գաշնագրեցին որ Այգրպատականն գաւառն ու Կուր և Երասխ գետերուն մէջ եղած գաւառները մինչև Երեւան՝ Պարսից ձեռքը մնայ. խակ միւս տերութիւնքն Օսմանեանց։ Այս եղաւ 1746ին։ Այնուհետև Հայոց քաղաքական ինքնօրինեալութիւնն և ազգային անհատութիւնն իրօք չքնջուեցաւ։

2. Հայոց Թագաւորութեան վերջին գաւազանին խորտակելուն ԺԴ դարուն վերջերը, և անկէ ալ առաջ խաչակրաց՝ի Կիլիկիա երթևեկութեան ժամանակ՝ Հայք որ արդէն Հագարացւոց, Յունաց և Պարսից բռնութեամբ դուրս քնուած էին իրենց բնաշխարհէն, և փոքր Ասիոյ ու Կիւլիկիոյ զանազան կողմերը բռներ էին, սկսան անցնիլ նաև Եւրոպայի Թագաւորանիստ քաղաքները, ոչ առանձնականք միայն, այլ և ամբողջ ընտանեօք։ Այս համառօտ աքսորմանս մեծապէս

1. Երբ բաժնուեցաւ Հայաստան Պարսից և Տաճկաց մէջ։

2. Ե՞րբ սկսան Հայք յուրիլ և գաղթիլ օտար աշխարհաց մէջ։

նպաստաւոր եղաւ Հայոց վաճառականութեան յաջողութիւնն և շահու սէրն, զոր կը ջանային գրգռել Եւրոպայի տէրութիւնք այլ և այլազան նուէներով հրովարտակներով։ Ա յսպէսով Հայաստան Թշնամիներէ ոտնակոխ, և իր զաւակներէն լքեալ՝ բնակարան եղաւ Պարսից, Ինդոց, Թիւրքաստանեց և Տաճկաց։ Սակայն Պատմութիւնը կը ցնծայ վկայելով մեր փոքրիկ ազգն իր երկար դիւցազնական գիմակալութեամն ընդդէմ Ասիոյ խաղերէն Եւրոպիոյ քաղաքակրթութիւնը ողողելու սպառնացող Ժողովրդոց, ոչ սակաւ ժամանակ հզօր Թուրք եղաւ բարբարոսութեան հեղեղը արգիլելու, և արեւմտեան Ասիոյ կողմանէ ուշացուց քաղաքակրթութեան անկումը։

3. 1826ին վերջերը Պարսից Ֆեթհ-Ալի Շահն յանկարծօրէն Ռուսաց երկիրը յարձակեցաւ. Նիկողայոս կայսեր ալ իր կովկասեան բանակին հրաման խաւրեց որ Պարսից դէմ ելլէ. Մատաթէոսեան Հայազգի քաջ իշխանն որ Ռուսաց զօրապետ էր, ոչ միայն Պարսիկները եան մղեց, այլ նաև պարսկական Հայաստանն ալ մանալով դէպ՝ի Երասխ գետը առաջ անցաւ, և սիրեց Էջմիածնի։ Բասկևիչ Ռուս զօրավարն ալ առաւ Երևան, Մարանդ և Դաւրէժ քաղաքները։ Հայք շատ գիւրացուցին Ռուսաց յաղթութիւնները. վասն զի Պարսից ձեռքէն չարաչար նեղուած ըլլալով Ռուսաց ձեռնարկէն եկած օգնութիւնը ի՛ընդունին։ Վերջապէս 1828ին, փետրուար 22, Ռուսք Հաշտութիւն խօսեցան Պարսից հետ, պայման գնելով որ Երասխ և Կուր գետին միջոց եղած գաւառները Ռուսաց մնան, և Պարսից երկրէն Ռուսաստան անցնիլ ուզողներուն ամենևին արգելք չըլլուի։

3. Երբ սիրեցին Ռուսք Հայաստանի մէկ մասին։

4. 1828 Նիկողայոս կայսրը Օսմանեանց դէմ ալ պատերազմ հրատարակելով Ռուսք հասան մինչև Կարին քաղաքը. Կարնեցիք քաղաքին դռները փակեցին և կ՚ուզէին դէմ դնել. բայց Ռուսաց խոստումներուն յորդորուած անձնատուր եղան: Յաջորդ տարին Ադրիանուպոլսոյ դաշնադրութեամբ խաղաղութիւն հաստատուեցաւ Ռուսաց և Տաճկաց մէջ. Օսմանեան Հայաստանի մէկ մասն ալ Ռուսաց անցաւ: Ահա ասանկով երեք տէրութեանց մէջ բաժնուած է այսօր Հայաստան. մեծագոյն մասն, որուն մէջ կը բռնադկին փոքր Հայք և մեծ Հայոց արեւմտեան և հարաւային կողմերը, Տաճկաց ձեռքն է. Հիւսիսային մասը Ռուսաց, իսկ արեւելեան հարաւայինը Պարսից ձեռք, որ ամենէն փոքրագոյն մասն է:

5. Ռուսաստանի ամէն կուսակալութիւններն կամ նահանգներն մէկմէկ սեպհական նշան ունենալնուն համար, 1833ին Ռուսաց տէրութիւնը Հայկական նահանգին համար ալ հետեւեալ նշանը որոշեց: Ս. Յուսաչեր վահանի մը գլխաւոր բաժանումը մէջ՝ մէկ դին կաղոյտ ենթակայով Մասիս լերան ձիւնապատ արծաթափայլ գլուխը ձերմակ ամպերու մէջ. լերան ծայրն ալ Նոյոյ տապանն՝ ոսկեգոյն Հայաստանի պատմական հնութեան ազնուութիւնը հասկընձելու համար: Բ. Վահանին վարի կողմը երկու բաժնուած ըլլալով աջ կողմը կարմիր ենթակայի վրայ Հայոց Արշակունի Թագաւորներուն Թագը բարձր ու երկայն ձեւով, բոլոր ոսկի, Թագին ճակատը ասող մը ու ջրոս դին մարգարտեայ կապը, ու ենթակային կապոյտ: Գ. Ձախ կողմը կանաչ ենթակայի

4. Ի՞նչպէս ընդարձակեցաւ Ռուսի Հայաստան:

5. Ի՞նչ է Ռուսի Հայաստանի նշանը:

վրայ Էջմիածնի կաթուղիկէն՝ համակ արծաթի, միայն գմբէթները ու խաչերն ոսկեգոյն: Աստղ կիսացուի Հայաստանի կրօնքը և մանաւանդ երբ պսակ հայկական նահատակին դիրքը: Գ. Վերի բաժանման մէջ՝ ոսկի ենթակայի վրայ Ռուսական արծուն, որ բռնած է թէ վահանը և թէ անոր տակի բաժանումնքները. և բոլոր նշանին վրայ ալ կեցած է կայսերական թագն:

6. Հայոց Ռուսաց հետ ունեցած ծանօթութիւնը 1626 թուականէն կը սկսի, երբ վաճառականութեամբ կը յառաջանէին Ռուսաստանի ծովեղերեայ քաղաքները մինչև ի 1723, որ է ըսել գրեթէ հարիւր տարուան չափ. մեծամեծ արտօնութիւններ տուան Ռուսաց կայսերներէն հաստատակ երթեւեկելու Պարսկաստանէն ի Ռուսաստան, և ազատ վաճառականութիւն ընելու: Բայց երբ 1720ին Մեծն Պետրոս Ռուսաստանի մէջ արուեստ և վաճառականութիւն ծաղկեցընելու եռանդ եղաւ, գիտնալով Հայոց այս բանին բուռն ունեցած յարմարութիւնը և աչքաբացութիւնը, Ռուսաց քանի մը երեւելի քաղաքներու մէջ առաջին անգամ Հայ գաղթականներ բերել տուաւ և ամէն տեսակ ազատութիւն շնորհեց: 60 տարի ետքը դեռ Ղրիմ Ռուսաց ձեռքը չանցած, Կաթարինէ Բ, անկէ գաղթած և հոն բնակող Հայերը հրաւիրեց, անոնք ալ մաս մը եղան Տոն գետին կողմերը գնացին, և հոն շինեցին Նոր Նախիջևան քաղաքը, ուր 1816ին չորս հազար վեց հարիւր տուն Հայ բնակիչ կար, ազգային քաղաքապետ մը կառավարութեան տակ. մինչև հիմայ կը պահուի քաղաքին ժողովարանին մէջ Կաթարինէի հրամանագիրը Հայերէն գրուած:

6. Երբ սկսան Հայք Ռուսաստան գաղթիլ:

7. Բայց շատ աւելի հին և անուանի է Աժաէրխանի Հայոց գաղթականութիւնը, վասն զի սոսկ 1239 Անի քաղաքին աւերման առեն՝ Թաթարներուն Զարմաղան զօրավարին ձեռքէն փախան եկան հոս և 100 տարուց չափ բնակեցին եաքը ելան բազմութեամբ Թաթարներուն հետ պատերազմելով անցան Ղրիմ, անկէ ալ կամաց կամաց Լեհաստան, Մաճառստան և ուրիշ տեղեր: Այժմեան Հայերը Անեցի չեն, հապա 1700էն եաքը հետ զհետէ Պարսկաստանէն եկած են վաճառականութեամբ ու հոն տեղաւորուելով շատցած են, և հիմայ քաղքին բնակիչներուն մէջ Թաթարին ևս աւելի եաքը ամենէնբազմաթիւ, պատուաւոր և երեւելին մեր ազգն է, որ չորս եկեղեցի և երկու դպրոց ունի. որոնց մեկը կանգնած է Պարոն Աղաթապ ազնուականին 40 տղոց համար. միւսը Արզուեանց Երկայնաբազուկ Յովհէփ կաթողիկոսն՝ հանդերձ տապարանով մը, ուսկից քանի մը գրքեր ալ հրատարակուած են: Լազարեան իշխաններն ալ եկամուտ կապած են Աժաէրխանի աղքատաց համար: Աժաէրխանի վաճառականութիւնը, երկրագործութիւնը, այգեգործութիւնը և շերամագործութիւնը գրեթէ բոլոր Հայոց ձեռքն է:

8. Ղրիմու Հայոց մէջ հատատուն աւանդութիւն է որ իրենց բուն հայրենիքն է Անի քաղաքը. նոյնպես կ'ըսուի և քանի մը յիշատակարանաց մէջ, թէ Թաթարաց Անին առնելէն եաւ բնակչաց մէկ մեծ մասն Թողուլով իրենց ոսկեզօծ պալատները, ծաղիաւէտ դաշտերը, վանքերը և եկեղեցիները փախան գնացին Ազաբայ, որ Աժաէրխանի և

7. Ի՞նչ աւելկութիւն կայ Աժաէրխանի Հայոց վրայ:

8. Ի՞նչ աւելկութիւն կայ Ղրիմու Հայոց վրայ:

Խազանի միջոց է. ոմանք ալ ի Զուղա, Վան և Սիս: Ազատայ եկողները Թաթարներէն նեղուելով խնդրեցին ի Ճենովացւոց և եկան անոնց քով ի Ղրիմ, ու բնակեցան Կաղաբատա, (1) Սուրբատ քաղաքները և անոնց մօտերը. հոն զօրացան և բազմացան և շէնցուցին գեղերը և գաւառները, սկսեալ Գարասպազարէն (որ հիմայ գարա-սու կ'ըսուի) մինչև ի Սուրբաթ և Թէոդոսիա. լեռներն ու գաշտերը լեցուցին վանքերով ու եկեղեցիներով: Որչափ որ Ճենովացւոց ժամանակ զօրացան Ղրիմու Հայերը, նոյնչափ ալ սկըսան զրկանք և բանսարկութիւն կրել Թաթարաց ձեռքէն որ Ղրիմու գլխաւոր բնակիչներն էին. ուստի լսելով թէ շատ Հայեր կան Լեհաստանի մէջ և պատիւ ունին Լեհաց Թագաւորներուն առջև, ու հանգիստ և խաղաղ կ'ապրին, կամաց կամաց այն կողմերը գնացին. որով Ղրիմու Հայերը սկսան քիչնալ և աղքատնալ. այնպէս որ 1772ին երբոր Ռուսք Փէֆէ քաղաքը առին՝ երկը հազար տուն Հայ հազիւ կար կ'ըսեն բոլոր Ղրիմու մէջ: Իսկ հիմայ հազիւ թէ 1000 տուն Հայ գտնուի բոլոր Ղրիմու քաղաքներուն մէջ: Ղրիմի Հայոց գլխաւոր շահու գուն է վաճառականութիւնը. ամեն տարի կերթան Նիժնի-Նովկորոտ, Խարքով, և ուրիշ քաղաքներուն ծախավաճառները, ու մեծ վաստակ կ'ընեն:

9. Այս գլխաւոր գաղթականութիւններէն զատ՝ Հայք կը գտուին ի Բեդրսպուրգ և Մոսքուա, և ամենէն շատ Վրաստանի Տփղիս մայրա-

9. Ռուսստանի ուրիշ որ քաղաքներուն մէջ կը գտնուին Հայք:

(1) Այս մեծ քաղքիս աւերակները միայն կը տեսնուին հիմայ Սուրբատին քով, որ Խոէ Ղէյ կ'ըսուի:

քաղաքը: Այս քաղաքաց Հայ բնակիչքն կրնան արդի Հայաբնեան ամենէն կիրթ ուսեալ և քաղաքականացեալ անձինքն անուանիլ. այս բանիս շատ նպաստաւոր եղած են Մոսքուայի Լազարեանց ճեմարանը և Տիվլիսոյ Ներսիսեան վարժարանն, զոր հիմնած է Ներսէս կաթուղիկոսը: Ռուսաստանի Հայք ոչ միայն վաճառականութեամբ և արուեստներով յառաջադէմ են, այլ և պետութեան մէջ իրենց քաջ նախահարց արժանաւոր զաւակ ըլլալին ցուցած են. որով անբասիրութեան առջև արգիւնք առանալով ազնուականութեան բարձր պատիւներու ու երեւելի պաշտօններու ալ հասան: Զօրապետաց և քաղաքական պաշտօնից մէջ նշանաւոր եղան Յովհաննէս Լազարեան, որ Կրիմու Հայոց դէպ՚ի Ս. Լսեմու կողմերը վիճակագրութեան առեն շատ օգնութիւն ըրաւ անոնց: — Ալէքսանդր Ա. կայսեր առեն անուանի եղան Մխիթարեան Մանուկ Պէյ իշխանն, Մատաթեան իշխան մեծ զօրապետն Թարտարացին, Մխծին Նաբոլէոնի դէմ պատերազմից մէջ ալ երեւելի Հայ զօրապետներ կային. ինչպէս Տէլեան երկու եղբարք, Աբամելիք և Մելիքեան զօրավարք: Մելիքեանը պատերազմի առեն քաջութեամբ առաջ նետուելով ալ ձեռքը կորսնցուց. Տէլեան եղբարց մէկը պատերազմի մէջ մեռաւ, նմանապէս Յարութիւն Լազարեան՝ ձիաւոր զօրաց կարճ գնդապետն առաջին մը զարնուելով մեռաւ 1813 Լեռնից պատերազմին մէջ: Նիկողայոս Ա. կայսեր առեն Ազասի՝ որ սոսկական սպայ մ՚էր, Երեւանի առաջին ժամանակ մեծագործ քաղաքացիներէն ըրած է և վերջապէս հոն մեռաւ: Մատաթեան իշխանն Շուշիոյի պատերազմին առեն մեռաւ: Նշանաւոր եղած նաև Իշխանուգեան ընդհանուր մեծ զօրավարն և վերջապէս Հայկական նահանգին, և այլն և այլն:

10. Շատ մեծ անուն հանած է Լազարեան ազգատոհմն ալ, որ եկած է նոր Ջուղայէն, առանց առաջինն Եղիազար Եղիազարեանց նախ Աֆռէրեան եկաւ, յետոյ Մոսքուա քաղաքը բնակեցաւ իր չորս որգւովքը, և հոն գոհարներու վաճառականութեամբ Ասիոյ եւրոպիոյ ուրիշ քաղաքներու մէջ ալ հռչակուեցաւ: Իր Յովհաննէս որդին ուղեց Մոսքուայի մէջ Հայ մանկաւոյ դաստիարակութեան համար դպրոց մը կանգնել, 200,000 ռուբլի դնելով որոց համակալութեան գանձարանը, որպէս այն գումարին շահովը դպրոցը չնորհի և պահուի իր մեռնելէն եաքը: Իր Յովակիմ եղբայրն ժամ մը յառաջ բանալ ուզելով այդ վարժարանը, իւր առանձին գրամովը կանգնեց զայն 1814ին, 300,000 ռուբլի ծախք ընելով, առանց գալէլու եղբօրը ձգած գրամագլխոյն և անոր շահուն: 1825ին Նիկողայոս կայսրը յատուկ հրովարտակաւ տերութեան պաշտպանութեան առակ առաւ այս վարժարանս, ըստ ինգրոյ Լազարեան իշխանայ, և որպէս զի անկէ եկած աշակերտներն իրաւունք ունենան տերութեան պաշտօններու մտնել: Ռուսաց գիւաններուն մէջ այս վարժարանս 1828էն՚ի վեր կը կոչուի Հայկական Լազարեան ռասուծոբան արեւելեան լեզուաց տեղեակ թարգմաններ պատրաստել տերութեան համար, յետոյ Ռուսաստանի Հայոց համար ալ վարժապետներ ու եկեղեցականներ: Ռուսութիւնասէրն տերութեան կողմէն ընտրուած մնայնաւոր Ռուս խնամակալ ունի, բայց անմիջական հոգաբարձութիւնն և տեսչութիւնն Լազարեանց ձեռքն է:

10. Ի՞նչ գիտելիք կայ Լազարեան ազգատոհմին վրայ:

ԴԱՍ ԼԸ.

Գաղթականք Հայոց ի Լեհս, ի Մոլտաւիա, վալաքիա և Թրանսիլուանիա։

1. Երբ ԺԱ. դարուն մէջ Բագրատունիք սահմռկեցան Թագուհ զԱնի, բնակչաց մեծ մասն իրենց տաւնը տեղը Թագուհ Վլթմ անցան, անկէ ալ մաս մը Մոլտաւիա եկաւ և մեծ մաս մ՝ալ Լեհաստան. ուր հետզհետէ այս գաղթականութիւնն աճելով և մինչև 40,000 տուն եղաւ։ Լեհոյ Թագաւորները Հայոց յաջողակութիւնը տեսնելով շատ ազատութիւններ շնորհեցին ետքը, նաև զատ ազգայնութեան իրաւունք տուին, և առանձին ազգային Գլուխ մը դրին, որ Վայթ կ՝անուանէր։ Այս իրաւունքը մեծն Գազիմիր 1344ին նախ կամինեցի Հայոց շնորհեց, և ետքը 1356ին Լէմպէրկի Հայոց մանաւանդ հրովարտակներով, զոր իր յաջորդներն ալ հաստատեցին։ Ասկէ զատ անոնց 12 Հայազգի գատաւորներ դրին, որոնք Վայթին հետ ամեն գատաստան կը կատարէին։ Երկու դար ետքը, 1516ին, Լէմպէրկի մէջ Սիկիսմունդ Ա. Թագաւորին հրամանաւը Հայոց առաջին գատաստարանը շինուեցաւ։ Այս առեններս Թաթարաստանի Հայոց շատերն ալ Լեհաստան գալով առաջիններուն հետ միացան, և գաղթականութիւնն նոր պայծառութիւնմ՝ ունեցաւ. միանգամայն նոր փոփոխութիւն մ՝ալ կրեց։ Ի սկզբան Հայոց գատաստաններն հայերէն լեզուաւ կըլ-

1. Ե՞րբ գաղթեցին Հայք ի Լեհաստան։

ըային, բայց անոնց գալովը՝ որովհետև Թաթարերէնէ շատ ուրիշ լեզու չէին գիտեր, առաջինները սախալուեցան իրենց բնիկ լեզուն Թոդուշ և Թաթար լեզուն գատաստանի լեզու ընել։ Մինչև հիմայ այս լեզուաւ գրուած գաշնագիրներ, և ուրիշ գիրքեր Լեհաստանի մէջ կը գտնուին։ Բայց որովհետև Թաթարերէնն անկատար լեզու մ՝ըլլալով չէր կրնար ամեն բանի յարմարիլ, լատիներէնն ալ իբրև Լեհոց տէրութեան գատաստանական լեզու՝ սկսաւ գործածուիլ, և կամաց կամաց բոլոր Հայոց գատաստանագրութիւններուն մէջ մտնել։ 1662ին Նիկոլ Եալիսկոպան Հռովմայ Ալեքսանդր Պապէն հրաման խնդրեց Իլմոլի մէջ դպրոց մը հաստատելու, ան ալ 12 աշակերտաց համար դպրոց մը հիմնել տուաւ, և գատաստ խաբեց Կղեմէս Գալանոս լատին կրօնաւորը, որ նշանաւոր է Հայոց եկեղեցւոյն և վարդապետութեան վրայ հրատարակած ծուռ և շիտակ տեղեկութիւններովը։

2. Ինչ ժամանակուան մէջ Հայք Լեհաստանի ամեն երեսէն քաղաքները բանեցին իրենց տաւտաւրով, և վաճառականութիւնը բոլորովին իրենց ձեռքն անցուցին։ Տէրութեան գործոց մէջ ալ մտան և շատ ընտանիք իրենց մեծամեծ ծառայութեանց փոխարէն՝ ազնուականութեան պատիւ ընդունեցան, ոմանք մինչև Թագաւորին գըլխաւոր պաշտօնեից կարգը անցան։ Ազնուականութեան մէջ ալ շատ յառաջադիմ եղան և անոնց զօրապետները եղան մեջերնին, ոմանք ալ Թագաւորին Թիկնապահ ընտրեցան։

3. Երբ որ 1626ին Նիկողոս կամ Նիկոլ Թոփո-

2. Ի՞նչ բանէրու մէջ նշանաւոր եղան Լեհաստանի Հայք։

3. Ինչո՞ւ նուազեցաւ Լեհաստանի Հայոց Թիւը։

սովից անուշով քահանայ մը Ժողովրդեան կա-
մոյն Հակառակ Մելքիսեդ կաթողիկոսէն Եպիս-
կոպոս ձեռնադրուելով Լէմնէրկ քաղաքին մէջ
սկսաւ բռնանալ Ժողովրդեան վրայ, երբեմն Լե-
հաց տէրութեան և երբեմն ալ Լատին կրօնաւոր-
ներուն և Արքեպիսկոպոսին և մանաւանդ Յիսուսեանց ազատելով, խեղճ Ժողովուրդն 15
տարի տառապելով չկրցաւ իր իրաւունքները
ազատել. վերջապէս շատերն զղուած ձգեցին
քաղաքը և տպիս անդին սկսան ցրուիլ: Սկսե-
լի Նուազեցան Հայք երբ Լեհաց Թագաւորու-
թիւնն ալ վերցուեցաւ, և Լեհաստան երեք տե-
րութեանց մէջ բաժնուեցաւ: Հիմա Լեհաստանի
գաղթականութենէն 6000ի չափ Աւստրիոյ՝ Կա-
լեցիա և Պուքովինա գաւառներուն մէջ կը գըտ-
նուին, որոնցմէ շատերն երբեմն նախնեաց սեպհա-
կան հարստութիւնն, ազնուականութիւնն և ազա-
տութիւնները կը վայելէին: Այս վեց հազարէն
գրեթէ 300 ազնուագ կը գտնուին հիմա Սուչա-
վա քաղաքին մէջ և անոր շրջակայները. որք ե-
րեքէն գլուխ կը ճանչնան Էջմիածնի Կաթողի-
կոսն: Իսկ մնացած տեղեր գտնուող Հայք գրեթէ
բոլոր Հռոմէական են:

4. ԺԱ, և ԺԲ դարերուն մէջ Տատարաստանեան Հայք Մոլտաւիոյ (Պուղտանին) մէջ. բայց հիմայ
ընդ ամէնն 1000 տուն միայն են այլ և այլ քաղա-
քաց մէջ բաժնուած: Եաշի մէջ 800 Հայք կան,
որոնք ազգային կառավարութիւն ունին և վար-
ժարան մը, զոր ծաղկեցնելու աշխատած է պա-
տուաւոր անձն Պողդգնան Յակոբ: — Պոթո-
շանի Հայք 500 տուն են, 2 եկեղեցի ունին և
մանչ ազգայ ու աղջկանց վարժարաններ: Խոշ-
քոյ Պոկատնովիչ Իլվովցի Հայ լշխան մը ասկէ 25

4. Ո՞րքա՛ եկած են Հայք՝ի Մոլտաւիա:

տարի առաջ այցելութիւն ընելով Պոթոշանի
Հայոց, այսպէս կը պատմէ անոնց վիճակը: «Եատ
զարմացայ երբ տեսայ ասոնց գեղեցիկ և ընդ-
արձակ գաղրոցը, որուն մէջ 135 մանչ տղայք կը
սորվին ազգային լեզուն, գրականութիւն ու պատ-
մութիւնը... Ուրիշ զատ գաղրոց մ՚ալ տեսայ
աղջկանց, ի սէրեանեորով: Այս գաղրոցս բանա-
լուն՝ առաջ տանելուն և ուրիշ պիտոյքը հոգա-
լուն գլխաւոր օգնականն ու բարերարն եղած է
Գասպար Կոլաւ անուանով ազնուական, պատկա-
ռելի ու առատաձեռն պարոն. Պոթոշանեցի
Հայերն միաբերան կը վկայեն թէ այս բարերար
մարդուս արգեամբն է իրենց ուսումնասիրու-
թիւնը: Իր հարստութեան մեծ մասն այս գաղրո-
ցիս բարգաւաճանացը նուիրելէն եաև՝ անբաւ
գժուարութիւններ ալ կրեր է ինչուան որ գա-
ղութեամբ ամէն արգելից յաղթելով իր վեհանձ-
նական վախճանին հասեր է... Գէնացի տեսայ
այն պատուական անձը. ինքն է գաղրոցին տեսու-
չը, և անդադար մեծ գաղափարութիւն կուտայ
վարժապետաց և աշակերտաց»:

5. Կիլիկեցւոց Թագաւորութեան վերնալէն
եաքը եկած են Հայք՝ի Վալաքիա կամ Ուլահ,
որոնցմէ 10,000ի չափ մնացած են հիմայ: 1551
Վլատայ Սաեփանոս իշխանն շատ նեղից Հայերը
յաշտարական ընելու համար, և բանի 1000 տու-
նի չափ գարձընելով մնացածներուն վայ ալ
գառն հալածանք Հանեց. շատը գարաչար տան-
ջանքներով սպաննուց և շատերուն ալ սատուց-
ածքները յափշտակից: Պուքրեշի մէջ կան 2000
Հայ, որոնք Սուրբ Հրեշտակապետ անուանով ե-
կեղեցի մ՚ունին և մեծ վարժարան մը, զոր
հիմնած է Մխիթարեան ամիրան: Գարուս սկիզբը

5. Ո՞րչափ Հայք կան՝ի Վալաքիա:

Մանուկ Պէյն մեծ կարաւանատուն մը կանգնած էր հոս իր անունովը, որ յետոյ այրեցաւ։

6. Մալաւախ եկած Հայոց մէկ մնան ալ՝ 1671ին Օսմանեանց և Լեհաց մէջ բացուած պատերազմին պատճառաւ փախած եկած են Թրանսիլվանիոյ լեռանց վրայ, որ ըստ Մաճառաց կ՚ըսուի Եօրաէլի–Օրցակ, այսինքն Անտառային իշխանութիւն, կամ Սրտեալ։ Քանի մը տարի ի՛րենց երկիրը գառնալու սպասելէն ետքը՝ Մելքսէթ Ս. Աստիճ իշխանէն խնդրեցին Հայք Թրանսիլվանիա մնալ, որուն հաւանեցաւ իշխանն ալ. հոն հաստատուելէն վերջը սկսան տաճկաց ջանքով վաճառականութեան պարապիլ։ Թրանսիլվանիոյ իշխանները և յետոյ Աւստրիոյ Կայսերը տասնց ժրութեան օգնելու համար, տաճն տան շատ արտատութիւններ շնորհած են. անոնց ազգային գատաւորներ ալ տալով։

7. Ընդհանրապէս 7 կամ 8 հազար Հայ կը համրուի հիմայ Թրանսիլվանիոյ մէջ. և իրենց բնակած քաղաքներն են՝ Ճորճով, կամ Տյէոիոյ որուն իշխաններն Հայ են և քաղաքին կառավարութիւնն ալ իրենց ձեռքն է։ Եղիսաբեթու Պօլիս կամ Եպէշֆալուս կամ Պաշվալով, որուն բնակչաց կէսը միայն Հայ են, մնացածը Մաճառ, Ուլահ և Սաս։ Երեքի է ազգային Մայր եկեղեցին, որուն նմանը գրեթէ բոլոր Թրանսիլվանիոյ մէջ չկգտուիր։ Սամշը–Ույվար կամ Ամֆինիէնդատ, այսինքն Հայաքաղաք, որ և կեռլա. զոր 100,000 ոսկիի դնեցին Հայք և շատ զարգացին։ Կարոլոս Զ Կայսր առանձին հրովարտակք թագաւորական ազատ քաղաք ըրաւ կեռլա և Ե.

6. Ի՞նչ տեղեկութիւն կայ Թրանսիլվանիոյ Հայոց վրայ։

7. Ո՞րչափ Հայք կան Թրանսիլվանիա։

պէշֆալոյ քաղաքները, հնորհելով անոնց ազգային դատարան 12 անդամով, ծերակոյտ մը, և Պէյհ անուամբ քաղաքապետ մը. բայց 1849 Մաճառաց խռովութեան առեն՝ Հայերն ալ ապատամբեալ կողմն բռնելնուն պատճառաւ՝ իրենց ազատութեանց մեծ մասը կորսնցին։ Բայց անհանգիստ աշխատանքը Հարստութեանց տէր ըլլալով սկսան կամաց կամաց դէպ ի Մաճառատան տարածուիլ և հոն ընդարձակ կալուածներ գնեցին։ Մէջերնին շատ գիտուն մարդիկ տէրութեան պաշտօներուն մէջ ալ մնան և մեծ արգիւնք ցուցած են, որոնց փոխարէն Աւստրիոյ Կայսերը, մանաւանդ Մարիամ–Թերեզիա Կայսրուհին շատ ընտանիքներու ազնուականութեան պատիւ շնորհած է։ Մինչև հիմայ լեզ Մաճառատան և լեզ Թրանսիլվանիոյ մէջ շատ Հայազգի գատաւորներ, գատաստանապետներ, զօրապետներ և ուրիշ երեւելի պաշտօնատարք կը գտնուին, և տէրութեան առջև մեծ յարգ ստացած են։

ԴԱՍ ԼԹ.

Իտալիոյ և Գաղղիոյ մէջ գաղթական Հայք։

1. Ուսումնասիրութեան առիթ ունեցած են Հայք յաճախել՝ Վենետիկ առևտուրի պատճառաւ. բայց ասկէ ԺԴ դարուն մէջ սկսեր են հոն բնակութիւն հաստատել Ջուղայեցի հարուստ վաճառականներ։ Թէ առաջին և թէ երկրորդ գաղթականներն՝ Վենետիկցիներէն շատ սիրով ընդունելութիւն գտան և հասարակապետութենէն մեծամեծ ազատութիւններ առին։ Այս ազատութիւններէն մէկն ալ էր Սուրբ Մարկոսի հրապարակին մէջ (որ Վենետիկոյ ամենէն մեծ և փառազարդ շէնքերէն է) մայր եկեղեցւոյն առջեւ՝ վրաններով նստիլ, ու գոհարեղէններ, մրգաբոյսեր, Պարսկաստանի և Հնդկաստանի շալեր և ուրիշ ապրանքներ ծախել։ Այսուհանդերձ այս վաճառականութենէն թէպէտ հետզհետէ պակսեցաւ. վասն զի ոմանք օսար երկիրներ գնացին, ոմանք վաճառականութիւնը ձգեցին, կամ ալ քաջացան, ոմանք ալ տեղացի խառնացուց հետ խառնուելով ինքնութենէնդ, կամ կամաց կամաց բոլորովին խառնացան. և մինչև հիմայ կը գտնուին իրենց ծառայութիւնը, որ Հայ մականուն կը կրեն բայց Հայերէն ամենեւին չեն գիտեր։ Այսչափով գարուս սկիզբը 10 խանութէ հաղիւ մնացեր էր Սուրբ Մարկոսի հրապարակին մէջ, իսկ հիմայ և ոչ մէկ հատ։

1. Ի՞նչ գիտէք կայ Վենետիկոյ Հայոց վրայ։

2. Վենետիկ քաղաքին այսչափ ծաղկեալ Հայն՝ այս օրուան օրս ուրիշ բան չիգտնեը իր հայրենակիցներուն երթալն հոն ներկայութենէնը վերջ, բայց եթէ փողոցի մ'անուն (calle degli Armeni) ըսուած։ Թարգմանչ Հայերէն գրով շատ մը տապանաքարեր որ կը գտնուին Սուրբ Գէորգ կղզւոյն եկեղեցւոյն քով, և Սուրբ Մարկոսի եկեղեցւոյն ճակատն ալ կրանիտ սիւներու վրայ քանի մը Ջուղայեցի և Երեւանցի վաճառականաց փորագրած անուններըը ԺԶ-ԺԸ դարուց միջոց։

3. Բայց ամենէն նշանաւոր յիշատակն է Հայոց փողոցին մէջ Սուրբ Խաչ եկեղեցին, որուն շինութենն այսպէս եղած է։ Վենետկոյ Պետրոս Տոժին որդին Մարկոս Մինոտ՝ ուրիշ բարեպաշտական գործերէն զատ, 1253ին տաճարները կատարեալ տուն մը Թողուց Հայերուն, երբև հիւանդոց, որպէս զի պանդուխտ Հայք հոն բնակին։ Անկէ քիչ առաջ բարեպաշտ ծերունի Հայ մ'ալ Յովհաննէս դրամի գումար մը կատարէ ձգեր էր, որպէս զի անով քաղաքին մէջ Հայոց համար տուն մը գնեւսլ և պզտիկ եկեղեցի մը շինել։ Կատարուեցաւ իր խնդիրը. սակայն ժամանակաւ եկեղեցին երեսի վրայ մնաց, տունն ալ օտարներու ձեռք անցաւ, մինչդուն որ 1496ին նորէկ Հայեր խնամալով իրենց ազգակցին կտակը, գոզնեցին Սուրբ Մարկոսի գործակալներուն, որոնց յանձնուած էր եկեղեցւոյն խնամքը, նորէն առացան զայն։ Բայց որովհետեւ այն եկեղեցին շատ պզտիկ էր, 1675ին Գրիգոր Կիպրացի Մխիթարեան անունով բարեխիղճ Հայն սկսաւ իր ծախքովը հիմնովին շինել ալ աւելի ընդ-

2. Ի՞նչ յիշատակ ձգած են Հայք ի Վենետիկ։
3. Վենետկոյ Հայոց Սուրբ Խաչ եկեղեցին ե՞րբ շինուած է։

դարձակ, որ և 1691ին լինցաւ և մինչև հիմա կ՚ապրի է: Ամեն տարի մայիսի 3ին փառաւոր հանդիսով կը տօնուէր վերկիսական խաչին դիւտը, և պատարագին առաջնիկայ կ՚ըլլային Սուրբ Մարկոսի գործակալներն, մեծամեծ իշխանք և ազնուականք, քաղաքին պատրիարքն, և ուրիշ աղգային և օտարազգի քահանայք, և ամեն եկողներուն տեսակ տեսակ հոտաւէտ ծաղիկներ կը բաժնէին: Հիմա այս եկեղեցին Մխիթարեանց ձեռքն է, և հին սովորութեան համեմատ ամեն տարի հանդիսաւոր պատարագ կը մատուցուի գիւտ խաչին տօնին օրը, որուն ներկայ կ՚ըլլան նոյնպէս շատ քաղաքացիք:

4. Յիշեալ Մխիթարեանց Միաբանութիւնը հաստատուց սեբաստացի Մխիթար վարդապետն որ իբր Ժամանակին ոգեւ նախահայրերուն շատ հարստանք կրնէին եաքը, Մօտայի Թէոդոսդոյն Մեծին քաղաքին մէջ վանք մը հաստատից, վենետկեցւոց պաշտպանութեան ներքեւ. այլ երբ 1715ին Տաճիկները յարձակեցան ի Մոռա, աճապարեց փախաւ Վենետիկ իր միաբանները, և Հասարակապետութենէն ընդունելով ի մշտնջենաւոր բնակութիւն Սուրբ Ղազարու կղզեակը, հոն շինեց և հաստատեց իր վանքը: Մխիթարայ նպատակն ըլլալով կրօնից ճշմարիտ վարդապետութեան հետ գաւոխարհութիւն և ուսմունքներ ալ ծաղկեցնել իր ազգին մէջ, սկսաւ գրքեր հրատարակել, և տպագրատուն ալ հաստատեցաւ իր վանաց մէջ: Յամին 1836ին ալ Ռափայէլ Ղարամեան հնդկահասանցի հարուստ Հայ վաճառականին ձգած դրամագլխովը՝ վարժարան մը բացաւ Մխիթարայ Միաբանութիւնն

4. Երբ հաստատուեցաւ Մխիթարեանց Միաբանութիւնն ի Վենետիկ.

Վենետիկ քաղաքին մէջ, որ իր բարերարին անունովը կ՚ըսուի Ռափայէլեան վարժարան: Թէպէտ և ազգին կեդրոններէն հեռու իբրև մնացուած տեղ մը տանձացեալ է այս վանքս, սակայն 150 տարուընէ ի վեր ոչ սակաւ ծառայութիւն ըրած է ազգին իր հրատարակած տեսակ տեսակ գրքերովը և կրթած հանճարեղներով: Խոնարհ Մխիթարայ մտքէն չէր անցներ երբեւ՝ որ օր մը իր հանդիսած անշուք միաբանները պիտի պատուէին այսչափ թագաւորական գլուխներ, և անուանի դիտուններ: Երբ 1793ին գաղղիացիք Վենետիկին առին, և Նաբոլէոն զօրապետն վճռեց որ ամեն կրօնական ընկերութիւնք ջնջուին, խնայեց այս Հայոց միաբանութեանը. նոյնպէս վարուեցաւ նաև մեր օրերուն Խաալացւոց կառավարութիւնն յամին 1867: Մխիթարեանց վանք մ՚ալ հաստատուած է ի Վիէննա մայրաքաղաքը Աւստրիոյ, ուր մեծ տպագրատան մ՚ալ ունին, և հայերենէ զատ շատ գեղմաներէն գրքեր ալ տպագրած են:

5. Իտալիոյ ուրիշ շատ քաղաքաց մէջ ալ ԺԹ–ԺԶ դարուց միջոց հաստատուած կային Հայոց վանք և եկեղեցիք. որոցմէ ինչուան մեր օրերս կը մնային կոստանդ վանք մը Յունգոնայ և եկեղեցիք ի Լիվոռնայ և Հռոմ: — Գաղղիոյ մէջ ալ ի Բարիզ և Մարսիլիա քաղաքներէը շատ Հայեր կու գային ԺԷ դարուն մէջ. Բարիզու մէջ, առաջին սրճանոցը բացողն՝ Յարութիւն անունով Հայ մ՚եղած է 1672ին. Մարսիլիոյ մէջ ալ Սբկիճ տաճկական (le cancelier Seguier) տպարան մը շնորհած էր Հայոց, ուսկից հրատարակուած են զանազան գրեանք: Ռիշլիէօ ծերանալուն որ

5. Եւրոպայի ուրիշ որ քաղաքներուն մէջ հաստատուած են Հայք:

Գաղղիոյ վաճառականութիւնը զարգացընել կ'ուզէր, մտածեց շատ Հայեր կանչել Գաղղիա, ազատութիւններ տալով. ինչպէս որ 1853ին ալ Ալճերիին Հայ գաղթականներու ձեռքով մշակելու և ծաղկեցնելու համար՝ յատուկ գրութիւնք հրատարակուեցան:

6. Հոլանտայի Ամստերդամ քաղաքն ալ ծիլ գարձն'ի վեր կը յաճախէին Պարսկաստանի և յետոյ Հնդկաստանի վաճառական Հայք, և փառաւոր եկեղեցի մ'ալ շինեցին որ մինչև հիմա կեցած է: Այս քաղաքս վաճառականութենէն աւելի ծանօթ է մերազնեաց հայկական տպագրութեան հոն ծաղկելուն պատճառաւ. վասն զի Ամստերդամի մէջ փորագրուեցաւ մեր առաջին այբուբենն, որ գեղեցիկ ձևովն և մաքրութեամբը անկէ առաջ կամ եաքը փորուածներէն շատ վեր է: Ծարեցի Մաամէտս վարդապետը 1660ին երկու տեսակ գիր փորել տուաւ հոն, Ջեզ և Խլով, բայց ինքը շուտով վախճանելով, Երևանցի Ոսկան վարդապետին Աւետիս եղբայրը լմնցուց գործը: Իսկ այս Ոսկան վարդապետս նօսր գիր ալ փորել տուաւ մէկակ գրին համեմատ, ու 1666ին Յակոբ կաթողիկոսին հրամանովը Ամստերդամ տպագրեց: Իր վախճանելէն եաքը այն գրին կաղապարները գտնուեցան, և Մաամէտս վանականքեցին որ ազգէկ գիրեր տպագրութեան արհեստը և Ոսկանին հետ մեկտեղ աշխատեր էր, նոր գիր փորել տուաւ, և այլ և այլ գրքեր տպագրեց:

6. Հոլանտայի մէջ ինչ յիշատակ թողած են Հայք:

ԴԱՍ Խ.

Եւրոպայեան դուռս Հայ գաղթականութիւն.

1. Տեսանք արդէն թէ ինչպէս Պարսկաստանի Շահաբաս Թագաւորին հրամանաւ բազմութիւն Հայոց բռնաբար հատուած գնացին 'ի Պարսկաստան, և 'ի յիշատակ իրենց Ջուղա քաղաքին, զոր Պարսիկներն այրեր էին, չնեցին Նոր Ջուղան Աստուածանի քով: Շահաբաս որովհետև Հայոց ձեռքով իր երկրին արուեստներն և գնաւորապես վաճառականութիւնը ծաղկեցընել կ'ուզէր, սկսաւ մեծ սէր ցուցընել անոնց, և մեծ-ամեծ պատուհասներ շնորհեց, ազգային քաղաքապետ մ'ալ տուաւ, որ բերքը թեթևցուց, հրամայեց որ արձակ համարձակ պաշտեն իրենց կրօնքը. ինքն ալ շատ անգամ հանդիսաւոր ժողովը Հայոց եկեղեցին կ'երթար, տեսնելով Հայոց մեծամեծներուն տունը կերակուր կ'ուտէր, և երբ Հայու և Պարսիկ մէջ դատ բացուէր՝ Հայուն կողմը կը բռնէր: Հայոց երբ Նաադր Շահն մեռնուանէն եաքը (1750) Պարսկաստան մեծ խռովութիւն ընկաւ, Հայք ալ շատ վնաս և նեղութիւն կրեցին, և սկսան ուրիշ երկիրներ ցրուիլ: Այդհետ Պարսիկք Հայոց այնչափ յառաջանալուն և հարստանալուն վրայ նախանձելով շատ կը բռնա-

1. Ի՞նչ գիտեմք կայ Պարսկաստանի Հայոց վրայ:

նանային մնացածներուն վրայ ու կը տառապեցնէին զիրենք, և ասկից անհաշտելի տաբերութիւն մը մնաւ մէջերնին. ասոր համար երբոր 1828 Թուականէ հետ ազատ գաղթականութեան դաշնիք դրուեցաւ, 40 հազար Հայ Թաւրիժու քաղաքապետ Եղիազար Յ. Լազարեանին առաջնորդութեամբ անցան Թուականան: Հիմայ հազիւ 80,000 Հայք կը գտնուին Պարսկաստանի մէջ, բայց անոնք ալ իրենց առաջին պայծառութիւնն ու հարստութիւնը չունին:

2. Հնդկաստանի Հայերն Պարսից Հայ գաղթականութեան մէկ մասը կրնան համարուիլ. վասն զի ամենէն առաջ Նոր Ջուղայի վաճառական Հայերն այն կողմերը երթալով բնակութիւն ալ հաստատեցին, և եաւէ եաւ ուրիշ տեղերէն իրենց քովն եկող ազգակիցներն ընդունելով ու մէջերնին խառնելով գաղթելոց թիւը շատցուցին: Թէպէտ և քիչուոր էր այս վաճառականի ժողովուրդս (ըստ ոմանց 20,000 և ըստ այլոց 10,000) բայց իր ձարտարութեամբը Հնդկաստանի մեծագոյն մասը գրաւած էր Աղգեանցւոց հաստատութենէն շատ յառաջ: Երկրին թագաւորներն ունին տեսակ ազատութիւն տուած էին Հայոց, և մէջերնէն շատերը մեծ զօրապետի, ռաճայի (իշխանի) աստիճան, և ուրիշ մեծ պատիւներ և պաշտօններ ունէին և այնչափ մեծ էր իրենց ազդեցութիւնն, որ ուզածնուն պէս կը շարժէին երկրին բնիկ տէրերը: Բայց երբ Աղգեանցիք Հնդկաստանի տիրեցին՝ Հայոց յաջողութիւնն շատ նուազեցաւ. Թէ և մինչև այս օր Պոմպայ, Կալկադա, Մատրաս, Պաթնէա, Սինկափուր և ուրիշ եւեւէլի քաղաքներու մէջ կը գտնուին շատ

2. Ի՞նչ գիտեմք կայ Հնդկաստանի Հայոց վրայ:

Հայազգի ընտանիք, որոնք ազատօրէն Հնդկաստանի այլ և այլ կողմերու վաճառականութիւնը բռնած են:

3. Շատ նշանաւոր եղած է Հնդկահայոց ուսումնական և ազգասիրական շարժումն. Այդ բարեխնդիր ընկերութիւն անուանով ժողով մը հաստատեցին, որոյ արդիւնքն են՝ Կալկադայի ազատագրատունն և Մխիթարեան Ճեմարանն. Գաղղիերէն և Անգղիերէն լեզուներէ շատ ընտիր գրութիւնք ալ գրաբառ թարգմանուած և հրատարակուած են. առաջին անգամ Ֆենելոնի Տելէմաքը Հայացընելու մտածութիւնն ալ Հնդկաստանի ազգային մ'ունեցած է: Բայց ամենէն աւելի Հնդկաստանի Հայոց պատիւ բերին և իրենց ազգասիրութիւնը անմահացուցին երկու հարուստ վաճառականք, Սամուէլ Մուրատ և Յակոբէ Եգուարդ Պարսամեան. ազգային աղքատ և որբ ազգայոց դաստիարակութեան համար մէկմէկ դիշերօթիկ վարժարան հաստատելով: Այս վարժարաններուն որոնք իրենց հիմնագրաց անուամբը Մուրատեան և Յակոբէեան կը կոչուին, որոնց մատակարութիւնն եւսւսումնական տեսչութիւնն յանձնուած է բարերարներուն կտակովը՝ Վենետկոյ Մխիթարեանց, բացուած են, առաջինն Իսմիրոյ Բաղուա քաղաքը 1834ին, ուսկից 1846ին փոխադրեցաւ ի Փարիզ. իսկ երկրորդն ի Վենետիկ, 1836ին: Մօտ տարիներս Մարիամ Յարութեանեան տիկինն ալ իր ծախքով աղջկանց համար վարժարան մը հիմնեց Հնդկաստանի մէջ: Կը թողունք յիշել Տաճկաստանի մէջ այս եղբ. 20 կամ 30 տարուան մէջ հաստատուած վար

3. Ուսմանց մէջ ինչ յառաջադիմութիւն ըրած են Հնդկաստանի Հայք.

ժառանգները, և ուսուցիական չարժուժը, միանգամայն և քաղաքակրթական ջանքը, իբրև հաստատակաց ծառօթ բաներ, մնանաւանդ որ կոստանդնուպօլսի և Զմիռնիոյ հայկրէն լսագիրք ամեն ազգային նշանաւոր դիպուած կը հրատարակեն չուտով և մանրամասնաբար։

ԿԱՐԳ

ԹԱԳԱԻՈՐԱՑ ԵՒ ԻՇԽԱՆԱՑ

ՀԱՑԿԱԶՈՒՆՔ

Քրիստոսէ առաջ

2107 Հայկ Ծ.
2026 Արմենակ ԽԶ.
1980 Արամայիս Խ.
1940 Ամասիա ԼԲ.
1908 Գեղամ Ծ.
1858 Հարմա ԼԲ.
1827 Արամ ԾԸ.
1769 Արայ ԻԶ.
1743 Կարգոս ԺԸ.
1725 Անուշաւան Կ.
1662 Պարէա Ծ.
1612 Արբակ Խ.
1568 Զաւան ԼԷ.
1531 Փառնակ Ա. ԾԳ.
1478 Սուր ԻԵ.
1433 Հաւանակ Լ.
1403 Վաչտակ ԽԲ.

1381 Հայկակ Ա. ԺԸ.
1363 Ամբակ Ա. ԺԹ.
1349 Ասնակ ԺԷ.
1332 Շաւարշ Ա. Զ.
1326 Նորայր ԻԹ.
1302 Վահամ ԺԹ.
1289 Կաբ Գ.
1285 Գոռակ ԺԸ.
1267 Հրանտ Ա. ԻԷ.
1242 Ընձակ ԺԵ.
1227 Գրակ Լ.
1197 Հօրայ Գ.
1194 Զարմայր ԺԲ.
1180 Շաւարշ Բ. ԽԳ.
1137 Պերճ Ա. ԼԵ.
1102 Արբուն ԻԷ.
1075 Պերճ Բ. Խ.
1035 Բագրեւիկ Ծ.
985 Հայ ԽԳ.
941 Յուսակ ԼԱ.
910 Ամբակ Բ. ԻԷ.
883 Կայսրակ ԽԵ.
838 Փառնաւազ Ա. ԺԷ.
805 Փառնակ Բ. Խ.
765 Սկայորդի ԺԷ.
748 Պարոյր Ե.
743 Պարոյր Թագաւոր կը սպակուի ԽԳ.
700 Հրաչեայ ԽԲ.
678 Փառնաւազ Բ. ԺԳ.
665 Պաճոյճ ԼԵ.
630 Կոռնակ Ը.
622 Փաւոս ԺԷ.
605 Հայկակ Բ. ԼԶ.
569 Երուանդ Ա. Գ.
565 Տիգրան Ա. ԽԵ.

320 Վահագն ԻԷ.
493 Աւաւան ԺԸ.
475 Նեբսէհ ԼԵ.
410 Զարեհ ԽԶ.
394 Արմոգ Թ.
385 Բայգամ ԺԳ.
371 Վան Ի.
351 Վահէ ԻԳ.

Կոռոնեան

325 Մխիթան Ե.
319 Նէոպտղոմէոս Բ.
317 Սդուարդ ԼԵ.
284 Հրանտ Բ. ԽԵ.
239 Արտաւազդ Ծ.
189 Արտաշես Լ.
159 Արտաւազդ Ժ.

ՍԲՇԱԿՈՒՆԻՔ

149 Վաղարշակ Ա. ԻԲ.
127 Արշակ Ա. ԺԳ.
114 Արտաշէս Ա. ԻԵ.
89 Տիգրան Բ. ԾԳ.
55 Արտաւազդ Ա. Ե.
30 Արշամ Խ.
1 Աբգար Լ.

Քրիստոսէ ետքը

30 Աբգար քրիստոնեայ կ'ըլլայ.
34 Անանէ Գ.
38 Սանատրուկ Լ.
68 Երուանդ Բ. Ի.
88 Արտաշէս Բ. ԽԱ.
129 Արտաւազդ Բ. Բ.

131 Տիրան Ա. ԻԱ.
152 Տիգրան Գ. ԻԲ.
194 Վաղարշ Ի.
214 Խոսրով Ա. Խե.
257 Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կը ծնանի.
259 Աբգարէր Հայոց թագաւորի կը թէրէ Իե.
283 Շապուհ Երկու պոլի.
286 Տրդատ ԾԶ.
301 Սուրբ Հռիփսիմեանք կը նահատակուին.
302 Տրդատ աղգովիմբ կը մկրտուի ու քրիստոնեայ կ'ըլլայ.
319 Տրդատ ու սուրբ Գրիգոր Հռոմ կ'երթան.
341 Տրդատ կը մեռնի.
344 Խոսրով Բ. Թ.
353 Տիրան Բ. ԺԱ.
363 Արշակ Բ. ԺԸ.
381 Պապ Գ. կամ Ի.
383 Մեծն Ներսէս կ'սպաննուի.
384 Վարազդատ Բ.
386 Արշակ Բ. Գ.
Վաղարշակ Բ. Ա.
388 Խոսրով Գ. Դ.
392 Վռամշապուհ ԻԱ.
406 Սրբոյն Մեսրոպայ ձեռքովը Հայու նշանագիրերը կը հնարուին.
415 Շապուհ Դ.
422 Արտաշիր Զ.

Թագաւորք Վէրին Հայոց
Ք. Ա.

27 Արտաշէս ԺԱ.
16 Տիգրան փոքր ԺԸ.
2 Երուազ 00.
2 Տիգրան Դ.

Քրիստոսէ առքը.
6 Ապրատ արծրունի ԺԴ.
19 Վռնոն Բ.
Արշէս Բ.
21 Զենոն Արտաշէս ԺԷ.
38 Արշակ ուրի ամիս.
38 Մխիթարա ԺԶ.
55 Հռոմիղդ եօթը ամիս.
55 Տիրիթ Է.
60 Տիգրան Գ.
63 Տիրիթ (վերստին) Թ.

Մարզպան

428 Վահմիհրշապուհ ԺԴ.
442 Վասակ Ժ.
451 Վարդանանք կը նահատակուին.
452 Ատրոմիղդ ԺԲ.
464 Արտվէնասպ ԺԷ.
481 Սահակ Ա. Ա.
483 Շապուհ, վեց ամիս.
484 Ինդեհան, եօթը ամիս.
485 Վահան ԻԶ.
511 Վարդ Դ.
515 Ռուբդան Գ.
518 Մժեժ Է.
548 Դենշապուհ Դ.
552 Վահեվահրամ Զ.
Հայոց տօմարը կը նորոգուի, և անկէ կը սկսի Հայոց Թուականը ՏՏՀին.
558 Վարազդատ Զ.
564 Սուրէն Է.
571 Վարդան Է.
578 Մխիթար ԺԵ.
593 Սմբատ Ը.

601 Դաւիթ Իդ.
625 Վարազտիրոյ Լ.

ԿԽԲԱՊԱՂԱՊՓ

632 Դաւիթ Դ.
636 Թէոդորոս Լ.
643 Վարազտիրոյ, ուէթ ամիս.
644 Ամբատ Ժ.
654 Համազասպ Ե.
659 Գրիգոր Իդ.
685 Աշոտ Դ.
690 Ներսէհ Դ.
695 Ամբատ Թ.
743 Աշոտ ԺԵ.
760 Սահակ Բ. Զ.
835 Բագրատ ԺԴ.

ՈՓՔԱՆՓ

693 Աբդլա Բ.
704 Հաշմ ԺԴ.
717 Վիլէմ Ժ.
727 Մահմէտ Ե.
732 Աբդլազիզ Ժ.
742 Մրուան Ա.
758 Եզիտ Ա. Բ.
766 Սիւէյման Գ.
769 Պէքիր Թ.
778 Հասան Գ.
786 Եզիտ Բ. ԺԲ.
798 Խուզիմայ Ի.
818 Հոլ ԺԷ.
848 Ամպասէթ Ա.
850 Բուղայ Ե.
855 Շէխի Դ.

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

859 Աշոտ Ա. ԻԶ.
885 Աշոտ Ա. Թագաւոր կը պսակուի ամիրա-պետէն, ու հինգ տարի կը Թագաւորէ.
890 Սմբատ Ա. ԻԳ.
908 Գագիկ Արծրունի Թագաւոր կ'ըլլայ Վասպուրականի.
914 Աշոտ Բ. ԺԳ.
928 Աբաս ԻԳ.
952 Աշոտ Գ. ԻԶ.
977 Սմբատ Բ. ԺԲ.
989 Գագիկ Ա. ԻԹ.
1020 Յովհաննէս Ի.
1042 Գագիկ Բ. Գ.
1046 Բագրատունեաց տէրութիւնը կը վերցուի.
1079 Գագիկ Բ. կ'ապաստանի.

ԹԱԳԱՒՈՐՔ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Ե ԿԱՐՈՑ

908 Գագիկ Արծրունի ԻԹ.
921 Աշոտ Շապուհեան ԺԵ:
937 Դէրենիկ Աշոտ ԺԶ.
953 Աբուսահլ ԺԹ.
962 Մուշէղ ԻԳ.
972 Աշոտ Սահակ ԺԳ. Գուրգէն Խաչիկ ԼԲ. Սենեքերիմ ՃԵ.
1022 Սենեքերիմ Աբասախա կ'անցնի.

ՌՈՒԲԻՆԵԱՆՔ

1080 Իսահակն Ա. ԺԵ.
1095 Կոստանդին Ա. Ե.
1100 Թորոս Ա. ԻԳ.
1123 Լեւոն Ա. ԺԵ.

1144 Թորոս Բ. ԻԴ.
1168 Թովմաս Պայլ Ա.
1169 Մլեհ Ե.
1174 Ռուբէն Բ. ԺԱ.
1185 Լևոն Բ. ԺԴ.
1198 Լևոն Բ. Թագաւոր կը պսակուի և կը թագաւորէ ԻԱ տարի.
1219 Զաքէլ Ա.
1220 Փիլիպպոս Բ.
1224 Հեթում Ա. Խե.
1269 Լևոն Գ. Ի.
1289 Հեթում Բ. Գ.
1293 Թորոս Գ. Բ.
1296 Սմբատ Բ.
1298 Կոստանդին Բ. Բ.
1300 Հեթում Բ. վերստին Ե.
1305 Լևոն Դ. Գ.
1308 Օշին ԺԲ.
1320 Լևոն Ե. ԻԲ.
1342 Կոստանդին Գ. Ա.
1343 Գուիտոն Բ.
1345 Կոստանդին Դ. ԺԸ.
1365 Լևոն Զ. ԺԱ.

ՑԱՆԿ

ՄԱՍՆ Ա.

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶՆԵՑ

ԳԱՍ Ա. Հայկէն սկսեալ ինչուան Արամ. 9
ԳԱՍ Բ. Արամէն ինչուան Պարոյր . . . 13
ԳԱՍ Գ. Պարոյրէն ինչուան Հայկազանց թագաւորութեան կործանիլը . և հաւատակալ իշխանութիւնը . . 17

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵՑԻՑ

ԳԱՍ Դ. Արշակէն սկսեալ ինչուան Արտաշէս Ա. 22
ԳԱՍ Ե. Արտաւազդ Ա. Արշամ և Աբգար. 28
ԳԱՍ Զ. Անանէ, Սանատրուկ, և Երուանդ. 32
ԳԱՍ Է. Արտաշէս երկրորդէն ինչուան Տրդատ 35
ԳԱՍ Ը. Տրդատ և Խոսրով Բ. 39
ԳԱՍ Թ. Տիրան և Արշակ 43
ԳԱՍ Ժ. Պապ և Վարազդատ 47
ԳԱՍ ԺԱ. Խոսրով Գ. Վռամշապուհ և Արտաշէս Գ 50

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿԸ

ԳԱՍ ԺԲ. Վհոմիհրշապուհ և Վարդանանց պատերազմը 55
ԳԱՍ ԺԳ. Ատրոմիզդ և Ատրներսեհ և Վա-

Հանձայ ըրած պատերազմները . 60
ԴԱՍ ԺԴ. Վարդէն ինչուան Սմբատին Կիւրապաղատութիւնը . . . 65
ԴԱՍ ԺԵ. Սմբատ Կիւրապաղատէն ինչուան Բագրատունեաց Թագաւորութեան կանգնուիլը 70

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԴԱՍ ԺԶ. Աշոտ Ա. և Սմբատ Ա. . . . 75
ԴԱՍ ԺԷ. Աշոտ Բ. Երկաթ և Աբաս . . 79
ԴԱՍ ԺԸ. Արծրունեաց կամ Վասպուրականի աշխարհին Թագաւորութիւնը. Աշոտ Ողորմած ու Սմբատ Բ. 82
ԴԱՍ ԺԹ. Գագիկ Ա. և Յովհաննէս Սմբատ . 85
ԴԱՍ Ի. Գագիկ Բ. և Բագրատունեաց Թագաւորութեան կործանիլը . . 87

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

ԴԱՍ ԻԱ. Ռուբէն Ա. Կոստանդին Ա. Թորոս Ա. Լեւոն Ա. Թորոս Բ. Մլեհ և Ռուբէն Բ. 93
ԴԱՍ ԻԲ. Լեւոն Բ. Փիլիպպոս ու Հեթում Ա. Լեւոն Գ. 97
ԴԱՍ ԻԳ. Հեթում Բ.ին ինչուան Ռուբինեանց Թագաւորութեան կործանիլը 100
ԴԱՍ ԻԴ. Ռուբինեանց ազգութեան կործանելին ինչուան մեր աւուրն եղած դէպքերը 105

ՄԱՍՆ Բ.

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶՈՒՆՑ

ԴԱՍ Ա. Մեր ազգին սկիզբը. Հայկայ ազգատոհմութիւնը, Բելայ հետ ըրած պատերազմը, և իրեն կատարելութիւնները ու մահը . 109
ԴԱՍ Բ. Հայկայ յաջորդները ինչուան Ա. րամ 113
ԴԱՍ Գ. Արամ և իրեն քաջութիւնները . 115
ԴԱՍ Դ. Արայեն Եամիրամայ հետ ըրած պատերազմը, ու Եամիրամայ գործքերը 119
ԴԱՍ Ե. Պարեհաէն սկսեալ ինչուան մեծն Տիգրան 124
ԴԱՍ Զ. Մեծն Տիգրան ու իրեն քաջութիւնները 128
ԴԱՍ Է. Վահագն ու անոր յաջորդները:— Հայկազանց Թագաւորութեան վերջանալը 133

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ

ԴԱՍ Ը. Արշակունեաց Թագաւորութեան սկիզբը:—Վաղարշակ, Արշակ Ա. 136
ԴԱՍ Թ. Արտաշէս Ա. 141
ԴԱՍ Ժ. Տիգրան Բ. և իրեն քաջութիւնները 144
ԴԱՍ ԺԱ. Արտաւազդ Ա. ու Արշամ . . 152
ԴԱՍ ԺԲ. Արշամ, և Արքարոս գործքերը . 154
ԴԱՍ ԺԳ. Անանէ, Սանատրուկ, Երուանդ և Արտաշէս Բ. 160
ԴԱՍ ԺԴ. Թագաւորք վերին Հայոց . . . 170

ԴԱՍ ԾԵ. Արտաւազդ Բ. Տիգրան Ա. Տիգրան Գ. և Վաղարշ 173
ԴԱՍ ԾԶ. Խոսրով Ա. 176
ԴԱՍ ԾԷ. Տրդատայ քաջութիւնները ու թագաւորելը 180
ԴԱՍ ԾԸ. Խոսրով Բ. Տիրան, Արշակ Բ. . 188
ԴԱՍ ԾԹ. Մերուժան Արծրունին ըրած անզգամութիւներն ու մահը. Պապայ և Վարազդատայ թագաւորելը 197
ԴԱՍ Ի. Արշակ Գ. Վաղարշակ Բ. Խոսրով Գ. Վռամշապուհ 202

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԶՊԱՆԱՑ

ԴԱՍ ԻԱ. Վահմիհրշապուհ առաջին Մարզպան, և Վարդանայ պատերազմը 211
ԴԱՍ ԻԲ. Ասորեստապայ մարզպանութիւնը և Վահանայ պատերազմը . . 218
ԴԱՍ ԻԳ. Վահանայ մեռնելէն ինչուան Հազարաչոյց Հայաստանի տիրելը. 223
ԴԱՍ ԻԴ. Հազարաչոյց Հայաստանի տիրելէն ինչուան Բագրատունեայց Թագաւորութեան սկիզբը . 230

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ

ԴԱՍ ԻԵ. Բագրատունեայց Թագաւորութեան սկիզբը 236
ԴԱՍ ԻԶ. Սմբատ Ա. իբրեն առեղն խռովութիւններն ու մահը 239
ԴԱՍ ԻԷ. Աշոտ Բ. Երկաթ, ու իր քաջութիւնները 246
ԴԱՍ ԻԸ. Սմբատ Բ.էն ինչուան Բագրատունեայց վերջանալը 252

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

ԴԱՍ ԻԹ. Ռուբինեանց Թագաւորութեան սկիզբը. Թորոս Ա. իշխանին քաջութիւնները 271
ԴԱՍ Լ. Թորոս Բ. իշխանին քաջութիւնները. Մլէհ ու Ռուբէն Բ. . . 278
ԴԱՍ ԼԱ. Լեւոն Բ. իշխանին քաջութիւնները ու թագաւորելը, և ինչուան Հեթում Ա. 283
ԴԱՍ ԼԲ. Լեւոն Գ. ու Հեթում Բ. . . . 292
ԴԱՍ ԼԳ. Օշին ու Լեւոն Ե. 298
ԴԱՍ ԼԴ. Յովհաննէս Պայլէն ինչուան Ռուբինեանց Թագաւորութէ վերջանալը 303

ԴԱՍ ԼԵ. Հայոց անիշխանութեան ժամանակի ընդհանուր վիճակը . . 309
ԴԱՍ ԼԶ. Հայոց վիճակն Պարսից Կաւատը Շահ Թագաւորին և անոր յաջորդաց առեն 316
ԴԱՍ ԼԷ. Հայաստանի բաժանուելն երեք տէրութեանց մէջ, և Հայոց ազգին ի Ռուսաստան 322
ԴԱՍ ԼԸ. Գաղթականք Հայոց ի Լեհս, ի Մոլտաւիա, ի Վալաքիա և Տրանսիլվանիա 330
ԴԱՍ ԼԹ. Իտալիոյ և Գաղղիոյ մէջ գաղթական Հայք 336
ԴԱՍ Խ. Եւրոպացին դուրս Հայ գաղթականութենէն 341

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. БИБЛИОТЕКА ՀՍՍՌ-Ական ССР Ա. ՄՄ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՍՍՌՄ-ԻՑ ՆՎԱՃԱ

2785